

ՀՀ ԳԱԱ ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱԽՎԱՆ ԼԵԶՎԻ ԲՆԱՏՔՆՈՒՄ

Վ.ԿԱՏՎԱԼՅԱՆ, Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ, Գ.ՄԿՐՏՉՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ**

ՆՑՈՒԹԵՐ

ՊՐԱԿ Ա

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

**ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2021**

ՀՏԴ 81'28

ԳՄԴ 81-67

Կ 280

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից
տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382
գիտական թեմայի շրջանակներում:

Պատասխանատու խմբագիր՝
բան. գիտ. թեկնածու Ն.Գ. Հովհաննիսյան

Կատվալյան Վ., Խաչատրյան Հ., Մկրտչյան Գ.

Կ 280 Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր:

Նյութեր: Պրակ Ա. : Գեղարքունիք / Վ. Կատվալյան, Հ. Խաչա-
տրյան, Գ. Մկրտչյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Լի հրատ., 2021.- 207 էջ:

Գրքում ներկայացվում են բարբառային հայերենի՝ Գեղարքունիքի մարզի դրսնորումների հետազոտությամբ ձեռք բերված արդյունքներ: Դիտարկումները կատարվել են համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերով, մի շարք իրողություններ ենթարկվել են տարածագործական քննության: Գիրքը կարող է օգտակար լինել բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, հայ բանահյուսության, ազգագրության մասնագետներին, ժողովրդագրության հարցերով գրադիտներին: Ներկայացված նյութը կարող է օգտագործվել հանրագիտարանային բնույթի աշխատանքներում, ուսումնական դասընթացներում:

ՀՏԴ 81'28

ԳՄԴ 81-67

ISBN 978-9939-9235-6-7

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2021(Էլ. հրատ.)

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը 2013 թվականից իրականացնում է Վ. Կատվալյանի հեղինակած «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագիրը: Հետազոտողների խումբն իր առջև խնդիր է դրել երևան հանել երկրի լեզվական նկարագիրը ըստ տարածաշրջանների, ստեղծել բարբառային նյութերի շտեմարան՝ բնակավայրերի բարբառային բնութագրերը կազմելու նպատակով, ձեռք բերված նյութի շրջանակում իրականացնել բարբառագիտական ուսումնասիրություններ ու անել եզրահանգումներ: Ծրագրի առաջին փուլում (2013-2015 թթ.) բարբառագիտներ Վ. Կատվալյանը, Հ. Խաչատրյանը, Ժ. Միքայելյանը և Գ. Մկրտչյանը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած դրամաշնորհով (թեմատիկ ֆինանսավորմամբ) հետազոտություններ են իրականացրել Գեղարքունիքի մարզում: Մարզի բնակավայրերում բարբառախոսների տեսածայնազրմամբ և հարցումներով ու գրի առմամբ գրանցվել են բարբառային և բանահյուսական նյութեր, ուսումնասիրվել են անհրաժեշտ գիտական գրականությունը և ԳԱԱ լեզվի ինստիտուտում առկա ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով լրացված համապատասխան տետրերը: Հավաքված հսկայական նյութի մշակմամբ, դասդասմամբ և գիտական վերլուծությամբ Վ. Կատվալյանը ստացված արդյունքները հրապարակել է «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» շարքի 1-ին՝ Գեղարքունիքի մարզին նվիրված գրքում¹: Միաժամանակ, խմբի անդամները հանդես են եկել թեմային առնչվող գիտական հրապարակումներով և զեկուցումներով, որոնք ամփոփող այս պրակը կամբողջացնի Գե-

¹ **Վ. Կատվալյան.** Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ, Ե., «Ասողիկ» հրատ., 2018, 402 էջ:

դարձունիքի մարզի լեզվավիճակի նկարագրությանն ու ուսումնասիրությանը նվիրված նյութերը։ Պրակում ընդգրկված հետազոտությունները ներկայացվում են հեղինակային խմբագրությամբ, որը պատճառ է դարձել տեխնիկական բնույթի որոշանմիօրինակությունների։ Առկա հավելվածը՝ ընդգրկում է Գեղարքունիքի մարզի բնակավայրերի ցանկը՝ յուրաքանչյուրում գործածվող լեզվատարբերակի նշումով։

Վ. Կատվալյան

ՄԱՍ Ա

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԺԱՄԱՍԱԿՅԱ ԵՎ ՏԱՐԱԺԱՄԱՍԱԿՅԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Վիկտոր Կատվալյան

ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ
ԲԱՐԲԱՌՈՒԽՄ²

Ամեն մի բարբար իր գործառության յուրաքանչյուր փուլում ներկայացնում է բազմաշերտ իրողություն, որի մեջ գուգորդվում են ընդհանուր և բարբառային, լեզվի զարգացման տարբեր փուլերի բնորոշ, բնիկ և փոխառյալ, տվյալ բարբառին յուրահատուկ և ազդեցությունների (այլ բարբառների, նաև գրական լեզվի) հետևանք հանդիսացող, դուրս մղվող և սկզբնավորվող լեզվական հատկանիշներ և միավորներ: Ինչպես բարբառը ընդհանրության մեջ, այնպես էլ այս գուգորդումները շարունակական փոփոխության մեջ են, և բարբառը, լինելով հաղորդակցման կենդանի, բնական, չկարգաբերվող միջոց, գտնվում է հարավովիճ վիճակում: Իրավացի է Գ. Զահուկյանը, երբ գրում է. «Հայերենի ոչ մի բարբառ որևէ էպոխայում իր բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չի եկել և չէր էլ կարող հանդես գալ: Հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշտային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջա-

² Տե՛ս նաև՝ «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի գեկուցումներ, «Ասողիկ» հրատ., Ե., 2014, էջ 77-83:

նում»³: Հետևում է, որ բարբառների հիշյալ հատկանիշները հարկ է դիտարկել նաև ըստ հայերենի զարգացման տարբեր շրջանների, և ինչպես հուշում է Գ. Զահոնկյանը, «բարբառներն ուսումնասիրելիս նրանց նկատմամբ պետք է տարբերակված մոտեցում ունենալ. բարբառները միանգամից չեն կազմավորվել. նրանց տարբեր բաղադրիչները զայխս են տարբեր հնությունից»⁴: Նման դիտարկումը կարևորվում է երկու առումով. ա) հնարավորություն է տալիս պարզաբանել բարբառի զարգացման ընթացքին առնչվող հարցեր, որոշել բարբառային մի շարք հատկանիշների առաջացման ուղիներն ու աղբյուրները, նաև բարբառի ձևավորման հետ կապված հանգամանքներն ու հաջորդական փուլերը, թ) բարբառում, իբրև կենդանի խոսքում, գործառող իրողությունների պատճառական կապերի, օրինաչափությունների բացահայտումը թույլ է տալիս մեկնաբանել լեզվի զարգացման նախորդ փուլերի համանման իրողությունները: Բացի այդ, բարբառների պատմական զարգացման ընթացքի դիտարկումը նշանակում է լեզվի պատմական զարգացման դիտարկում:

Այս առումով, հասկանալի է, նախ և առաջ ուշադրության են արժանի բարբառներում դրսևորվող հինհայերենյան իրողությունները:

Ընդհանրապես, որևէ բարբառի ներկա համակարգում հնարավոր է դիտարկել նման երեք կարգի իրողություններ.

ա) ընդհանուրհայերենյան հատկանիշներ.

բ) հինհայերենյան շրջանից եկող բարբառային հատկանիշներ.

³ Գ. Զահոնկյան, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 2-3, 1959, Ե., էջ 311:

⁴ Նույն տեղում, էջ 315:

գ) գրաբարյան համակարգի արձագանքներ, որոնք արդի գրական լեզվում չեն արտահայտվում և համարվում են բարբառային հատկանիշներ:

Բնականաբար, ընդհանուրհայերենյան հատկանիշները բարբառագիտական առումով պակաս հետաքրքրություն են ներկայացնում: Ուստի մեր ուշադրության կենտրոնում հինհայերենյան շրջանից եկող այն իրողություններն են, որոնք Բայազետի բարբառում դրսորվում են իրքի բարբառային հատկանիշներ:

Նախ անդրադառնաք հինհայերենյան շրջանի բարբառային հատկանիշներին: Գիտական բարբառագիտության մեջ հինհայերենյան շրջանին բնորոշ բարբառային մի շարք հատկանիշներ հիշատակում է Հ. Աճառյանը⁵, սակայն երևույթը ավելի հանգամանորեն քննում է Գ. Զահոնիյանը: Նա առանձնացնում է 5-րդ դարի բարբառների համար հավանական համարվող հնչյունաքերականական 130 հատկանիշներ⁶ և դրանց օգնությամբ կատարելով այդ դարի բարբառների բազմահատկանիշ դասակարգում՝ ստանում է վեց բարբառ՝ իրենց ենթաբարբառներով ու միջենթաբարբառներով⁷: Ըստ այդ դասակարգման՝ հարավարևելյան միջբարբարի մեջ էր նաև Կողովիտի (Բայազետի) ենթաբարբառը⁸:

5-րդ դարի բարբառային հիմնական գուգաբանությունների՝ Գ. Զահոնիյանի կազմած ցանկից դուրս թողնելով ընդհանուրհայերենյան բնույթ ունեցող, ինչպես նաև Բայազետի բարբառում չդրսորվող հատկանիշները կատանանք բարբառիս այն հատկանիշների ցանկը, որոնք ունեն բավականին հնություն և

⁵ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ.2, Ե., 1951, էջ 135-138:

⁶ Հեղինակը ներառել է 5-րդ դարում հնարավոր համարվող, ակնհայտորեն արխահիկ բնույթ ունեցող, ինչպես նաև մատենագրական ու այլ կարգի վկայություններով 5-րդ դարի համար հաստատվող հատկանիշները: Տե՛ս Գ. Զահոնիյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 168-180:

⁷ Տե՛ս Գ. Զահոնիյան, նշվ. աշխ., էջ 183-187:

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 185:

թերևս զալիս են հինհայերենյան շրջանից: Հատկանիշները ներկայացնում ենք Բայազետի բարբառի օրինակներով հանդերձ.

1. Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղություն (բ, գ, դ, ձ, շ ~ բ, դ, գ, ձ, շ), ինչպես՝ բ' ան, գ' ոռծ, դ' աս, ձ' որ, շ' ուր.

2. Ն-ին հաջորդող խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ճ ~ բ, դ, գ, ձ, շ), ինչպես՝ հ' ընգեր, հ' ընգընել, էրմունգ, թանգ, խունգ, կըրունգ, ձենջ, ձրնջուխ, տըրնդրդել.

3. Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզվի համեմատությամբ հավելական շնչի առկայություն, ինչպես՝ հ' ափեղա, հ' ակամա, հ' անքան, հ' ունթ, հ' առիք, հ' էռթիս, հ' էրկէն, հ' ինքը, հ' ըղեղ, հ' ուսում.

4. Հ-ի դիմաց ոչ առնմանական իս, ինչպես՝ խաց, խավ, բ' ախ.

5. Բառասկզբի յ-ի անկայունություն, ինչպես՝ օրօշկըտալ (յօրանց), ախտել (յաղթել).

6. Ա-ի շրթնայնացման երևույթի առկայություն, ինչպես՝ անուն, կանու, ծանդիկ, մանթ⁹.

⁹ Ի դեպ, հնարավոր է նաև ա-ի շրթնայնացածության առումով բարբառումն զրաբարյան իրողության արտահայտություն, որը մեզ հուշում է Է. Աղայանի ուշագրավ մի դիտարկումը: Մենք արդեն ցույց ենք տվել, որ շրթնայնացած ա-ն, լինելով ա հնչույթի դիրքային տարբերակ, իր յուրահատուկ արտասանությամբ և գործառական հատկանիշներով Բայազետի բարբառի բնութագրական իրողություններից է (Տե՛ս Վ. Կատվալյան, «Ա» ձայնավորի դրսուրումները Բայազետի բարբառում և «Ածառյանի օրենքը», Բանքեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, 137.2, 2012, էջ 48-63): Է. Աղայանի կարծիքով՝ հնարավոր է ենթադրել, որ դասական զրաբարի ա-ն «որոշ դեպքերում արտասանվել է որոշ շրթնայնացումով, որ հանգեցրել է նրա փոխանցմանը օ-ի՝ մի շարք բարբառներում: Այդ շրթնայնացումն ավելի զգալի է եղել առ երկբարբառի մեջ, որ և պատճառ է դարձել առ > օ փոփոխության՝ բաղաձայնից առաջ: Այսպիսով, կարող ենք ընդունել ա-ի բովով շրթնայնացած տարատեսակը (ա՛) զրաբարում, որ, սակայն, հնչույթային արժեք չի ունեցել» (Տե՛ս Է. Աղայան, Գրաբարի քերականություն, Ե., 1964, էջ 221):

9 Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր

7. Ե-ի երկրարբառային արտասանություն, ինչպես՝ գ’ետ, դ’եղ, խեղեղ, շերեփ.

8. Ո-ի երկրարբառային արտասանություն, ինչպես՝ խընձոր, բ’օրփոս, զ ոլ, խըմոր.

9. Վերջընթեր վանկի ա-ի թուլացում, ինչպես՝ խասկընալ խավսար.

10. Ե-ի սղում դ,ո ձայնորդներից առաջ, ինչպես՝ մըխ, կըխտուտ, թիթըլոնեկ.

11. որ(ե)այ(ք)-ով հավաքական հոգնակի, ինչպես՝ գ’եղրանք, տեղրանք.

12. Քոյր բառի *pēn*, *pōrrp*, *pērg* ձևերի դիմաց *pōtēr*, *pōtērrp*, *pōtērg* ձևեր¹⁰.

Բայազետի բարբառում *pōtēr* բառի սեռականն է *pōvēr*, որից էլ կազմվում են մյուս ձևերը՝ *pōvērrp*, *pōvērhg*, *pōvēroq*, *pōvērpoq*, *pōvērtawānpp*, *pōvērtawānpoq* և այլն.

13. Ուկ-ով դերբայ, ինչպես՝ նըստուկ, քընուկ, բ’երուկ, դ’ըրուկ:

Նկատելի է, որ բարբառային այս հատկանիշները հիմնականում վերաբերում են հնչյունական համակարգին, և այդ հանգամանքը ևս մեկ անգամ խոսում է բարբառի հնչյունական համակարգի կայունության մասին։ Ի դեպ, հնչյունական հիշյալ հատկանիշները Գ. Զահուկյանը դիտարկում է իրքի բարբառային հնաբանություններ և դրանց մեծ մասի ակունքները տեսնում նախագրային շրջանում¹¹։ Նկատենք, որ այդ գուգաբանությունների հիմնական մասը (Չնչեղ ձայնեղների առկայություն, հ-ի դիմաց ոչ առնմանական իւ, ա-ի շրյանացում, ե-ի և ո-ի երկրարբառային արտասանություն, վերջընթեր վանկի ա-ի սղում) այսօր էլ Բայա-

¹⁰Տե՛ս նաև Է. Արլայան, *Բարբառային հնագույն տարրերակներ հայերենում*, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), թիվ 5, Ե., 1958, էջ 73-74։

¹¹Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 260-270։

զետի բարբառի ամենաբնութագրական հատկանիշներն են¹²: Այս խմբի սակավաթիվ քերականական գուգարանություններից բարբառիս համար առավել էական և բնութագրական է ուկով դերբայի վկայությունը:

Բարբառային հնաբանությունների մեջ կարևոր տեղ ունեն գրաբարից տարբեր հնչյունական կերպարանք, կազմություն ունեցող, ինչպես նաև գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները¹³: Բայազետի բարբառում գրաբարի համեմատ հնչյունական յուրահատուկ կազմություն ունեցող բառերից են, օրինակ՝ տ(ն)րովիել – տրրրվիալ (բարբախել). Փերթ – փրոթիկ (փորք կտոր). բողոք – բըխպուժ. լակել – լրկել. կոկոն, կոկոմ, կոնկոմ – կօկօ (գլուխ), կօկօլ (անպոչ հավ). մողէզ – մօղօզիկ, թօթափել – թախտրվիել և այլն: Գրաբարից տարբեր կազմություններ են ներկայացնում հետևյալ բառերը մեզ – մըքըլկել. ջնջել – ջընջըխել. զգեստ – զ’եստ. ծմակ – ձ’ըմա. հանգչել – խանք. սպարդել – սըբրուել (մրսելուց գոյնը զցել). տիղմ – տիլ և այլն: Բայազետի բարբարի գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներից են՝ բըփուկ (փետուր), տանթ (թրիքի տափակեցված շերտ), տըրաքել (ձայթել), կավառ (օրի թմբամէջ տանող ուղին փակող հողաշերտ), կըլլմբոստիկ (գլուխկոնծի), կըոտել (կաշին այրվել), լաքօշ (լայնաբերան), քըռիլըշուն (անհարթ), քըռնուկ (ծաղկատար), գրողշտել (երել), փրմփուխ (ուտած և փափուկ), սըլուկ (սառնամանիք), սըղին (սառույցի բարակ շերտ ջրի վրա), շենքել (լայն քայլով անցնել մի բանի վրայով), լախ (փշացած՝ ձու,

¹² Տեղին է հիշատակել Գ. Զահուկյանի մեկ այլ դիտարկում ևս. «...բարբառային արդի տարբերությունների գգալի մասը հիմքեր ունի բարբառային ավելի հին տարբերությունների մեջ: Դրանց թվին են պատկանում հատկապես հնչյունական որոշ կարևոր հատկանիշներ» (Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 189):

¹³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 277-330:

ձմերուկ)¹⁴, լրնգ ու լավագ (անպետք մարդ)¹⁵, լավօթել (անարգական խոսքերով անպատվել), լիժ , լրժիկ (ողորկ, սահուն), լրխկել (սկսել հալչել)¹⁶, լօնք (մեծ քայլ)¹⁷, լրփ (բուռ), մանալաց (տխուրտրտում նստել), ման (չտաշված փայտից մատը մտած շյուր), կըմուք (քիմք), պըլպըլալ - փայլիկել տըսկել (թրջել) և այլն¹⁸:

Բնականաբար, հինհայերենյան բարբառային վիճակը գրաբարի հետ ունեցել է հնյունաքերականական ու բառապաշարային էական ընդհանրություններ: Դրանց մի մասը նոր շրջանում պահպանվել կամ արտացոլվում է միայն բարբառներում՝ այդպիսով ընկալվելով իբրև բարբառային հատկանիշ: Բայազետի բարբառի գրաբարյան համակարգին առնչվող բարբառային հնչյունաքերականական հատկանիշներից են.

1. Գրաբարյան է-է հարաբերության արտացոլում.

Իրողության համեմատական դիտարկումը գրաբարում և Բայազետի բարբառում երեան է բերում շեշտակիր վանկում երկու միավորների բաշխման կանոնական համապատասխանություն, ընդ որում՝ երկու դեպքում էլ հնչյունի գործառույթը հաճախ պայմանավորված է հաջորդ բաղաձայնի որակով¹⁹, ինչպես՝ կէս, աղվէս, դ'էզ, քառտէզ, բ'ըփոէձ, գօմէշ, բ'եռ, ձ'եռ, ասեղ, դ'եղ, թեփ, ծեփ և այլն:

2. Գրաբարյան յ-հ հարաբերության արտացոլում.

Բարբառի հինհայերենյան բառաշերտում բառակզբի գրաբարյան յ-ի դիմաց ունենք *h*, իսկ գրաբարյան *հ*-ի դիմաց՝ *ի* (օրինակ՝ յոյս – հ՛ուս, հաց – խաց): Այսինքն՝ հին բառաշերտում

¹⁴ Գ. Զահուկյանը այս բառը վկայում է լակ ձևով (տե՛ս նշվ. աշխ., էջ 294):

¹⁵ Գ. Զահուկյանի աշխատանքում՝ լավագ (տե՛ս նշվ. աշխ., էջ 295):

¹⁶ Գ. Զահուկյանի աշխատանքում՝ լկել (տե՛ս նշվ. աշխ., էջ 296):

¹⁷ Գ. Զահուկյանի աշխատանքում՝ լոր (տե՛ս նշվ. աշխ., էջ 297):

¹⁸ Օրինակները բերվում են ըստ Գ. Զահուկյանի տվյալների (նշվ. աշխ., էջ 283-330):

¹⁹Տե՛ս Վ. Կատվայյան, *Մեսրոպյան է, Ե գրերի ուղղագրությունը և հնյունական արժեքը*, Ե., 2006:

պահպանված *h-ի* հարաբերությունը համապատասխանում է գրաբարյան *j-h* հարաբերությանը²⁰:

3. Բազմավանկ բառերի սկզբում է, ո պարզ ձայնավորների նախնական, անհնչյունափոխ վիճակի պահպանում, ինչպես՝ էրկու (երկու), էրեվալ (երևալ), օղղղել (ողողել), օսկոռ (ոսկոր):

4. Գրաբարյան Ա վերջադրական հոլովման արտացոլում.

Հատուկ տեղանունները բարբառում պահպանել են հինհայերենյան հոլովման հատկանիշներ՝ Հերեվան (ը), Հերեվնա (ն), Հերեվնա, Հերեվնօվ:

5. Ներգոյական հոլովի իմաստի արտահայտում ոչ հոլովական վերջավորությամբ.

Բայազետի բարբառում այս հոլովի իմաստն արտահայտվում է կամ հայցականով, կամ *մեջ* կապով, ինչպես՝ *Տրդէն համալսարանն ասօրվում, զըրքերը սումկի մէջն ադընում*:

6. Բացառական հոլովի է վերջավորության արտացոլում.

Բարբառում սովորական է *ից*(ուց) վերջավորությամբ բացառականը, սակայն հազվադեպ չէ նաև է-ն, ինչպես՝ *օրէ, տընէ, մըկավնէ, մօրէ, դըսէ դուս, վոտէն զըլօխ, քեզնէ և այլն:*

7. Գրաբարյան *այս, այդ, այն* դերանունների երկար ձևերի *իկ* մասնիկի արտացոլում.

Բարբառում *իկ* մասնիկ կամ նրա կրծատ *ի* ձև հանդիպում է և՝ ցուցական, և՝ անձնական դերանունների համակարգերում, ինչպես՝ *ընձի, ընձիկ, քեզի, քեզիկ, մեզի, մեզիկ, ձեզի, ձեզիկ, էսի, էսիկ, էտի, էտիկ, էնի, էնիկ*²¹:

8. Գրաբարյան *ո՞, ո՞վ* դերանունների ձևերի արտացոլում.

²⁰ Տե՛ս **Վ. Կատվալյան**, *Հ-ԻՆ հնչյունների համապատասխանությունը հայերենի բարբառներում*, Պատմաբանասիրական հանդես, թիվ 3, Ե., 2007, էջ 163-172:

²¹ Տե՛ս **Վ. Կատվալյան**, *Ցուցական դերանունների դրսուրսման առանձնահատկություններ հայերենի բարբառներում*, Հայկագյան հայագիտական հանդես, Բեյրութ, 2011, էջ 413-427:

Բարբառում *ո՞դերանվանը* համապատասխանող ձևն է վոն (*Վո՞ն ա զացե - Ո՞վ է զնացել*), իսկ վիր սեռականը համապատասխանում է *ոյր* ձևին (*Էսի վիր զիրքըն ա - Սա ո՞ւմ զիրքն է*):

9. Սեռի արտահայտություն ներգործածև և կրավորածև վերջավորություններով.

Բայազետի բարբառում նույնպես մի շարք դեպքերում բայի սեռը արտահայտվում է համապատասխան ներգործածև և կրավորածև վերջավորություններով, ինչպես՝ անցյալ կատարյալում՝ *բ'կի, մօռթի* (ներգ. սեռ) – *մըռսա, նըռսա* (չեզոք սեռ), հրամայականի եզակիում՝ *զըրկա, բըռնա* (ներգ. սեռ) – *բըռի, բընի* (չեզոք սեռ), նաև *կօդրեց* (կոտրեց) – *կօդրակ* (կոտրվեց)²²:

10. Հասարակ բայերի առկայություն.

Բարբառումս որոշ բայեր մի շարք դեպքերում նույն ձևով կարող են արտահայտել ինչպես ներգործականության, այնպես ել չեզորության կամ կրավորականության իմաստներ, ինչպես՝ *Էտ կօֆէն քօ ձեռօվ ա թափե, հիրան-հիրան ա թափե*, *թէ էնի յա թափե* (Այդ սուրճը քո ձեռքով է թափվել, իրեն-իրեն է թափվել և թե նա է թափել): Նման բայերից են՝ *բլոթել, թացուել, ճլիսել, ծրուել, կըդրել, կըխսուել, շրուճել, զառթել, վառել* և այլն²³:

11. Եզակի հրամայականի գրաբարածև վերջավորության արտացոլում.

Եթե գրաբարում Ե խոնարհման պարզ բայերը ներգործածև խոնարհման դեպքում բուն հրամայականի եզակի թվում վերջավորվում էին եա մասնիկով, ապա Բայազետի բարբառում նույն այդ դեպքում բայերն ունենում են ա՝ վերջավորություն, ինչպես՝ գրեա - գըրա, սիրեա - սիրա: Կարծում ենք գրաբարյանի հետ ընդհանուր նախնական ձեմից ե-ի անկումով է առաջացել ներկայիս բարբառային հրամայականի ձևը:

²² Ավելի հանգամանորեն տե՛ս **Վ. Կատովայան**, *Բայի սեռը Բայազետի բարբառում*, Բանքեր Մատենադարանի, Ե., 2012, թիվ 19, էջ 379-387:

²³ Տե՛ս նույն տեղում:

Բացի հնյունաքերականական հատկանիշները, Բայազետի բարբառի, մասնավորապես բառապաշտի բնութագրական իրողություններ են նաև պահպանված գրաբարյան այն բառերը, որոնք գրական լեզվում չեն գործառում կամ սակավ են գործառում: Նման բառերից են՝ հ'առիք (առիք), հ'անքան (անգան), հանքընալ (անգանել), անըննակ (աղեղնակ), հ'ընթել (անթել թևի տակ դնել), անխեռ-անխայի (անխեռ՝ խելոք, հանդարտ), հ'ատըկել (ատակել հոգսից ազատվել), զ ըլիսըլրել (զլիսիվայրել), հ'էրկէն (երկայն), զատ (զատ՝ հեռու), զօրել (զօրել՝ ուժը պատել), խափան (խափան՝ ընդհատում), խօլոր զանել (խոլորել), կայուկան (կայուկան՝ կայուկան), կուշտուպինդ (կշտապինդ), կըռնել (կռանել), խուրուխըրեղեն (հուրն ի հրեղեն), մընձըրել (մանձրել խանձվել), մուխ (մուխ՝ ծուխ), հ'խտըկել (յստակել), օղոռթ (ուղրորդ), պարել (պագանել), փոնթ (փոթ՝ ծալք, ոլորք) և այլն:

Այսպիսով, բերված փաստերը վկայում են, որ Բայազետի բարբառի մի շարք էական հատկանիշներ՝ թե՝ գրաբարից տարբեր և թե՝ գրաբարին համընկնող, զալիս են հինհայերենյան շրջանից²⁴: Այդ հանգամանքը բույլ է տալիս պնդել, որ Բայազետի բարբառը իր արմատներով ձգվում է մինչև մի հնագույն բարբառային վիճակ, որը որոշակի տարածքում հայերենի դրսեորում էր դեռևս նախագրաբարյան շրջանում: Բայազետի բարբառի և գրաբարի ընդհանրությունները վկայում են ոչ միայն այն մասին, որ բարբառս եղել է գրաբարի համար հիմք դարձած բարբառախմբում

²⁴ Ղարաբաղի բարբառում համանման իրողություններ դիտարկել է Լ. Հովհաննիսյանը՝ եզրակացնելով, որ «Պատմական և լեզվական նմանօրինակ փաստերը հավաստում են, որ Արցախ-Սյունիքում հայերենը սկսել է գործածվել հայ տարրերի կազմավորման ընթացքին զուգահեռ: Այդ տարածքում գործածվող հայերենը բազում դարերի ընթացքում կրելով զգալի փոփոխություններ, մեզ է հասել մի վիճակով, որը կոչվում է՝ Ղարաբաղի բարբառ» (Տե՛ս և Լ. Հովհաննիսյան, Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջը, Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1977, թիվ 1, էջ 151):

15 Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր

կամ մերձավոր հարաբերություններ է ունեցել դրանց հետ, այլ նաև այն մասին, որ գրաբարը իսկապես իր հնչունական կազմությամբ, քերականական համակարգի շատ իրողություններով ներկայացնում է ժամանակի ժողովրդախոսակցական լեզուն և դրա մշակված, գրական լեզվի մակարդակի հասցված վիճակն ^{Է25:}

²⁵ Բայազետի բարբառի՝ գրաբարին առնչվող իրողությունները որևէ կերպ չեն կարող բացատրվել բարբառի վրա գրաբարի ազդեցությամբ, որովհետև նույնիսկ մեր օրերում գրական լեզուն որևէ բարբառի վրա համակարգային նման ազդեցություն չունի:

Վիկտոր Կատվալյան

ՄԻԶԻՆՉԱՅԵՐԵՆՑԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱՁԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒԹՅՈՒՆ²⁶

Լեզվի պատմական զարգացման ընթացքը նախ և առաջ տեսանելի է դառնում գրավոր աղբյուրների լեզվական նյութի դիտարկումով: Միևնույն ժամանակ, այդ ընթացքը դիտարկելի է նաև բանավոր խոսքի, հատկապես՝ բարբառների ընձեռած նյութի շրջանակներում: Բարբառները, լինելով գիտակցական մշակման ու կանոնարկման չենթարկվող լեզվավիճակներ, իրենց համակարգերում յուրահատուկ կերպով զուգորդում են լեզվի զարգացման տարբեր փուլերի վերաբերող իրողություններ, որոնց առանձնացումը և խմբավորումը ըստ փուլերի կարող է կարևոր լինել ոչ միայն տվյալ բարբառին վերաբերող, այլ նաև ընդհանուր լեզվի պատմական զարգացմանն առնչվող հարցեր քննելիս: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև բարբառներում միջնահայերենյան իրողությունների դրսևորումները, մանավանդ որ, ինչպես նշում է Գ. Զահուլյանը, «Կարելի է ասել, որ արդի բարբառների հնյունական և ձևաբանական խմբերը սկսում են զծագրվել հին շրջանի վերջերից և միջին շրջանի սկզբներից»²⁷: Միաժամանակ, ըստ Հ. Մուրադյանի, հայերենի զրի առման շրջանի բանավոր-խոսակցական լեզվի դրսևորումներն են, որ տարբեր «գործոնների փոխազդեցությամբ և իրենց ներքին զարգացման օրինաչափությունների ուժով զալիս հասնում են մինչև միջին դարերը, ստեղծելով լեզվական մի նոր համակարգ՝ իրենց ընդհանրություններով ու տարբերություն-

²⁶ Տե՛ս նաև՝ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, «Ասողիկ» հրատ., Ե., 2014, էջ 49-61:

²⁷ Գ. Զահուլյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 192:

ներով հանդերձ»²⁸: Այսպիսով, միջինհայերենյան իրողությունները մի կողմից իրենց արմատներով գալիս են հինհայերենյան շրջանից, մյուս կողմից՝ իրենց մեջ պարունակում են բարբառային ներկա վիճակի սաղմերը: Բոլոր դեպքերում փաստ է, որ այդ իրողությունները վկայված են հենց միջին հայերենի շրջանից սկսած:

Հայտնի է, որ միջին հայերենը ընդհանուր առմամբ չի ներկայանում իբրև միասնական նորմավորված գրական լեզու²⁹: Ինչպես նկատել է Յ. Կարստը, «Թեև, ի հակադրություն հին ու նոր հայերենի և նրանց բնութագրող հատկանիշների, միջին հայերենը երևում է որպես մի ամբողջություն, այնուամենայնիվ այն ոչ մի դեպքում իրենից չի ներկայացնում միատարր մի լեզու, այլ հանդես է բերում բարբառային զգալի տարրերություններ»³⁰: Այդ հանգամանքը ընդգծել է նաև Հ. Աճառյանը. «Միջին հայերենը մի ընդհանուր լեզու չէր, այլ թե կային Հայաստանում և Հայաստանից դուրս բազմարիվ միջին հայերեն բարբառներ, որոնցից մեկն ել կիլիկյան հայերենն էր»³¹: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ լեզվաբանը նշում է, որ միջին հայերենի և աշխարհաբարի ընդհանրությունները «ավելի կշատանան, եթե փոխանակ առնելու գրական աշխարհաբարը, համեմատության առնենք արդի զանազան բարբառները»³²: Չներկայանալով իբրև միասնական զրական լեզու՝ միջին հայերենը, իր բոլոր տարբերակային ձևերով հանդերձ, այնուամենայնիվ մեկ միասնական լեզու էր, որի ներսում տեղի էին ունենում նաև լեզվական ընդհանուր և

²⁸ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա. Ե., 1972, էջ 35:

²⁹ Տե՛ս Գ. Զահոռվյան, նշվ. աշխ., էջ 193, Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981, էջ 247:

³⁰ Յ. Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 14:

³¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 1951, էջ 253:

³² Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 252:

միասնական գործընթացներ, և որի բոլոր դրսնորումների հիմքում ընկած էին ընդհանուր և միասնական հատկանիշներ: Մերօրյա բարբառները միջինհայերենյան շրջանից ժառանգել են ինչպես ընդհանուրհայերենյան, այնպես էլ բարբառային, մասնավոր հատկանիշներ: Հասկանալի է, որ բարբառազիտական առումով հետաքրքրություն են ներկայացնում միջին հայերենի շրջանից զրավոր աղբյուրներում ավանդված և՝ լայն տարածում ունեցող, և մասնավոր այն հատկանիշները, որոնք, արդի բարբառային հայերենի այս կամ այն տարբերակին կամ մի շարք տարբերակների բնորոշ լինելով, ընկալվում են իբրև բարբառային հատկանիշներ: Այդպիսիք իրենց արտահայտությունն ունեն նաև Բայացետի բարբառում:

Կատարելով 5-րդ դարի բարբառների բազմահատկանիշ դասակարգում՝ Գ. Զահուլյանը հարավարևելյան միջբարբառի մեջ ընդգրկում է նաև Կոգովլյանի ենթաբարբառը³³, որի հետագա զարգացումն է ներկայացնում Բայազետի բարբառը: Բարբառային այդ միավորը միջինհայերենյան շրջանում շարունակել է իր զարգացումը, ձեռք բերել թե՛ հնյունական, թե՛ քերականական բնութի նոր հատկանիշներ, հարստացրել բառապաշարը նորակազմություններով ու փոխառություններով: Նախ ներկայացնենք Բայազետի բարբառի միջինհայերենյան իրողություններին համընկնող հնյունական հատկանիշները:

1. Շեշտի հետ կապված հնյունափոխական իրողությունների ծավալում:

Միջին հայերենի շրջանից սկսած՝ ա, ե, ո ձայնավորները ևս շեշտի հետ կապված փոփոխությունների են ենթարկվում: Համարվում է, որ միջին հայերենի տարբերակների մի մասում բազմավանկ բառերը վերջնավանկի գլխավոր շեշտից բացի առաջին վանկում ունեցել են նաև երկրորդական շեշտ, իսկ

³³ Գ. Զահուլյան, նշվ. աշխ., էջ 185:

միջնավանկի ձայնավորները թուլացել են և սղվել³⁴: Նկատվել է, որ այս երևույթը հատկապես հատուկ է կիլիկյան հայերենին և ընդհանրապես միջին հայերենի արևմտյան տարրերակներին: Առավել տարածում է գոնում ա-ի սղումը, ինչպես՝ *հասկնալ, հավնել, ճանչնալ, զանկտել, դարտկել, տաքնալ* և այլն³⁵: Պատմական այս հնչունափոխությունը լայն ընդգրկում ունի Բայազետի բարբառում, ինչպես՝ *խասկընալ, խավնել, խավըրծիլ, ճանչըրնալ, գանգրտել, դառտրկել, տաքնալ, մանդնիք, աղօթրան, ամշըկոտ, ապակընել, հանչի, բալնիս, գերընդի, կանդել, կանրկտան, խավսար, փատրտել, փառարքնել* և այլն: Միջին հայերենում ավելի քիչ են հանդիպում ե-ի և ո-ի սղման դեպքերը³⁶, ինչպես՝ *զիտնան, ուննալ, երսուն, վայլէ*³⁷, պատրոտէ, բորսէ, ժողվել³⁸ և այլն: Այդպիսիք համեմատաբար քիչ են նաև Բայազետի բարբառում, ինչպես՝ *զիդալ, յեսուն, խայլի, առծըլի, անրդնակ, մակել, թիթրոնեկ, խառըրկաթ (խաչերկաթ), տիրապղտել, հառապտուն, դօղդըդալ, թօոմել, պանտրոտել, ժողվել, օղըդել, տղրրկիալ* և այլն:

Միջին հայերենում հիշյալ ձայնավորները սղվում էին նաև շեշտի տեղափոխության հետևանքով, ինչպես՝ *դարպաէն, ի*

³⁴ Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, էջ 73-74:

³⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 74-75, նաև՝ **Հ. Աճարյան**, նշվ. աշխ., էջ 241-242:

³⁶ Հստ Հ. Մուրադյանի՝ այն, որ միջին հայերենում բառական ուղիղ ձևերում բառամիջի ո- և է ձայնավորների սղումը արձանագրվում է սակավ օրինակներով, «բացատրվում է ո՞չ թե օրինաշափության անհետողականությամբ, այլ միայն նրանով, որ տվյալ դիրքում, ա-ի համեմատությամբ, մյուս ձայնավորները ավելի քիչ հաճախականություն ունեն» (տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, էջ 88):

³⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 82:

³⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 87:

քաղքէն, երկրէ, հիւրնդին, ձակտին, բէրնին³⁹ և այլն: Այս կարգի հնչյունափոխությունը (նաև է-ի և օ-ի) օրինաչափական է Բայազետի բարբառում, ինչպես՝ դարվրդի, քախկի, երկրթէ, խիվրնդի, ճակտի, բ'երնի, հ'անզրճի, ամրոնցով, աշխրրքով, աղմացավ, հ'առծրկել, բ'ամրրկէ, բ'արէզմասէր, հ'ավրնալ, հ'իրսօվ (հ'իրես), մեռլի (մեռել), վառկի, ցօրնի (ցօրեն), հ'առչքրտուր (հ'առէշ), գ'օմշի (գ'օմէշ), խէվիսրկալ, բ'օլրրել բ'օրփրսնել, կօշկրոնել (կօշկոռ), կօտրշխրբել (կօտոշ), մօլլրել, օլլրել, սարնել (սապոն), կօղվիկ (կօղօվ) և այլն:

Ինչպես փաստում է Հ. Մուրադյանը՝ բառամիջի ձայնավորների անկման առաջին վկայությունները գալիս են 11-րդ դարից⁴⁰: Հետագա դարերի գրավոր աղբյուրներում երևույթը ավելի մեծ տարածում է ստանում⁴¹:

2. Զայնավորների՝ մասնավոր բնույթ ունեցող փոփոխություններ:

Միջինհայերենյան գրավոր աղբյուրներում արձանագրվում են ձայնավորների՝ մասնավոր բնույթ ունեցող պատմական փոփոխություններ, որոնք իրենց արտահայտությունն ունեն Բայազետի բարբառում: Նման փոփոխություններից են.

³⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 75: Բերված օրինակները վերաբերում են ա ձայնավորին, բայց Հ. Մուրադյանը կարծում է, որ «միջին հայերենի շրջանում բառաթերման ընթացքում նման հնչյունափոխություն կատարվում էր նաև ո և է ձայնավորների հետ, եթե նրանք շեշտագրկվում էին» (տե՛ս Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական բերականություն, հ. 1, Հեյցունաբանություն, Ե., էջ 77):

⁴⁰ Տե՛ս Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 78: Հ. Մուրադյանի կարծիքով՝ «բառական ուղիղ ձևերում միջնավանկի ձայնավորի անկման երևույթը հաջորդել է բառաթերման ժամանակ շեշտագրկությունից կատարվող հնչյունափոխությանը: Այսինքն՝ այստեղ նախնականը բառաթերման ընթացքում կատարված փոփոխությունն է, որը այնուհետև նմանությամբ տարածվել է նաև բառական ուղիղ ձևերի վրա» (նշվ. աշխ., էջ 87):

⁴¹ Նույն տեղում:

ա > ը - միջ. հյ.՝ ընկնիլ, ընզողին, 15-16-րդ դարերից նաև՝ ընել, ըսել, ըմմէն և այլն⁴². Բայազետի բարբառ (այսուհետ՝ Բ. բբք.)՝ հ ըսէն, հ ընցընել, նաև՝ խընձըրել (խանձել), ճըրդվել (ճապաղիլ), մընձըրել (մանձրել), շըլակ (շալակ) և այլն.

ու > վ (թվականներում՝ իբրև շաղկապ) - միջ. հյ.՝ տասննվիալթն⁴³. Բ. բբք. տըսվերկու, տըսվիրեք.

ու > օ - միջ. հյ.՝ յօղարկէ⁴⁴. Բ. բբք. հ օղըրկել, օղորք (ուղղորդ).

ու > ը կամ զրո - միջ. հյ.՝ ըղեղ, յղրկէց, յրկէ⁴⁵. Բ. բբք.՝ հ ըղեղ, հ ըղըրկել, յղրկել.

ե > ի - միջ. հյ.՝ իրէք, իրիկուն⁴⁶, ավիրել. Բ. բբք.՝ իրէք, հ իրկուն, հ իրես, ավիրել.

ե > ա - միջ. հյ.՝ առիեր⁴⁷. Բ. բբք.՝ ախալէր.

ն > ու - միջ. հյ.՝ Գուհար, մինչուր, ինչուր (մինչ որ)⁴⁸. Բ. բբք.՝ Գուվար, չուր, թունդիր, խունչան, կուժեղէգ, կուրել (կորնչել).

ն > ա - միջ. հյ.՝ Շնահաւոր (Շնրհաւոր), կաթաղիկոս, Յաւանէս⁴⁹. Բ. բբք.՝ շընախավոր.

ը > ու, ի - միջ. հյ.՝ պուտուկ (պտուկ), ճիճի (ճճի), յիստակ⁵⁰. Բ. բբք.՝ պուտուկ, կունզուխ (կնզուխ), ճիճու, հ իստրկել, քիսիկ (քսակ):

3. Երկրաբառների մենաբարբառացում.

⁴² Տե՛ս Ակնարկներ միջին զրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 75-76:

⁴³ Տե՛ս նշվ. աշխա., էջ 78:

⁴⁴ Տե՛ս նշվ. աշխա., էջ 80:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Տե՛ս նշվ. աշխա., էջ 82:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Տե՛ս նշվ. աշխա., էջ 85-86:

⁴⁹ Տե՛ս նշվ. աշխա., էջ 86:

⁵⁰ Տե՛ս նշվ. աշխա., էջ 87-88:

Գրաբարի հետդասական շրջանում սկիզբ է առնում երկրաբառների մենաբարբառացման միտում, որը, հետագա դարերում ծավալվելով բանավոր խոսակցական տարբերակներում, միջինհայերենյան շրջանում վերածվում է կատարված իրողության⁵¹: Բայազետի բարբառում այդ իրողությունն արտացոլվում է հետևյալ կերպ:

այ > է⁵² - միջ. հյ.՝ ձէն, աղբէր, կէր (կայր), զարմանէր (զարմանայր). Բ. բրբ. ձէն, աղսպէր, կէր, զարմանէր, կէծակ, էծ, զ էլ և այն:

Դեռևս միջին հայերենում նկատելի է այն երևոյթը, որ թեև բառավերջի այ-ի յ-ն համր էր, սակայն բաղաձայն մասնիկի հավելումից հետո գործում էր նույն այ > է օրինաչափությունը՝ քահանայ > քահանէր, տղայ > տղէր, թումայ > թումէն⁵³: Իրողությունը հատուկ է նաև Բայազետի բարբառին, ինչպես՝ տրդա - տրդէս, տրդէն. անլրվա- անլրվէր, բուդա - բուդէն, զ աթա

⁵¹Տե՛ս նշվ. աշխ., էջ 90: Ի դեպ, երկրաբառների մենաբարբառացման մասին պետք է նկատի ունենալ, որ «Կիլիկյան հայերենի մեջ նման փոփոխությունները զրական լեզվի նորմա չեն. դրանք զրավոր լեզվում արձագանքներն են բանավոր-խոսակցական լեզվում կատարված հնյունափոխական տեղաշարժերի» (տե՛ս նշվ. աշխ., էջ 91):

⁵²Համարփում է, որ այ երկրաբարի վերածվելը պարզ ձայնավորի սկսվել էր միջին հայերենի նախորդ շրջանում և լայն տարածում ստացել 14-15-րդ դարերում: Այ > է հնյունափոխությունը տարածված է հատկապես Վասպուրականում, Սյունիքում, Արարատյան զավառում, Վայոց ձորում և Արևելյան Հայաստանի այլ վայրերում ստեղծված ձեռագրերում ու պատմական հուշարձանների արձանագրություններում (տե՛ս նշվ. աշխ., էջ 91-92):

⁵³Տե՛ս նշվ. աշխ., էջ 93: Հ. Մուրադյանը ենթադրում է, որ «այստեղ ո՛չ թե բառավերջի ա-ն է հնյունափոխվել է-ի, այլ նախնական այ-ը: Ուստի այ > է հնյունափոխությունը ավելի հին երևոյթ է, քան բառավերջի բաց վանկում յ-ի անկումը» (տե՛ս նույն տեղում):

– *գ՝աթէք, ձ՝ըմս - ձ՝ըմէն, շուշպա՞ - շուշպէն, լուլա՞ - լուլէն, հ՝ալվա - հ՝ալվէն, մմայլա՞ - մմայլէք* և այլն⁵⁴:

Ոյ > ու⁵⁵ - միջ. հյ.՝ քուր, քուս, քուլ, քնկուզ. Բ. բրբ.՝ քուր, քօրուր ուս, քուլ, լուս, քզուշ, քուն, հ՝ուս:

Իւ > ու⁵⁶ - միջ. հյ.՝ ձութ, հարուր, արուն, ձուն. Բ. բրբ.՝ ձ՝ութ, հ՝արուր / հ՝արիթ, արուն, ձ՝ուն, բ՝արութուն, ալուր, խուր (*հիւր*), ձուղ, շուդ:

Եւ > ե - միջ. հյ.՝ զեղ, եղ. Բ. բրբ.՝ զ՝եղ, յեղ⁵⁷:

4. Բառասկզբում նաև մաքուր ձայնեղ հպականների և հպաշփականների գործառություն:

Բայազետի բարբառի հինհայերենյան բառաշերտում բառասկզբում ձայնեղները միշտ շնչեղ են, ինչպես՝ բ՝ան, բ՝ուսել, զ՝երան, զ՝ըթնել, դ՝աթար, դ՝եղին, ձ՝ի, ձ՝ուն, զ՝աթել, զ՝ուր: Շնչեղ ձայնեղները պահպանվում են նաև միջինհայերենյան կազմություններում, ինչպես՝ բ՝անարար, բ՝ընակրոել, զ՝օվասանք, զ՝եղացի, դ՝արուփոս, դ՝ուրել, ձ՝ըկտել, ձ՝իյավոր, զ՝ընջրիել, զ՝ըրել: Հավանաբար ավելի վաղ շրջանում կատարված փոխառություններ են շնչեղ ձայնեղներով սկսվող բ՝իճ (թրբ.), դ՝ախ (պրսկ.), բ՝ըրինձ (պիլ.) բառերը: Մինչդեռ միջինհայերենյան շրջանի փոխառությունների սկզբում բարբառս այլևս չունի շնչեղ ձայնեղներ. դրանցում գործառում են մաքուր ձայնեղներ, ինչպես՝ բարեկրայր,

⁵⁴ Ինչպես երևում է, օրինաչափությունը գործում է նաև փոխառյալ բառերում ըստ երևույթին համարանությամբ:

⁵⁵ Այս հնչյունափոխության հիմքը, ըստ Հ. Սուրայյանի, շեշտագրկման հետևանքով հնչյունափոխված ձևի անցումն է բառական ուղիղ ձևին (տե՛ս նշվ. աշխ., էջ 102):

⁵⁶ Միջին հայերենում հանդիպում է այս երկբարբառի երկու կարգի փոփոխություն՝ իւ > ու, իւ > ի. տարբերակների մեծ մասին բնորոշ է առաջին փոփոխությունը (տես նշվ. աշխ., էջ 105):

⁵⁷ Միջին հայերենում ձայնավորների և երկբարբառների փոփոխությունների մասին տե՛ս նաև Հ. ԱՃԱՐՅԱՆ, նշվ. աշխ., էջ 241-242:

բէզումնն, զազար, դամ, շաղու, ջրվալ (պրսկ.), բարիշել, բիզ, դամաղ, դօշ (թրք.), դավի, ջաֆա, ջրվուդ, ջուլ (արաք.) և այլն: Այսպես միշխնհայերենյան շրջանից սկսած՝ Բայազետի բարբառը փոխառյալ բառերի սկզբում, ի տարբերություն հինհայերենյան բառաշերտի բառերի և դրանցով ձևավորված նոր կազմությունների, ունի մաքուր ձայնեղ հպականներ և հպաշփականներ:

5. Ձայնեղ հ՚ի հավելում ձայնավորով սկսվող բառերի սկզբում:

Այս հավելումը հատուկ է Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի և հարակից այլ շրջանների բարբառներին⁵⁸: Ըստ Հ. Սուրայյանի՝ հավելման գործընթացը սկսվել է 10-11-րդ դարերից ոչ շուտ և այնուհետև հարատևել է մինչև մեր օրերը⁵⁹: Բայազետի բարբառում հ՚ի հավելում հանդիպում է բոլոր ձայնավորներից առաջ էլ, ինչպես՝ հ՚ափեղա, հ՚անգաճ, հ՚ախպուր, հ՚ըմէն, հ՚երուց, հ՚էսօր, հ՚անքան (անագան), հ՚ընզրնել, հ՚ունք (անութ), հ՚ընցրնել, հ՚աշշ (աշք), հ՚առէչ, հ՚առավոտ, հ՚առիք, հ՚առու, հ՚ատրկել (ատակել), հ՚արափացի (արաբացի), հ՚էժան, հ՚առծակ, հ՚առու, հ՚ավել, հ՚ափի, հ՚ըլնել, հ՚էռթիս, հ՚էրէկ, հ՚իրկուն, հ՚իրէս, հ՚էրկէն, հ՚ընզեր, հ՚իմանալ, հ՚ինքք, հ՚իշնել, հ՚իրար, հ՚օղըրկել, հ՚ըղեղ, հ՚ուսում, հ՚ուստ և այլն:

6. Հնչյունափոխական մասնավոր երևոյթներ:

Բայազետի բարբառում արձանագրվող մասնավոր հնչյունափոխական շատ իրողություններ կատարված փաստ էին դեռևս միջին հայերենում: Ներկայացնենք այդ իրողությունների մի քանի օրինակներ ըստ հնչյունափոխության տեսակների:

Հնչյունի անկում.

⁵⁸Տե՛ս Հ. Սուրայյան, նշվ. աշխ., էջ 315:

⁵⁹Տե՛ս նշվ. աշխ., էջ 318:

թ, ն, հ, դ - միջ. հյ.՝ ջաղաց, աժել, եփ, շնահաւոր, դուս, ժաժել, ձամփա, մտէ, Արտաւազ⁶⁰. Բ. բրբ. ջ աղաչ, աժել, յեփ, շընախավոր, դ ուս, ժաժել, ձամփա, մըտում (մտնում), առոտավազ (Արտավազդ).

Հնչյունի հավելում.

ն, դ - միջ. հյ.՝ կանանց, ձանանչել, կարմունջ, մանտր, ծանդր, թռնտրէն⁶¹, Բ. բրբ.՝ կանանց, ձանչընալ, կարմունջ, մանդր, ծանդր, թռնդր, թռնդիր.

Առնմանում.

միջ. հյ.՝ թուխտ, նաֆթ, պաքսեալ, ժաժել, ջաղաջ, ցեթեց (ցայտել)⁶², Բ. բրբ.՝ թուխտ, նաֆտ, պաքսել, ժաժել, ջ աղաչ, ցեթել.

Դրավիխություն.

միջ. հյ.՝ դարտկել, կարմունջ, վլանալ, բալնիք⁶³, Բ. բրբ.՝ դ առոտրկել, կարմունջ, վրլալ, բ ալնիս:

Բերված փաստերը անշուշտ վկայում են միջին հայերենի շրջանում բանավոր խոսքում կատարված հնչյունաբանական էական զարգացումների մասին: Եվ իրավացի է Ս.Ղազարյանը, երբ գրում է. «Հայոց լեզուն իր զարգացման ոչ մի շրջանում հնչյունափոխական կանոնների այնպիսի բազմազանություններ, ինչպիսին միջին հայերենում է, չի ունեցել: ... Հնչյունափոխական այդ օրինաչափությունների մի մասը կապված էր շեշտի հետ և ընդհանրապես հատուկ է հայերենին իր զարգացման բոլոր շրջաններում, իսկ մնացած ձևերը շեշտի փոփոխմամբ չի կարելի բացատրել. Նրանք ավելի շատ բարբառային առանձնահատկություններ են, որոնք ներթափանցել էին միջին հայերենի հնչյու-

⁶⁰Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 144-150:

⁶¹Տե՛ս նշվ. աշխա., էջ 154-155:

⁶²Տե՛ս նշվ. աշխա., էջ 156-158:

⁶³Տե՛ս նշվ. աշխա., էջ 161-163:

նական համակարգի մեջ և զգալի չափով ազդել նրա դրսելումների վրա»⁶⁴:

Միջինհայերենյան գրավոր աղբյուրները երևան են քերում զգալի տեղաշարժեր նաև բառապաշարում, որոնք հաճախ պայմանավորված են բանավոր խոսքից կատարվող ներթափանցումներով⁶⁵: Իբրև դրա արտահայտություն՝ Բայազետի բարբառի բառապաշարում զգալի տեղ է զբաղեցնում միջինհայերենյան շերտը: Այն իր մեջ ներառում է ինչպես բնիկ ու բարբառային բառեր, նորակազմություններ, այնպես էլ փոխառյալ բառեր: Մեր մոտավոր հաշվարկներով՝ ներկայումս Բայազետի բարբառում գործառում են միջին հայերենով ավանդված առնվազն 1100 բառեր: Սրանցից բնիկ են հնդեվրոպական ծագում ունեցող այն բառերը, որոնք, տարբեր պատճառներով հին գրական հայերենի ավանդված չլինելով, հայտնի են դարձել միջին գրական հայերենի միջոցով⁶⁶: Նման բառերից են, օրինակ՝ մըծ (միջ. հյ.՝ մշուշ), բ՛օվել, լրիկել «փափկել, հալվել» (միջ. հյ. լրչիլ, լրնուլ, որոնք, ըստ Հ. Աճառյանի, կապվում են լկիլ «կակդել, թուլանալ, հալվել» բային), թառ, չիր, մայթ (դոշար), մըքքլկել «ամպել»⁶⁸ (միջ. հյ.՝ մզիլ «նեխել, բորբոսնել. Ամպել»), դ՝ ահւծ (դադ «վայրի անանուխ»), մըլիկ «մրջուն» (միջ. հյ.՝ մլուկ «փայտողիլ»), փընթի, լակ և այլն⁶⁹:

⁶⁴ Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 221:

⁶⁵ Ինչպես նշում է Ս. Ղազարյանը, «Միջին հայերենի բառային կազմը գրաբարի համեմատությամբ ավելի հարուստ էր ու բազմազան և ուներ զարգանալու, իր միջոցները ընդլայնելու անսահման հնարավորություններ» (Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 277):

⁶⁶ Հաշվարկը կատարել ենք Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» (հ. 1, Ե., 1987, 420 էջ, հ. 2, Ե., 1992, 472 էջ) աշխատության ընձեռած բառամթերքի շրջանակում:

⁶⁷ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 187:

⁶⁸ Բայազետի բարբառում գործառում է նաև մըքքլկել «մոայլվել. ամպել» բառը:

⁶⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 187-191:

Միջին հայերենի շրջանում բարբառներից գրական լեզու են ներբափանցել բազմաթիվ բառեր, որոնց ծագումը դեռևս (կամ վերջնականապես) ճշտված չէ: Այդ բառերի մի մասը⁷⁰ գործառում է և Բայազետի բարբառում, ինչպես՝ պաղ, ժուկ, աղու, վիզ, թուշ, ձիվ, ձուռ, գոնզ, բըշտել, քարօվ քարալել անել (միջ. հյ.՝ լեխել «սաստիկ ծեծել»), ձօճ ու կէյբաթ (միջ. հյ.՝ ձօշ «բամբասանք»), շիվար, ձըցում, պուլիկ, կանք, մնալշել, տրսկել (միջ. հյ.՝ տղկիլ «թացանալ»), ձիրել, շրտուկ, բէտ, ջոնչ, խախանդ (միջ. հյ.՝ հարիհանդ), կուտ, յեղա (միջ. հյ.՝ եղի), զօխ, պուպու (միջ. հյ.՝ բուրու), ձըմուռ, սրբաս (միջ. հյ.՝ սպաս), փօխիհնդ, ժուռ, շոռ և այլն:

Բայազետի բարբառում զգալի քանակություն են կազմում միջնհայերենյան շրջանում արաբերենից, պարսկերենից և թուրքերենից փոխառված բառերը: Այդ շրջանի արաբական փոխառություններից են՝ ալէնի, ամանաթ, այիր, դանիլ, զարուն, լնգանթ, վարամ «պալարախստ» (Բ. բրբ. «ցավ, հիվանդություն»), բըղլամ, ժըղլել, խալիս (մաքուր), խըլլսել (սպառվել), անշէք, թանրգել, թորգել, միրաթ, թարութ, կանուլ (համաձայն), խըլդ, կալի, խալվաթ, խայսանթ, կօլուռ, հանգըր, հալ, հայվան, խարամ, հակալա, կալանթ, ջըրէզ, քուֆըր սանթանթ, հուրմ և այլն: Պարսկերենից կատարված փոխառություններ են հետևյալ բառերը՝ մէյմուն, փաչա, զազ, թանրանթ, բալլօշ, փանողան, քուման, զիյան, յադ, որժանք, կօսոց, թուռշի, ջէրգան, գահ, չափառ, դաստան, զարուն, զըլֆ, թանսան, թըրաշել, լախ, խըշտ, խըշկել, չանրէք, ջուկ և այլն: Թուրքերեն փոխառություններից են՝ թօփ, ժընջիլ, անջախ, թըլվանք, փարա, բէյ, բիհճ, թօզ, յօրդան, զուլ, չիթ, աղըլ, յանդակ, չայիր, տանդիլի, յարա, յախուռ, բանրիշել, կութի, ձիմ, ձոր, քօք և այլն:

⁷⁰ Նկատի չունենք գրական աշխարհաբարում գործածվող բառերը:

Հնյունական ու բառապաշտային նշված երևույթների հետ բայց էտի բարբառում իրենց արտացոլումն ունեն նաև միջինհայերենյան քերականական մի շարք իրողություններ: Ինչ խոսք, միջինհայերենյան քերականական համակարգը, էականորեն տարբերվելով գրաբարյանից, պարունակում էր լեզվի զարգացման այն միտումները, որոնք հետագայում հանգեցնելու հին աշխարհաբարյան համակարգի ձևավորմանը: Չանդրադառնալով միջին հայերենի համակարգի ընդհանուրի հայերենյան իրողություններին՝ դիտարկենք այդ համակարգի այն հատկանիշները, որոնք բնութագրական են բայց էտի բարբառի համար: Այդ կարգի հատկանիշներից են հետևյալները.

1. Ա խոնարհման ածանցավոր բայերի *ան* ածանցի ձայնավորի անկում.

Միջ. հյ.՝ *շատնալ*, *խոշորնալ*, *մեծնալ*⁷¹, Բ. բբբ.՝ *շնտընալ*, *ջօշնալ*, *խասկընալ* և այլն.

2. –եր վերջավորությամբ վաղակատար դերբայի առկայություն⁷².

Միջ. հյ.՝ *տէսեր*, *շրջեր*, *իջեր*, *մնացեր*, *հաներ*, Բ. բբբ.՝ *տէսէր*, *հիջէր*, *մնացէր*, *խանէր*.

3. Էական բայի եզակի երրորդ դեմքում *ա* ձևի դրսւորում:

Առաջմ հայտնի առաջին վկայությունը վերաբերում է 13-րդ դարին՝ «այս այ հանգիստ Ովանիսի»⁷³: Բայց էտի բարբառում՝ *էթում ա*, *զ ալում ա*:

⁷¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 303: Այս անկմանն անդրադարձել ենք նաև հնյունափոխությունների մասին խոսելիս:

⁷² Ընդհանրապես միջին հայերենում հեղինակները խառը օգտագործում են վաղակատար դերբայի *ել*, *եր* վերջավորություններով ձևեր, և դրանք դեռևս չեն տարբերակվում ըստ բարբառների Ում (ել) և Կը (եր) ձյուղերի (տե՛ս նշվ. աշխ., էջ 374):

⁷³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 83:

4. Մի շարք դեպքերում անցյալի նախկին կամ հետագա ցոյական հիմքի դիմաց արմատական հիմք.

Միջ. հյ.՝ չասի, տուի, տուիր, տուաւ, տուին⁷⁴, ավելի ուշ նաև՝ արիր, ասիր, ասաւ, ասին, կանչէր, ծիծաղէր, խմէր, պահէր⁷⁵. Բ. բբ.՝ ասի, ասիր, ասավ, ասինք, ասիր, ասին, տրվի, տրվիր, տրվեց, տրվինք, տրվիր, տրվին, արի, արիր, արավ, արինք, արիք, արին, կանչէր, խրմէր, պահիր:

5. Սահմանափակ տարածում ունեցող հոգնակերտների դրսնորում.

Միջ. հյ.՝ կնանիք (անիք), զեղրանք (րանք), իշվանք (վանք)⁷⁶, Բ. բբ.՝ կընանիք, զեղրանք, տեղրանք, դիզրանք, իշվանք, զիլվանք, տիրվանք⁷⁷ և այլն:

6. Միջինհայերենյան Ու հոլովման արտացոլում.

Միջ. հյ.՝ ահու, արևու, զիլիու, պապու, լուսու, ծախու, ձամփու, տիրու⁷⁸. Բայազետի բարբառում սրանք դրսնորվում են իբրև քարացած ձևեր (հախու /վախենալով/, հիր արեվու /իր կարծիքով/, հիրա զըլիու /ինքնազլուխ/, պապու տուն, լուսու դէմ /լուսադեմին/, ծախու /վաճառելու/, ձամփու դընել /ձանապարհել/, տիրու /գործածվում է հայիոյանքներում/), քանի որ այստեղ այդ բառերը Ու հոլովման չեն ենթարկվում:

⁷⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 332, 351:

⁷⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 365, 387, 390: Նկատվել է, որ անցոյական հիմքից կազմվող հոգնակի հրամայականի ձևերը առավելապես բնորոշ են Ուս ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակներին (տե՛ս նշվ. աշխ., էջ 390):

⁷⁶ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, 1975, էջ 60:

⁷⁷ Տե՛ս նաև Վ. Կատվայան, Գոյականի հոգնակի թվի կազմությունը Բայազետի բարբառում, Լեզու և լեզվաբանություն, 2007, 1-2, էջ 3-13:

⁷⁸ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, էջ 22-25:

7. Անձնական դերանունների թեք ձևերում *ի, իկ* մասնիկների դրսնորում.

Միջ. հյ.՝ *ինձի, ինձիկ, մեզի, մեզիկ, քեզի, քեզիկ⁷⁹*, Բ. բրբ.՝ *ընձի, ընձիկ, մեզի, մեզիկ, քեզի, քեզիկ, ձեզի, ձեզիկ*:

8. Անձնական դերանունների կրծատ ձևերի դրսնորում. Միջ. հյ.՝ *քեցօ, Բ. բրբ.՝ քէ, մէ, ձ’է*:

9. Ինչ խոսք, բերված բարբառային հատկանիշներով Բայագետի բարբառում միջինհայերենյան իրողությունների դրսնորումները չեն սահմանափակվում, որովհետև, հասկանալի է, այդ շրջանի գրավոր աղբյուրներում չեն կարող արտահայտվել ժամանակի բանավոր խոսքի, բարբառների (բնականաբար՝ նաև Բայագետի բարբառին վերաբերող) բոլոր իրողությունները: Ներկայիս բարբառներում միջին հայերենից եկող բարբառային այլ հատկանիշներ թերևս կարելի է վեր հանել ներքին համեմատությունների, լեզվի պատմական զարգացման բոլոր փուլերի տվյալների համադրման միջոցով: Ինչևէ, Բայագետի բարբառի համար բնութագրական հնչյունական, բառապաշարային և բերականական բերված փաստերը մեզ թույլ են տալիս եզրակացնել, որ Բայագետի բարբառի ներկա վիճակը շարունակությունն է միջին հայերենի շրջանում ևս գործառած բարբառային մի համակարգի, որի ներսում յուրօրինակ կերպով զուգորդված են եղել ինչպես ընդհանուրհայերենյան, այնպես էլ բերված ու գրավոր աղբյուրներում չվկայված այլ հնչյունաբերականական ու բառապաշարային հատկանիշներ:

⁷⁹ Տե՛ս նշվ. աշխա., էջ 92:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում:

Վիկտոր Կատվալյան

ԽՈՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ⁸¹

Բայազետի բարբառով ներկայում խոսում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում և շրջակա մոտ մեկ տասնյակ գյուղերում, որոնց բնակիչների նախնիները զաղթել են Բայազետ քաղաքից և հարակից բնակավայրերից, մասամբ նաև Վանից, Խոյից, Մուշից և այլ վայրերից: Վերջիններիս սերունդները այլ բարբառով խոսողների հոծ և կայուն միջավայրում ժամանակի ընթացքում բնականարար կորցրել են իրենց մայրենի խոսվածքները, սակայն Բայազետի բարբառի տարբեր խոսվածքներում դեռևս պահպանվում են դրանց հետքերը: Թէ՝ 19-րդ և թէ՝ 20-րդ դարերի սկզբներին բայազետցիները, պատմական հայրենիքից գաղթելով, բնակություն են հաստատել Արևելյան Հայաստանի նաև այլ վայրերում, և այսօր նրանց սերունդները բնակվում են Արագածոտնի (Կարքի, Արուճ, Քուչակ, Վերին Բազմարեր, Վարդենիս գյուղեր), Արմավիրի (Փշտավան, Ալաշկերտ, Զանֆիդա գյուղեր), Կոտայքի (Գողթ, Արագուտ, Արգավան, Բջնի, Կաթնաղբյուր, Ակունք գյուղեր) մարզերում և այլուր⁸²: Բարբառախոս այլ միջավայրերում Բայազետի բարբառը թողել է իր հետքը, բայց և ինքն էլ ենթարկվել է այլ բարբառների ազդեցության: Այսպես, Արարատյան բարբառի խոսվածքների մասին խոսելով՝ Ս.Բաղդասարյանը նկատում է, որ «Բայազետի բարբառի ազդեցությունը

⁸¹Տե՛ս նաև՝ Հայ գիտական բարբառագիտության 100-ամյակի գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ., Ե., 2015, էջ 9-16:

⁸²Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Ե., 2008, 211 էջ:

(http://www.cadastre.am/storage/files/pages/pg_8945925618_pg_907871769_H_H_bnak._bar..pdf):

կա Հոկտեմբերյան-Կոտայքի ենթաքարտահ վրա, բայց այդ ազդեցությունը անհամեմատ ուժեղ է դրսնորվում Կոտայքի շրջանում տեղակայված խոսվածքներում»⁸³: Մյուս կողմից՝ Բայազետի բարբառային խոսքը, հայտնվելով մեկ այլ, օրինակ՝ Դիաղինի բարբառի միջավայրում, ժամանակի ընթացքում զգալիորեն ազդվել է այդ բարբառից: Մեր դիտարկումով՝ Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի խոսվածքը, որի բնակիչների նախնիները զաղթել են Բայազետից, զգալիորեն հեռացել է մայր բարբառից: Այստեղ, օրինակ, բացակայում է Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի ամենաբնորոշ հատկանիշը՝ շրթնայնացած *ա-ն*, և ընդհակառակը՝ լիարժեքորեն արտահայտվում է Դիաղինի բարբառին խիստ բնորոշ մի հատկանիշ՝ ձայնավորների և բաղաձայնների ընդգծված բայնացումը:

Այս աշխատանքում, այսպիսով, մեզ հետաքրքրում են Բայազետի բարբառի նախնական, բնօրրանում եղած վիճակին առավել մոտ խոսվածքները, որոնք պահպանել են բարբառի հիմնական հատկանիշներն ու ամբողջականությունը, նոր հայրենիքում չեն հայտնվել բարբառախոս այլ միջավայրում ու չեն ենթարկվել այլ բարբառների գերիշխող ազդեցության: Ահա թե ինչու ուսումնասիրության ոլորտում բուն Բայազետի բարբառը ներկայացնող Գավառ քաղաքի, Հացառատ և Արծվաքար թաղամասերի, Սարուխան, Նորատուս, Գանձակ, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Հայրավանք համայնքների խոսվածքներն են, որոնցում Բայազետի բարբառը ներկայանում է անխառն վիճակով, իր բնականոն գործառության ու զարգացման ընթացքում:

Ինչպես որևէ լեզու միատարր չէ իր բոլոր դրսնորումներում, այնպես էլ ցանկացած բարբառ իր տարածման վայրերում հանդես է բերում զանազանություններ, որոնք պայմանավորված են թե՝

⁸³ Ա.Բաղրասարյան-Թափալյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973, էջ 21:

լեզվական, թե՝ արտալեզվական գործոններով: Լեզվի հասարակական բնույթը, նրա գործառական յուրահատկությունները պայմանավորում են տարբերակված դրսուրումներ տարածության ու ժամանակի մեջ: Իրողությունը այսպես է մեկնաբանում Հ. Աճառյանը. «...մարդկային հաղորդակցության միությունը բացարձակ չէ. ամեն մի համայնք իր ուրույն կյանքն ունի, և այս ուրույն կյանքը, միացած կիմայական տարբեր պայմանների և ձայնական գործարանների տարբեր տիպի գործունեության հետ, առաջ է բերում մարդկային լեզվի մեջ տարբերություններ»⁸⁴: Մեկ այլ առիթով կ գրում է. «Լեզուն ներկայացնում է անթիվ անհամար զանազանությունների մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են շեշտվում: Ամեն մի վայրում կան մի խումբ երևույթներ, որոնք նույն կամ նման են այս հարևանի հետ, ուրիշ երևույթներ, որոնք նույն կամ նման են այն հարևանի հետ. այսպես շարունակաբար: Բայց չկա մի վայր, որի լեզուն ամբողջությամբ նույնը լիներ մի ուրիշ վայրի կամ ուրիշ վայրերի լեզվի հետ...»⁸⁵: Ուստի և բնական է, որ Բայազետի բարբառը դրսուրման յուրահատկություններ է հանդես բերում հիշյալ բոլոր համայնքներում էլ, առանձին դեպքերում՝ նույնիսկ նույն համայնքի ներսում՝ պայմանավորված բնակիչների նախնիների ծագմամբ (հատկապես նման պատկեր են ներկայացնում Սարուիսան և Նորատուս համայնքները):

Բարբառագիտական հետազոտության համար բարբառի խոսվածքների ընդհանրություններից բացի կարևոր են նաև դրանց յուրահատկությունները, որոնց դիտարկումը ոչ միայն էական է բարբառային պատկանելությունը որոշելու հարցում, այլ նաև թույլ է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմելու բարբառի, նրա զարգացման ընթացքի, այլ բարբառների հետ շփումների վերաբերյալ:

⁸⁴ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Ե, 1951, էջ 114:

⁸⁵ Նշվ. աշխ., էջ 324-325:

Խոսվածքային յուրահատկություններ հանդես են զալիս հնչյունական ու ձևաբանական համակարգերում, նաև բառապաշտում:

Հնչյունական համակարգում զանազանություններ կան ինչպես իրողության դրսերման աստիճանի, ընդգրկման առումներով, այնպես էլ հնչյունափոխական երևույթների արտահայտության, բառերի հնչյունական ձևավորման տեսանկյուններից: Կան նաև միայն այս կամ այն խոսվածքում նկատվող երևույթներ: Այսպես, *ա-ի* շրթնայնացման աստիճանները տարբեր են Գավառքաղաքում և Սարուխանում (վերջինում շրթնայնացումն ավելի ընդգծված է)⁸⁶, քմայնացած *ա-ն* ավելի տարածված է Գանձակում և Նորատուսում, քան այլ վայրերում: Գավառում, Ծաղկաշենում, Հացարատում, Նորատուսում *զալ* բայի հրամայականն է *հարի*, իսկ Սարուխանում, Լանջաղբյուրում, Գեղարքունիքում՝ *արի* (*ա-ն* շրթնայնացած է): Հնչյունափոխական իրողությունները առանձին յուրահատկություններ ունեն խոսվածքների մեծ մասում: Այսպես, հետնալեզվային բաղաձայնների քմայնացում նկատվում է միայն Գանձակում և Նորատուսում: Միայն Նորատուսում և Հայրավանքում է, *է*, *ի* և քմայնացած *ա* ձայնավորներից առաջ *զ, կ, ք* հետնալեզվայինների դիմաց առկա են *շ, Ճ, Ձ* հպաշփականներ, միայն Գավառում և Կարմիրգյուղում փոխառյալ բառերում *ու-ի* դիմաց կա *ի՛* *քիֆտա*, *մինաթ*, *շիշա*: Հնչյունական տարբեր ձևավորվածությունների այլ օրինակներ. *զ՛ըլօխկօնձի* (Սարուխան),

⁸⁶ Բայազետի բարբառում *ա* շրթնայնացած ձայնավորի դրսերումների մասին տե՛ս՝ **Վ. Կատվայան**, «Ա» ձայնավորի դրսերումները Բայազետի բարբառում և «Աձառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2012, 2, էջ 48–64: Գրության դյուրության համար շրթնայնացած *ա-ի* համար համապատասխան գրանչանը չենք օգտագործում: Նշենք, որ Բայազետի բարբառում միշտ այդպիսի *ա* է հանդես գալիս բացարձակ բառակզբում, նաև բառասկզբի խուլ բաղաձայններին (բացի *հ* և *իւ* շփականները), *մ, ն* ձայնորդներին հաջորդող դիրքում:

գրլիսկօնձի (Ծաղկաշեն), *գրլիսակօնձի* (Հացառատ), *գրլիսրկօնձի* (Գանձակ). *օղոռը* (Սարուխան), *օղառը* (Գավառ, Ծաղկաշեն). *կոլթուղ* (Սարուխան), *կոլթօղ* (Հայրավանք). *խօնքիսրնթալ* (Սարուխան), *խօտիսրտալ* (Հայրավանք). *վէդրօ* կամ *վէյրօ* (Սարուխան), *վէդրը* (Արծվաքար):

Զգալի են տարբերությունները ձևաբանական համակարգում: Այդպիսիք վերաբերում են և՝ անվանական (հոգնակերտ մասնիկներ, սեռականի ձևավորում, դերանվան կարձ ու երկար ձևեր), և՝ բայական (բայի կազմություն, խոնարիչներ) համակարգերին: Այս դեպքում գերակշռում են երևույթի առանձնակի դրսնորումները: Օրինակ, Գավառում *աֆտօ* բառի հոգնակին է *աֆտօք*, մյուս համայնքներում՝ *աֆտոնէր*. *տիք* հոգնակերտը հատուկ է միայն Նորատուսին, բոլոր խոսվածքներում *քեզ* ձևի դիմաց կա նաև *քէ*, միայն Սարուխանում՝ նաև *մեզ*, *ձեզ* ձևերի դիմաց՝ *մե*, *ձե*. Գավառում և Հացառատում *ովի* դիմաց ունենք *վոն*, իսկ մյուսներում՝ *վորը*. Կօ հաստատական մասնիկ գիտեն միայն Սարուխանը, Լանջաղբյուրը և Գեղարքունիքը, ներկայի հիմքում և ածանցի անկումը հատուկ է հիմնականում Լանջաղբյուրին (հըլեմ, գըլեմ, խաքեմ, հիշեմ), մասամբ՝ Սարուխանին (հընգեմ, մըտեմ). Մյուս խոսվածքների *հիշկալ*, *կրովել* բայերի դիմաց Գավառում գործառում են *հիշկել*, *կրովալ* ձևերը. այդպես նաև՝ *խօտիսրտալ* (Հայրավանք) - *խօտիսրտել* (Արծվաքար). Ճայնավորվ ավարտվող բառերի սեռական հոլովը *յով* են կազմում խոսվածքների մի մասը (Սարուխան, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Հացառատ, Նորատուս՝ *Կարօյ*, *Աննայ*, իսկ Գավառում՝ *ի հոլովիչով՝ Կարօյի*, *Աննայի*, և այլն): Յուրահատուկ կազմություն է հանդիպում Նորատուսում և Հայրավանքում հոգնակի ստացականության իմաստով՝ *վոտը մե*, *ձեռը մե* (մեր ոտքերը, մեր ձեռքերը): Նորատուսում երբեմն որոշիչ հոդը բառիմաստի տարբերակման դեր է ստացել՝ *Դոր ես էթում* (Ուր ես գնում) – *Դորն ես էթում* (Ինչպես ես գնում):

Առավել ցայտուն են բառապաշտարային տարրերությունները: Կան բառեր, որոնք հասուն են առանձին խոսվածքների (օրինակ՝ Սարուխան՝ *օգմողօզիկ* /մողես/, կավառ. Նորատուս՝ *խընցի*, *զօվրէ* /մեծ ձագար/, աղմասօրիկ/ /ատամահատիկ/, կըլմրոստիկ/ /գլուխուննձի/. Ծաղկաշեն՝ *կէսավուր* /կեսօր/. Գանձակ՝ *կունարկ* /բասմա/. Հացառատ՝ *պրտավոր* /զատիկ/. Հայրավանք՝ անան /տատիկ/. Արծվաքար՝ *աղընջուկ* /եղինջ/. Գավառ՝ Էրկումատ /եղան/, կըվաս /կաղամբով և զազարով թթու/), կան բառեր է, որ հանդես են գալիս երկու և ավելի խոսվածքներում (օրինակ՝ Գավառ, Արծվաքար՝ *տարոց-դողոց* /տէնի/, կըսուր. Հացառատ, Ծաղկաշեն՝ *ըրցկասպ* /խուրձ/. Սարուխան, Ծաղկաշեն՝ *տանիս* /տանիք/. Գավառ, Հացառատ՝ *ախաց*. Սարուխան, Հացառատ, Նորատուս՝ *յեղրոճիկ* /եղինջ/): Կան նաև բառիմաստի տարրերություններ: Օրինակ՝ Գավառ քաղաքում *մուռթուլա* բառը նշանակում է *ճաշի խյուս*, մյուսներում՝ *խորիզ*. Նորատուսում և Հայրավանքում *հօդա* բառը նշանակում է *գոմ*, այլ խոսվածքներում՝ *զոմում առանձնացված տեղ*՝ նստելու համար. խոսվածքների մեծ մասում *հայիպուր-ը* բնական աղբյուրն է, իսկ Հացառատում, Ծաղկաշենում՝ նաև ծորակլը: Կան նաև բառակազմական յուրահատկություններ: Օրինակ՝ խոսվածքների մեծ մասում բաղիյուսական բարդությունները կազմվում են *ու շաղկապով՝ տուն ու տեղ, դուռ ու դուս, խաց ու պանիր, մինչդեռ Գավառում շաղկապի փոխարեն հնչում է ը* (*տունըտեղ, դուռըդոս, խացըպանիր*):

Խոսվածքային առանձնահատկությունները տարածքի բնակիչներին թույլ են տալիս հեշտությամբ որոշելու խոսողի՝ որ համայնքից լինելը: Սակայն, հասկանալի է, բոլոր խոսվածքները միավորվում են Բայազետի բարբառի համար ընդհանուր հատկանիշներով ու բառապաշտով, և առաջին հայացքից բոլոր համայնքներում գործառում է բարբառային նույն խոսքը: Իրենց առանձնահատկություններով հանդերձ՝ խոսվածքները բարբառի ներսում որոշակի ընդհանրություններով կազմում են խմբեր. ա)

Գավառ, Հացառատ, Կարմիրգյուղ և Արծվաքար, բ) Սարուխան, Լանջադրյուր և Գեղարքունիք, զ) Նորատուս և Հայրավանք, դ) Գանձակ և Ծաղկաշեն: Հետաքրքրական է, որ այս խմբավորումը պայմանավորված է համայնքների բնակչության ծագումնաբանությամբ: Այսպես, առաջին խմբի խոսվածքների կրողների նախնիները եկել են Բայազետ քաղաքից և հարակից գյուղերից, երկրորդ խմբինը՝ հիմնականում Բայազետի գավառի Զանգիզոր և Սուլք Օհան գյուղերից, երրորդ խմբինը՝ Արծափի Քորուն և Մոսուն գյուղերից, չորրորդ խմբինը՝ Խոյից, Սալմաստից և Բայազետից⁸⁷: Ուշագրավ է, որ երրորդ և չորրորդ խմբերի խոսվածքներում իրենց զգացնել են տալիս ենթաշերտային իրողություններ (հատկապես հնչյունական համակարգում /քմայնացում/ և բառապաշտում, երբեմն նաև քերականական համակարգում): Նշենք նաև, որ երբեմն այս կամ այն խոսվածքում նկատելի է բարբառային այլ միավորի ազդեցություն: Այսպես, Սարուխանի խոսվածքում հանդիպում են կապերի նախադաս գործածությամբ քարացած ձևեր (Բայազետի բարբառին հատուկ է համապատասխան կապերի հետադաս գործածությունը), ինչպես վեր վեր, դուռ վեր դրուան, իւրտ զ ալլ (գալուն պես), որոնք ակնհայտորեն Մշո բարբառի ազդեցության հետևանք են:

Նկատելի է, որ խոսվածքները ավելի հաճախ միմյանցից տարբերվում են բարբառային ընդհանուր հատկանիշների դրսնորման յուրահատկություններով և բառապաշտարային իրողություններով: Բարբառի շրջանակներում խոսվածքները միմյանցից տարբերակվում են նաև մեկ տասնյակի շհասնող բարբառային հատկանիշներով, ընդ որում՝ որևէ խոսվածքի առավելագույնը հատուկ են նման հատկանիշներից չորսը կամ հինգը:

Ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ հարկավոր է տարբերակել և ներմուծել խոսվածքային հատկանիշից հասկացությունը: Եթե բարբառային հատկա-

⁸⁷ Տե՛ս նաև Ռ. Բաղրամյան, Հայերեն բարբառներ. Անանա լճի ավագանի խոսվածքները, Ե, 1972, էջ 7-9:

նիշները բնութագրվում են առկայություն/բացակայություն հակադրությամբ և ունեն համակարգային բնույթ ու բարբառները միմյանցից տարբերող դեր, ապա խոսվածքային հատկանիշները կրնութագրվեն բարբառային հատկանիշների դրսնորումների որակական և քանակական տատանումներով, մասնավոր բնութով: Օրինակ՝ *a*-ի շրբնայնացման տարբեր աստիճանների առկայությունը հատկանիշի դրսնորման որակական յուրահատկություն է, քմայնացած *a*-ի, հավելական *b*-ի դրսնորումների յուրահատկությունները ունեն քանակական բնույթ, հնչունափոխական, բառերի ձևավորման, քերականական, բառապաշարային շատ իրողություններ ևս ունեն մասնավոր բնույթ: Իհարկե, խոսվածքները ևս միմյանցից կարող են տարբերվել բարբառային *հատկանիշներով* (ձայնավորահանգ բառերի սեռականի կազմություն, քմայնացման երևույթ, *q, k, p*-ի դիմաց *ջ, Ճ, Ջ*, դերանունների տարբեր ձևեր), սակայն այդպիսիք որակ չեն կազմում և բարբառի ներսում խոսվածքային հատկանիշի դեր ունեն: Պետք է կարծել որ խոսվածքում հանդես եկող բարբառային հատկանիշները հիմնականում այլ բարբառների ազդեցության կամ ենթաշերտային իրողությունների հետևանք են, բայց հնարավոր է, որ այդպիսիք լինեն նաև մարող կամ նոր ձևավորվող իրողություններ:

Վիկտոր Կատվալյան

ՈՈՒՍԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ
ԲԱՐԲԱՌՈՒՄ⁸⁸

Բայազետի բարբառում ոռուսերենից կատարված փոխառությունների քանակը, ըստ մեր հաշվումների, կազմում է մոտ 1300 բառային միավոր⁸⁹: Բարբառով գրի առնված ամենավաղ նյութերում, որոնք վերաբերում են 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին⁹⁰, ոռուսերեն փոխառյալ բառեր չեն հանդիպում: Կարելի է ենթադրել, որ այդպիսիք Բայազետի բարբառում մեծ քանակով ի հայտ են եկել նոր հայրենիքում (Սևանա լճի ափին) և առավելաբար խորհրդային շրջանում⁹¹: Ոռուսերենից կատարված փոխառու-

⁸⁸ Տե՛ս նաև՝ «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով, Ե., 2015, էջ 81-89:

⁸⁹ Կարծում ենք՝ այդպիսիք շատ ավելի մեծ քանակություն են կազմում, որովհետև մեր ուսումնասիրությունը չի ընդգրկում և չէր էլ կարող ընդգրկել բարբառային ողջ խոսքը իր բոլոր դրսորումներով: Ի դեպ, 20-րդ դարի սկզբներին Հ. Աճառյանը հայերեն բարբառներում ոռուսերենից փոխառյալ բառերի քանակը համարում է 600 (Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆ., 1913, էջ 3): Ու. Մարկոսյանը «Արարատյան բարբառ» աշխատանքում բերում է ոռուսերենից այդ բարբառ անցած մոտ 300 բառերի ցանկ (տե՛ս Ու. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե., 1989, էջ 380-384):

⁹⁰ Տե՛ս Տ. Նավասարդեանց, Հայ ժողովրդական հէրիաքնէր, 5-րդ գիրք, Տիֆլիս, 1889, էջ 79-80. «Ազգագրական հանդես», XIII գիրք, 1906, թիվ 1, էջ 37-82. «Ազգագրական հանդես», XIV գիրք, 1906, թիվ 2, էջ 69-85. «Ազգագրական հանդես», XIX գիրք, 1910, թիվ 1, էջ 115-150:

⁹¹ Խոսելով Ուրմիայի /Խոյի/ բարբառում ոռուսերենից կատարված փոխառությունների մասին Մ. Ասատրյանը նշում է, որ նախքան խորհրդային կարգերի հաստատումը բարբառը մեկ դարից էլ քիչ ժամանակահատվածում ոռուսերենից կատարել է որոշ փոխառություններ բանավոր ձանապարհով (ինչպես՝ ակուշկա, ըշկափ, ըստօլ,

թյունները վերաբերում են բազմազան ոլորտների⁹², ինչպես՝ բնակարան, տուն և կահույք (պահանջանք, պոլ, ակուշկա, ֆօթուշկա, զալ, կուխնի, կըլադովկա, զանավէսկա, պաղակօննիկ, կըրիշա, պաղվալ, բալկոն, զամօկ, կըռէսօ, պիսմէննի ստոլ, կանաֆառ, լիժանկա, տըմբուշկա, լուստրա, լամփուշկա, տանբուրէտկա, կուշէտկա, նաշնիկ, շտէպցէլ, ըշօսչիկ, կալիդօր, պըլէնդուգ, պանավօ, պըլաշշադկա, կըվառտիրա, դրվուխըսպալնի և այլն), ուտելիք և խմելիք, խոհարարություն և ամանեղեն (պիսօք, զալէք, պէշնի, պէրաշկի, տըլվարօք, կանֆեռտ, մարօժնի, մանի կըրուպա, պիվա, վարէնի, սօկ, կամպօտ, բուխանկա, սրմէտան, զակուսկի, տալէրկա, բուլութ, չաշկա, պէպէնիցա, բութուկա, կանստուրկա, վէրքօ, ժարօվնիկ, ժարիթ, սուր, բոշ, կըրեմ, ումիվալնիկ, խալադէնիկ, սամսինըսկի և այլն), գործիքներ և նյութեր (աթֆյունկա, պըլասկագուացի, կըրասկա, զաժիգալկա, լապատկա, վիկ, նաժօվկա, նաշիլկա, պըրօպուշնիկ, տըրումբա, կըլէ, զամասկա և այլն), հազուստ և զարդեր, հարդարանք (յուպկա, բըլուզկա, կանստում, սամուշկա, մայկա, նասկի, վարատնիկ, պըլաշ, կուռտկա, բասանօշկա, բէզադնիկ, տուֆիկ, յապօնկա, շուր, պալտոն, շըլապկա, նէվէտինկա, կալիցօ, աբադոկ, ըզնաչօկ, բուլավկա, պամադա, պուդրի, մանիկուռ, նդիկուլօն, բըրիլյանտ, ցեփ և այլն),

կանփէտ, պալտոն և այլն, իսկ խորհրդային տարիներին բարբարին ոռուսերեն բառեր են անցել գրական հայերենի միջնորդությամբ (տե՛ս Ս. Ասարյան, *Ուրմիայի /Խոյի/ բարբառ*, Ե., 1962, էջ 147-148):

⁹² Պետք է նշել որ այդ փոխառությունները գրեթե ընդհանուր են արևելյան բարբառների և խոսակցական հայերենի համար, վերջինից ել թերևս անցել են բարբառներին: Բայազէտի բարբառը կրող հանրությունը երբեք ոռուս ժողովրդի հետ անմիջական լեզվական շփումներ չի ունեցել եթե նկատի չունենանք 19-րդ դարում ուսական գորքի առկայությունը Բայազէտում և Շուսաստան արտագնա աշխատանքի մեկնողներին:

տեխնիկա, սարքեր, ավտոմասեր (տէլէվիզոր, պլազմանիկ, վարկա, ըստարդիզատօր, նաևսու, պիլասու, գլոուզավիկ, լեխկավիկ, բազամնիկ, բանդաժ, արլիցօվկա, մատո, կրոխիօ, պուսկաչ, ըսկոսս, զաղնի, պէրէրօկ, բառդաչօկ, վերիս, պէղալ և այլն), *ռազմական գործ* (սալդաթ, պալկօվնիկ, պօլկ, պիստալէր, գրրանատ, պօստ, չասավօ, պուլիմյօտ, աֆիցեր, ոյադավօ, պուլ ըստվօլ, շտիկնօծ, մալադո, դընէվալնիկ), *արհեստներ* (պառոտնօ, մատօրիստ, արիվչիկ, խադավիկ, պըլօդնիկ, մերէլչիկ, մայար, կաֆէլչիկ), *օրէնք* (զակոն, միլիցա, սուր անել, արվակատ, զայի պօստ, նարուշէնի, վիսիլկա, յուրիստ, զապրետ, ըշտրոաֆ), *աշխատանքային գործունեություն* (պէրէրիկ, նաշնչնիկ, վիզվըր, դակլադ, պիտիմինուտկա, օտպուսկ, պուտյօվկա, սկրլադ, ախրաննիկ, ցեխ, անտէլ, աստավկա, դալածիտ անել, ըսմէնչիկ), *մարդկային հատկանիշներ* (շուստըրի, տուպօյ, բիկ, խալտուրչիկ, արիժնիկ, ըսկըրօ, դուռակ, մելքնիկ, խիտրի, բայեկօ, բոսակ, գոռդի, գէրօյ, դուխօվ, նազլի, նախալ), *գույներ* (բէժրվի, մատրվի, ոօզրվի, կըրեմըվի, ապէլսինըվի, սեռի), *կենդանիների որոշ անուններ* (բիկ, կըրիս, կազյօլ, կարան, պիտուխ) և այլն: Առանձին խումբ են կազմում փոխառյալ հատուկ անունները, որոնք հաճախ ուսուերեն անունների կրծատ ձևեր են՝ սովորաբար համապատասխան հնչյունափոխություններով, ինչպես՝ *Շանշա, Միշա, Վալոր, Վըլադ, Սէրոժ, Գայա, Գըրիշ, Դիմիտրը, Նայյա, Իլիշ, Լուդա, Լուշա, Մարտիս, Ժէնիկ, Սըլվէտ, Ժօրիկ, Լէնա, Լուրա, Կոյա, Միտյա, Վիտյա, Յուրիկ, Նօլվէտ, Նինա, Շուռիկ, Վայա, Օլգա, Վասիլ* և այլն: Ռուսերենից փոխառված բառեր գրեթե չեն հանդիպում մարմնի մասերի, ընտանեկան հարաբերությունների անվանումներում, ֆիզիկական աշխարհին, ժամանակին ու տա-

բածությանը, թիվ ու քանակին վերաբերող հասկացությունների անվանումներում⁹³: Ոուսերենից փոխառյալ շատ բառեր էլ դուրս են մղվել կամ դուրս են մղվում բարբառային խոսքից: Դրանք բառեր են, որոնց աստիճանաբար փոխարինում են հայերեն համարժեքները (օրնակ՝ ըշկոլ – դըքոօց, ըշկաբ – պահարան, ըստօլ – սեղան, սաքան – բաժակ, բիլէտ – տօմս, սուլյա – դադավոր), կամ էլ այլևս գործառույթ չունեցող իրողությունների անվանումներ են (ձրօօ /սայլախումբ/, զալիֆե, կալօշ, կամօդ, կըրասինգա, կօմսօմօլ, պահույա, կօլխօօ, պիյօններ, բըրիզադիր, ռայկօմ, պալիխտրութօ) և այլն:

Ե՛վ այլ լեզուներից, և՝ ոուսերենից կատարված փոխառությունները բնականաբար ենթարկվում են՝ բարբառի հնչյունական օրինաչափություններին, այլ կերպ ասած՝ դրանցում արտահայտվում են՝ բարբառում գործող հնչյունական իրողությունները: Ինչպես նկատել է Հ. Աճառյանը, «մայր ձևին և անկէ փոխառեալ հայացած ձևին համեմատութիւնը նոյնպէս երևան պիտի հանէ խումբ մը ձայնական օրէնքներ, որոնց ուսումնասիրութիւնը դարձեալ մաս պիտի կազմէ հայ Զայնարանութեան գիտութեան»⁹⁴: Բայզետի բարբառի ոուսերենից կատարված փոխառությունները թույլ են տալիս դիտարկել բարբառային խոսքի հնչյունական կազմությանը ներկայում բնորոշ մի շարք օրինաչափություններ, ինչպես նաև դրանցում կատարված տեղաշարժերը նախորդ փուլերի բառաշերտերի իրողությունների համեմատ: Այսպես, ոուսերենից փոխառյալ բառերում նոյնպէս համապատասխան

⁹³ Ինչպես նկատել է Ա. Սուրիհասյանը, «Որպես կանոն, խիստ հազվադեպ են փոխառվում հիմնական ֆոնդի բառերը, օրինակ՝ ազգակցական-արյունակցական կապեր ցույց տվող ... բառեր, մարմնի մասերի անվանումներ...., անձնական դերանունները, քանակական թվականների մեծ մասը, կարևորագույն բայերը, հիմնական որակական ածականները և այլն» (Ա. Սուրիհասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 188):

⁹⁴ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 5:

դիրքերում⁹⁵ կայուն կերպով գործառում է շրթնայնացած անձնավորը (աղքատ, պահանջող, կամացի, տարբար, ֆաներկա, սահմասրվալ շագ, մաստեռ, նախաշենի և այլն), ընդ որում՝ այն համապատասխանում է նաև տվյալ դիրքերի՝ ոռուերենում *օ հնչույթի և հնչատարբերակին, ինչպես՝ աղոթ, պահանջող, կամացիոր, տանձոկ, ֆանուունզա, սահմատ և այլն:* Փոխառություններում իրենց բաշխման օրինաչափությունները՝ հիմնականում պահպանում են է, և հնչունները⁹⁶, ինչպես՝ *աղքեզատ, աղքենտ, բատարէ, բէսէտկա, զաղեռժկա, զասէդանի, ժէշտ, ժեռորվա, ինժիներ, յեխիդնի և այլն:* Հին բառաշերտի համեմատությամբ փոխվել է օ և ո հնչունների գործառական փոխարաբերությունը: Եթե Բայազետի բարբառի հին բառաշերտում անշեշտ դիրքում գործառում է միայն *օ-ն*, իսկ շեշտակիր վանկում՝ սովորաբար *n-ն*, ապա ոռուերեն փոխառություններում երկու դեպքում ել ունենք ^օ⁷, ինչպես՝ *նախոն, մօստ, մօշնի, կօմսօմօլ, պօլ, կրոս, բստօլ, զամօկ, զօնթիկ, չասավօ, չուժօյ և այլն*⁹⁸: Ոռուերենից փոխառյալ շատ բառեր, իրենց վերջում ունենալով ակամ *օ*, եականորեն ընդլայնել են Բայազետի բարբառի բառավերջում այդ ձայնավորների գործառությունը, ինչպես՝ *ակուշկա, սանֆէտկա, տրրումրա, բուտկա, կիսլատա, բայէկօ, ֆրսյօ, մաքո, վեդրօ և այլն:* Ոռուերեն փոխառյալ բառե-

⁹⁵ Այդ դիրքերի մասին տե՛ս **Վ. Կատվալյան**, *Հայ բարբառագիտության հարցեր*, էջ 37-62:

⁹⁶ Այդ օրինաչափությունների մասին տե՛ս **Վ. Կատվալյան**, նշվ. աշխ., էջ 153-170:

⁹⁷ Իրողությունը դրսենորվում է նաև միջինհայերենյան շրջանին վերաբերող պարսկապուրբական և այլ կարգի փոխառություններում (օր.՝ դօշ, դօստ, թօփ, կօչ, սինօռ, քօք և այլն), այսինքն՝ սկզբնավորվել է ավելի վաղ շրջանում:

⁹⁸ Բացառություն է կազմում *ն-ից առաջ շեշտակիր դիրքը*, որտեղ հաճախ հանդիւ է գալիս *ո. բալկոն, բիթոն, բալոն, զակոն* և այլն:

րում քմայնացած այս ձայնավորի խիստ սակալ գործածությունը (այս ունեցող բառերից են՝ *բըռանկ*, *բուզան*, *լապ*, *խաղեն*, *կրրիշան*, *կուզան*, *ձանձան*, *նանականիկ*, *նանականիկ*, *նիշան*, *ռէզրան*, *ֆանան*) թույլ չի տալիս խոսել բարբառում այդ հնչյունի հետագա տարածման միտումի մասին։ Հին բառաշերտի բառասկզբի շնչեղ ձայնեղների առկայությամբ՝ ոռուսերեն փոխառությունների բառասկզբում հանդես են գալիս ձայնեղներ⁹⁹, ինչպես *բատարէ*, *բուակ*, *զըռուզավիկ*, *զայկա*, *դաժէկ*, *դօպուսկ*, *ձանձան* և այլն։

Ոռուսերեն փոխառությունները էական տեղաշարժ են երևան բերում շեշտափոխական հնչյունափոխության ոլորտում։ Եթե բարբառիս հին բառաշերտի շեշտակիր վանկի *ի*, *ու*, *է* ձայնավորները սովորաբար *և*, *ո*, *ե* հնչյունները հաճախ շեշտագրկման հետևանքով կարող են ենթարկվել փոփոխությունների (տանիս-տանսի, ջուր - ջըրվոր, կէս - կիսել, բ'էրան - բ'էրնի, մըրուտ - մըրօտել, ցօրէն - ցօրնի), ապա ոռուսերեն փոխառյալ բառերում ձայնավորների նման փոփոխությունները խիստ հազվադեպ են։ Կանֆեռուտ - կանֆըռուտի, աղյալ - աղյըլի, բիկ - բրկութուն, բինդ - բրնդի, զուր - զըրբէր, ըշկար - ըշկրի, կանափաղ - կանափսի, կանոնիզ - կանոնիզի, յաշիկ - յաշկի, շուր - շըրավոր, չին - չըներ, պանդվալ - պանդվըլի, ռէզին - ռէզնէ, սանդառ - սանդըրի, սանրան - սանրնի, վիլկ - վըլկել, վինդ - վընդի, տուշ - տըշի։ Հնարավոր է, որ այս բառերը ոռուսերեն փոխառությունների համեմատաբար վաղ շրջանի շերտ են ներկայացնում՝ ի տարբերություն չհնչյունափոխող փոխառությունների, որոնք ել ներկայացնում են բարբառիս նոր իրավիճակը շեշտափոխական

⁹⁹Տեղաշարժը վերաբերում է ավելի վաղ շրջանի, որովհետև արաբապարսկաթուրքական փոխառություններում ևս բառասկզբում ունենք ձայնեղ պայթականներ ու հապաշականներ, ինչպես՝ *բօյ*, *բէխէր*, *բողագ*, *դուզ*, *շանավար*, *բարանքանք*, *ջէր*, *շուղար* և այլն։

հնչունափոխության առումով: Ոռուսերեն փոխառություններում արձանագրվում են բարբառիս հնչունական օրինաշափություններով պայմանավորված փոխազդեցական հնչունափոխության զանազան դեպքեր, ինչպես՝ առնմանական խլացում (աբրօշկա /обложка/, բասանօշկա /босоножки/, բէսէտկա /беседка/, գըլատկի /гладкий/), ձայնեղացում (աղբիտ /отбитъ/, աղբօյ /отбой/, բանգա /банка/), հպաշփականի շփականացում (բօշկա /бочка/, զազրանիշնի /загранничный/), դրափոխություն (ավայրա /авария/, քոնոր /брюсок/), հնչունի անկում (աթվօռկա /отвертка/, աչօս /отчет/), հավելում (աբէլանցի /операция/, ապտուրկ /аптека/, կրրանթ /кран/, ըստոլքա /столб/), հնչունների միաձուլում (յավիցա /явиться/, դարիցա /дойтиться/) և այլն: Թերևս բարբառիս արտաքերական յուրահատկություններին փոխառությունների հարմարեցման միտումով է, որ շատ դեպքերում ոռուսերենի երկինշունների դիմաց ունենք պարզ ձայնավորներ (բուակ /босяк/, դույմ /дюйм/, ժիրիբօվկա /жеребьевка/, լուկ /люк/), խուլի դիմաց՝ շնչեղ (զալօֆ /галоп/, զառշօք /горшок/, զանիթ /занятьте/, ժարիթ /жарить/), խուլի դիմաց ձայնեղ (ատկօք /откос/, խամուդ /хомут/, ըսկըրք /скупоий/), օ-ի դիմաց՝ ու (ակուշկա /окошко/, բուլղուզեր /бульдозер/, զարուխ /горох/, լամփուշկա /лампочка/), երկշրբնային պայթականի դիմաց՝ շրբնատամնային շփական (ավգօն /обгон/, զարդիրօվկա /гардероб/), շրբնատամնային շփականի դիմաց՝ պայթական (ըշկաֆ /шкаф/), պ - ի դիմաց՝ շկամ չ (շիթ /щит/, շիտոկ /щиток/, չօտկ /щетка/, բօռշ /борщ/) և այլն: Բայազետի բարբառում շատ տարածված է ոռուսերեն փոխառությունների վերջին ձայնավորի անկումը (ամֆիանի /ожидание/, գօնի /годный/, ըշկօլ /школа/): Երբեմն փոխառյալ բառերը Բայազետի բարբառում հանդես են զալիս հնչունական զուգաձևություններով, ինչպես՝ ապէրացյա - աբէլանցի, կամսուր-

կա - կամստըրուտկա, անվարյա - անվայրա, դիրէկտօր - դէրէկտօր, գարյատկա - գայրատկա, բապիշկա - բշպիշկա - իպիշկա և այլն:

Իրենց առատությամբ ու գործածականությամբ հանդերձ՝ ոռուսերեն փոխառությունները բառակազմական առումով գործուն չեն, դրանք խիստ սակավ են բարդություն կազմում հայերեն որևէ բաղադրիչի հետ (օրինակ՝ կրրեմախառը, մարզարինախաս): Հանդիպում են ոռուսերեն փոխառյալ բարդություններ, որոնց բաղադրիչները առանձին ևս փոխառված են, ինչպես՝ պանկլ և վօզ - պանկլավօզ, պանր և վօզ - պանրավօզ, սուխօյ անտկազ, տըրուդավօյ կընիշկա և այլն: Ածանցական կազմություններում սովորաբար գործառում են ոռուսերենի ածանցները, ինչպես՝ աբիվկա - աբիվչիկ, ահիրանա - ահիրաննիկ, ակառյօն - ակառյօնիստ, անտիլ - անտիլնի, բազաժ - բազաժնիկ, բալկոն - բալկոնչիկ, բըռանկ - բըռանկօվչիկ, գրոռուզ - գրոռուզավիկ, զակոն - զակոննի, զավօդ - զավադակարկօ, կամանդ - կամանդիր, կըրեմ - կըրեմբվի, մօմենտ - մօմենտալնի, զօդնի - նիզօդնի, պըլէն - պըլէնավիկ, պըռախօդ - պըռախադնօյ, պըրինցիպ - պըրինցիպալնի և այլն: Հայերեն սակավաթիվ ածանցներ են ոռուսերեն փոխառություններով բաղադրություններ կազմում. բըկութուն (բիկ), զալբստուկավոր, դէֆէկտավոր, դուխօվ, ոխսկօվ, վիդով¹⁰⁰, դույմանց, շպիյօնութուն, ծէշտէ, ռէզնէ, խըլամանց, նէրվային, շուստըրութուն:

Ոռուսերեն փոխառությունները բարբառումս սովորաբար չեն իմաստափոխվում: Իմաստափոխության մեր ունեցած օրինակներից են՝ աճրեց (հասցե) - աղրէս (բցու. հեղինակություն), ծուկ (ցու) - բիկ (անհասկացող), կաբահ (վարազ) - կաման (անձոռնի մարմնեղ), լակ (լաք) - լաք (կայչուն անձնավորություն), զակуска (թթեթե ուտեստ) - զակուսկի (ոզելից խմիչքի ակրատ), լամպա (լամպ) - լամփի (նավթալամպ), խօօդ (ցուրտ) - խօօդ (սառնա-

¹⁰⁰ Գործիականի վերջավորությունը այս դեպքում ունի ածանցի արժեք:

րանի սառցախցիկ), կառլա (կաթիլ) – կարլի (սրտի դեղի կաթիլ-ներ), տօսք (խճուղի) - շօշ (գյուղի հիմնական փողոցը) և այլն: Երբեմն ոռւսերեն փոխառությունները կարող են իմաստազուրկ լինել (օրինակ՝ որա յ կապակցությունը պահմտոցի խաղի ժամանակ արտասանվում է պառայա, որը գործածվում է բանաձևային ֆպա-ռա-յա, բա-ցէ-ցի, վիրը տէսա թը-քէ-ցի: արտահայտության մեջ առանց որևէ իմաստի) կամ հնչյունափոխության հետևանքով կորցնել ներքին ձևը (օրինակ՝ город за город արտահայտությունը դարձել է գօրօզագօրօզ և սուլ համապատասխան խաղի անվանում է առանց բաղադրիչների ընկալման): Սակայ են այս փոխառություններով դարձվածքները. արառօսը ֆըռալ – պատասխանը տալ, անկէտա՝ յես լրոացընում – շատ ես հարցեր տալիս, բալթա բեղեր – երկար և կեռ բեղեր ունեցող, ըսպօն զալ – գրագ գալ, կամանդ քաշել – հրամայել, յառլիկ կրպցնել – անվանարկել, չըները հընգնել – հեզն. աստիճանագրկվել և այլն:

Ոռւսերեն փոխառությունների մեծ մասը գոյականներ են՝ և թանձրացական (անյալ, բալկոնչիկ, բանգա, բըռասլէտ, գալէթ, գարուխ, զարօն, զակուսկի և այլն), և՝ վերացական (արէլանցի, արսլուժիվանի, ազրանիչէնի, ախօտ, ապրավդանի, ավարյա, ատլոզ, բուզա, դավերյա, զարկուժկա, ուկլօն և այլն): Գոյականները բարբառում յուրացվել են ըստ թվի և հոլովի կարգերի: Անեզական գրյականները վերածվել են սովորականների՝ եզակիի համապատասխան ձևով, ինչպես օбоու (պաստառ) - մրօյ, ոտխօն (մնացորդներ) - ատխօտ (մնացորդ), կոնսերվա (պահածոներ) - կանսեռվա (պահածոն), հօսլու (պատգարակ) - նասսիլկա և այլն: Միավանկ գրյականները հոգնակին կազմում են -եր (խօդեր, լիստեր, լէնթեր, զըբեր), իսկ բազմավանկները՝ -ներ (ոյամաշնիկներ, ատխօններ, կարբուրատըրներ) հոգնակերտներով: Զայնավորով ավարտվող գրյականները հոգնակին կազմում են

բարբառի օրինաչափություններով (բալկա – բալկէք, սանոռւշկա - սանոռւշկէք, բատարէ – բատարէներ/ք, պանավօներ, վեդրօներ, պէչէնիք, սանպաշկիք): Հոլովումը նույնպես տեղի է ունենում բարբառի օրինաչափություններով, ինչպես՝ սանոռւշկա - սանոռւշկի, բալկոն – բալկոնի, բասէ – բասէյ, բիկ – բրիկ, գարանտյա – գարանտյայ, զակուսկի – զակուսկու, կրլէ – կրլէյ, կօլցօ – կօլցօյ, յեղդա – յեղդայ և այլն:

Շատ են ածականները՝ ինչպես որակական, այնպես ել հարաբերական (ձպասնի, բայէկօ, բըռանկ, բիկ, բոսակ, գըլատկի, գօղնի, դէլավօյ, դուխօվ, զիմնի, դուրին, զակոննի, զավադնօ, ըսկըրք, ժէնըսկի, ժիտկի, ժուլիկ, ժօստկի, լիշնի, լողըռ, խիտրի, կապրիզնի, կըլէշատնի, մօշնի, յեխիդնի, սալիդնի և այլն), մակրայնները (ձկուուատնի, ձտդուշի, ճատկըռավէննի, դավօլնի, խալաստօ, կատէգօրիկ, մամենտալնի, կըռուգօմ, մյօտրըվի, նիշն, չօտկի, պանդրյադ, պանտայաննի, պըռօտիվ, ռէզկի, սըռազու, վափշէ, վէշնի, տօշնի և այլն): Որոշակի քանակություն են կազմում վերաբերականները (դաժէ, զատօ, զըրյա, լիշքի, կանօշէ, մալադէց, պանդումայէշ, պանժալուստա, պըռօստը, պըրիվէտ, սէռավնօ, ֆըայօ): Հազվադեպ հանդիպում են այլ խոսքի մասերի բառեր, ինչպես՝ դավայ, ուռա (ձայնարկություն), կալօյ նիբուդ, ցելի (դերանուն), չէրէզ (կապ), պըրիչօմ, ռազ (շաղկապ): Բայազետի բարբառում ոռուերեն փոխառյալ հիմքերով համադրական բայերի թիվը սահմանափակ է: Հանդիպում են նման մի քանի կազմություններ, ինչպես՝ անսփալտէլ, բրկընալ, բօմբէլ, դուխօվնալ, զամասկէլ, լողըռնալ, լաքէլ, խօղէլ, նէրվաճանալ, շուստըրիյանալ, չօտկէլ, պիսօքէլ, պօլէլ, ռէմօնտէլ, սըվարկէլ, տանկութէլ, տօշկէլ, տօռմուգէլ, ֆիլտըրէլ: Ինչպես երևում է, բերված բայերը մեծ մասամբ Ե խոնարհման ներգործական սեռի են՝ հիմնականում մի բանով պատելու նշանակությամբ, իսկ Ա խոնարհման

սակավաթիվ բայերն ունեն մի բանի վերածվելու նշանակություն: Մեծ քանակություն են կազմում հարադրական կազմությունները՝ ոռուսերեն հարադրով և վերացական նշանակությամբ բայական բաղադրիչով, ինչպես՝ արէլանցի անել/հըլնել, աղօյ տալ, ախօս ունէնալ, ակռուժիտ անել, անալիզ անել/տալ, աջօկ հ'ավքել, աջօս տալ, ասլածնէնի տալ, աստավիտ անել, ավգօն անել, ավարյա տալ, ատկազ անել, ատվէտ տալ, բալէտ անել, բօնք անել, զարանտյա տալ, դավէրյա անել, զակուսկի անել, զանիթ անել/հըլնել, սպօռ անել, լէվի էթալ, խալտուրա անել, մաներյալ գ'ըրել, մարօզ անել, յազվա հ'ըլնել, կրրիշան անել, պօլ զանել, չուժօյ խանել, չուչէլ դ'առցընել, պանիլօզ քաշել, պաս տալ, պարարիշ զանել, պէրերօյ հ'ըլնել, պըլան քաշել, պըրիստուազ բ'ըռնել, պիտնօ բ'ըռնել, ոէզքա խանել, վընուշկէրի մէջ հ'ըլնել, օչէրէդ կայնել, դաբրո տալ և այլն: Որոշ ձևեր թէրևս կիսապատճենումներ են ոռուսերենից, ինչպես՝ վերիս վէրցել (взять вверх), չեստ տալ (отдать честь), կամանդ տալ (подать команду), պըլէն հընզընել (попасть в плечо), կօյյա խանել (снять копию) և այլն: Տարածված են նաև բայական այնպիսի հարադրություններ, որոնցում ոռուսերեն բաղադրիչը ներկայանում է անորոշ դէրբայի բարբառում իբրև այդպիսին չընկալվող ձևով, ինչպես՝ գույշտ հ'ըլնել, դարավիտ անել, դաբիցա հ'ըլնել, ժարիթ անել, պէրէժիվատ հ'ըլնել, աղբիտ անել, բուքսավատ անել, դալաժիտ անել, զաստավիտ անել, յավիցա հ'ըլնել, պըլատիտ հ'ըլնել, զուրոխիտ անել, դակազատ անել և այլն: Բայաձևերը կարող են վերածվել անունների, օրինակ, շարիտ (տապակել) բայր բարբառում վերածվել է ժարիթ (տապակած կարտոֆիլ) գոյականի, իսկ զահյատ (զբաղված է) բայաձևը՝ զանիթ (զբաղված) ածականի: Խոնարհման մեջ ոռուսերեն փոխառությունները որևէ յուրահատկություն հանդիս չեն բերում:

Այսպիսով, ոռուսերենից Բայազետի բարբառում կատարված փոխառությունները, լինելով զգալի քանակության և ունենալով մեծ գործածականություն, առավելապես հետաքրքրություն են ներկայացնում հնչյունաբանական առումով; Այդ փոխառությունները բառակազմական առումով գործուն չեն, քերականական առումով լիովին հարմարվել են բարբառի օրինաշափություններին և յուրահատկություններ են հանդես բերում բայակազմության մեջ:

Գարիկ Մկրտչյան

ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ, ՏԱՐԱԾԱԿԱՆ ԲՈՒՆ
ՀԻՄՔԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴԻՌՔԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ¹⁰¹
(հանրալեզվաբանական դիտարկումներ)

Մշո բարբառը հայերենի ամենահին և ամենամեծ բարբառներից մեկն է: Այն իր մեջ ամբարում է հայ ժողովրդի պատմական, հոգևոր, նյութական, լեզվական հարուստ մշակույթը, և այն հետազոտական տարրեր ոլորտներում գրեթե միշտ գտնվել է հայագետների ուշադրության կենտրոնում: Մշո բարբառն անսպառ նյութ ունի, որ օգտագործվում է պատմագիտական, լեզվաբանական, ազգագրական, բանահյուսական ուսումնասիրություններում: Մշո բարբառի գոյությունը՝ բուն կենսատարածքով և լեզվական իրողությունների հնությամբ, հայ ժողովրդի՝ աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկը լինելու լավագույն վկագույն վկայագիրն է:

Մշո բարբառով կին խոսում և մշեցիներ կոչվում ոչ միայն Մշո դաշտի կամ պատմական Տարոն գավառի հայերը, այլ նաև Խնուսի, Ալաշկերտի, Բուլանըի, Խնուսի, Մանազկերտի, Արձկեի, Խլաթի, Արձեշի ու Բաղեշի բնակիչները: Մշեցիների հիմնական զբաղմունքը եղել է երկրագործությունը, այգեգործությունը, իսկ լեռնային շրջաններում՝ անասնապահությունը: 19-րդ դարի վեր-

¹⁰¹ Տե՛ս նաև՝ «Էջմիածին» հանդես, 2014, ԺԲ, էջ 81-89: Այս աշխատանքը ներկայացվել է նաև Ռուսաստանի Դաշնությունում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում (**Гарик Мкртчян, Диалект Муша, Лингвистическая экология: Проблематика исчезающих языков и культур в истории и современности**, 19-22 сентября 2014 года, Ставрополь-2014, стр. 174-193):

շերին և 20-րդ դարի սկզբներին զարգացած է եղել նաև առևտուրը և արհեստները¹⁰²: Մշտ բարբառը տարածվել է Վանա ծովի հյուսիսային, արևմտյան և հարավ-արևմտյան հատվածներում, այսինքն՝ տարածվել է Վանա լճի արևմտյան եզերքներից մինչև Տավրոս, Բյուրակնյան լեռները և մինչև Տիգրիս գետը՝ բարբառի տարածման սահմաններում ընդգրկելով նաև Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ալաշկերտ շրջանը, որը հյուսիսից հարում է Հայկական պարին, հարավից՝ Ծաղկանց լեռներին, և սահմանակից է Իրանին: Մշտ բարբառի կենտրոն է համարվել Մուշ քաղաքը, քանի որ 19-րդ դարում այն եղել է տարածաշրջանի առաջատար քաղաքը, որին նպաստել է յե՛քակչության թվաքանակը, թե՛քակչության կենսամակարդակն ու զարգացվածությունը: Մուշ կենտրոնը հյուսիսից սահմանակից է Խոնուսին և Ալաշկերտին, հարավից՝ Բաղեշին և Սասունի լեռներին, արևելքից՝ Դիաղինին ու իր բարբառային արեալում չգտնվող Սոկսին, արևմուտքից՝ Բուլանըրդին:

Հայերենի բարբառների աշխարհագրական դասակարգմամբ Մշտ բարբառը հայերենի բարբառների արևմտյան խմբակցության բարբառ է, սակայն լեզվական մի շարք դրսևորումներում միշակա գծեր է հայտաբերում արևելյան խմբակցության բարբառների հետ նույնպես, ձևաբանկան դասակարգմամբ «Կը» ճյուղի բարբառ է¹⁰³, հնյունական դասակարգմամբ՝ երկրորդ տեղաշարժի երրորդ ենթախմբի բարբառ¹⁰⁴, իսկ հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգմամբ Մշտ բարբառը ներառ-

¹⁰² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հասոր 1, Ա-Դ, ԵՊՀ հրատ., Ե., 1986, էջ 687-689:

¹⁰³ Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, (Հ. ԱՃԱՐՅԱՆ, Հայ բարբառագիտություն. -Ուրշազիծ և դասավորություն հայ բարբառների), Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 116:

¹⁰⁴ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1949, էջ 30-31:

վում է Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախմբի մեջ՝ կոչվելով Տարոնի միջենքաբարբառ¹⁰⁵:

Մշո բարբառի տարածման սահմանները, որոնք վերջնական ճշգրտված չեն լեզվաաշխագրական սպառիչ հաշվարկներով, մեծ տարածքներ են ընդգրկում: Հայկական երեմնի պետությունների գոյության պայմաններում Մշո բարբառը և նրա խոսվածքները պատմականորեն տարածվել են Մեծ Հայքի Տուրուբերան և Այրարատյան նահանգներում¹⁰⁶: Այս նահանգները ժամանակի ընթացքում՝ հատկապես ուշ միջնադարում, ընկել են Թուրքերի տիրապետության ներքո՝ 16-րդ դարում վերանվանվելով Բիթլիսի և Էրզրումի: Մշո բարբառի և նրա խոսվածքների Բիթլիսի, մասամբ՝ Էրզրումի նահանգների սահմաններում ներառելը պատմական և հետադարձ վերականգնողական փաստերի արձանագրում է, քանի որ Պատմական Հայաստանի այդ տարածքներն այսօր գտնվում են Թուրքիայի տարածքում:

Մշո բարբառն ունի ինը խոսվածք՝ Բաղեշ, Խլաթ, Արծեկ, Արձեշ, Մանազկերտ, Մուշ, Բուլանըդ, Խնուս, Ալաշկերտ: Այս խոսվածքները տարածականորեն մերձ են Պատմական Հայաստանում և, ինչպես արդեն նշել ենք, գտնվում են Տուրուբերան, Այրարատյան նահանգների սահմանները միմյանց հատող ու միավորող տարածքներում և այդ պատմական նահանգների կենտրոնական հատվածներում: Տուրուբերանի մաս են կազմել Մուշի, Բաղեշի, Խլաթի, Արծեշի, Արձեշի, Մանազկերտի, Բուլանըդի, Խնուսի խոսվածքները, միայն Ալաշկերտի խոսվածքն է ընդգրկվում Այրարատ նահանգի մեջ: Թուրքական վարչատարածքային սահմանաբաժնմամբ Խնուսը նույնպես ներառվում է Էրզրումի նահանգի շրջանակներում:

¹⁰⁵ **Գ. Զահոռիկյան,** Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 185:

¹⁰⁶ **Բ. Հարությունյան,** Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա, Ե., ԵՊՀ հրատ., 2001, էջ 219-254:

Մշտ տարածքը, նրանում եղած լեզվական շերտերի ու դրանց տարածման սահմանների քննությունը կարու է ամբողջական ուսումնասիրության, եղած բանասիրական ուսումնասիրությունները, որքան արժեքավոր ու նշանակալից են, ակնարկային բնույթ ունեն, նկարագրական ու գնահատողական են: Մշտ բարբառի մասին առաջին լեզվապատմական վերլուծությունները ներկայացվել են այդ տարածքի ժողովրդական բանահյուսական հարուստ շերտերի՝ հերիաֆների, առած-ասացվածքների, գրույցների, երգերի, «Սասնա ծոեր» էպոսի հավաքագրմամբ ու տպագրությամբ, որոնց միջոցով Մշտ տարածքի լեզվական համակարգերի ընդհանուր պատկերը գրեթե տեսանելի է դարձել: Մշտ տարածքի մասին ժողովրդական-բանահյուսական բնույթի ուսումնասիրություններն ավելի շատ են, քան տեսական-հետազոտական, ի մասնավորի՝ լեզվաբանական: Այս առումով անուրանալի են 19-րդ և 20-րդ դարերի հայագետներ Քերովք Պատկանյանի, Լևոն Մսերյանցի, Գարեգին Սրբանձոյանցի, Արիստակես Վարդապետ Սեղրակեանի, Յ. Ամրիկյանցի, Ս. Դանիելեանի, Բենսէի, Ս. Հայկունու, Գ. քահանա Նժդեհեանց, Գարեգին Սարկավագի, Բ. Խաչարեանցի, Սէնեքերիմ Արծրունու, Զ. Կէնմեանի, Հրաշյա Աճառյանի, Քերովք Կարապետյանի, Հ. Համազասպ Ոսկեանի, Ս. Հ. Բաղդասարյան Թափալցյանի, Սմբատ Շահնազարեանի, Կարօ Սասունու, Գեղամ Տեր-Կարապետյանի, Քերոք Մադաթյանի, Արուսյակ Սահակյանի ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են Մշտ տարածքի լեզվական-նյութական՝ լեզվաբանական և բանագիտական հարուստ ժառանգության այս կամ այն կողմին:

Նշված հայագետներից Մշտ բարբառի լեզվական հարցերին անդրադարձել են ոչ բոլորը: Խնդրո առնչությամբ անուրանալի են Քերովք Պատկանյանի, Լևոն Մսերյանցի, Հրաշյա Աճառյանի, Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանի, Սմբատ Շահնազարեանի, Քերոք Մադաթյանի հետազոտությունները: Նշալ հետազոտողները Մշտ տարածքը դիտարկել են լեզվական հարցերի

կարևորմամբ: Նույնքան կարևոր արժեք ունեն բանագիտական բնույթի աշխատությունները. բանասիրական այդ հետազոտությունները, որպես լեզվական աղբյուր, կարևոր օժանդակ աղբյուր են Մշո տարածքի լեզվական համակարգի ամբողջական ուսումնասիրության ու նկարագրության համար, որոնց կարևորությունը հավասարազոր է կենդանի խոսքին: Այս առումով մեծ արժեք են ներկայացնում Գարեգին Սրվանձոյանցի, Բենսէի, Ս. Հայկունու, Կարօ Սասունու բանահավաքչական մեծարժեք ուսումնասիրությունները:

Մշո տարածքը, իրավամբ, եղել է բուն հայկական նկարագրի արտացոլման ամենացայտուն կենտրոնը դարեր շարունակ և հայտնի է իր հոգևոր-նյութական հարուստ մշակությով: Բանասերները, հիմնվելով իրական փաստերի վրա, գրեթե միշտ փաստել են, որ Մշո (Տարոնի) աշխարհը մշակութային մի հնադարյան օրրան է եղել՝ հարուստ հեթանոսական մեհյաններով ու քրիստոնեական եկեղեցիներով, կրոնական ծեսերով ու աղոթքներով, հավատալիքներով ու ավանդույթներով, ծեսերով ու տոնակատարություններով, նավասարդյան հանդեսներով ու երգերով, ինչպես նաև դյուցազնավեպերով, առասպելներով ու հերիաթներով: Արավար ապացույցն այն է, որ «Սասնա Ծոեր» էպոսի պատումների մեծ մասը գրառվել են հենց այս տարածքում ապրած բանասացներից, որոնք էպոսն իրենց բուն հայրենիքից սերնդեւ սերունդ տեղափոխել են նոր հայրենիք՝ ՀՀ-ի տարածք¹⁰⁷: Մշեցիների ծողովորդական բանահյուսությունը պատկերավոր է և խորախորհուրդ: Բնական երևույթներով իրենց հույզերը, սերն ու զանազան զգացողություններն արտայատելու շնորհիվ մշեցիները, ըստ էության, վերածվել են բնութենապաշտների, իսկ մշեցիների կողմից գործածված հազարավոր առած-ասացվածքները ու պատկերավոր կատակներն ու առակները վկայում են նրանց սրամիտ, խորիմաստ ու խմաստուն լինելը: Տարոն-Տուրութերանի հայկա-

¹⁰⁷ Ա. Սահակյան, «Սասնա ծոերի» պատումների քննական համեմատություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975, էջ 30-59:

կանության վառ վկայություններն են նաև նրա բազմաթիվ եկեղեցիները. նրանց ընդհանուր թվաքանակը, ըստ հետազոտող Հ. Համազասպ Ոսկեանի, 48-ն է եղել¹⁰⁸, որոնցից ամենանշանավորներն են Առաքելոց կամ Ս. Ղազարի վանքը, Եղրդուտի Ս. Յովհաննսի վանքը, Ս. Կարապետի վանքը և այլն:

20-րդ դարի սկզբից Մշո բարբառի գրադեցրած տարածքը հայաթափվել է բազմաթիվ հայաբնակ այլ վայրերի նման: Մշեցիների տեղահանությունները սկսվել են 19-րդ դարի առաջին կեսերից, և այդ ամենը շարունակվել է շուրջ մեկ դար: Մշեցիների տարագրման ուղիները երկուսն են եղել՝ կա'մ Արևելյան Հայաստան, կա'մ Կոստանդնուպոլիս (Ստամբուլ), որտեղից նաև եվրոպական այլ քաղաքներ: Արդեն 1860-ական թվականներին տասնյակ մշեցիներ ապատանում էին Կոստանդնուպոլսում, կատարում հիմնականում բեռնակրի աշխատանք, և ժամանակի ընթացքում այդ թիվը մեծանում է և ընդգրկում մարդկային մեծ հոսքեր: 19-րդ դարի 80-ական թվականներից մշեցիներ են հաստատվում նաև Բուլղարիայի զանազան քաղաքներում, իսկ 20-րդ դարի դարասկզբից՝ նաև Ամերիկայում¹⁰⁹: Եթե թուրքական մեծ քաղաքներ գնալը պատճառաբանվում է սոցիալ-տնտեսական աննախադեպ ծանր պայմաններով, ապա Արևելյան Հայաստան գաղթելը՝ միջոց էր սպանդից փրկվելու համար:

1915 թվականի ողբերգական իրադարձությունները դառը կնիքը են թողել նաև Մշո բարբառով խոսող հանրույթի վրա, որը հանգեցրել է հայերով բնակեցված լեզվատարածքից հայախոսների տարիանման ու ոչնչացման. տարիանմամբ տեղի է ունեցել լեզվատարածքի կորուստ, իսկ ոչնչացմամբ՝ լեզվակրության մահացում: Արևմտյան Հայաստանից Մշո բարբառի և նրա խոավածքների տարիանման և ոչնչացման գործընթացը, պետք է ընդգծել, ոչ

¹⁰⁸ Հ. Համազասպ Ոսկեան, *Տարօն-Տուրութերանի վանքերը*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1953, 14, էջ 9-266:

¹⁰⁹ Սարգիս և Մանուկ Բղետեան, *Հարազատ պատմութիւն* Տարօնոյ, Տպարան Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1962, էջ 26-30:

թե միանգամից է կատարվել, այլ որոշակի փուլերով՝ շուրջ հարյուր տարի.

ա) Առաջին փուլը տեղի է ունեցել 19-րդ դարի սկզբներին տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: 1829-30 թթ. Մուշից և Ալաշկերտից երկու մեծ գաղթականություն հանգրվանում են Արևելյան Հայաստանի Երևանի նահանգի երկու քնակավայրերում՝ Ապարանում և Սևանա լճի եզերքներին ու հանդիպակաց լեռների լանջերին: Խուտացի գաղթականների մի խումբ էլ գաղթում է Զավախք՝ հիմնականում ապաստանելով Թոռիա, Ուչմանա, Հ/Էշտիա գյուղերում: Ըստ Հր. Աճառյանի, այդ քնակավայրերում վերաբնակված մշեցիները պահպանել են իրենց բարբառն ամբողջովին¹¹⁰: Հր. Աճառյանն այս գնահատականը հնչեցրել է 20-րդ դարի սկզբի լեզվական տվյալների հաշվառմամբ, որը, կարող ենք հավաստել, գրեթե նույնությամբ պահպանվում է մինչ օրս, քանի որ մշեցիներն ամուր են կառչած իրենց լեզվական արմատներին:

բ) Երկրորդ փուլը տեղի է ունեցել 1877-79 թվականներին: Այս ժամանակահատվածում Էրզրումի նահանգի քնակչությունը մոտ 400 հազար էր, որոնցից 250 հազարը հայեր էին, իսկ 19-րդ դարի վերջերին նահանգն ուներ 382 հազար քնակիչ, որից հայեր՝ 180 հազար, թուրքեր՝ 40 հազար, չերքեզներ՝ 10 հազար, քրդեր՝ 77 հազար, դղլբաշներ՝ 8 հազար, ասորիներ՝ 15 հազար, եզղիներ՝ 5 հազար: Մեր հավաքագրած տվյալները վկայում են, որ Մշո գավառը և նրա հինգ շրջանները՝ Բուլանըդը, Մանազկերտը, Մուշը, Սասունը, Վարդոն, 20-րդ դարի սկզբներին ունեին 567 հայկական քնակավայր՝ քաղաք ու գյուղ, իսկ ըստ ռուսական աղբյուրների՝ 1878 թվականի տվյալները վկայում են, որ, օրինակ, Ալաշկերտի շրջանը ունեցել է 104 գյուղ:

գ) Վերջին փուլը տեղի է ունեցել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ընդգրկել է բուն 1915 թվականը և շարունակվել մինչև 1918 թիվը: Մշո բարբառով հաղորդակցվող

¹¹⁰ Էմինեան ազգագրական ժողովածու, նշվ. աշխ., էջ 116:

տարածքները եղել են ամենախիտ բնակեցված շրջանները Արևմտյան Հայաստանում և այդ լեզվատարածքի ամբողջական հայաթափումը ամբողջական է դարձել 1915 թվականին: Ըստ եղած պատմական տվյալների, Բիթլիսի նահանգը Եղեռնի նախօրեին ուներ մոտ 200 հազար հայ բարբառախոս, որից միայն 56 հազարն է փրկվել: Փրկվածները մասամբ մահմեղականացվում են, մասամբ՝ զաղթում տարբեր երկրներ: Ըստ հետազոտող Վ. Պետոյանի, Եղեռնի բուն շրջանում Մուշ քաղաքն ուներ 30000 բնակիչ, որից 15000-ը հազարը հայեր: 1915թ. հունիսի 28-ից մինչև հուլիսի 1-ը՝ նրանք, երեք օր դիմադրելով, կոստրվում են¹¹¹, իսկ Մշո ողջ զավառը, 1914 թ. եղած տվյալներով, 55.365 հայ բնակչություն¹¹²:

Այդ երկարատև պատերազմների ու Եղեռնի ընթացքում չոչնչանալու ձգտմամբ իրենց ազգությունը թաքցրել, մահմեղականություն են ընդունել կամ մահմեղականացվել են հազարավոր մշեցիներ և այսօր էլ ապրում են իրենց հայրենի երկրում: Այս շերտի համար Մշո բարբառը մահացած է, քանի որ երբեմսի բարբառախոսները ձուլվել են թուրքերին: Այն, ինչ տեղի է ունեցել Արևմտյան Հայաստանում ապրող մշեցիների հետ, փոխներքափանցման դրսորում է, որի համար հիմք կարող են հանդիսանալ հատկապես քաղաքական նվաճումը և ժողովուրդների մերձավոր հարևանությունը, որոնք պահանջում են խոստներից անցում կատարելու մի լեզվից մյուսին...¹¹³: Մահմեղականացված հայերի հետ տեղի ունեցածը մակաշերտություն է, այսինքն՝ եկվորների, հատկապես նվաճողների լեզվի ազդեցությունը տեղացիների լեզվի վրա:

¹¹¹ Վ. Պետոյան, Սասունի և Տարոնի պատմաշխարհագրական տեղագրությունը, Ե, Լուսակն, 2005, էջ 89:

¹¹² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, Կ-Ն, ԵՊՀ հրատ., Ե., 1991, էջ 896:

¹¹³ Գ. Զահոռվյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, 19, էջ 12:

Մշո բարբառը կրող հանրույթն ապաստանել է ՀՀ-ի տարբեր տարածքներում՝ Արարատյան դաշտավայրում, Ապարանի, Արագածի, Թալինի, Արթիկի, Էջմիածնի, Աշտարակի, Մարտունիի տարբեր համայնքներում և Շիրակի մարզի Ախուրյան, Աղյն գյուղական համայնքներում, ինչպես նաև աշխարհի տարբեր հատվածներում։ Ուշագրավ է այն, որ ներգաղթյալ մշեցիները հիմնականում բնակություն են հաստատել ՀՀ-ի լեռնային շրջաններում, գրեթե առանձին գյուղերում՝ կազմելով բնակչության մեծամասնությունը։ Այս հանգամանքը նպաստել է, որ Մշո բարբառը լավագույնս պահպանվի նոր բնակչություններում, գրեթե առանձին գյուղերում՝ կազմելով բնակչության մեծամասնությունը։ Այս հանգամանքը նպաստել է, որ Մշո բարբառը լավագույնս պահպանվի նոր բնակչություններում, իսկ հնյունական և քերականական կառուցվածքը հնարավորինս պահպանվել է անաղարտորեն լեզվական տոկունության շնորհիվ։

Հայաստանից դուրս մշեցիների ամենամեծ գաղթավայրը Վրաստանն է։ Մշեցիներն ապաստանել են հիմնականում Նինոծմինդայի շրջանում, որի կազմում գտնվող Հեշտիա, Դելիֆ, Թորիա, Ուշմանա, Ժդանովական, մասամբ նաև Կալինինո, Վլադիմիրովկա, Կաթնառու, Գորելովկա գյուղերում ապրել են շուրջ 7073 մշեցիներ¹¹⁴։ Մշեցիներ են բնակվում նաև Թիֆլիս, Քութայիս, Բաթում, Փոթի, հայաբնակ Զավախիք, Նինոծմինդա քաղաքներում և այլն։ Վրաստանում հանգրվանած մշեցիները լավագույնս պահպանել են իրենց բարբառը մինչ օրս։ Սակայն Վրաստանում բնակվող մշեցիները վերջին տասնամյակներում արտագաղթում են այնտեղից նույնպես՝ դեպի Ռուսաստան և Եվրոպա։ Ս. Արոյանն իր հետազոտություններում ցույց է տալիս, որ Ռուսաստանի տարբեր մեծ ու փոքր քաղաքներում անցյալ դարի ընթացքում վերաբնակված մշեցիները հենց Վրաստան ապաս-

¹¹⁴ Ս. Արոյան, Բեկորներ Մշո շոջ քարի, Ե., «Արամազդ» հրատ., 1996, էջ 3։

տանած հայերն են: Նրանց ընդհանուր քանակը կազմում է շուրջ երեք հազար մարդ¹¹⁵: Խիստ կասկածելի է, որ Մշեցիների այս խումը մինչ օրս պահպանած լինի իր բարբառը: Կան տվյալներ, որ Վրաստանից մի քանի հազար մշեցիներ ներգաղթել են Հայաստանի տարբեր շրջաններ 20-րդ դարի երկրորդ կեսում:

Մշո բարբառի ուսումնասիրությունը սկսվել է 19-րդ դարի վերջերից, իսկ գիտական ուսումնասիրությունը՝ 20-րդ դարից, և այդ շարունակվում է մինչ օրս: Մշո բարբառի առաջին հետազոտողը Քերովը Պատկանյանն է: 1875 թվականին է հրատարակվել նրա «Материалы для изучения армянских наречий» ուսումնասիրությունը: Ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց և բրոց» (1874թ.) հրատարակության մեջ տեղ գտած «Սասունցի Դավիթ կամ Սիերի դուռ» պատումի հիման վրա Ք. Պատկանյանը կատարում է Մշո բարբառի լեզվական հարցերի քննության փորձ և տալիս բարբառի լեզվական հատկանիշների կարևորագույն բնութագրերը: Ուսումնասիրությունն ունի 500 բառացանկ պարունակող բառերի ընտրանի: Այս բառերի առնչությամբ հեղինակը նկատել է, որ Մշո բարբառում հետաքրքրություն են ներկայացնում հատկապես քրոյերեն բառերը, որոնցից մի քանիսը, ըստ հեղինակի, մնացել են անբացատրելի: Ք. Պատկանյանը եզրակացնում է, որ Մշո բարբառում պարսկական ու արաբական փոխառությունների ճնշող մեծամասնությունը միջնորդավորված փոխառություններ են թուրքերենից ու քրոյերենից, որի պատճառով էլ դրանք Մշո բարբառում շատ հաճախ ներկայանում են մի քանի իմաստներով¹¹⁶: Այս երևույթը արդարացված է, քանի որ մեր լեզուն բազմիմաստ է և դրա դրսևորումները նախնառաջ տեսանելի են փոխառյալ բառերի

¹¹⁵ Ա. Արոյան, նշվ. աշխ., էջ 4:

¹¹⁶ Կ. Պատկանյան, *Материалы для изучения армянских наречий*, Випуск 2, *Муисской диалектъ*, Санкт-Петербург, типография императорской академии наук /Вас. Остр., 9 лин, н. 12/, 1875, էջ 12:

դեպքում. փոխառյալ բառը հայերենում կարող է ունենալ մեկից ավելի իմաստներ:

Մշու բարբառի ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա է դնում հայագետ Լևոն Մսերյանցը: 1897 և 1901 թթ. լույս են տեսնում նրա ուսումնասիրությունները, որոնցում կատարվում է Մշու բարբառի տարածամանակյա քննությունը: Ուսումնասիրության առաջին հատորում հեղինակը ընկալողական մեթոդներով քննում է Մշու բարբառի հնյունական համակարգը և այն համեմատում գրաբարի հետ, երկրորդ հատորում քննում է Մշու բարբառի ձևաբանական համակարգերը՝ գրաբարի և միջին հայերենի նույն համակարգերի հետ համեմատությամբ: Լ. Մսերյանցը նպատակ է հետապնդել որոշել Մշու բարբառի հնությունը և առանցությունները հնդեվրոպական հիմք լեզվի հետ¹¹⁷: Լ. Մսերյանցի երկհատորանի «Էտյուդы по армянской диалектологии» (1897-1901 թթ.) աշխատությունը թարգմանված է նաև ֆրանսերեն և գերմաներեն:

Մյուս տեսաբանը Հր. Աճառյանն է, ով Մշու բարբառի առանձնահատկություններին անդրադարձել է «Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (1911թ.) աշխատության մեջ: Հր. Աճառյանը ձշգրտում է Մշու բարբառի դիրքը հայ բարբառների շարքում: Թեև Հր. Աճառյանը հանգամանալից չի քննել Մշու բարբառը, սակայն տվել է բարբառի տարածման սահմանները՝ թե՛ բուն հայրենիքում, թե՛ նրանից դուրս, ինչպես նաև ավանդել Մշու բարբառի լեզվական կառուցվածքի վերաբերյալ բավականին արժեքավոր տեղեկություններ: Հստ Հր. Աճառյանի, Մշու բարբառով խոսվող վայրերն են՝ Մուշը, Սասունը, Բաղեշը, Խիզանը, Խլաթը, Արձեշը, Բուղանընը, Մանազկերտը, Խնուսը և Ալաշկերտը¹¹⁸: Հր. Աճառյանի այս

¹¹⁷ **Լ. Մսերյան**, Էտյուդы по армянской диалектологии, часть 1, Москва, Университетская типография, Страстной бульварь, 1897, часть 2, Москва, Университетская типография, Страстной бульварь, 1901:

¹¹⁸ Էմինեան ազգագրական ժողովածու, նշվ. աշխ., էջ 116:

տվյալները որոշակի ճշգրտման կարիք ունեն: Սասունն ու Խիզանն էլ է նա ներառում այս բարբառային արեալում, սակայն, ինչպես հետագայում է հստակեցվել, հայերենի բարբառների շարքում առանձնացվում է նաև Սասունի բարբառը, հետևաբար Մուշի բարբառի հետ այն ընդհանրանում է սուսկ լեզվական միջակա գծերի գոյությամբ, թեև չենք բացառում, որ Սասունի տարածքում լինեն նաև Մշո բարբառի առանձին ենթախոսվածքներ նույնպես, իսկ Խիզանը, որպես առանձին բարբառային միավոր, գտնվում է Մոկսի տարածքում, բարբառագիտական նորագույն ուսումնասիրություններում չի ներառվել Մշո տարածքում, այլ համարվում է Վանի կամ հարավային միջբարբառախմբի խոսվածք¹¹⁹: Հր. Աճառյանի այս բացթողումը գուցե պայմանավորված է նաև նրանով, որ 19-րդ դարում Խիզանի տարածքը ներառվել է Բիթլիսի նահանգում: Հր. Աճառյանը Արծկեն չի հիշատակում՝ հավանաբար այն չտարանջատելով Խլաթից ու Արճեշից, քանի որ Արծկեն տարածականորեն միջին դիրք է գրավում Խլաթի և Արճեշի միջև:

Հր. Աճառյանը Սասունի տարածքը նույնպես ներառում է Մշո բարբառի մեջ, սակայն 1954 թ. հրապարակ իշած Վ. Պետոյանի «Սասունի բարբառ» ուսումնասիրության մեջ մերժվում է Աճառյանի այս տեսակետը և հնչունական փաստերի դիտարկմամբ հիմնավորվում, որ դրանք տարբեր բարբառներ են¹²⁰: Իրականում Մուշի և Սասունի տարածքներում տարբեր բարբառներ են գործում: Եթե երկու բարբառները միահատկանիշ դասակարգումներով միավորվում են, ապա հնչունական կամ բազմահատկանիշ դասակարգմամբ տարբեր բարբառներ են: Բանն այն է, որ Մուշի բարբառը քառաստիճան բաղաձայնական համակարգ ունի՝ ունեալով շնչեղ ձայնեղների համակարգ, որտեղ ձայնեղները չեն խլանում, իսկ Սասունի բարբառի բաղաձայնա-

¹¹⁹ Վ. Զահոռովյան, նշվ. աշխ., 1972, էջ 134:

¹²⁰ Վ. Պետոյան, Սասունի բարբառ, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1954, էջ 28-30:

կան համակարգը եռաստիճան է, որտեղ ձայնեղները խլանում են, խուլերը ձայնեղանում, իսկ շնչեղ խուլերը մնում են անփոփոխ: Որքան էլ Սուշի ու Սասունի բարբառները պատկանում են հայ բարբառների «կը» ճյուղին, նրանք ունեն հնյունական զգալի տարրերություններ, ուստի միևնույն բարբառի շրջանակներում քննվել չեն կարող: Ըստ երևույթին, երկու տարածքների մերձակից լինելն է նպաստել, որ Հր. Աճայանն ունենա այդ թյուր տեսակետը կամ խնդրին քաջածանոթ չի եղել: Մեկ նկատառում ես. Սասունը Տուրութերան նահանգի մաս չի եղել պատմականորեն, այլ համարվել է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի 10-րդ գավառակը¹²¹:

Ս.Հ. Բաղդասարյան-Թափալցյանը Մշո բարբառին նվիրված իր ուսումնասիրության մեջ անդրադարձել է միայն բուն Մշո գավառում գործած բարբառին: Նրա հետազոտությունները, ինչպես հաստատում է հեղինակը, հիմնված են Սուշից գաղթած և Հայաստանի սահմաններում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս բնակվող բարբառախոս հայերի տրամադրած լեզվական փաստերի վրա¹²²: Ս.Հ. Բաղդասարյան-Թափալցյանը նկարագրել է Մշո բարբառի լեզվական բոլոր համակարգերը, հնյունական համակարգերը համեմատել է գրաբարի հնյունական համակարգերի հետ, աշխատությունը հարստացրել բառացանկով և բանահյուսական հարուստ նյութերով: Իսկ Մշո բարբառի մյուս տարածքների լեզվական հատկանիշների ուսումնասիրությունը մնում է առկախ, որոնք, վստահաբար կարող ենք ասել, բուն Մշո բարբառի հետ ունեն և՛ ընդհանրություններ, և՝ տարբերություններ:

Մեկ այլ հետազոտող, ծագմամբ մշեցի և եղեռնը վերապրած սփյուռքահայ հետազոտող Սմբատ Շահնազարյանը հեղինակել է

¹²¹ Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 219-254, Վ. Պետոյան, Սասունի և Տարոնի պատմաշխարհագրական տեղագրությունը, Ե, Լուսակն, 2005, էջ 85:

¹²² Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958, 4, էջ 9:

«Մշտ բարբառը եւ իր ժողովրդին դիմաստուերը» ուսումնասիրությունը (1972, Բեյրութ): Հեղինակը քննության է ենթարկել բուն Մուշի դաշտի բարբառը և նրա կարևոր նկատառումն այն է, որ Մշտ բարբառը բառակազմության և հնչյունական համակարգերում շատ մոտ է գրաբարին ու գրական լեզվին: Ըստ Ս. Շահնազարյանի, Մշտ բարբառը նույն Տարոն-Տուրութերանի բարբառն է և նրա տարածման սահմանները ներառում են Մուշի, Սասունի, Բիթլիսի, Բուլանըի, Խնուսի, Վարդոյի, Կինճի տարածքները¹²³: Հեղինակը բարեխղճորեն նկատել է, որ այս տարածքների մեջ բացառություն է կազմում Սասուն՝ իր հնչյունական և քերականական կառուցվածքով: Ս. Շահնազարյանի կատարած հետազոտությունները հանգում են նրան, որ իր համար ընկալելի Մշտ բարբառն ավելի մոտ է գրաբարին ու գրական լեզվին, քան Ա.Հ. Բաղդասարյան-Թափալցյանի ուսումնասիրած Մշտ բարբառի տվյալներին: Ըստ Էռիքյան, Ս. Շահնազարյանը ցուցաբերել է սուբյեկտիվ մոտեցումներ, որը կարելի է բացատրել նրանով, որ հեղինակի մայրենի խոսվածքը Մշտ բարբառի մի առանձին խոսվածքներից է, որին և հեղինակը նախապատվություն է տվել: Այս ուսումնասիրությունը կարևոր է նրանով, որ Ս. Շահնազարյանն ավանդել է Մշտ բարբառով հավաքագրած բանահյուսական ժանրի հարուստ նյութեր, որոնցում, ըստ հեղինակի, տեսանելի է մշեցու «կենցաղը, մտորումները, ձգտումները, անոր անհուն համեստութիւնը, եւ նաև անոր արմատական մտածողութեան զգացական ու իմացական տարրերը»¹²⁴: Ինչ վերաբերում է Մշտ բարբառի մյուս խոսվածքներին, որոնք ունեն տարբերություններ բուն Մշտ բարբառի համեմատությամբ, Ս. Շահնազարյանը համարում է սուկ հարևան բարբառների ազդեցության հետևանք՝ գրելով՝ «անոր սահմանազծին մօտերը ապրող Տարօնցին ենթարկուած է Վանի, Բիթլիսի, Ախլաթի

¹²³ Ս. Շահնազարյան, «Մշտ բարբառը եւ իր ժողովրդին դիմաստուերը» ուսումնասիրությունը, Պեյրութ, 1972թ., տպ. Սեւան, էջ 8-9:

¹²⁴ Ս. Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 10:

հնչինային եղանակաւորումներուն, հացը՝ հնչելով խաց, հօրքուրը՝ խորքուր, կարմիրը՝ կմէրմիր, քոն՝ քէօն, գլուխը՝ զիկլօխ, և շատ թանձր հնչելով պ, բ, գ, ք, տ և դ տառերը»¹²⁵:

Մշո բարբառի զիտական ուսումնասիրության հարցում մեծ ավանդ ունի բարբառագետ Ք. Մադարյանը: Նա մանրակրկիս քննության է ենթարկել Մշո բարբառի հյուսիսարևելյան խոսվածքներից մեկը՝ Ալաշկերտի խոսվածքը: Նրա ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ-ի Ապարանի և Արագածի շրջաններում բնակվող ալաշկերտցիների խոսվածքների հիման վրա՝ ընդգրկելով լեզվական բոլոր մակարդակները: Ք. Մադարյանը նույնպես փաստում է, որ Ալաշկերտի խոսվածքն ունի բուն Մուշից զգալի լեզվական տարբերություններ¹²⁶: Հիշատակենք ընդամենը հնչյունական մեկ իրողություն: Ալաշկերտի խոսվածքում շնչեղ խուլ բաղաձայնները բառամիջում և բառավերջում վերածվել են խուլերի, իսկ Մուշի խոսվածքում մնացել են նույնությամբ: Այս մեկ փաստն էլ բավական է ներկայացնելու համար, որ բուն Մշո բարբառը հարազատ է դասական հայերենին՝ գրաբարին: Գրաբարի հետ ունեցած նմանօրինակ լեզվական ընդհանրությունները բազմաթիվ են:

Լեզվական առումով Մշո բարբառի խոսվածքներն ունեն և ընդհանրություններ, և տարբերություններ: Այդ մեծ տարածքում տարածված բարբառն իր խոսվածքներով ներկայանում է լեզվական տարասեռ և համասեռ հատկանիշներով: Անմիտարբությունը պատմականորեն հիմնավորելի է: Այդ են վկայում ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական փաստերը: Դարերի ընթացքում Մշո տարածքում տեղի են ունեցել բարբառախոսների մի շարք ներհոսքեր և նրա սահմաններում տեղի ունեցած բնակչության տեղաշարժերը ստեղծել են այդ անհամասեռությունը: Այս առումով արտալեզվական փաստերի արժեքավոր

¹²⁵ Ս. Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 10:

¹²⁶ Ք. Մադարյան, Ալաշկերտի խոսվածքը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, էջ 5-7:

տեղեկություններ են ազգագրագետ Բենսեի ուսումնասիրությունները: Հեղինակը, ուսումնասիրելով Մշո տարածքի մեկ առանձին հատվածի՝ Բուլանը (Հարք) գավառի ազգագրությունը, փաստեր է տրամադրում, համաձայն որոնց՝ Բուլանըի տարածքի հայ բնակիչների մի մասը Տուրութերան նահանգի սահմանակից հարավային և հարավարևելյան կողմերից գաղթած եկվորներ են, իսկ մի մասը դարձյալ նույն ուղղությամբ եկած, բայց միևնույն նահանգի տարբեր գավառների նախկին բնակիչներ են¹²⁷: Այդ տեղաշարժերը, ըստ Բենսեի, տեղի են ունեցել 18-րդ դարի կեսերին, ժամանակահատված, երբ պարսկական և թուրքական բազմաթիվ խառնակությունների պատճառով հայկական գավառներում սպանդ էր կազմակերպվում: Բենսեն Բուլանըի բաժանում է երկու տարածքների՝ վերին և ներքին: Վերին Բուլանըի արևելյան որոշ գյուղերի բնակիչներ այդ տարածք են հայտնվել հարակից հայկական գավառներից՝ Խլարից (Բզնունիք), Խիզանից, Սոկից և Արձեշից: Բենսեն եզրակացնում է, որ այդ գյուղերի բնակիչների բարբառային պատկանելությունն ավելի շատ Վանի բարբառին է հարում՝ «ասկավ փոփոխութեամբ իրենց գործածած լեզուն Վանայ գավառաբարբառին կը պատկանի», իսկ Վերին Բուլանըի արևմտյան գյուղերը և որոշ բացառությամբ ողջ Ներքին Բուլանըի բնակիչները եղել են Բշերի, Սասունի, Խոյթի, Մօտկանի և Տարոնի գավառների նախկին բնակիչները, որոնց լեզուն «կը պատկանի Տարօնյ կամ Մշոյ գաւառաբարբառին»¹²⁸, այսինքն՝ Մշո բարբառին:

Մշո տարածքի բնակչության տեղաշարժերի ու բնակչության բարբառային տարբերակվածության վերաբերյալ հիշատակման արժանի փաստեր է տրամադրում պատմաբան, ազգագրագետ Կարօ Սասունին: Իր ունեցած փաստերը Կ. Սասունին ներ-

¹²⁷ Բենսե, Բուլանըի կամ Հարք գաւառ, Թիֆլիս, տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1901, էջ 33:

¹²⁸ Բենսե, նշվ. աշխ., էջ 33:

կայացնում է Տարոնի ժողովրդական բանահյուսությունը վերլուծելիս: Նա գրում է. «Տարօնի ամբողջ աշխարհը երբ միասին կառնենք՝ անոր բանահիւսութիւնը բարբառային երկու ճիւղի կը բաժնվի: Մշո դաշտը, Պուլանուխը, Խնուսը, Վարդօն և Սասուն արևմտյան Տարօնը կը կազմեն և զուտ Տարօնի բարբառով կը ստեղծագործեն, աւելի նուրբ և աւելի պատկերալից: Ծոփաց աշխարհին սահմանակից ըլլալով և հին դարերէն սկսած յոյնքիցանդական կեսագունդին պատկանելով՝ հելլենական արուեստի հաւասարակշռութեամբ կը ստեղծագործէ: Խսկ Ախլաթ, Պիթլիս, Խիզզան՝ Վանի բարբառի խառնուրդ ունին, մնալով անկախ և ինքնայատակ: Մոլաց և Ռշտունեաց աշխարհին 16 և 17-րդ դարերուն ժողովուրդը դէպի արևմուտք քշուած և խառնուած է Սալնուծորի և Ախլաթի ժողովուրդին: Մոլաց և Սպարկերտի երգերէն շատերը Տարօնի երգերն են, Մոլաց բարբառին վերածուած, շնորհիվ ժողովուրդի այս տեղափոխութիւններուն»¹²⁹:

Մշո տարածքի խոսվածքների տարբերակվածությանը համառոտակի անդրադարձել են նաև Սարգիս և Միսակ Բղէեանները: «Հարազատ պատմութիւն Տարօնոյ» արժեքավոր ուսումնասիրության մեջ (1962 թ.) հեղինակները Տարոնի (Մշո) դաշտի ժողովրդին բնութագրում են որպես «կրոնասեր, պարտածանաչ, ցասկոտ, բռնությանը դիմագրավող, տոկուն, հին հայի տիպարն իրենց մեջ պարփակող», որոնք պարբերաբար ենթարկվել են թուրքերի հարձակումներին: Հետազոտողները գրում են. «դաշտի հին բնակիչները քանից վորփիսության ենթարկված են, կամ զաղթած, կամ ջարդուած, տեղ տալով հետզիւտէ լեռնարնակ ժողովուրդին»¹³⁰: Անդրդառնալով բուն լեզվական հարցերին՝ Բղէեանները, քանի որ եղել են Մշո դաշտի երբենի բնակիչներ, ուշագրավ տեղեկություններ են վորփիանցում այդ տարածքի

¹²⁹ Կարօ Սասունի, Պատմութիւն Տարօնի աշխարհի, 1956, տպ. Սևան, Պեյրութ, էջ 431:

¹³⁰ Սարգիս և Սանուկ Բղէեան, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Տպարան Սահմանական պատմության համար, 1962, էջ 6:

բարբառային վիճակի մասին. «Տարօնի գիտերու բնակչութեան բարբառը գիտէ գիտ կը տարբերի՝ ցույց տալով իրենց զանազան տեղերէ գաղթած ըլլալը։ Դրժբախտաբար, լավ չուսումնասիրուեցաւ իւրաքանչիւր գիտի բարբառը, բան մը որ աւելի լոյս պիտի սփուր այդ ժողովուրդի ծագման վրայ, և հիմա որ ամէնքն ալ կուտորուած են, և մնացյալ փոքր մէկ մասը գաղթած օտար երկիրներ և մոռցած են հին բարբառը և շեշտը, դժվար է գիտնալ անոնց ծագումը և որ զյուղէրեն գաղթած ըլլալը։ Ինչ որ հաստատ է, սակայն, սա է թէ անոնք մեծամասնութեամբ՝ Սատունէն, Խոյքէն, Մոտքանէն գաղթած են սարատակի գիտերը»¹³¹։

Մշտ տարածքի խոսվածքային տարբերակվածությանը մասնակիորեն անդրադարձել է Ս. Բաղդասարյան-Թափալցյանը։ Վերջինս իր ուսումնասիրության մեջ փաստում է, որ նկատել են խոսվածքային տարբերություններ Բաղեշի, Ալաշկերտի, Խլաթի, Խնուսի և բուն Մշտ շրջանի բարբառի մեջ։ Իր ասածը հիմնավորելու համար նա բերում է հնյունական որոշ անհամասեռ օրինաչափություններ՝¹³²։ Այսօր Մշտ բարբառի ուսումնասիրությունը պետք է տեղայնացնել ըստ առանձին տարածքների, որը ապագայում իրագրութեալիք խնդիր է։

Մշտ բարբառն ունի յուրահատուկ լեզվական տիպաբանություն, որն արտացոլվում է լեզվական բոլոր մակարդակներում։ Մշտ բարբառի հնյունական համակարգը գրեթե տարբերություններ չունի գրաբարի հնյունական համակարգի համեմատությամբ։ Այս բարբառն ունի քառաստիճան բաղաձայնական համակարգ և իր այս հատկանիշով համեմատվում է անգամ հնդեվրոպական նախալեզվի հետ, որը թույլ է տալիս ասելու, որ հայերենի հնագույն վիճակը պետք է գտնել Կենտրոնական Հայաստանի բարբառներում։ Գիտության մեջ կա ընդունելի տեսակետ, որ Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերը ստեղծել է հենց

¹³¹ Սարգիս և Մանուկ Բդեան, նշվ. աշխ., էջ 6:

¹³² Ս. Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 5-6:

Արարատյան և Տարոն-Տարուբերանի տարածքների հնչունական համակարգերի հիման վրա, քանի որ Մ. Մաշտոցը ծագումով հենց Տարոնի Հացեկաց զյուղից էր: Սա խոսում է այն մասին, որ զրաբարը՝ հին հայերենը, որպես գրական լեզու, ձևավորվել է Արարատյան և Տարոնի բարբառների հիման վրա¹³³, որն էլ, մեծ հավանականությամբ, նույնպես ուներ շնչեղ ձայնեղներով հնչունական համակարգ¹³⁴:

Մշո բարբառը հարուստ է երկրաբառներով, որոնք ի հայտ են զալիս ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջի փակ վանկում: Շնչեղ ձայնեղներով հարուստ բարբառը տարբերակում է երկու կարգի հազար՝ ձայնեղ և խուլ հազարներ՝ և և և: Բաղեշում, Խլաթում, Արձէշում, Արծկեում խուլ և հազարը բացակայում է բառասկզբի դիրքում այնպես, ինչպես Վանի բարբառում է. այս տարածքներում Մշո բարբառին հատուկ խուլ հազարները ներկայանում են խուլ խ-ով, որը խեթառուրարտական ենթաշերտային դրսորում է համարվում՝ հաց-խաց, հարս-խարս, հինգ-խինգ և այլն:

Մշո բարբառի քերականական կառուցվածքը նույնպես ինքնատիպ է: Այն իր մեջ պարփակում է հնագույն և նորահայտ լեզվական ձևերը, որոնք ցույց են տալիս հայերենի զարգացման օրինաչափ միտումները: Մշո բարբառի քերականական կառուցվածքի քննությունը ցույց է տալիս, որ այն կցական տիպի լեզվամիավոր է, սակայն պահպանել է թերական կառուցատիպի բազմաթիվ դրսորումներ: Օրինակ, -ք հոգնակերտի գործածություն՝ այզիք, որդիք, օսկիք և այլն, ինչպես նաև՝ կենդանի խոսքի մեր վերջին հետազոտությունները Ապարանի և Մարտունու տարածաշրջաններում ցույց են տալիս, որ Մշո բար-

¹³³ Ա. Այսունյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, ԵՊՀ հրատ., Ե., 1987, էջ 46:

¹³⁴ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, ՀՍՍԸ ԳԱ հրատ., Ե., 1971, էջ 845, Գ. Զահոռիկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 134:

բառում շարունակվում է պահպանվել գրաբարաձև ներկայի գործածությունները, որոնք թեքականության արտահայտման ինքնատիպ հետքեր ու դրսեորումներ են:

Հարուստ է նաև Մշո բարբառի բառապաշարը՝ բառային հիմնական ֆոնդն ու բառային կազմը: Մշո բարբառի բառապաշարի միջուկն են կազմում համահայկական բառերը՝ իմաստային գրեթե բոլոր խմբերով: Մշո բարբառի բառապաշարը ներկայանում է հին և հնագույն, նոր և նորագույն փոխառություններով, ինչպես նաև հայերենի բառակազմական ներքին օրենքներով ստեղծված բազմաթիվ ածանցումներով ու բառաբարդումներով: Բառբառում մեծ թիվ են կազմում արևելյան լեզուներից՝ պարսկերենից, արաբերենից, թուրքերենից, ավելի սակավ՝ քրդերենից կատարված փոխառությունները, իսկ 20-րդ դարում, այդ թվում՝ մեր ժամանակներում Մշո բարբառի վրա ինտենսիվորեն ազդում է ռուսերենը: Բարբառում մուտք են գործել բազմաթիվ ռուսերեն բառեր, որոնք հետևանք են հայ-ռուսական սոցիալ-տնտեսական, մշակութային սերտ հարաբերությունների:

Որպես ամփոփում՝ նշենք, որ, ինչպես ցույց են տալիս լեզվական ու արտալեզվական փաստերը, Մշո բարբառն այսօր գործում է Հայաստանի Հանրապետությունում, հիմնականում՝ Մարտունու, Ապարանի, Կարմիրի, Արագածի և այլ տարածաշրջաններում:

Գարիկ Մկրտչյան

ՄՇՈ ԲԱՐԲԱՌԸ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ¹³⁵

Մշո բարբառի ուսումնասիրության վերաբերյալ հիշատակություններ կան դեռևս 19-րդ դարի վերջերից, մինչդեռ նրա ամբողջական հետազոտությունը կատարվել է 20-րդ դարի առաջին կեսերից, և այդ գործընթացը շարունակվում է մինչ օրս: Մշո բարբառի լեզվական առանձնահատկությունների քննությամբ զբաղվել են Քերովք Պատկանյանը, Լևոն Մսերյանը, Հրաչյա Աճառյանը, Սիրանուշ Բաղդասարյան-Թափալյանը, Սմբատ Շահնազարյանը, Քերոր Մադարյանը, Բենսեն, Կարօ Սասունին, Սարգիս և Միսակ Բղեյանները, Գևորգ Զահուկյանը և ուրիշներ:

Մշո բարբառի առաջին հետազոտողը Ք. Պատկանյանն է: 1875 թ. իրատարակվում է նրա «Материалы для изучения армянских наречий» ուսումնասիրությունը: Ք. Պատկանյանը տալիս է Մշո բարբառի լեզվական հատկանիշների կարևորագույն քնութագրերը՝ օգտագործելով ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանի «Գրոց և բրոց» (1874 թ.) աշխատության մեջ տեղ գտած «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» պատումի լեզվական տվյալները: Ք. Պատկանյանի ուսումնասիրությունն ունի 500 բառամիավոր պարունակող ցանկ: Այդ բառերի իմաստաբանական ու ծագումնաբանական կողմերը բնութագրելիս հետազոտողը, առանց փաստեր վկայակոչելու, նկատում է, որ Մշո բարբառում հետաքրքրություն են ներկայացնում հատկապես քրդերեն բառերը, սակայն դրանք որևէ կերպ չեն ստուգաբանվում¹³⁶:

¹³⁵Տե՛ս նաև՝ Բանքեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Ե., 2016, թիվ 2, էջ 39-47:

¹³⁶Կ. Պատկանյան, *Материалы для изучения армянских наречий, Выпуск 2, Муисский диалект*, Санкт-Петербург, 1875, էջ 12:

Մշո բարբառի այլ հետազոտողներ մասամբ հաստատում են Ք. Պատկանյանի այս տեսակետը: Օրինակ, Ս. Հ. Բաղրասարյան-Թափալյանը քրդերենից Մշո բարբառին անցած ընդամենը հինգ բառ է հիշատակում՝ աղէ «մայր», լառ «մանչ, տղա, կոչական բառ», ձեռօք «հեքիաթ, երկար, ձանձրալի խոսակցություն», ձալակ «ախոռների մեջ փորված փոս, որտեղ թափվում է կեղտաջուրը», լամուզ «տղա, քրդի տղա»¹³⁷, իսկ Ք. Մադայրյանը վկայում է խաշնարածության իմաստային դաշտը ներկայացնող շուրջ երկու տասնյակ բառ՝ բալակ «զույնզույն», բըշ «պիսակավոր», բըռ «ոչխարի մի մասի անջատվելը հոտից», իրմըր «կարմրասև», բըռոյու «դմակի մորթի», զրհոս «ոչխարի գիշերային մակաղատեղի», զյալօ «ասես», դրված «հովվի օգնական», դրոս «կին», ըրուտ «մերկ», ճավլորշ «սևակն», չօմախ «հովվի մահակ», խօզի «երանի», կյաձէ «աղջիկ», կյալ «կոտոշավոր», կյառ «անականջ ոչխար», կյակ «մոխրագույն», կօռ «կարճ ականջավոր», հէռս «քարկություն», քառուտ «հին, ոչ թարմ», քօլօց «թառիքե գդակ» և այլն¹³⁸: Բերված բառամիավորներից շատերի ծագումը, կարծում ենք, վիճելի է:

Ք. Պատկանյանի հետազոտություններում կարևորվում է, որ Մշո բարբառում պարսկական ու արաբական փոխառությունների ճնշող մեծամասնությունը միջնորդավորված փոխառություններ են թուրքերենից ու քրդերենից: Նավանարար այդ է պատճառը, որ Մշո բարբառում այդ բառերը շատ հաճախ ներկայանում են մի քանի իմաստներով: Որպեսզի երևույթը հստակ լինի, բերենք մի քանի օրինակներ՝ դադ (պարս., թուրք.) 1. խարվածք, խարան, 2. փոխ. կսկիծ, սրտի վերք, 3. վիրավորելք, դամ (պարս.) 1. շունչ, 2. անձ, որ մեղմորեն ձայնակցում է երգին, 3. ցանց, ուրկան, դան (պարս.) 1. ժամ, ժամանակ, 2. հացահատիկ, կուտ, դաշլաք (արաբ.) 1. բաղնիքում լողացնող սպասավոր, 2. սափրիչ, եմիշ (թուրք.)

¹³⁷ Ս. Բաղրասարյան-Թափալյան, Մշո բարբառ, Ե., 1958, էջ 188:

¹³⁸ Ք. Մադայրյան, Ալաշկերտի խոսակցոր, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, էջ 62:

1. սեխի տեսակ, 2. մրգեղեն, 3. փոխ. տհաս, *հարիֆ* (արար.)
1. ընկեր, բարեկամ, 2. տղամարդ, 3. խակ, անփորձ, *սինօռ* (հուն.)
1. սահման երկու առանձին տարածքների միջև, 2. հողի վրա զիծ կամ այլ նշան, որով որոշվում է մեկի օգտագործման բաժինը, սահմանը, 3. զիծ կամ այլ նշան, որով մի հողաբաժին պաշտպանվում է ներս մտնելուց, օգտագործելուց և այլն: Այս երևույթներն օրինաչափ են, քանի որ տարբեր գործոններով պայմանավորված բազմիմաստության դրսեորումներն ի հայտ են գալիս փոխառյալ բառերում ևս: Ընդ որում, փոխառյալ բառերը հատկապես հայերենի բարբառային միավորներում են ունենում մեկից ավելի իմաստներ:

Մշո բարբառի ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա է դնում հայագետ Լ. Մսերյանցը: Նրա «Էտյուդы по армянской диалектологии»¹³⁹ (1897-1901 թթ.) երկիատորանի աշխատությունում Մշո բարբառը ենթարկվել է տարածամանակային քննության: Լ. Մսերյանցի հետազոտությունները թարգմանված են նաև ֆրանսերեն և գերմաներեն: Ուսումնասիրության առաջին հատորում հեղինակը քննում է Մշո բարբառի հնչյունական համակարգը և դրանց համեմատում գրաբարյան դրսեորումների հետ, իսկ երկրորդ հատորում Մշո բարբառի ձևաբանական համակարգը համեմատության սկզբունքով դիտարկում է գրաբարի և միջին հայերենի ձևաբանական համակարգերի հետ: Լ. Մսերյանցի հետազոտությունների գլխավոր արժանիքն այն է, որ հեղինակը նպատակ է հետապնդել որոշել Մշո բարբառի հնությունը և առնչությունները հնդեվրոպական հիմք լեզվի օրինաչափությունների հետ:

Մյուս տեսաբանը Հ. Աճառյանն է, ով Մշո բարբառի առանձնահատկություններին անդրադարձել է «Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (1911 թ.) աշխատության մեջ: Հ. Աճառյանն առաջին հետազոտողն է, որը

¹³⁹ **Լ. Мсерянц**, Этюды по армянской диалектологии, Москва, часть 1, Университетская типография, 1897, часть 2, 1901.

Ճշգրտում է Մշո բարբառի դիրքը հայ բարբառների շարքում: Թեև Հ. Աճառյանը հանգամանալից չի քննել Մշո բարբառը, սակայն տվել է բարբառի տարածման սահմանները՝ թե՛ բուն հայրենիքում, թե՛ նրանից դուրս, ինչպես նաև ավանդել Մշո բարբառի լեզվական կառուցվածքի վերաբերյալ բավականին արժեքավոր տեղեկություններ: Ըստ Հ. Աճառյանի, Մշո բարբառով խոսել են հետևյալ վայրերում՝ Մուշը, Սասունը, Բաղեշը, Խիզանը, Խլաթը, Արձեշը, Բուլանը, Մանազկերտը, Խնուսը և Ալաշկերտը. «Մշո բարբառը կտարածվի Վանայ ծովին արևմտյան երեսը: Իր կերպոնն է Մուշ քաղաքը, ասոր հիւսիսէն կը տարածուի մինչև Խնուս և Ալաշկերտ, հարավէն Բաղեշ, արևելքէն կը հասնի մէկ կողմէն Մուկս և միւս կողմէն Տիատին, արևմուտքէն Լճե, Ճապաջուր և այլն»¹⁴⁰:

Հ. Աճառյանի այս տվյալները որոշակի ճշգրտման կարիք ունեն: Նա Սասունի ու Խիզանի տարածքները ևս ներառել է Մշո բարբառի արեալում: Սակայն, ինչպես հետագայում է հատակեցվել, հայերենի բարբառների շարքում առանձնացվել է նաև Սասունի բարբառը: Ուստիմնասիրությունները ցույց են տվել, որ Սասունի բարբառը ներկայանում է լեզվական մի շարք հատկանիշների փնջով, որով տարբերակվում է Մշո բարբառից: Սասունի բարբառի ու Մշո բարբառի ընդհանրությունները պայմանավորված են լեզվական միջակա գծերի գոյությամբ: Սակայն չենք բացառում, որ Սասունի տարածքում հնարավոր է լինեն Մշո բարբառի առանձին ենթախոսվածքներ նույնպես: Իսկ Խիզանը, որպես առանձին բարբառային միավոր, գտնվում է Մուկսի տարածքում և բարբառագիտական նորագույն ուստիմնասիրություններում չի ներառվել Մշո տարածքում, այլ համարվում է Վանի կամ հարավային միջբարբառախմբի խոսվածք¹⁴¹: Հ. Աճառյանի այս բացթողումը գուցե պայմանավորված է նաև նրանով, որ 19-րդ

¹⁴⁰ Էմինեան ազգագրական ժողովածու, նշվ. աշխ., էջ 116:

¹⁴¹ Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 134:

դարում Խիզանի տարածքը ներառվել է Բիթլիսի նահանգի մեջ: Հ. Աճառյանը Արծկեն չի հիշատակում՝ հավանաբար այն շտարանշատելով Խլաթից ու Արձեշից, քանի որ Արծկեն տարածականորեն միշին դիրք է գրավում Խլաթի և Արձեշի միջև:

Սասունի բարբառի տեղայնացման ու հայերենի բարբառների շարքում գրաված դիրքի վերաբերյալ Հ. Աճառյանի թույլ տված թերացումը ճշգրտել է Վ. Պետոյանը: Նրա՝ 1954 թ. լույս տեսած «Սասունի բարբառ» ուսումնասիրության մեջ մերժվում է Հ. Աճառյանի այս տեսակետը: Որպեսզի ցույց տա Սասուն և Մշո բարբառների տարբեր լինելը, Վ. Պետոյանը բերում է հնչյունական համակարգի ծանրակշիռ փաստեր՝ հատկապես երկու բարբառների բաղաձայնական համակարգերի օրինաչափությունները վկայակոչելով¹⁴²: Իրականում Մուշի և Սասունի տարածքներում տարբեր բարբառներ են գործում: Եթե երկու բարբառները միահատկանից դասակարգումներով միավորվում են, ապա հնչյունական և բազմահատկանից դասակարգմամբ տարբեր բարբառներ են:

Բանն այն է, որ Մշո բարբառը քառաստիճան բաղաձայնական համակարգ ունի: Այդ համակարգին մաս են կազմում նաև շնչեղ ձայնեղները, իսկ բառակզբում ձայնեղները չեն խլանում: Սասունի բարբառի բաղաձայնական համակարգը եռաստիճան է, որտեղ ձայնեղները խլանում են, խուլերը ձայնեղանում, իսկ շնչեղ խուլերը մնում են անփոփոխ: Որքան էլ Մուշի ու Սասունի բարբառները պատկանում են հայ բարբառների «կը» ճյուղին, նրանք ունեն հնչյունական զգալի տարբերություններ, ուստի միևնույն բարբառի խոսվածքներ լինել չեն կարող: Ըստ երևույթին, երկու տարածքների մերձակա լինելն է նպաստել, որ Հ. Աճառյանն ունենա այդ տեսակետը: Մեկ նկատառում ես. Սասունը Տուրուբե-

¹⁴² Վ. Պետոյան, Սասունի բարբառ, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1954, էջ 28-30:

բան նահանգի մաս չի եղել պատմականորեն, այլ համարվել է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի 10-րդ գավառակը¹⁴³:

Հ. Աճառյանն առաջինն է հիշատակել Մշո բարբառի կրողների տեղաշարժերը: «Հայ բարբառների» աշխատության մեջ նա գրում է. «Վերջին երկու ոուս-տաճկական պատերազմներուն ժամանակ Մուշին և Ալաշկերտէն երկու մեծ գաղթականութիւն դուրս գալով՝ հաստատվեցաւ Երևանի նահանգը, այն է Ապարան եւ Նորբայազետի հարավային կողմերը՝ Սևանայ լճին եզերքներուն վրայ: Վերջին շրջանին մեջ այսօր կայ 21 հայկական գիւղ՝ որոնք կը խօսին Մշոյ կամ Ալաշկերտի բարբառով ...», ապա հավելում. «....Խնուսցի գաղթականներու խումբ մ'ալ գնաց Ախալքալաք եւ անոր շրջակայքը հիմնեց Թորիա, Ուչմանա եւ Էշտիա գիւղերը. ասոնք ալ մինչեւ այսօր կը խօսին նույն բարբառով»¹⁴⁴:

Ս.Հ. Բաղրասարյան-Թափալյանն անդրադարձել է միայն բուն Մշո գավառում գործած բարբառին: Նրա հետազոտությունները, ինչպես հաստատում է հեղինակը, հիմնված են Մուշից գաղթած և Հայաստանի սահմաններում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս բնակվող բարբառախոս հայերի տրամադրած լեզվական փաստերի վրա¹⁴⁵: Ս.Հ. Բաղրասարյան-Թափալյանը նկարագրել է Մշո բարբառի լեզվական բոլոր համակարգերը: Բարբառի հնյունական համակարգերը համեմատել է գրաբարի հնյունական համակարգի հետ, աշխատությունը հարստացրել բառացանկով և բանահյուսական հարուստ նյութերով: Մշո բարբառի մյուս տարածքների լեզվական հատկանիշների ուսում-

¹⁴³ **Բ. Հարությունյան,** *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, Սաս Ա., Ե., ԵՊՀ հրատ., 2001, էջ 219-254, **Վ. Պետոյան,** *Սասունի և Տարոնի պատմաշխարհագրական տեղագրությունը*, Ե, Լուսակն, 2005, էջ 85:

¹⁴⁴ **Հ. Աճառյան,** *Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների*, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 116:

¹⁴⁵ **Ս. Բաղրասարյան-Թափալյան,** *Մշո բարբառը*, Ե., 1958, էջ 9:

նասիրությունը ոչ ամբողջովին է կատարված, որոնք, վստահաբար կարող ենք ասել, Մուշ քաղաքի և Մշո դաշտի բուն բարբառի հետ ունեն և ընդհանրություններ, և՝ տարբերություններ:

Մեկ այլ հետազոտող, ծագմամբ մշեցի և եղեռնը վերապրած սփյուռքահայ բարբառագետ Ս. Շահնազարյանը հեղինակել է «Մշո բարբառը եւ իր ժողովրդին դիմաստուերը» ուսումնասիրությունը (1972, Բեյրութ): Հեղինակը քննության է ենթարկել Մշո դաշտի բուն բարբառը: Նրա կարևոր նկատություն այն է, որ Մշո բարբառը բառակազմության և հնչյունական համակարգերում շատ մոտ է գրաբարին ու գրական արևելահայերենին: Ըստ Ս. Շահնազարյանի, Մշո բարբառը նույն Տարոն-Տուրութերանի բարբառն է և նրա տարածման սահմանները ներառում են Մուշի, Սասունի, Բիթլիսի, Բուլանըրի, Խնուսի, Վարդոյի, Կինձի տարածքները¹⁴⁶: Հեղինակը նկատել է, որ այս տարածքների մեջ բացառություն է կազմում Սասունը՝ իր հնչյունական և քերականական կառուցվածքը: Ս. Շահնազարյանի կատարած հետազոտություններում կարևորվում է այն, որ նրա համար ընդունելի ու ընկալելի Մշո բարբառն ավելի մոտ է գրաբարին ու արևելահայ գրական լեզվին, քան Ա.Հ. Բաղրամարյան-Թափալյանի Մշո բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ բերվող լեզվական տվյալներին:

Ըստ Էրության, Ս. Շահնազարյանը ցուցաբերել է սուբյեկտիվ մոտեցում: Այս հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ հեղինակի մայրենի խոսվածքը Մշո բարբառի առանձին խոսվածքներից մեկն է, որը, կարծում ենք, սփյուռքում գրականացման է ենթարկվել: Ամենայն հավանականությամբ, հեղինակը նախապատվություն է տվել հենց այս իրողությանը: Այս ուսումնասիրությունը կարևոր է նրանով, որ Ս. Շահնազարյանն ավանդել է Մշո բարբառով հավաքագրած բանահյուսական հարուստ նյութեր, որոնցում, ըստ հեղինակի, տեսանելի է մշեցու «կենցաղը,

¹⁴⁶ Ս. Շահնազարյան, Մշո բարբառը եւ իր ժողովրդին դիմաստուերը, Պեյրութ, 1972, էջ 8-9:

մտորումները, ձգոումները, անոր անհուն համեստութիւնը, եւ նաև անոր արմատական մտածողութեան զգացական ու իմացական տարրերը»¹⁴⁷: Ինչ վերաբերում է Մշո բարբառի մյուս խոսվածքներին, որոնք ունեն տարբերություններ Մշո բուն բարբառի համեմատությամբ, Ս. Շահնազարյանը համարում է սուկ հարևան բարբառների ազդեցության հետևանք՝ գրելով՝ «անոր սահմանազծին մօտերը ապրող Տարօնցին ենթարկուած է Վանի, Բիթլիսի, Ալիարթի հնչիւնային եղանակաւորումներուն, հացը՝ հնչելով խաց, հօրքուրը՝ խորքուր, կարմիրը՝ կրմիր, քոնը՝ քոն, զլուխը՝ զիլոխ, և շատ քանձր հնչելով պ, բ, գ, ք, տ և դ տառերը»¹⁴⁸:

Մշո բարբառի զիտական ուսումնասիրության հարցում մեծ ավանդ ունի բարբառագետ Ք. Մադարյանը: Նա մանրակրկիտ քննության է ենթարկել Մշո բարբառի հյուսիսարևելյան խոսվածքներից մեկը՝ Ալաշկերտի խոսվածքը: Նրա ուսումնասիրությունները կատարվել են Հայաստանի Հանրապետության Ապարանի և Արագածի շրջաններում բնակվող ալաշկերտցիների խոսվածքների փաստերի օգտագործմամբ՝ ընդգրկելով լեզվական բոլոր մակարդակները: Ք. Մադարյանը նույնպես փաստում է, որ Ալաշկերտի խոսվածքն ունի Մշո բուն բարբառից զգալի լեզվական տարբերություններ՝¹⁴⁹:

Հիշատակենք հնյունական և ձևաբանական մի քանի իրողություններ՝ ա) Ալաշկերտի խոսվածքում շնչեղ խուլ բաղաձայնները բառամիջում և բառավեջում պատմականորեն վերածվել են խովերի, իսկ Մուշի խոսվածքում մնացել են նույնությամբ, բ) Ալաշկերտի խոսվածքը բառասկզբում չունի դ. այն վերածվել է իւ-ի (Խազար, Խուզաս), իսկ Մշո բարբառում նման փոփոխություն չի կատարվել (Ղազար, Ղուկաս), գ) Ալաշկերտի խոսվածքն ունի երկու խոնարհում՝ ե, ա, իսկ Մուշը՝ չորս՝ ե, ա, ի, ու, դ) Ալաշկերտի խոսվածքը չունի զ նախդիրը, իսկ Մուշը՝ ունի,

¹⁴⁷ Ս. Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 10:

¹⁴⁸ Ս. Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 10:

¹⁴⁹ Ք. Մադարյան, նշվ. աշխ., Ե., 1985, էջ 5-7:

Ե) Ալաշկերտում սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է բացառապես կը եղանակիչ + գրաբարյան ներկա կաղապարով, իսկ Մշո բարբառում հանդիպում են դեպքեր, երբ ներկան գրաբարաձև է՝ առանց կու /կը եղանակիչի:

Քերված փաստերը բավական են եզրակացնելու համար, որ Մշո բուն բարբառը ունի լեզվական որոշակի ընդհանրություններ հինգերորդ դարի դասական գրաբարի ու առհասարակ հին հայերենի հետ: Մշո բարբառի՝ գրաբարի հետ ունեցած նմանօրինակ լեզվական ընդհանրությունները բազմաթիվ են և ընդգրկում են լեզվական գրեթե բոլոր մակարդակները, այդ թվում՝ բառային կազմը:

Լեզվական առումով Մշո բարբառի խոսվածքներն ունեն և ընդհանրություններ, և՝ տարբերություններ: Այդ մեծ տարածքում տարածված բարբառի խոսվածքների լեզվական անմիտարբությունը՝ տարասեռ և համասեռ հատկանիշների գոյությունը, պատմականորեն հիմնավորելի է: Այդ են վկայում ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական փաստերը: Դարերի ընթացքում Մշո տարածքում տեղի են ունեցել բարբառախոսների մի շարք ներիուքեր, և նրա սահմաններում տեղի ունեցած բնակչության տեղաշարժերը ստեղծել են այդ տարբերությունները:

Այս առումով արտալեզվական փաստերի արժեքավոր տեղեկություններ են պարունակում ազգագրագետ Բենսեի ուսումնասիրությունները: Բենսեն, ուսումնասիրելով Մշո տարածքի մեկ առանձին հատվածի՝ Բուլանը (Հարք) գավառի ազգագրությունը, փաստեր է տրամադրում, որոնց համաձայն՝ Բուլանը տարածքի հայ բնակիչների մի մասը Տուրութերան նահանգին սահմանակից հարավային և հարավարևելյան կողմերից գաղթած եկանքներ են, իսկ մի մասը դարձալ նույն ուղղությամբ են եկել, բայց միևնույն նահանգի տարբեր գավառների նախկին բնակիչներ են¹⁵⁰: Այդ տեղաշարժերը, ըստ Բենսեի, տեղի են ունեցել 18-րդ դարի կեսերին: Դա մի ժամանակահատված էր, երբ պարսկական

¹⁵⁰ Բենսե, Բուլանըի կամ Հարք գաւառ, Թիֆլիս, 1901, էջ 33:

և բուրքական բազմաթիվ խառնակությունների պատճառով հայկական զավառներում սպանդ էր կազմակերպվում:

Բենսեն Բուլանըդը բաժանում է երկու տարածքների՝ վերին և ներքին: Վերին Բուլանըդի արևելյան որոշ գյուղերի բնակչիներ այդ տարածքում են հայտնվել հարակից հայկական զավառներից՝ Խլաթից (Քզնունիք), Խիզանից, Մոկսից և Արձեշից: Բենսեն եզրակացնում է, որ այդ գյուղերի բնակչիների բարբառային իրողություններն ավելի շատ Վանի բարբառին են հարում՝ «սակավ փոփոխութեամբ իրենց գործածած լեզուն Վանայ զավառաբարբառին կը պատկանի»: Իսկ Վերին Բուլանըդի արևմտյան գյուղերը և որոշ բացառությամբ ողջ Ներքին Բուլանըդի բնակչիները, ըստ նրա, եղել են «Բշերի, Սասունի, Խոյթի, Մօտկանի և Տարոնի» զավառների նախկին բնակչիները, որոնց լեզուն «կը պատկանի Տարօնոյ կամ Մշոյ գաւառաբարբառին»¹⁵¹:

Մշո տարածքի բնակչության տեղաշարժերի ու բարբառային տարրերակվածության վերաբերյալ հիշատակման արժանի փաստեր է տրամադրում պատմաբան, ազգագրագետ Կ. Սասունին: Իր ունեցած փաստերը Կ. Սասունին ներկայացնում է Տարոնի ժողովրդական բանահյուսությունը վերլուծելիս, որի առանձին դրույներում ներկայացվում են նաև Մշո բարբառի տարածման մոտավոր սահմանները: Նա գրում է. «Տարօնի ամբողջ աշխարհը երբ միասին կառնենք՝ անոր բանահյուսութինը բարբառային երկու ձիւիի կը բաժնվի: Մշո դաշտը, Պուլանուիլը, Խնուսը, Վարդոն և Սասուն արևմտյան Տարօնը կը կազմեն և գուտ Տարօնի բարբառով կը ստեղծագործեն, աւելի նուրբ և աւելի պատկերալից: Ծոփաց աշխարհին սահմանակից ըլլալով և հին դարերէն սկսած յոյն-բիւզանդական կեսագունդին պատկանելով՝ հելլենական արուեստի հաւասարակշռութեամբ կը ստեղծագործէ: Իսկ Ախմաթ, Պիթիս, Խիզան՝ Վանի բարբառի խառնուրդ ունին, մնալով անկախ և ինքնայատակ: Մոկաց և Ռշտունեաց աշխար-

¹⁵¹ Բենսեն, նշվ. աշխ., էջ 33:

իին 16-րդ և 17-րդ դարերուն ժողովուրդը դեպի արևմուտք քշուած և խառնուած է Սալնուրի և Ախլաթի ժողովուրդին: Մոկաց և Սպարկերտի երգերէն շատերը Տարօնի երգերն են, Մոկաց բարբառին վերածուած, շնորհիվ ժողովուրդի այս տեղափոխութիւններուն»¹⁵²:

Մշո տարածքի խոսվածքների տարբերակվածությանը համառոտակի անդրադարձել են նաև Սարգիս և Միսակ Բղեյանները: «Հարազատ պատմութիւն Տարօնոյ» արժեքավոր ուսումնասիրության մեջ (1962 թ.) հեղինակները Տարոնի (Մշո) դաշտի ժողովուրդին բնութագրում են որպես «կրոնասեր, պարտածանաչ, ցասկոտ, բռնությանը դիմագրավող, տոկուն, իին հայի տիպարն իրենց մեջ պարփակող», որոնք պարբերաբար ենթարկվել են թուրքերի հարձակումներին: Հետազոտողները, անդրադառնալով մշեցիների բարբառային պատկանելությանը և տարածքի բնակիչների ժողովուրդագրությանը, գրում են. «դաշտի հին բնակիչները քանից փոփոխության ենթարկված են, կամ գաղթած, կամ ջարդուած, տեղ տալով հետզիետէ լեռնաբնակ ժողովուրդին»¹⁵³:

Անդրդառնալով բուն լեզվական հարցերին՝ Բղեյանները, քանի որ եղել են Մշո դաշտի երեմնի բնակիչներ, ուշագրավ և կարևոր տեղեկություններ են հաղորդում այդ տարածքի բարբառային վիճակի մասին. «Տարօնի գիւղերու բնակչութեան բարբառը գիւղէ գիւղ կը տարբերի՝ ցուց տալով իրենց զանազան տեղերէ զաղթած ըլլալը: Դըժբախտաբար, լավ չուսումնասիրուեցաւ իւրաքանչիւր գիւղի բարբառը, բան մը որ աւելի լոյս պիտի սփուէր այդ ժողովուրդի ծագման վրայ, և հիմա որ ամէնքն ալ կոտորուած են, և մնացյալ փոքր մէկ մասը զաղթած օտար երկիրներ և մոռցած են հին բարբառը և շեշտը, դժվար է գիտնալ անոնց ծագումը և որ գյուղերէն զաղթած ըլլալը: Ինչ որ հաստատ է, սակայն, սա է, թէ

¹⁵² Կ. Սասունի, Պատմութիւն Տարօնի աշխարհի, 1956, տպ. Սևան, Պեյրութ, էջ 431:

¹⁵³ Սարգիս և Մանուկ Բղեյան, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Տպարան Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1962, էջ 6:

անոնք մեծամասնութեամբ՝ Սասունէն, Խոյքէն, Մոտըկանէն գաղթած են սարատակի գիւղերը»¹⁵⁴:

Ի դեպ, Մշո տարածքի խոսվածքային տարբերակվածությանը մասնակիորեն անդրադարձել է նաև Ս.Հ. Բաղդասարյան-Թափալցյանը: Նա իր ուսումնասիրության մեջ փաստում է, որ նկատելի են խոսվածքային տարբերություններ Բաղեջի, Ալաշկերտի, Խլաթի, Խնուսի և Մշո բուն շրջանի բարբառի մեջ: Իր ասածը հիմնավորելու համար նա բերում է հնչյունական որոշ անհամասեռ օրինաշափություններ՝ «Մշո բարբառում հայերենի *հ*-ն հիմնականում մնում է անփոփոխ, իսկ Խլաթում, Բաղեջում, Բիթիսում, Արծկեում, ինչպես և Ալաշկերտի որոշ զյուղերում (Մանկասար) *հ*-ի դիմաց կա *խ* (խուրնիգ-խրբեղին, խարսնիս, խաց)»¹⁵⁵ և այլն: Հետազոտողի համոզմամբ՝ Մշո բարբառի ուսումնասիրությունը պետք է տեղայնացնել: «Անհրաժեշտ է տալ Մշո բարբառի նկարագրությունը այն ձևով, ինչպես խոսվել է բուն Սուշ քաղաքում և նրա շրջաններում, Խլաթում, Մանազկերտում, Բաղեջում, Խնուսում, Ալաշկերտում և այլն»¹⁵⁶: Ս. Բաղդասարյան-Թափալցյանի այս գաղափարն ապագայում իրազործվելիք ինդիք է: Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու մարզերի տարբեր բնակավայրերում, ինչպես նաև Հայաստանի սահմաններից դուրս ապրող մշեցիների լեզվական տվյալների, արդեն իսկ կատարված հետազոտությունների և տարատեսակ ներքին վերականգնումների հիման վրա հնարավոր է ճշգրտել ու հստակեցնել Մշո բարբառի տարածման սահմանները, նրանց լեզվական ընդհանրություններն ու տարբերությունները:

Որպես ամփոփում՝ նշենք, որ ըստ Գ. Զահուկյանի հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ Մշո բարբառը գտնվում է հայերենի բարբառների

¹⁵⁴ Սարգիս և Մանուկ Բեդյան, նշվ. աշխ., էջ 6:

¹⁵⁵ Ս. Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 5-6:

¹⁵⁶ Ս. Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 6:

արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախմբում և ունի Բաղեշի, Խլաթի, Արծկեի, Արձեշի, Մանազկերտի, Մուշի, Բուլանըդի, Խնուսի, Ալաշկերտի խոսվածքները¹⁵⁷:

¹⁵⁷ Գ. Զահոռվյան, նշվ.աշխ., Ե., 1972, էջ 134:

Գարիկ Մկրտչյան

ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՔԱՆՈՒՄ¹⁵⁸

Գեղարքունիքի մարզը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքով ամենամեծ և ամենախիտ բնակեցված մարզը: Մարզը գտնվում է ՀՀ տարածքի արևելյում՝ շրջապատելով Սևանա լիճը: Արևելյից սահմանակից է Աղբքաջանին, Արցախին, հյուսիսից և արևմուտքից՝ Տավուշի, Կոտայքի, Արարատի, հարավից՝ Վայոց Ձորի մարզերին: Մարզը ներառում է Գավառի, Ճամբարակի (նախկին Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի և Վարդենիսի շրջանների տարածքները: Բնակչության թվաքանակը, ըստ 2001թ. տվյալների, կազմում է 215.371 մարդ¹⁵⁹: Մարզն ընդգրկում է 93 բնակավայր, որոնցից 87-ը գյուղական համայնքներ են: Քաղաքները հինգն են՝ Գավառ, Ճամբարակ, Սևան, Մարտունի, Վարդենիս:

Այս տարածշրջանը, պետք է կարևորել, անհիշելի ժամանակներից եղել է հայաբնակ, սակայն 1604 թվականին տարածքն ամայանում է տեղաբնիկներից, երբ Շահ Արասը պատմական Հայաստանի ողջ տարածքում կազմակերպում է հայտնի արտագաղթը դեպի Պարսկաստան: Գաղթերին հավելվում է նաև 1679 թ. ամուանը տեղի ունեցած երկրաշարժը, որով տարածքը իսպահ հայագրկվում է: Սակայն, 17-րդ դարից սկսած՝ դատարկ ու ամայի այդ տարածքներում աստիճանաբար բնակություն են հաստատում թուրքական քոչվոր ցեղերը և զավթում հայկական բնակավայրերը: Մինչ 19-րդ դարի սկիզբը հայերը փոքրամասնություն

¹⁵⁸ Տե՛ս՝ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի գեկուցումներ, «Ասողիկ» հրատ., Եր., 2014, էջ 134-143:

¹⁵⁹ **Ս. Հակոբյան,** Հայաստանի մարզեր, Գեղարքունիքի մարզ, պատմական հանրագիտարան, Ե., Հեղինակ. հրատ., 2010, էջ 4:

Էին կազմում այստեղ, իսկ եղածները հետագայում ձուլվում են եվոր հայերին: Իրավիճակը փոխվում է 18-րդ դարի վերջերում և հատկապես 19-րդ դարում, երբ 1828-30 թվականների ռուս-թուրքական պատերազմներով պայմանավորված՝ Գեղարքունիք են ներգաղթում Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերից մեծարթիվ հայեր՝ Ալաշկերտից, Մուշից, Հին Բայազետից, Դիաղինից, Վանից, Կարսից, Մակուից: Ոչ մեծ քանակությամբ ներգաղթյալներ կան նաև 1914-22 թթ. տեղի ունեցած դառնադես իրադարձությունների ընթացքում: 1988-90-ական թվականներին հատկապես Ճամբարակի ու Վարդենիսի տարածաշրջան են հանգրվանում նաև Աղբեջանից բռնագաղթված հայերը:

Նշված վիճակագրական տվյալները վկայում են, որ տարածքը հարուստ է բարբառներով և, կարելի է ասել, գործ ունենք լեզվական տարասեռ հատկանիշներով բնութագրվող բարբառախմբերի, միջբարբառների, բարբառների և առանձին խոսվածքների հետ:

Ուսոք է ասել, որ տարածքային այս գոտում Մշո բարբառը և նրա տարբեր խոսվածքները լավագույնս պահպանվել են մինչ օրս: Ըստ տարբեր տարածաշրջանների, ունենք հետևյալ պատկերը.

ա) *Գավառի տարածաշրջան՝* Գանձակ համայնք (ներգաղթյալներ են Մուշից, Ալաշկերտի Դիզա գյուղից, եղել են նաև որոշ բայազետցիներ), Գեղարքունիք (ներգաղթյալներ են Մուշի, Ալաշկերտի գյուղերից և այլ բնակավայրերից), Լճափ (բայազետցիներ են, բայց կան նաև Վարդառորից, Վերին և Ներքին Գետաշեն գյուղերից), Ծաղկաշեն (կան նաև Եկվորներ Ալաշկերտի Դիզա գյուղից ու Մուշից):

բ) *Մեսնի տարածաշրջան՝* Գեղամավան (ներգաղթյալներ են Մակու գավառի Անձուկ, այդ թվում՝ Ալաշկերտի գյուղերից):

գ) *Մարտունիի տարածաշրջան՝* Մարտունի քաղաք, Արծվանիստ (Ալաշկերտ, Մուշ, Մակու և այլն), Աստղաձոր (Ալաշկերտ), Գեղհովիտ (Ալաշկերտի Քորփորան գյուղից, Մուշի և այլ շրջանի

գյուղերից), Երանս (Ալաշկերտից, Մուշից, Խաստուր գյուղից), Զոլաքար (Ալաշկերտի Զիրոյ/Զիրավ/ գյուղից), Լիճը (Ալաշկերտի Հողաբերդ և Մուշի գյուղերից), Ծակքար (Ալաշկերտի Հասանշահ, Ֆերան, Քարաձոր, Մաշկերտ կամ Մազկերտ և Սիֆր գյուղերից), Ծովասար (Ալաշկերտ, Մուշ), Ծովինար (Ալաշկերտ, նաև Մուշից ու Վանից), Չորազյուղ (Ալաշկերտի Չլկան գյուղ), Մադինա (վերաբնակյալներ Ներքին Գետաշեն գյուղից), Ներքին Գետաշեն (Ալաշկերտ, Մուշ), Վարդաձոր (Ալաշկերտի գյուղեր), Վարդաշեն (Ալաշկերտի, Մուշի գյուղերից), Վարդենիկ (Ալաշկերտի, Մուշի գյուղերից, նաև Սասունից), Վերին Գետաշեն (Ալաշկերտի Խաստուր/Խացտուր/Հացտուր գյուղից, Մուշից):

Դ) Վարդենիսի տարածաշրջան՝ Ախպրաձոր (Մուշից, Սասունից և այլ բնակավայրերից), Լճավան (հիմնականում Մուշից, նաև՝ Պարսկահայաստանի նահանգներից, Կարսի մարզից ու Բուլանըլից), Խաչաղյուր (Բասենի, Մուշի, Վանի գյուղերից, Երզնկայից, Ալաշկերտից և այլ բնակավայրերից), Ծովակ (Մուշ, Ալաշկերտ), Կարճաղյուր (Մուշ, Ալաշկերտ), Մաքենիս (Վանի, Մուշի, Կարսի գյուղերից), Մեծ Մասրիկ (Մուշից, Բասենից, Կարսից, Վանից), Նորակերտ (Վանի գավառի Մեղ գյուղից, Մուշից, Ալաշկերտից եկած գաղթականներ):

Մշո բարբառը բացակայում է միայն Ճամբարակի տարածաշրջանում:

Մեր՝ այս արտավեզվական ուղիներով վերականգնումները փաստվում են նաև Հայաստանի պատմության ազգային արխիվի 1931, 1836 թվականներին կատարված մարդահամարի համապատասխան ֆոնդերի տվյալներով (ֆոնդ՝ 90, ցուցակ՝ 1, գործ՝ 88, 89, 318): Մարտունու տարածաշրջանում հանգրվանած մշեցիների վերաբերյալ առաջին լեզվապատմական հիշատակումը կատարել է Հր. Աճառյանը «Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (1911 թ.) աշխատության մեջ: Հեղինակը գրում է. «Վերջին երկու ոռուս-տաճկական պատերազմներու

ժամանակ Մուշեն և Ալաշկերտեն երկու մեծ գաղթականություն դուրս գալով՝ հաստատվեցավ Երևանի նահանգը...»¹⁶⁰:

Վերոքերյալ փաստերը թույլ են տալիս ասելու, որ Մշո բարբառը Գեղարքունիքի մարզում հիմնականում ներկայանում է Մարտունու տարածաշրջանում, իսկ Գավառի տարածաշրջանի Գանձակ, Գեղարքունիք, Լճափ, Ծաղկաշեն ու Սևանի տարածաշրջանի Գեղամավան համայնքներում հանգրվանած մշեցիները, ինչպես մեր այցերն են Վկայել, լեզվական հիմնական հատկանիշներով ձուլվել են Բայազետի բարբառին՝ մայր բարբառից պահպանելով որոշ լեզվական մնացուկներ: Այդ մնացուկներն արտացոլվում են լեզվական գրեթե բոլոր մակարդակներում, օրինակ՝ հնչյունական համակարգում շնչեղ ձայնեղների պահպանումը, ետնալեզվային ձայնավորների ոչ առաջնալեզվայնությամբ գործառելը, Էտալոնային հ հազարի պահպանումը, այն դեպքում, եթք Բայազետում դրանք ներկայանում են հետնալեզվային ինով, ձևաբանական համակարգում կը եղանակիշ+գրաբարյան ներկա կադապարով սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակածների կազմումը, հանդա/հրմա/կօ մասնիկներով շարունակականի իմաստ արտահայտելը բայական ժամանակածների հետ, ուղղական-հայցական հոլովներով ներգոյականի իմաստ արտահայտելը և այն: Ընդհանուր առմամբ Մշո բարբառի ու նրա խոսվածքների Բայազետի բարբառին համաձուլմանը նպաստել է նաև այն, որ լեզվական առումով երկու բարբառներն էլ ներկայանում են միջակա գծերի առատությամբ ու ընդհանրությամբ, որն ավելի է ոյուրինացըել այդ գործընթացը: Հատկապես խոսք Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքին է վերաբերում, որը Մշո և Բայազետի բարբառների հետ ունի լեզվական ընդհանրությունների հավասարաժեք համակարգեր:

Խնդիրն ավելի է դժվարանում Վարդենիսի տարածաշրջանի դեպքում, քանի որ, ինչպես ցույց են տալիս տվյալները, այստեղ

¹⁶⁰ Հր. Աճարյան, Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների, Մոսկվա - Նոր-Նախիջևան, 1911, էջ 116:

խոսվածքները ի սկզբանե համասեն չեն եղել. բնակավայրերը ներկայանում են տարբեր խոսվածքակիրների՝ դիաղինցիների, մշեցիների, վանեցիների, բայազետցիների, սասունցիների, արցախցիների համատեղ գոյակցմամբ, հետևաբար երկու դարը բավական է, որ առաջանան միջբարբառային, խառը լեզվական համակարգեր՝ այս կամ այն բարբառի լեզվական տարրերի գերակշռությամբ: Առայժմ կիսուսափենք այս շրջանում Մշո բարբառի լեզվական դրսերումների գործառման վերաբերյալ վերջնական տեսակետ հրապարակել, քանի որ այդ տարածաշրջանում ուսումնասիրությունները ընթացքի մեջ են:

Տարածաշրջանում Մշո բարբառը հայտաբերվում է նրա ոչ բոլոր խոսվածքներով: Ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, Մշո բարբառն ունի ինը խոսվածք¹⁶¹: Մարտունու համայնքներում գործում են միայն Մշո, Ալշղկերտի, Բաղեշի երբեմնի խոսվածքները: Դետք է ասել, որ Մարտունու տարածաշրջանում Մշո բարբառն ու նրա խոսվածքներն ավելի անաղարտ են պահպանվել: Մեր այս գնահատականին նպաստում է այն, որ առիթ ունեցել ենք Մշո բարբառն ուսումնասիրելու մեկ այլ տարածաշրջանի՝ Ապարանի շուրջ վեց խոսվածքների տվյալներով¹⁶²: Կարծում ենք, այս հարցում վճռորոշ է տարածաշրջանի դիրքը և մեր լեզվի գրախոսակցական կենտրոնից՝ Երևանից համեմատաբար հեռու լինելը: Քննարկվող տարածաշրջանի խոսվածքների անաղարտության վերաբերյալ այս տարածքը հետազոտած Ռուբեն Բաղրամյանը ժամանակին գրել է. «Բնակավայրերում ու շրջկենտրոններում խոսվում են մի քանի բարբառներով, գրական երանգ ստացած խոսվածքներով ու լեզուներով: Նույնիսկ շրջկենտրոններից հեռու գտնվող գյուղերում

¹⁶¹ **Գ. Զահոռկյան,** Հայ բարբառագիտության ներածություն, ԳԱԱ հրատ., Ե., 1972, էջ 134:

¹⁶² **Գ. Մկրտչյան,** Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների քննություն [ատենախոսություն, ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ], Ե., 2011, էջ 66:

մաքուր բարբառախոսներ այլևս անհնար է գտնել. մի տեղ, ուր դպրոցն ու գրականությունը, մամուլը, ռադիոն և կենտրականությունը կենցաղ են, ուր մուտք են գործել ավտոբուսն ու զյուղատնտեսական մեքենաները, քամու բերան են տվել զյուղերը կղզիացնող անջրպետները, բարբառները դատապարտվել են վերացման»¹⁶³: Այս գնահատականը թյուր է և իրականությանը չփ համապատասխանում: Հարցումները և մասնագիտական դիտողականությունը ցույց է տալիս, որ, անկախ 20-րդ դարի և մեր օրերի գիտատեխնիկական հաղթարշավից, բարբառների գործառումը տարբեր տարածքներում, այդ թվում Գեղարքունիքում, բացարձակ իրողություն է, որը ներառում է տարբեր տարիքի բարբառախոսների ու թիրախային խմբերի: Բարբառախոսները հատկապես լավ են պահպանում հնչյունական և քերականական համակարգերի բուն տիպարանությունն ու կայունությունը: Այս համակարգերը բարբառների պահպանման ու նրանց տարբերակման գործում ամենակարևոր հատկանիշներն են, իսկ բառապաշտարային իրողությունների դեպքում բազմաթիվ բառ-հասկացությունների անգործածելի դառնալը, ակտիվությունից դեպի պասիվության մղվելը կամ լեզվական համակարգից իսպատ դրւու զալն օրինաչափ է, քանի որ լեզվի, այս դեպքում բարբառի բառապաշտը նույնպես փոփոխվում է՝ հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով պայմանավորված: Տարածքները նույնպես ենթակա են այն բառ-հասկացությունների կորստին, որոնք այլևս ենթակա չեն գործառման և հեշտությամբ ընդունում են այն բառամիավորները, որոնք կենսագործունեությունը կազմակերպելու համար գրավոր կամ բանավոր ձանապարհներով մուտք են գործում բարբառախոսների ակտիվ բառապաշտը: Մշտ բարբառը Գեղարքունիքի մարզում հենց այսպիսի պատկեր ունի՝ հնչյունական համակարգի և քերականական

¹⁶³ Ռ. Բաղրամյան, Հայերենի բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 3-4:

կառուցվածքի կայունությամբ և բառապաշարի հարափոփոխությամբ ու կորստով:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Մշո բարբառը Մարտունու տարածաշրջանի խոսվածքներում սահմանազատվում են իրարից հատկապես հնչյունական համակարգերում: Զուգահամադրումների շնորհիվ պարզ է դառնում, որ գործող խոսվածքների համար որպես առաջին տարբերանշան հիմք կարող է դառնալ ետնալեզվային *և* խուլը և կոկորդային *և* հազարը: Երանոսի, Վարդանորի, Զորագյուղի, Լիճքի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Մադինայի խոսվածքներում գործում է էտալոնային *և* խուլը՝ *հարս, հազար, համ, հին, հինգ* և այլն, իսկ մյուս խոսվածքներում՝ Մարտունի քաղաքում, Արծվանիստում, Աստղաձորում, Գեղիովիտում, Զոլաքարում, Ծալքարում, Ծովինարում էտալոնային *և*-ն ներկայանում է *և* խուլի տեսքով՝ *հարս, հազար, համ, ինին, ինինգ* և այլն: Լեզվական այս տարբերանշումը, կարելի է ասել, հատակ սահմանազատում է Մշո բուն խոսվածքը Ալաշկերտի խոսվածքից: Նման դիրքերում *և* հնչյունի սահմանափակումը վկայում է, որ Աստղաձորում, Գեղիովիտում, Ծովասարում, Ծովինարում, Վարդաշենում, Վարդենիկում տեղի է ունեցել *և*-ախտոների ասիմիլացում՝ *ի* նպաստ *և*-ախտության, քանի որ վիճակագրական տվյալների համաձայն՝ այդ բնակավայրերում ապրել են նաև մշեցիներ: Նմանօրինակ հատկանիշները ի նպաստ են ծառայում այն բանին, որ այս տարածքում բարբառայնությունն ավելի է խորացել: Իսկ Վարդանոր համայնքում գործող *և*-ախտությունը ի չիք է դարձնում այն գիտական հիպոթեզը, որ պատմական Ալաշկերտը բացառապես *և*-ախտու է եղել. վերականգնված փաստերը վկայում են, որ նշված գյուղում ապրում են ներզադթյալներ բացառապես Ալաշկերտի գյուղերից: Չենք բացառում, որ այստեղ գործ ունենք նաև վիճակագրական անձսության հետ:

Հնչյունական մյուս հատկանիշը, որով, կարծում ենք, հարկ է տարբերակել տարածքի Մշո բարբառի խոսվածքները, հետնա-

լեզվային դ, իսկ շփականների գործառական սահմանափակումներով ներկայանալն է ու նրանց տարբերակումը: Չայնեղությամբ ու խլույթյամբ իրար հակադրվող դ - իսկ շփականների հակադրությունը պայմանավորված է բարի տարբեր դիրքերում գործածվելուց: Կենտրոնական Հայաստանի խոսվածքներում բառասկզբի դիրքում տիպարանորեն բացառելի է դի առկայությունը: Եղած բարբառանյութը և այսօր տարածաշրջանում ապրող բարբառախոսների կողմից գործածվող բառասկզբյան դ հնչյունները չունեն ձայնաբանական այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են համահայերենյան և դիտարկվող խոսվածքների բառամիջում ու բառավերջում ի հայտ եկող դին: Խոսվածքներում եղած բառասկզբի դ-ն, որը, ի դեպ, հիմնականում հանդիպում է արևելյան լեզուներից կատարված փոխառություններում՝ ներառելով հատուկ և հասարակ անունները, կոկորդային, ըմպանային արտաքերում ունեցող մի հնչյուն է՝ տառադարձվելով այս՝ դի կերպ, արաբերենից փոխառյալ հնչյուն է: Այդ հնչյունը կա նաև թուրքական, պարսկական միջնորդավորված բազմաթիվ փոխառություններում, որոնց մայր լեզուն դարձյալ արաբերենն է՝ դարձից, դազալ, դամիշ, դրժալ, դրադ, դուշ, դոլ, դօչադ և այլն: Ընկալողական դրույթներով կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ Մարտունու տարածաշրջանի բուն Մշո տարածքը ներկայացնող խոսվածքներում այս օտարամուտ դի աստիճանաբար միտում ունի վերանալու, բայց ոչ թե ի հաշիվ համահայերենյան ու խոսվածքների բառամիջում ու բառավերջում ի հայտ եկող դի, այլ ետնալեզվային շփական իսկ, որի հետ դի լծորդական հակադրության մեջ է՝ խազան, խաթր, խալաթ, խալմախալ, խամազ, խայիս, խասաթ, խըղից, խըրկէլ և այլն: Սա օրինաչափ երևույթ է, քանի որ նշյալ բառամիավորներն արաբերենում չունեն իսկ հնչյունը, այլ հայերենում ներկայանում են դի-ով և դի-ով, իսկ Մշո բուն տարածքի խոսվածքներում գործում են դի-ով փոխառված տարբերակները, ուստի դրանք միջնորդա-

վորված փոխառություններ են թուրքերենից ու պարսկերենից: Ինչ վերաբերում է՝ $\hat{\eta} > \text{ի}$ անցմանը, ապա, կարծում ենք, աստիճանաբար տեղի ունեցող երևույթ է: Քանի որ Մշո տարածքում կան $\hat{\eta}$ -ով տարբերակներ, հետևաբար դրանք փոխառվել են հենց այդպես, իսկ $\text{ի}-\text{ի}$ վերածվել կամաց-կամաց:

Իսկ Ալաշկերտի շերտը ներկայացնող խոսվածքներում նշյալ բառերը զուգահեռ ներկայանում են հետնալեզվային, ըմպանային $\hat{\eta}$ խուլով՝ կազան, կաթրը, կամազ, կայիմ, կասար, կրդիզ և այլն՝ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ մտնելով $\text{ի}-\text{ի}$ և $\eta-\text{ի}$ հետ: Այս երևույթը Հ. Մուրադյանը բացատրում է նրանով, որ $\eta-\text{ի}$ համար բառասկիզբը բացառված դիրք է հայերենում¹⁶⁴, ուստի բառասկզբյան $\eta-\text{ի}$ արտասանությունը խորթ տարածքային միավորներում օտար այդ հնչյունի փոխարեն գործածում են ետնալեզվային $\hat{\eta}$ կամ $\text{ի}'$ չնայած $\hat{\eta}$ - ն նույնպես օտար հնչյուն է: Նկատենք մի հատկանիշ ևս. փոխառյալ $\hat{\eta}$ և $\hat{\eta}$ հնչյունները Ալաշկերտի շերտի խոսվածքներում երբեմն շատ դժվար է տարբերել իրարից:

Գեղարքունիքի Մշո բարբառով հարուստ զյուղերում տարբերակիչ հատկանիշ կարող ենք համարել նաև պայթական բաղաձայնների ցուցաբերած դրսնորումները: Դիտարկենք բառամեջը և բառավերջը: Եթե Մշո բուն խոսվածքներում բառամիջում և բառավերջում կան շնչեղ խուլեր՝ *անհօր*, *պատարաք*, *շօր*, *բարթ*, *անմարթ*, *վարթ*, *դարփին*, *սըրփէլ* և այլն, ապա Ալաշկերտի շերտը ներկայացնող խոսվածքներում նշված դիրքերը ներկայանում են պարզ խուլերով՝ *անհօլ*, *պադարակ*, *շօկ*, *բարտ*, *անմարտ*, *վարտ*, *դարպին*, *սըրպէլ* և այլն:

¹⁶⁴ Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական բերականություն*, Հնչյունաբանություն, հ. 1, ԳԱԱ հրատ., Ե., էջ 214-215:

Խոսելով ընդամենք երեք հնչունական տարբերակիչ հատկանիշների մասին, որով Մշո բարբառը և նրա խոսվածքները սահմանազատվում են իրարից Գեղարքունիքի մարզում, կարևորենք, որ բազմաթիվ հնչունական իրողություններով նույնական են նրանք: Որպես օրինակ՝ հիշատակենք շնչեղ ձայնեղներով համակարգի լիակատար պահպանումը համահայկական բառերում, երկրաբառների առկայությունը բառասկզբում ու է ձայնավորակիզբ բառերում և միավանկ բառերի փակ վանկերում, դիրքային, շեշտից կախված և պատմական տարաբնույթ հնչունափոխությունները, փոխազդեցական հնչունափոխության դրսնորումների առատ փաստերը և այլն:

Ինչ վերաբերում է ձևաբանական համակարգերին, տարբերությունները, ի հակադրություն ընդհանրությունների, մեծ չեն տասնյոթ խոսվածքների տվյալների համադրմամբ, որն արտացոլվում է գրեթե բոլոր քերականական կարգերում ու դրսնորումներում: Անդրադարձնանք մի քանի տարբերությունների: Բուն Մշո տարածքի խոսվածքներում գործառում է -ստան հոգնակերտը՝ օսկէստան, տարէստան, էրէխէստան և այլն, իսկ Ալաշկերտի շերտում բացակայում է, Մշո շերտում գործում է կցաղիր զ նախդիրը, Ալաշկերտի շերտում՝ բացակայում: Մշո շերտի խոսվածքներում գործում է չորս խոնարհում, իսկ Ալաշկերտի շերտում՝ երեք: Մշո շերտն ունի նաև ու խոնարհումը՝ վերում/վերուս/վերու/ վերունք/ վերութ/ վերուն: Եթե Մշո շերտի խոսվածքներում պակասավոր եմ օժանդակ բայց խոնարհում է ի խոնարհչով՝ իմ/իս/է/ ինք/իք/ին, ապա Ալաշկերտի շերտի խոսվածքներում՝ ե խոնարհիչով՝ էմ/էս/ ա/էնք/էք/էն: Եթե Մշո շերտի խոսվածքներում սահմանական եղանակի վաղակատար ներկաժամանակաձևում եզակի և հոգնակի թվերը հստակորեն տարբերակվում են դիմարթվանիշ վերջավորություններով՝ մանցէր իմ/ մանցէր իս/մանցէր է/մանցէր ինք/ մանցէր իք, մանցէր ին, ապա Ալաշկերտի շերտի խոսվածքներում՝ հոգնակի թվի երրորդ դեմքը եզակիած է, ինչպես նաև՝ վաղակատարի

իմաստն արտահայտվում է -աձ մասնիկով՝ մանցէր էս/ մանցէր էս/մանցէր ա/մանցէր էնք/ մանցէր էք/, մանցած ա:

Այստեղ ցանկանում ենք անդրադառնալ մեկ կարևոր խնդրի ևս: Խոսքը վերաբերում է սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևերի կազմությանը: Հայտնի է, որ Կը ճյուղի բոլոր բարբառներում այս ժամանակաձևերը կազմվում են կը եղանակիչ+գրաբարյան ներկա կաղապարով: Սակայն Մարտունու տարածաշրջանի հատկապես Մշո շերտը ներկայացնող խոսվածքներում համակարգային է նաև գրաբարաձև ներկայի և անցյալի արտահայտումը ներկա և անցյալ ժամանակաձևերի իմաստով՝ կուղիմ, ինչ ա կրսիս, լրսա, կը վազիմ, քասնիմ դաշտըն, արի հեղսի կառույցները բարբառախոսները ներկայացնում են այսկերպ՝ ուղիմ, ինչ ա կրսիս, լրսա, վազիմ, հասնիմ դաշտըն, արի հեղսի (ներկա), կամ՝ կէրտէնք ըրմնօվ դաշտըն խօթ քաղէլու, կսօվրի, օր մառթ դառնի կառույցները կլինեն էրտէնք ըրմնօվ դաշտըն խօթ քաղէլու, սօվրի, օր մառթ դառնի (անցյալ) և այլն: Նշենք, որ ներկայի կազմության այսպիսի իրողություններ արձանագրել ենք նաև Ապարանի տարածաշրջանի Մշո շերտի խոսվածքներում, որն արտացոլված է նաև մեր ատենախոսության ու համապատասխան հրապարակման մեջ¹⁶⁵: Կարծեք թե, Մշո շերտի խոսվածքներում այս իրողությունների առկայությունը վկայում է, որ միայն Խոտորջուրի բարբառին չէ հատուկ գրաբարաձև ներկա ունենալը: Ավելին, եթե Խոտորջուրում գրաբարաձև ներկան վերաբերում էր միայն ձայնավորով սկսվող բառերին, ապա Մշո շերտի խոսվածքներում այդ տարբերակումն ուղղակի չկա: Գրաբարաձև ներկայի այսօրինակ երևույթը չի կարելի լեզվական մնացուկ համարել, քանի որ այն

¹⁶⁵ Զահուկյանական ընթերցումներ-2009, Գ. Մկրտչյան, Սահմանական եղանակի ժամանակաձևերի դրսուրումները Ապարանի խոսվածքներում, Հանրապետական գիտական նատաշրջանի գեկուցումներ (Երևան, ապրիլի 28-29, 2009), էջ 131:

համակարգային է. ընդամենը մինչ օրս պահպանվում են հինհայերենյան լեզվական օրինաշափությունները, որոնցով, ի դեպ, հարուստ է Մշո բարբառը:

Մշո շերտի խոսվածքները բարբառային այն տարագրված միավորներից են, որոնք մինչ օրս լավագույնս պահպանվել են ՀՀ-ի տարածքում: Այս հարցում Գեղարքունիքի մարզը կարևոր է, քանի որ, ըստ մեզ, Մշո բարբառի տիպաբանությունը կարելի է լիովին վերհանել հենց այս տարածաշրջանում. ամբարված ու հինավորց լեզվական միավորների առատությունն այդ անելու հնարավորությունն ընձեռում են:

Գարիկ Մկրտչյան

ՄԻԶԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՄՇՈ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԳՈՂԾԱՌՈՂ ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԸ¹⁶⁶ (ընդհանրություններն ու տարբերությունները)

Միջին հայերենը և Մշո բարբառը բնութագրվում են կցական կառուցատիպով ներկայանալի լեզվավիճակներ: Այս հանգամանքն իր արտահայտությունն է ստանում նաև անունների թվակազմության մեջ՝ պահպանելով թվի քերականական կարգի՝ եզակի/հոգնակի իմաստային հակադրությունը: Պարզ է, միջին հայերենը 12-16-րդ դարերում գործած «զրախոսակցական» լեզուն է՝ լիակատար միասնականության չհասած, իսկ Մշո բարբառը կենտրոնական Հայաստանում ձևավորված ու կազմավորված, ապա ՀՀ տարածքում և այլուր հանգրվանած, գրական լեզվի կարգավիճակ չունեցող մի մեծ և շատ ավելի հին բարբառ է՝ իր ենթարբառներով ու տասնյակ խոսվածքներով: Այն լեզվական մի շարք հատկանիշներով աղերսվում է հայերենի տարբեր լեզվավիճակների հետ, ի մասնավորի՝ միջին հայերենի: Երկու լեզվավիճակները խնդրո՝ հոգնակիակազմության հարցում հայտաբերում են հոգնակերտների նորատիպ՝ զուգամիտվող և տարամիտվող համակարգեր^{*}:

¹⁶⁶ Տե՛ս՝ «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի գեկուցումներ, «Ասողիկ» հրատ., Ե., 2014, էջ 125-132:

* Միջին հայերենի հոգնակերտ մասնիկների քննության համար հիմք են հանդիսացել 12-16-րդ դարերի գրավոր աղբյուրների լեզուն, ուստի՝ համապատասխան եզրահանգումները տրվում են այդ դարերից ավանդված լեզվական փաստերի դիտարկումներով, և դրանց գիտական արտացոլումը տեսնում ենք «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» ուսումնամիրության երկրորդ հատորում /Ե., 1975./, իսկ Մշո բարբառի տվյալները բերվում են ըստ առկա ուսումնասի-

Միջին հայերենում ձևավորված հոգնակիակազմության նոր տիպը կամ տիպոլոգիան իր մասնակի արտացոլումն ունի նաև Մշո բարբառում: Հոգնակերտ մասնիկների կցումը բառին պայմանավորվում է վանկաքանակությամբ, կարևորվում է հոգնակերտի գուգորդումը հիմքի տեսակներից որևէ մեկին: Ինչպես Հ. Պետրոսյանն է գրում, հիմքատեսակների և հիմքատարբերակների համակարգումը հիմնվում է վանկաքարության սկզբունքի և հնչյունաբանական այլ գործոնների վրա¹⁶⁷: Թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում տարբերակվում են միավանկ, երկվանկ, բազմավանկ հիմքատեսակներ: Նշված հիմքատեսակների գործառումը երկու լեզվավիճակներն իրար միավորող հատկանիշ է: Եթե Մշո բարբառում դրանք գործող համակարգեր են և հիմնավորվում են հնչյունական տարաբնույթ փաստարկներով, ապա միջին հայերենում դրանք թաքնված են այդ լեզվավիճակի կազմավորման ակունքների առեղծվածի մեջ: Հիմքատեսակների տարբերակումը նախորդ լեզվափուլերում չի կարևորվել, քանի որ մեզ հայտնի ք, ս, ց հոգնակերտները տարբեր հիմքատեսակներով անուններին կցվել են առանց խտրության:

Եղած բոլոր տվյաններով, որոնց յուրաքանչյուրի գործածության մոտավոր սահմանները նկարագրվում է միջինհայերենյան մատենագրությամբ վկայված փաստերով ու օրինակներով, միջին հայերենի հոգնակերտները թվով 44-ն են, որոնցից 23-ը ներկայացվում են որպես կազմությամբ պարզ, թեև վիճարկելի է նրանցից շատերի պարզ հոգնակերտ լինելու հանգամանքը, 21-ը՝

բությունների, ՀԲԱ ծրագրով լրացված տետրերի՝ 354 /Մուշ, Մուշի գավառ, Վարդիսաղ գյուղ/, 401 /Մուշ, Մուշի գավառ, Վարդէնիս գյուղ/, 447 /Մուշ, Խոլաթ գավառ, Ծղակ գյուղ/, 353 / Մուշ, Ալաշկերտի գավառ, Խաստուր գյուղ/, և կենդանի խոսքի:

¹⁶⁷ Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., ԵՊՀ հրատ., 1972, էջ 149:

բաղադրյալ¹⁶⁸, իսկ Մշո բարբառում, ըստ առկա տվյալների, գործում են 32 հոգնակերտ, որոնցից 28-ը բաղադրյալ են, իսկ 4-ը՝ պարզ:

Հետազոտությունները ցույց են տալիս՝

Դիտարկվող երկու տարածքներում ընդհանուր են հետևյալ պարզ հոգնակերտները՝ *-ք*, *-եր/-էր*, *-վի*, *-ան* /իշան, ձիան, ջորեան, գեղան/, *-իկ/ք/մարդիկ/*:

Միայն միջին հայերենին հատուկ պարզ հոգնակերտներ են՝ *-նի* /ախոռնի, ձճնի, սինօռնի և այլն/, *-անի* /անձրևանի, ծրարանի, լակոտանի և այլն/, *-ունք* /ազգունք, գոմունք, երիցունք և այլն/, *-այք* /ամենայք, իշխանայք, կանայք և այլն/, *-որայք* /արտորայք, գեղորայք, վանորայք և այլն/, *-իք* /այծիք, արապիք, արծաթիք և այլն/, *-սիք* /այրկտի, երկտի, ծակտի, մանկտի/, *-աք* /տեղաք, վարպետաք/, *-ենի* /բախչենի, գալենի, պատրուսենի/, *-արէք* /գեղարէք, գիտարէք/, *-եան* /իշեան/, *-իք* /այծիք/, *-ոք* /շատոք/, *-ոնք* /շատոնք/, *-ունաք* /ծաղկունաք/: Բերվածները ցույց են տալիս, որ հոգնակերտ *ք*-ի և նրան նախորդող հիմքակազմ ձայնավորների կապակցությունները գիտակցվում են որպես առանձին հոգնակերտ մասնիկներ՝ տարածվելով մաքուր հիմքերի վրա, սակայն ակնքախ է դրանց ոչ պարզ հոգնակերտ լինելը: Ըստ ամենայնի, դրանք միջին հայերենին նախորդած լեզվափուլից մնացած, թերական հերթագայություններով պայմանավորված հոգնակիակազմության դրսուրումների հետքերն են, որոնք կան նաև Մուշի տարածքում՝ *շատօք/շաղօկ*, *օրթունք/օրտունկ*, *սերմանք/կ*, *ծաղզունկ* և այլն:

Մշո բարբառում սոսկ գործառող պարզ հոգնակերտներ չկան, եղածները, ինչպես տեսանք, կան նաև միջին հայերենում:

Վիճակագրական հաշվարկները ցույց են տալիս, որ դիտարկվող երկու տարածքներում ընդհանուր են բաղադրյալ

¹⁶⁸ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 38:

հետևյալ հոգնակերտները՝ -ներ, -ստան, -երք /զետերք, զարդերք, կշտերք, մաղձերք, նեղերք, օրերք, -վներ/ -վըներ, /աշվներ, ձրդ-վըներ/, -անիք /կնանիք, սարկաւագանիք/, -անք /փշրանք/, -էք /աղախնեք, փէսէք, տղէք, -վանք /իշ-վանք/, -տիք/ դիք/կ /ծակտիք, կնկտիք, մանկտիք/, -վան /իրվան, տիրվան, իձվան/, -րանք /դեղ-րանք/, -վտանք/-վդանք /իրվտանք, ճիժվլդանք/:

Միայն միջին հայերենին հատուկ բաղադրյալ հոգնակերտներ են՝ -նիք /կնկնիք/, -վիք /իրվիք/, -եանք /զրեանք/, -իկք /մարդիկք/, -երայք /դեղերայք/, -երնի /սրտերնի, զղերնի/, -վնի /աշվնի, դովնի, ձձվնի, ոտվնի/, -վանի /իշվանի/, -վեր /ականջվեր, աչվեր/, -վտի /քոյրվտի, քուրվտի/, երվի /զօդուածերվի/, -տիկ /մանկտիկ/, -ստներ /լեռնստներ/:

Մշտ բարբառին հատուկ բաղադրյալ հոգնակերտներ են՝ -վրդիք/կ, -դ/տան, -տ/դանք/կ, -վանք/կ, -վրտ/դանք/կ, -վրդան, -ունք/կ, -էնք/կ, -րունք/կ, -անիք/կնէր, -էք/կնէր, -անէր, -րան, -րանէր, -իդէք /խնամինէք/, -ուշկ, -նք, -էրնէր:

Միջին հայերենում և Մշտ բարբառում գործառող բաղադրյալ հոգնակերտների առանձին բաղադրիչները հանգում են հետևյալին՝ -նիք /նի+ք/, -վիք /վի+ք/, -եանք /եան+ք/, -իկք /իկ+ք/, -երայք /եր+այ+ք/, -երնի /եր+նի/, -վընի /վի+նի/, -վանի /վի+անի/, -վեր /վի+եր/, -վնե/էր /վի+նի+եր/, -վտի /վի+տի/, -վան /վի+ան/, -երվի /եր+վի/, -տիկ /տի +իկ/, -ստներ /ս+տի+ան+եր/, -էնք /էն+ք/, -էք /այ+ք/, -նէր /նի+էր/, -դիք /տի+ք/, -վրդիք /վի+տի+ ք/, -դանք /տի+ան+ք/, -վրդանք /վի+տի+ան+ք/, -անք /ան+ք/, -վան /վի+ան/, -վանք /վի+ան+ք/, -րան /եր+ան/, -վանք /վի+ան+ք/, -րանք /եր+ան+ք/, -ունք /ու+ան+ք/, -րունք /եր+ու+ ան+ ք/, -ստան /ս+տի+ան/, -էրք /էր+ք/, -էկնէր /այ+ ք+նի+էր/, -իդէք /տի+այ+ք/, -ուշկ /ուշ+կ/, -նք /ան-ք/, -վրդան /վի+եր+տի+ան/, -էրնէր /եր+նի+էր/, -անիքնէր /ան+իք+նի+էր/: Նշված բաղադրյալ հոգնակերտերը ցույց են տալիս, որ հատկապես բաղադրյալ հոգնակերտների առաջին բաղադրիչի ձայնավորը շեշտափության օրենքներով ընկնում է: Այս օրինաշափությամբ ընկնում

են -վի, -նի, -տի, -ստան, -եր, -անք /վերջին երկուսը միայն մի-մի վկայությամբ/ ձայնավորները: Մյուս հոգնակերտները հնչյունափոխության չեն ենթարկվում: Մշտ բարբառին հատուկ -էք հոգնակերտի է ձայնավորը բաղաձայն *p*-ից առաջ ձևավորված այ երկրաբառի մենաբարբառացման հետևանք է:

Մշտ բարբառում մեծ տարածում ունեցող բաղադրյալ հոգնակերտները հիմնականում ներկայանում են -ք մասնիկի հավելումով՝ որպես ամենատարածված հոգնակերտ, սակայն այդ մասնիկները առանց *p*-ի ել են գործածվում՝ *-դան/-դանք, -վան/-վանք, -րան/-րանք, -րուն/-րունք, -ան/-անք՝ ՞ընզէրդան-ընզէրդանք, իշվան-իշվանք, գ՞էղրան-գ՞էղրանք, իձվան-իձվանք, քուրզան-քուրզանք* և այլն: Առանց *p*-ի տարբերակները հատկապես զրանցվում են Մուշի տարածքի Ալաշկերտի խոսվածքում¹⁶⁹: Բացառություն են միայն *-դիք* և *-վրդիք* մասնիկները, որոնք առանց *p*-ի չեն կիրառվում *քուրզըրդիք, ախազըրդիք*:

Հիմքը, որին վերջից կցվում են թե՝ պարզ, թե՝ բաղադրյալ հոգնակերտները, երկու տարբերակներում ել երկու կերպ է դրսևորվում. անփոփոխ «մարուր» հիմք, այսինքն՝ չհնչյունափոխված, և քերականական ծանրաբեռնվածություն չունեցող, բայց հնչյունափոխությամբ ներկայանալի հիմք: Հնչյունափոխությամբ պայմանավորված հիմքերը լինում են շեշտով պայմանավորված և շեշտից անկախ:

Ըստ եղած փաստերի, միջին հայերենում և Մշտ բարբառում հոգնակի թվի ընդհանրական ցուցիչ չկա: Կենսունակության առումով միջին հայերենում առաջատար են -եր, -ներ, -նի, -ք, իսկ Մշտ բարբառում -էր, -նէր, -ք հոգնակերտները: Միջին հայերենում նախորդ լեզվափուլի երբեմնի սակավադեպ կիրառություն ունեցող հոգնակերտները, որոնք հավաքականության իմաստ

¹⁶⁹ Ք. Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 71:

արտահայտող ձևույթներ են եղել¹⁷⁰, ստացել են սովորական ու լայն կիրառություն, տարածվել այնպիսի անունների վրա, որոնք հավաքանություն չէին կարող արտահայտել, և այդ ամենի արտացոլումը կա նաև Մշու բարբառում: Միջին հայերենում կիրառման հաճախականությամբ գործառական որոշակի ծանրաբեռնվածություն ունեն -ունք, -վի, -անի, -ստան, -այր, -որայր հոգնակերտները, որոնց գործածման ոլորտը ներառում է տասից մինչև մի քանի տասնյակ անուններ: Մնացյալ՝ -իք, -ոփ, -ափ, -ան, -ենի, -արէք, -իկ, -եան, -ոք, -ոնք, -ունաք, -էք հոգնակերտներից յուրաքանչյուրով հոգնակի են կազմում մեկ տասնյակից ել ավելի քիչ բառեր, երբեմն միայն մեկ բառ: Իսկ Մուշում գործառական լայն ընդգրկում չունեցող մյուս հոգնակերտներն ընդգրկում են երկու տասնյակը չգերազանցող բարախմբեր, երբեմն մեկ բառ կամ մի քանի բառ: Հատկապես մեծ թիվ են կազմում -անք հոգնակերտով կազմությունները: Դետք է կարևորել, որ Մշու բարբառն ընդհնարացման հարցում զգայի առավելություն ունի միջին հայերենի համադրությամբ: Բոլոր այն բառերը, որոնք բարբառում հոգնակիի իմաստ են արտահայտում այլ մասնիկների միջոցով, կարող են հոգնակի թիվ կազմել նաև -էք և -նէք մասնիկների միջոցով ևս, մինչդեռ այն բառերը, որոնց հոգնակին կազմված է այս մասնիկների միջոցով, սակավադեպ են այլ հոգնակերտներ ստանում՝ սերմէք/սերմանք/կ, ձվէք/ձվան, լրնէք/լրնդէք:

Այդ անմիտարրությունը միջին հայերենի պարագայում պայմանավորված է պատմահասարակական իրադրությամբ և խիստ համակարգված գրական լեզու չունենալու հանգամանքով, իսկ Մշու բարբառում պատմահասարակական իրադրությանը հավելվում է նաև անմշակությունը, խոսակցական լեզու լինելը և հարատես տեղահանությունները, և դրանք հիմնավորվում են ժամանակագրորեն լեզվական փաստերի կենդանությամբ և տոկունությամբ: Ըստ որում, երկու տարածքների համար էլ ընդհանուր է

¹⁷⁰ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., Հայպետուսմանկիրատ., 1976, էջ 20:

միավանկների -եր, բազմավանկերի -ներ մասնիկներ ստանալը: Միջին հայերենում երկվանկերը ու մեկուկես վանկանի հիմքերը ստանում են -նի՝ գլուխ-ցլինի, մզկիթ-մզկիթնի, նշան-նշաննի, բլուր-բլրնի և այլն, բազմավանկերը կարող են ստանալ նաև -նի և -եր մասնիկները: Հստ որի, միջին հայերենի հոգնակերտների այսօրինակ բաշխվածության վկայությունն են նաև միջինհայերենյան հիշատակարանների լեզուն և նրանց տրամադրած լեզվական փաստերը¹⁷¹: Մշտ բարբառում մեկ ու կես, երկվանկ բառերը համաչափորեն ստանում են -եր, -ներ մաս-նիկները՝ արգրդէր, սանդրներ, մանդրներ, կաղվըներ և այլն: Փաստերը ցույց են տալիս, որ Ալաշկերտի ենթաքարբառում -նէր մասնիկը կարող է տարածվել նաև միավանկ բառերի վրա՝ գհինդ-գհընդըներ, գհունդ-գհընդըներ, լինդ-լրնդըներ, թումբ-թրմըներ, լուձ-լրձնէր¹⁷², թուշ-թուշնէր /Ալաշկերտ, Խաստուր զյուլ/, ծառ-ծառնէր, դօշ-դօշնէր, թէլ-թէլնէր¹⁷³: Մշտ տարածքին բնորոշ է նաև ն բաղաձայնով վերջացող բազմաթիվ բառերի ոչ թե -ներ, այլ -եր մասնիկ ստանալու գործածությունները, որոնցում փոխազդեցական հնչյունափոխության օրենքներով ընկնում է երկու նույնանման հնչյուններից մեկը՝ մաձնէր, բօստընէր, չօրնէր, առովընէր, ամնէր, յէղնէր և այլն: Մշտ բարբառում, կարծեք թե, բազմավանկ հիմքերի հոգնակերտակրության համակարգայնությունը ավարտված իրողություն է -ներ մասնիկի համատարած գործածությամբ, ի տարբերություն միջին հայերենի, ուր բազմավանկ հիմքերը չունեն որոշակիորեն կանոնավորված զուգորդումներ հոգնակերտի հետ: Ինչպես տեսանք, սրանք միավանկ հիմքերին հակադրվում են

¹⁷¹ Լ. Ճռվսեփյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Ե., Վան Արյան հրատ., 1997, էջ 18:

¹⁷² Ք. Սաղարյան, նույն տեղը, էջ 70:

¹⁷³ Գ. Սկրտչյան, Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների քննություն [ատենախոսություն, ԳԱԱ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ], Ե., 2011, էջ 66:

երբեմն -եր, երբեմն -ներ, նույնիսկ՝ -նի մասնիկ ընդունելով՝ այցեպնէր, աղախնէր, դրացնէր, կուղավանի, հերիաքնի, սպիտակուցնի, որոզայքնէր, փախլավանէր, որոզայքնէր և այլն:

Միջին հայերենում հատկապես դիտարկելի են բազմավանկ հոգնակիակազմ հիմք + -եր կաղապարի սահմանափակ վկայությունները՝ կերակրեր, սենեսկալեր, վարդապետեր, հոգերարձեր, ուկերչեր: Սրանք ել, չեն բացառվում, որ արհեստական կառույցներ են՝ սպրդած լեզվական հուշարձաններում:

Միջին գրական հայերենում հոգնակի ուղղականի թվակագմության մեջ գործում են երեք կարգի կաղապարներ՝ ա) չեզոք վերջնահանգով հիմք+ք, բ) ոչ չեզոք, ընդ որում բաղաձայն+(ը)ն վերջնահանգով հիմք+ք, գ) այս երկու կաղապարների վերակագմավորումներ և նորակազմ ձևեր: Առաջին և երկրորդ կաղապարները ժառանգորդային են՝ ավանդված նախորդ լեզվափուլերից: Ի հակադրություն միջին հայերենի, Մշո բարբառում թվակազմության կաղապարների սահմանափակություն կա. այստեղ հիմնականում գործում են բուն միջինհայերենյան կաղապարները: Բարբառը հայտաբերում է նաև միայն իրեն բնորոշ ձևեր, իսկ չեզոք վերջնահանգով հիմք+ք կաղապարը որոշակի օրինաչափ սահմանափակումներով է ներկայանում՝ չօրդիք, այզիք, կաղնիք, օսկիք, քամիք և այլն: Այդուհանդերձ, երկու տարածքների համար բնորոշիչ է այն, որ եզակի ուղղականի ձևը հոգնակիակազմ հիմք է, որը թեև միջին գրական հայերենում ավարտուն տեսքի չի հասնում, սակայն այս տիպը, ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, այսօր գործում է Մշո բարբառում և առհասարակ նոր հայերենում: Երկու տարածքներում էլ ընդհանրական է այն, որ նորակազմ ձևերի հոգնակի ուղղականում վերակերտվում է եզակիում ընկած ն հիմքակազմ տարրը՝ ձեռնէր, վոտ/դնէր, մըկնէր և այլն:

Դիտարկման ենթարկված ձևախմբերը ցույց են տալիս, որ միջին հայերենում և Մշո բարբառում անունների թվակազմությունն արտահայտվում է գործառական ծանրաբեռնվածության

խիստ արտահայտված անհամաշափությամբ: Եթե միջին հայերենում անունների մեծամասնությունը հոգնակի է կազմում չորս հիմնական ձևույթներից որևէ մեկով՝ *-ք*, *-եր*, *-ներ*, *-նի*, ապա Մշոք բարբառը հիմնականում կենտրոնակ է *-էր*, *-նէր* ձևույթներով: Մնացյալ հոգնակերտներն ունեն սահմանափակ գործածություն: Մշոք բարբառում *-ք* հոգնակերտի գործառական ծանրաբեռնվածությունը սահմանափակվում է *ի* ձայնավորով վերջացող երկվանկ և բազմավանկ մի շարք բառերին կցվելով՝ *հօրիկ*, *ոռրժիք/կ*, *տընէծիկ* և այլն, մի շարք բաղադրյալ հոգնակերտների կազմությանը մասնակցելիս, որով *-ք* մասնիկի գործառական ծանրաբեռնվածությունը կտրուկ աճում է, եթե կարևորվում է բառավերջի հանգամանքը, ինչպես նաև այն կա նաև *քէռակին* բառի հոգնակին կազմելիս՝ *քէռընզիք*՝ բառավերջյան ն-ի անկմամբ: Բարբառում այն ունի նաև *քէռընզրդիք* /Մուշ, Ծղակ գյուղ/, *քէռէնզինէր* տարբերակները:

Ուսումնասիրվող տարածքներում հոգնակերտ մասնիկներն ունեն հնարավոր փոխանցումների ազատ սահմաններ, որին նպաստում է այն, որ այդ մասնիկներն ունեն միևնույն քերականական իմաստն արտահայտող ձևույթի ազատ տարբերակների գործառույթ: Խոսքը հատկապես վերաբերում է ամենազոր-ծածական հոգնակերտներին՝ բացառությամբ մի քանի սակավ գործածություն ունեցողների, որն էլ պայմանավորված է նրանց դիրքով: Ընդ որում, երկու լեզվական տարբերակներում էլ այդ հնարավոր փոխանցումները մեծ թիվ են կազմում: Միջին հայերենի դեպքում զուգաձևերի հայտաբերած այդ հանգամանքը կապված է նախորդող լեզվափուլի՝ դասական հայերենի հետ ունեցած եզրերով: Գործառական մեծ ընդգրկում ունեցող *-ք*, *-եր*, *-նի*, *-ներ* հոգնակերտները կարող են զուգահեռաբար գործածվել վյուս հոգնակերտների փոխարեն՝ որպես նրանց ազատ տարբերակներ: Մի բառը կարող է ստանալ երկուսից մինչև յոթ տարբեր հոգնակերտներ: Միջին հայերենով վկայված նմանատիպ դրսնորումները բերվում են ստորև՝ *-ք/-եր* /բերինք-բերներ, զայլք-զայլեր,

գետք-գետեր և այլն/, -*p/-ներ* /գետինք-գետններ, մեղուք-մեղուներ, դրացիք-դրացներ, և այլն/, -*p/-նի* /արուեստ-արուեստնի, բերանք-բերաննի, զանգատ-զանգտնի և այլն/, -*p/-ստան* /աղիք-աղեստան, ընպելիք-ընբելեստան, հոգիք-հոգեստան և այլն/, -*p/-անի* /անձրևանձրևաննի, թրնջիք-թրնջանի, կանթեղք-կանթեղանի/, -*p/-վի* /երեսք-երեսվի, միտք-մտվի, վերակացուք-վերակացվի/, -*p/-այք* /ամենք-ամենայք, իշխանք-իշխանայք/, -*p/-ունք* /այլք-այլունք, անդամք-անդամունք/, -*եր/-ներ* /ճանապարհեր-ճանապարհներ, սպաննութեներ-սպաննութեններ, ոստեր-ոստներ/, -*եր/-նի* /ամաներ-ամաննի, բուհրաներ-բուհրաննի/, -*եր/-ունք* /ազգեր-ազգունք, գորտեր-գորտունք, հողմեր-հողմունք և այլն/, -*եր/-որայք* /արտեր-արտորայք, գեղեր-գեղորայք, բերդեր-բերդորայք, վաներ-վանորայք/, -*նի/-ներ* /թթվընի-թթուներ, լուսապնի-լուսապներ, հաբեղանի-հաբեղաններ/, -*եր/-վրրդան* /ձրժեր-ձիժվրրդան/¹⁷⁴, -*նի/-ունք* /ատամնի-ատամունք, երիկամնի-երիկամունք, երիցնի-երիցունք/, -*ներ/-ունք* /առջիկներ-առջկունք, իրաւներ-իրաւունք/, -*ներ/-աք* /վարպետներ-վարպետաք/, -*ներ/-վի* /ծնկներ-ծնկվի/, -*ունք/-վի* /եղնկունք-եղնկվի/, -*p/-եր/-ներ* /ծառք-ծառեր-ծառներ, հիւանդութիւնք-հիւանդութեներ-հիւանդութեններ և այլն/, -*p/-եր/-վի* /շունք-շներ-շնվի, տունք-տներ-տնվի, ձեռք-ձեռներ-ձեռվի/, -*p/-եր/-ունք* /զոմք-զոմեր-զոմունք, դաշտ-դաշտեր-դաշտունք, և այլն/, -*p/-եր/-նի* /որսորդք-որսորդեր-որսորդնի/, -*p/-եր/-անի* /միսք-մսեր-մսանք/, -*p/-եր/-իք* /այծք-այծեր-այծիք/, -*p/-եր/-ենք* /զալք-զալեր-զալենի/, -*p/-նի/-ներ* /դուրք-դուրնի-դրներ, դրացիք-դրացնի-դրացներ, նշանք-նշաննի-նշաններ և այլն/, -*p/-նի/-անի* /ջաղացք-ջաղացնի-ջաղացանի/, -*p/-ոռ/-ոնք* /ջատք-ջատոք-ջատոնք/, -*եր/-անի/-ունք* /հնտեր-հնտանք-հնտունք/, -*եր/-անի/-վի* /խօսեր-խօսանք-խօսվի/, -*նի/-ունք/-ներ* /պոկնի-պոկունք-պոկներ/, -*p/-եր/-նի/-ներ* /ակոայք-ակոեր-ակոանի-ակոաններ/, -*p/-եր/-տի/-տիք* /ծակք-ծակեր-ծակտի-ծակտիք/, -*p/-եր/-ունք/-անիք* /միրզք-մրգեր-մրգունք-մրգանք/, -*p/-եր/-աք/-ստան* /տեղիք-տեղեր-

¹⁷⁴ Գ. Մկրտչյան, նույն տեղը, էջ 69:

տեղաբ-տեղեստան/, -ը/-նի/-ներ/-վի /քաղաքք-քաղաքնի-քաղաք-ներ-քաղաքունք/, -ը/-վի/-ան/-վտանք /իրք-իրվի-իրվան-իրվտանք/, -եր/-այր/-նի/-անի /կներ-կանայք-կաննի-կնանի/, -եր/-ունք/-եանք/-վի /զրեր-զրունք-զրեանք-զրվի/, -նի/-ունք/-ներ/-անիր /սարկավագ-նի-սարկավագունք-սարկաւագներ-սարկաւագանիք/, -ը/-եր/-նի/-վի/-ներ /ոտք-ոտեր-ոտնի-ոտվի-ոտներ/, -ը/-եր/-նի/-ունք/-ծաղիկ-ծաղկներ-ծաղկնի-ծաղկունք-ծաղկունաք/, -ը/-ներ/-նի/-վի/-վեր /ականջք-ականջներ-ականջնի-ականջ-վի-ականջվեր/, -ը/-եր/-ունք/-վի/-վեր/-վներ/-վնի /աչք/աչեր/աչունք/աչվի/աչվեր/ աչվ-ներ/աչվնի/:

Եթե միջին հայերենում *-ք* ձևույթն է համարյա առանց սահմանափակության հնարավոր փոխանցումներին մասնակցում, ապա Մշո բարբառում այդ զործառույթը ստանձնել է ոչ միայն *-ք*, այլև *-եր* ու *-ներ* մասնիկները: Թեև նշվում է, որ այս հարցում բարբառում կա նաև սահմանափակություն, քանի որ որոշ բառեր հոգնակի թիվ կազմելիս գրագրումներ չեն հայտաբերում¹⁷⁵, սակայն համաժամանակյա փաստերը ցույց էն տալիս, որ ոչ տարածված հոգնակերտները փոխարինվում են համակարգային-ներով, որն էլ այդ հարցն ի չիք է դարձնում: Օրինակ, *-ստան* մասնիկ ստացող, *ի* և *ա* ձայնավորներով վերջացող մի շաբք բառեր՝ *գարեստան*, *գինէստան*, *օսկեստան*, *տարէստան*, *էրէխէստան*, *քէռէստան*, *փէսէստան*, *դավէստան*, *քավէստան*, *գէղին-գէղրստան*, կարող են փոխարինվել այլ հոգնակերտերով՝ ձևավորելով զուգաձևներ՝ *օսկինէր*, *էրէխէր*, *գինինէր* և այլն: Որպես բացառություն կարող ենք վկայել միայն *կին* բառի կրնանիք տարբերակը: Սա էլ Մշո մեկ այլ խոսվածքում ունի նաև *կրնկրտիք* տարբերակը:

¹⁷⁵ Ս. Բաղրասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1958., էջ 75-79:

Լեզվական փաստերը ցույց էն տալիս, որ աստիճանաբար -էր, -նէր մասնիկները սկսում են դուրս մղել մյուսներին, այսինքն՝ այլ հոգնակերտ ստացող անունները կարող են հանդես գալ ընդհանրացող հոգնակերտերով, անգամ մասու բառը, որը -էր կամ -նէր չի ստանում, ունի մասուիր/կ ձևը, որոշ խոսվածքներում ներկայանում է մասուէր տարբերակով¹⁷⁶: Այդուհանդերձ, Մշո բարբառը նույնպես ներկայանում է զուգաձևերի առատությամբ, որը բերվում է ստորև՝ -ք/-նէր /հօկիր/կ-հօկինէր, քէոփր/կ-քէոփինէր, քէնիր/կ-քէնինէր/, -դիկ/-նէր /մօրկուրդիկ-մօրկուրնէր, սանամէրդիկ-սանամնէր/, -էր/-րանէր /ճուղէր-ճրդրանէր/, -նէր/-դան /ճուղէր-ճրդրան/, -էր/-նէր /գինէր-գինէրնէր/, -էր/-էր /չօքէր-չօքէր/կ, զըքէր-զըքէր/կ, -էր/-էրնէր /տէղէր-տէղէրնէր/, -դիկ/-էր /տէկըրդիկ-տէկըրէր/, -էր/-վրդան /տանտիր-վրդան-տանտէրէր, ծէրէր-ծիրվրդան, քուրէր-քուրվրդան/, -դան/-նէր /ախարդան-ախարդնէր/, -էր/-էրնէր /գատէք-գատէքնէր, տղէք/կ-տղէկնէր, լընդէր/ լընդէրք/, -նէր/-րան /զօմշընէր-զօմշըրան/, -էր/-վանկ /էշէր-իշվանկ/, -էր/-տան /ձաքէր-ձրքտան, զրփէր-զրփտան, տագէր-տրգտան/, -էր/-վրդիկ /քուրէր-քուրվրդիկ, տալէր-տալվրդիք/, -էր/-էրք /տղէք-տղնէրք, ախըրկէք-ախըրկէրք/, -ք/-դիկ /իշընամիք-իշը-բամդիկ/, -էր/-րան /փէջէր-փիջրան, կօղէր-կօղրան/, -էր/-ունք /օրթէր-օրթունք/, -նէր/-ունք /ծաղզընէր-ծաղզունք/, -նէր/-էրք /լընդընէր-լընդէրք/, -նէր/-ուշկ /մանդըրնէր-մանդրուշկ «հացահատիկի մանրութ»¹⁷⁷, -էր/-վան /գէժէր-գիժվան/, -էր/-վանք /ձօրէր-ձօրվանք, ձրդէր-ձրդվանք/, -դիք/-դանկ /հօխապէրդիք/կ-հօխապըր-դանկ/, -էր/-անք /գէղէր-գէղրանք/, -դանք/կ/-էր /տէքըր-տէքըրդանք, տէրէր-տիր-վրդանկ/, -նէր/-դան/-դանք /աճընէր-աճըռդան-աճըռդանք, գըմէշնէր-գիշըշըրդան-գըմշըրդանք, էրընջնէր-էրընջդան-էրընջդանք, կըդօրնէր-

¹⁷⁶ Գ. Մկրտչյան, նույն տեղը, էջ 68:

¹⁷⁷ Գ. Մկրտչյան, նույն տեղը, էջ 69:

կրդօրդան-կրդօրդանք, կակվընէր-կակվըդան-կակվըդանք, իձանէր-իձվըդան-իձվըդանք, գիլանէր-գիլվըդան-գիլվըդանք, իշանէր-իշվըդան-իշվըդանք, աստընէր-աստըդդան-աստըդդանք, օսկրոնէր-օսկրոդան-օսկրոդանք, ճրբրոնէր-ճրբրոդան-ճրբրոդանք, հօրկուրնէր-հօրկուրդան-հօր-կուրդանք, ախապէրնէր-ախապէրդան-ախապէրդանք, ՞նգէրնէր-՞նգէրդան-՞նգէրդանք, մօրկուրնէր-մօրկուրդան-մօրկուրդանք, ըղընզնէր - ըղընգրան - ըղընգրանք, ճընջընէր-ճընջըդդան-ճընջըդդանք, շարզընէր - շարզըդան - շարզըդանք, տէքրընէր-տէքրըդան-տէքրըդանք, օսկրոնէր-օսկրոդան-օսկրոդանք, պառվընէր-պառվըդան-պառվըդանք/, -էր/ -րանէր/-անկ /գէնէր-գէնրանէր-գէնրանք/, -էր/-դան/ - դանք /քուրէր-քուրվըդան-քուրվըդանք/, -էր/-վրդան/-վրդանք /տէրէր-տիրվըդան/տիրվըդանք/, -անիք/-տիք, -անիքնէր /կընանիք-կընկըտիք-կընանիքնէր/, -ք/-իիք/-նէր /քէորնգիք-քէորնգրիք-քէունգինէր/, -էր/-ան/-անէր /գէնէր-գիլան-գիլանէր, ձիան - ձիան - ձիանէր, ձվան-ձվէր-ձվանէր, գըժէր-գըժան-գըժանէր/, -էր/-վան/-վանք /ձէղէր-ձիդվան - ձիդվանք/, -էր/-ան/-անք /ձիէր-ձիան-ձիանք, գէնէր-գիլան/գիլանք, էշէր-իշան-իշանք, էձէր-իձան-իձանք/, -էր/-ան/-վընէր /ձրդէր-ձիդան-ձըդվընէր/, -էր/-րան/-րանք /գէնէր-գդրան-գդրանք, տէխս-տէ/խ/րան-տէ/խ/րանք, դէկ-դիզրան-դիզրանք, դէղ-դէղրան-դէղրանք/, -ք/-նէր/-իդէր /խնամի-խնամիդէր/, -էր/-դան, -դանք /ազրէր-ազրոդան-ազրոդանք/, -նէր/-իիք/-իան/-իանք /խնամինէր- խնամիդիք-խընամդան/ խընամդանք/, -էր/-ան, -վան-վանք /էձէր - իձան - իձվան - իձվանք, էշէր - իշան - իշվան - իշվանք/, -ք/-էր, -նէր, -էրնէր /հօկիք-հօկինէր/ հօկէր/ հօկէրնէր, քէոիք-քէոինէր-քէուկք-քէուկնէր/, -էր/-րան/-րանք/-րունք /դէղ-դէղրան-դէղրանք-դէղրունք/, -ան/-անք/ -անէր/-նք /ձիան-

ձիանք/կ-ձիանէր-ձինկ¹⁷⁸, -էր/-վան/-վըդիք/-դան/ -դանք /տէրէր-տիրվան-տիրվըդիք-տիրվըդան/ տիրվըդանք/: Ինչպես երևաց նշված փաստերից, Մշո բարբառում մի բառը կարող է ստանալ երկուսից մինչև հինգ տարբեր հոգնակերտներ, առավելագույնը հինգն է, իսկ գործառական ծանրաբեռնվածության առումով կենսունակ են երկան ու -նէր/-դան/-դանք կաղապարներով կառույցները:

Խնդրո հարցում միջին հայերենն ու Մշո բարբառը հայտաբերում են մեկ այլ յուրահատկություն ևս. բառը կարող է միաժամանակ ստանալ մեկից ավելի հոգնակերտներ: Սակայն այս հարցում ևս կան սահմանափակումներ. ոչ բոլոր հոգնակերտներն են զուգորդվում: Երկու տարբերակներում էլ զուգորդվում են գործածության լայն շրջանակներ ունեցող, հիմնականում բաղադրյալ ձևույթները: Միջին հայերենում -ունք, -որայք, -իք, -ք, -ենի, -արէք, -ոք, -ունաք, -էք ձևույթները մնում են անկախ և բառի կազմում միշտ հանդես են զախս միայնակ: Պեսք է կարևորել, որ բաղադրյալ մասնիկները զուգորդման ձանապարհով են ձուլվել իրար և ժամանակի ընթացքում զիտակցվել որպես մեկ հոգնակերտ, սակայն նորասիաց ձևերում այդ տարբերակների գոյությունը հիմնավորվում է հոգնակերտներից մեկի՝ առաջինի իմաստի մթագնմամբ և պասիվությամբ¹⁷⁹: Միջին հայերենում այս երևույթն այնքան է խորացել, որ -եր, -նի, -նէր հոգնակերտների իշխող դիրք ձեռք բերելը և ընդհանրացման միտումը պայմանավորվում է զուգորդումների առկայությամբ, որոնք տարածվում են անգամ երկակի և անեղական կարգերի վրա: Մշո բարբառում առավելագույնը երկու հոգնակերտի կցումն է բառին, միջին հայերենում՝ սակավ դեպքերում ավելի: Այսպիսի զուգորդումները՝ որպես բաղադրյալականության դրսուրում, սահմանափակ են, հաճախ վկայված ընդհամենը մեկ բառով: Մշո բարբառում կրկնակ հոգնակիներ ձևավորվում են ի հաշիվ -ք և -նէր հոգնակերտների՝

¹⁷⁸ Գ. Մկրտչյան, նույն տեղը, էջ 69:

¹⁷⁹ Ս. Բաղդասարյան-Թափալյան, նույն տեղը, էջ 79:

տիրվրդան/ տիրվրդանք/ տիրվրդաններ, ձ՛հ-ձ՛հանք/ձ՛հաններ, հօրէստան-հօրէստանք/ հօրէստաններ, ձիդվան/ ձիդվանք/ ձիդվաններ, տրդէկ/տրդէգ-ներ, դէվէկ/ դէվէկներ, ախչըկներ/ախչըկէրք, լրնդէր/լրնդէրք: Հոգնակերտների այս տատանումները ցույց են տալիս, որ բառահիմքի և վերջին հոգնակերտի միջև ընկած ձևույթը մթագնման գործընթացում է և միտում ունի վերջին մասնիկի հետ ձևավորել բաղադրյալ հոգնակերտ: Ինչպես նկատելի է, սրանք հատկապես այն բառերն են, որոնք վերջանում են *ա*, *ի* ձայնավորներով և հոգնակիանում են *-ք/-կ* մասնիկով: Վերոբերյալ վկայությունների բառավերջան *ք-ն* պահպանում է հոգնակիության իր իմաստը, իսկ այն բառերում, երբ *ք-ին* հաջորդում է մեկ այլ հոգնակերտ, չի պահպանվում: *Ք/-ի* իմաստը, ըստ ամենայնի, սկսում է մթագնել գրաբարյան *ք-ի* համարբանությամբ, որը միջին հայերնից սկսած ձևոր է բերել նաև ածանցի արժեքը. հատկապես մեկ, մեկ ու կես, երկվանկ, անեզական *-ք* ունեցող բառերում *ք-ն* այլևս չի գիտակցվել որպես հոգնակերտ՝ *աչք-աչքէր*, *ձէոք-ձէոքէր*, *միտք-մրտքէր*, *խէլք-խէլքէր*, *պարտք-պարտքէր*, *բալնիս-բալնիսներ* և այլն: Այս պատճառներով է, որ բառին այլ մասնիկի հավելման անհրաժեշտություն է առաջացել ու համակարգայնացել: Ըստ Էռլիթյան, *-ք* ձևույթը հոգնակիի իմաստով գործառում է միայն բառավերջում, իսկ հիմքատեսակի և հոգնակերտի միջև այն կամ բառակազմական ձևույթ է, ինչպես *աչքէր*, *ունքէր*, *հաւքէր*, *քնքէր* և այլն, կամ բաղադրյալ հոգնակերտի աստիճանաբար մթագնող տարր: Մշտ բարբառում գրանցվում է անզամ *-էր* հոգնակերտի մթագնման փաստ *տէղ* բառում՝ *տէղէր-տէղէրներ*՝ ձևավորելով բաղադրյալ *-էրնէր* հոգնակերտը:

Անդրադառնանք ոչ եզակի իության մեկ այլ խնդրի ևս: Միջին հայերենն ու Մշտ բարբառն ունեն նաև նախնական երևույթ համարվող երկակի թվի որոշակի արտահայտվածություն, որն իրացվում է *-ու/-վի* ձևույթով: Սակայն երկու տարածքներում ել երկակի թվի իմաստը հստակ ձևավորված արտահայտություն չունի, իմաստաբանորեն չի արդարացվում. այդ մասնիկն են

ընդունում նաև մի շարք այնպիսի անուններ, որոնք մարմնի կրկնակ անդամների անուններ չեն, հետևաբար այն պարզապես հոգնակերտ է՝ համարանությամբ պայմանավորված։ Երկու տարածքներում էլ գործ ունենք երկակի թվի մասնակի արտահայտության հետ։ Ինչպես տեսանք, -ի/ մասնիկը հանդես է գալիս և՝ պարզ տեսքով, և՝ բաղադրյալ մասնիկների կազմում՝ ճ/Ճեռվի, ուուլի/օդվի, ՞աչվի, ականջվի, իուսվի, երեսվի, դրվնի, ունքվրնէր, աչւեր, իշուանք, իրվտանք և այլն։

Քննարկվող լեզվավիճակներում թվակազմությունը ձևավորել է որոշակի համակարգային օրինաչափություններ, ոչ լիակատարության հասնող կայունացման ձգուում, քանի որ, ինչպես կառուցվածքային այլ մակարդակներում է, այնպես էլ այս համակարգում այն ունի բազմաձևություններ ու անմիջինակություններ։ Առկա ձևույթները համաշափորեն տարածվում են և համահայկական, և՝ իին ու նորագույն փոխառյալ բառերի վրա։ Հատկանշական է, որ երկու լեզվական միավորներում էլ անհոգնական անուններ գրեթե չկան՝ բացառությամբ հատուկ անունների և մի խումբ հասարակ գոյականների՝ կէր, քրողինկ, սէր, սէր, ժրմէխ, կօրդօն, արուր, շուրվա, քրոճիզ, կօնջօլ, կրլօրիզ /Ճաշերի անուններ/ և այլն։ Իսկ անեզականները թե՝ միջին հայերենում, թե՝ Մուշի տարածքում մեծ թիվ են կազմում՝ որպես նախորդ լեզվափուլերից մնացած համահայերենյան ժառանգորդային մնացուկներ։ Եթե միջին հայերենում դրանք նախորդ լեզվափուլից անցած փոխառություններ են, ապա Մշո բարբառում դրանք ունեն որոշակի օրինաչափություններ։ Ըստ որի, այս տարածքում հավաքականության համար գործում են -նէր և -անք բաղադրյալ մասնիկները՝ Սուկօննէր, Տէր Մրգրոյիհնէր, Կարօննէր, անէրանք, կիսրանք, հէրանք, սէրմանք, Ավիզենք և այլն։

Այսպիսով, ուսումնասիրվող երկու լեզվական տարածքներում գործում է թվային իմաստների հակադրություններից ամենակարևորը՝ եզակի-հոգնակի հակադրությունը՝ համապատասխան բազմաձև մասնիկներով՝ պարզ ու բաղադրյալ, իսկ մյուս

հակադրությունները՝ եզակի-երկակի, եզակի-երկակի-հոգնակի, անեզական-անհոգնական, եզակի-հոգնակի-հավաքական, եզակի-հոգնակի-անեզական-անհոգնական, պահպանվում են ժառանգորդային լեզվական մնացուկների տեսքով:

Գարիկ Մկրտչյան

**ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ
ԱՌԱՆՉԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ՄՇՈ ԲԱՐԲԱՌՈՒՄ¹⁸⁰
(գուգադրահամեմատական քննություն)**

Հայերենի զարգացման բոլոր փուլերում առկայացման քերականական կարգը նշույթային արտահայտություն ունի: Անորոշությունն ու որոշյալությունն արտահայտության պլանում ներկայանում են որոշակիորեն ընդգծված հակադրությամբ: Եթե որոշյալության դեպքում ձևաբանորեն դրսևորվում է բառերի վերջում հոդերի ավելացմամբ, ապա անորոշության իմաստը եղել է աննշույթ, զրո վերջավորությամբ¹⁸¹, սակայն, ինչպես կտեսնենք, նախաշխարհաբարյան շրջանից սկսած՝ լայն տարածում է ստացել նաև անորոշի նշույթավոր տարրերակը ևս: Հայերենի զարգացման բոլոր փուլերում առկայացման քերականական կարգի համար ծառայել են հնդեվրոպական ծագման և, դ, ն հոդերը, որոնք, որպես արմատահնյուններ, հանդես են գալիս նաև զրաբարյան սս, դս, նս, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն ցուցական դերանուններում: Սա ապացուցվում է ներքին վերականգնման այն օրինաչափությամբ, որ բազմիմաստ ս, դ, ն հոդերն անհրաժեշտության դեպքում կարող էին ստանալ անձնական, ցուցական, ստացական դերանունների իմաստ և գործածվել՝ կա՝ մ փոխա-

¹⁸⁰ Տե՛ս նաև՝ Երիտասարդ լեզվաբանների հանրապետական IV գիտաժողովի գեկուցումներ, «Ասողիկ» հրատ., Ե., 2014, էջ 38-46:

¹⁸¹ Գ. Զահոռիկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, էջ 205:

րինելով համապատասխան դերանուններին, կա՝ մ վերջիններիս հետ զուգահեռաբար¹⁸²:

Գոյականների արկայացման համակարգայնությունն արտացոլվում է նաև միջինհայերենյան լեզվական հուշարձաններում ու Մշո բարբառի տարաբնույթ լեզվանյութում՝ թե՝ գրավոր խոսքում, թե՝ կենդանի խոսքում: Գրաբարում որոշյալության իմաստի արտահայտությանն էին ծառայում և, դ, և հոդերը, ընդ որում, առաջին երկուսն այս գործառույթով հանդես էին գալիս ավելի սահմանափակ կիրառությամբ, քան վերջինը: Միջին հայերենում ձևահմաստային այս նմանօրինակությունը մասնակիորեն վերանում է: Ստացականության իմաստը սկսում է կապվել հիմնականում և, դ հոդերի հետ, իսկ և հոդը ստանում է առաջին հերթին որոշյալություն արտահայտելու գործառույթ, թեև երկրորդաբար կարող է ունենալ ստացականության և ցուցականության իմաստ: Խիստ հազվադեպ և կամ դ հոդերը կարող են կատարել որոշիչ հոդի գործառույթ, ինչպես՝ *Ով գեղեցիկ ի հաւերդ, երնէկ ականջին, որ լսէ զրարի բարբառ քո - ՎԱ-30 /դ-որոշիչ/:* Բերենք հոդառության տարբեր դրսւորումներին վերաբերող օրինակներ միջին հայերենից՝ մինչ որ վճարի պարտքերս, որ ի յիմ շալակս է կուսած-Ֆր.-388 /ս-ստացական/, տեսէք թե քանի մարդիք յաշխարհէս դարտակ մնացին, -Ֆր.-434 /ս-ցուցական/, աչերդ է ի ծով նըման, ուներդ՝ աղեղան լարման-ԿԵ-156 /դ-ստացական/, ես այդ աթոռոյդ տէրն եմ- ԷՄՍ-114 /դ-ցուցական/, թագաւոր մի կայր, աչուին էր խաժ-ՆՇ-638 /ն-ստացական/, ասեն իշխանքն և ձորտերն առ թագաւորն-ՎԱ-211, նոր տնկին զինին բնութեամբ այլ հով է, քան քան զին այզոյն-ԳՎ-84 /ն որոշիչ հոդ/:

¹⁸² Ակնարկներ միջին զրական հայերենի պատմության, Բ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975, էջ 78:

* Միջին հայերենին վերաբերող լեզվական փաստերը հիմնականում տրվում են ըստ Ակնարկներ միջին զրական հայերենի պատմություն աշխատության /հասոր Բ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975/:

Առկայացման քերականական կարգում նորություն է այն, որ մեր լեզվի պատմական գարգացման ընթացքում մուտք է գործել նաև որոշիչ ը հոդը, որի ծագումն ու լեզվաժամանակագրությունը մինչ օրս հարաբերականորեն է որոշված, սակայն լեզվական փաստերը, ինչպես կտեսնենք, ցույց են տալի, որ որոշյալ ը հոդը հայերենի գարգացման ներքին օրինաչափությունների արդյունք է և, կարծում ենք, հնյունական մակարդակում այն եղել է հայերենի գարգացման ավելի վաղ շրջաններից ու միայն վաղ և ուշ աշխարհաբարյան գրավոր տեքստերում ստացել ձևաբանական արտահայտություն:

Միջին հայերենում և Մշո բարբառում ը որոշիչ հոդը բացակայում է, երկու տարածքներում էլ որոշյալությունն արտահայտվում է ն հոդի միջոցով: Միջին հայերենում և Մշո բարբառում ն հոդ են ստանում նաև բաղաձայնով վերջացող բառեր՝ դաշտըն, տունըն, ձօրըն, մուզըն, քարըն, մաղըն, ձէռըն, բախտըն, զօմըն և այլն: Հոդառության այսօրինակ գործածությունը կարող է վկայել, որ ը հոդը հնյունաբանորեն եղել է հայերենի գարգացման ավելի վաղ շրջաններում՝ ձևաբանորեն չարտահայտվելով: Բառավերջան ն հոդից առաջ հնչող ը-ն, հավանաբար, լրացուցիչ բաշխման մեջ է մտել ն-ի հետ ավելի վաղ: Հ հոդի ն հոդից առաջ հնչման փաստերը գտնում ենք միջնադարյան լեզվական հուշարձաններում: Միջին հայերենով ստեղծագործող Ֆրիկի տաղերում վկայված փաստերը՝ Արդունըն ի՞նչ վնաս գործեց, զինչ պատարազըն Արէլի, Երկնաւորքըն զհաւանին, զինչ ազատեաց տէրըն զԱղաս¹⁸³ և այլն, թույլ են տալիս մասնակիորեն եզրակացնելու որոշյալ ը հոդի ծագման ժամանակի հարցը: Հ հոդի այսպիսի գործածության առկայությունը ի ցույց է դնում, որ ը-ն, որպես հոդ, ծագել է ն որոշիչ հոդից: սկզբում որպես հավելադիր ձայնավոր է եղել, որպեսզի երկու բաղաձայն հնյունների միջև եղած բաղաձայնական կուտակումը և արտասանական

¹⁸³ Հայկական համաբարբառ, 19, Ֆրիկ, Բանաստեղծություններ, գիրք առաջին, Ա-Կ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ, Ե., 1986, էջ 1-10:

դադարը վերանա, ապա հետազայում ը-ն իր վրա է վերցնում ն-ի գործառույթը, սկսում է գործածվել ինքնուրույնաբար¹⁸⁴. դուրս մեղելով ն-ին: Լեզվական գործող փաստերը ցույց են տալիս, որ Մշո բարբառի խոսվածքներում տակավին պահպանվել է ը-ի որպես հավելադիր ձայնավոր լինելը ն-ից առաջ, քանի որ Մշո բարբառը այս համակարգում հարազատորեն պահպանել է նախորդ լեզվափուլերի որակները, իսկ այսօրվա դրությամբ ը հոդի եղած գործածություններն ուղղակիորեն պայմանավորված են գրական լեզվի ազդեցությամբ:

Միջին հայերենում և Մշո բարբառում տարբերակվում են ա) որոշիչ, բ) ստացական, գ) դիմորոշ, դ) ցուցական հոդեր: Այս բոլոր իմաստային տարբերակումները որոշ չափով որոշակության տարր են պարունակում և վերջին հաշվով ծառայում են բառերի նշանակած առարկաների առկայացմանը¹⁸⁵: Միջին հայերենում և Մշո բարբառում ն որոշիչ հոդը չունի իր դիրքային տարբերակը՝ ը, որը, ինչպես նշեցինք, ավելի նոր ժամանակների ծնունդ է և զարգացել է միայն աշխարհաբարում՝ հնյունական որոշ օրենքների գործադրման հետևանքով: Որոշիչ հոդը միշտ կցվում է բառավերջին, անկախ այն բանից, բառը ուղիղ ձևով է հանդես գալիս, թե հոլովված, այսինքն՝ բոլոր դեպքերում դրվում է հոլովարթանիշ ձևույթից հետո, ընդ որում՝ լինելով բաղաձայն, չի առաջացնում շեշտի դիրքի փոփոխություն և դրա հետ կապված հնյունափոխություններ: Ա.Հ. Բաղդասարյան-Թափալյանի գնահատմամբ Մշո բարբառի որոշիչ հոդերն են ն-ն և ը-ն: Ն որոշիչ հոդը դրվում է ձայնավորով վերջացող բառերից հետո՝ ձին, կադուն, լուն, գինին, շառուն, քերին և այլն: Բարբառագետը ը որո-

¹⁸⁴ Պատմարանասիրական հանդես, Ա. Խաչատրյան, Հայերենի «Ը» ձայնավորի հնչույթայնության հարցը, թիվ 4, Ե, 1966, էջ 145:

¹⁸⁵ Գ. Զահոռիկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 184:

շից հողը ներկայացնում է բաղաձայնով վերջացող բառերում գործածություններով, որպես օրինակներ բերում տունը, շունը, քաղաքը, գէղը, հէրը, ախշաքը բառերը: Այս հանգամանքը կասկածելի ենք համարում, քանի որ Մշո բարբառում ը հողը, ինչպես արդեն նշեցինք, տիպարանորեն բացակայում է, քանի որ համակարգային է ն-ի գործածությունն անզամ բաղաձայնավերջ բառերում: Եթե ը հողի գործածությունները կան էլ, ապա որանք, ենթադրում ենք, հարևան բարբառների՝ Վանի, Արարատյան, Արցախի ազդեցություն են, որոնցում ը հողը ներկայանում է առանց ն-ի գուգորդման: Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը նույնպես նկատել է, որ Մշո բարբառում, երբ բառը վերջանում է բաղաձայնով, հաճախ ն որոշից հողից առաջ բառին ավելանում է ը ձայնավորը, այսպես՝ տունըն, շունըն, քաղաքըն, գէղըն, հէրըն, ախշաքըն, սակայն որևէ կերպ չի բացատրում դրա էությունը, դեռ ավելին որոշ մեկնաբանություններում վիճակում: Հետազոտողը գրում է. «Եթե որոշից ը հողը ստացած բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, այն դեպքում ը-ն, հակառակ աշխարհաբարի, չի դառնում ն»¹⁸⁶, ասենք՝ կը նիզըն ըսէծ, կօվըն ուռավ և այլն: Որպես բացառություն է հիշատակում այն դեպքերը, երբ հաջորդող բառը լէ՞ն է: Այդ դեպքում, ըստ Ս.Հ. Բաղդասարյան-Թափալցյանի, որոշյալ ը հողին ավելանում է ն՝ զէրգու հացըն լէ կէրավ, ըզչուրըն լէ իրմէց ու գընաց: զէրգու ախպէրըն լէ գացին սալդաթ և այլն: Ս.Հ. Բաղդասարյան-Թափալցյանը, կարծեք թէ, ընդունում է ը հողի գոյությունը ն-ի հետ գուգորդմամբ, որը ընդունելի չէ, քանի որ մեր լեզվում երկու հոդ համատեղ, նույն նշանակությամբ գործածվել չեն կարող: Ընդամենը կարելի է ասել, որ մինչ օրս Մշո բարբառում ն հողը բաղաձայնավերջ բառերի վերջում շարունակում է գործառել: Այն, որ Մշո

¹⁸⁶ Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1958, էջ 102:

բարբառում չկա ը հոդը, ժամանակին Մշո բարբարի Ալաշկերտի խոսվածքի տվյալներով դիտարկել է նաև Քերոք Մադաթյանը¹⁸⁷: Մշո բարբառը, ըստ ամենայնի, մինչ օրս օրինաչափորեն պահպանել է հինհայերենյան հոդառության այս հանգամանքն անաղարտորեն, քանի որ քերականական կարգերը տոկուն են և հեշտությամբ չեն փոփոխվում և ոչ մի լեզվում:

Մշո բարբառում ու նրա խոսվածքներում կան կիրառություններ, երբ գոյականը որոշիչ հոդ չի կրում: Նմանատիպ դրսեորումները բերում ենք ստորև. ա) շատ հաճախ ենթական գործածվում է անհոդ՝ *Առշագ գընած գէղ, Ծաղից ըռզավ գէղին և այլն, թ) հանգման և մատուցման անուղղակի խնդիրները հոդ չեն ստանում այն դեպքում, երբ բառը հոգնակի թվում օծ հոլովման է պատկանում. գոնձիկներ քածնեծին գէղածոծ, ձամպոտներ մօղէծան քաղկըծօծ, զ) ուղիղ խնդիրը՝ թէ՝ անձ, թէ՝ իր ցույց տվող, դրվում է առանց որոշիչ հոդի՝ *Սարօն հած թղիւէծ, ջուր բէրէծ, օձիար կըտէծ, էրէխւէն մօր շադ գուզա և այլն, դ) ձայնավորով վերջացող անձնանուն ուղիղ խնդիրը գործածվում է առանց հոդի՝ *Սամկէ գըրզէծ Վանօյ, զարգէծ Կարօյ, ծէլէծ Սարօյ և այլն, ե) առանց հոդի են գործածվում տրականով դրված նպատակի պարագան՝ *Սառան վազավ ջըրու և այլն, զ) ուղղական և տրական հոլովներով տեղի պարագաները, որոնք ներգոյական հոլովի իմաստ ունեն՝ Քօծո արէստանօծ գոնձիկ շադ կա, դառպնօծ թազա փուկս ա դըրաձ, զադէն էզավ ձէռնէր ծօց և այլն: Մշո բարբառում ու նրա խոսվածքներում որոշիչ հոդը հաստատուն կիրառություն ունի: Վերոբերյալ անհոդ կիրառությունները ցույց են տալիս այս քերականական կարգի ոչ համակարգվածությունը, որը պետք է պայմանավորել նախորդ լեզվափուլերի հետ ունեցած****

¹⁸⁷ Ք. Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, էջ 95-98:

առնչությունների համատեքստում: Քիչ հավանական ենք համարում այսպիսի կիրառությունների արագախոսության հետևանք լինելը:

Որոշյալությունն արտահայտելիս Մշո բարբառը երկու հնչյունական յուրահատկություն է հայտաբերում: Եթե հոդակիր բառին հաջորդողում է ձայնավորով սկսվող բառ, ապա ն հոդը արտասանվում է այդ ձայնավորի հետ, իսկ ը-ն ընկնում է՝ *քարըն կօդրավ*, բայց՝ էձըն ուռավ /էձ նուռավ/։ Այս նույն օրինաշափությունն է գործում նաև *հ*՝ից առաջ. *հ* խուլ հագազը դուրս է ընկնում, ն հոդին հաջորդում է ձայնավոր՝ *քար նընզավ*, այլ ոչ թե *քարըն հ նընզավ*: Թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում այն բառերը, որոնք բառավերջում ունեն *ա* ձայնավոր, ն հոդից առաջ հնչյունափոխվում են է-ի՝ *տղաւ>տղէն*, *փարաւ>փարէն*, *շրլապկաւ>շլապկէն*, *էրէխսաւ>էրէխսէն*, *փէսսաւ>փէսսէն* և այլն:

Որոշիչ հոդը միջին հայերենում միանգամայն զուրկ է հոլովատարբերակիչ գործառույթից, ձևաբանական մակարդակում դիրքային ոչ մի պայմանավորվածություն չունի և կարող է կցվել ցանկացած հոլովածեկին՝ լինի այն եզակի, թե հոգնակի: Օրինակ, *կատարեցաւ լիճ Ճորտերուն անսիզնին և իրաւներն-ՍՍՍ-43 /հոգ. սեռ.-տր. և ուղղ./ իրեանք իրեանց անձներովն և ըորզակովն-ՎԼ-187 /հոգն. և եզ. գործ./, մէկ մի ի զգայարանցն կամ չորս զգայարանքն-Գր.-93 /հոգն. բաց. և ուղղ./, զայն այգոյն գեղեցկութիւն -ՎԱ-179 /եզ. սեռ.-տր./, եւ թէ մի ոմն հանց նեղ և մուրն տեղումն կենար՝ չէր ասպրիլ-ՍՕԲ-27 /եզ.ներգ./։ Այս հանգամանքը Մշո բարբառում զգալի սահմանափակումներով է ներկայանում, քանի որ հոդերն առհասարակ կցվում են բացառապես ուղղական-հայցական և տրական հոլովներին: Սակայն Մշո խոսվածքներում հանդիպում ենք կիրառությունների, համաձայն որոնց՝ բացառական հոլովը ն հոդ է ստանում չուրի յասուց տուն, բէռնիցըն բէրէց ախճրզա մառթիցըն լուր մի չիկա և այլն:*

Մշո բարբառում պատկանելություն արտահայտելիս մեծ կիրառություն ունեն ստացական դերանունները, սակայն շատ

հաճախ այդ իմաստն արտահայտելու համար գործադրվում են ստացական հոդերը, որոնք իրացվում են ս, դ/տ, ն մասնիկներով։ Ըստ որում, առաջին դեմքը ստանում է ս /ի/- գիրքսի, գըրքերսի-գիրքս, գրքերս, երկրորդ դեմքը՝ դ/տ/ի/- գիրքսի, գըրքերսի-գիրքդ, գրքերդ, երրորդ դեմքը՝ ն-ն՝ գիրքըն, գըրքերն-գիրքըն, գըրքերն։ Մշտ բարբառով, Ալաշկերտի, Մանազկերտի խոսվածքներով խոսող բարբառախոսները ստացական ս, և դիմորդ դ/տ հոդերին են ավելացնում նաև -ի մասնիկը՝ օրդնէր> իմ օրդնէր> օրդնէրս>օրդնէրսի, մադ>իմ մադըն>մադըս>մադըսի, զլօխ>իմ զլօխն> զլօխս>զլօխսի, ցավ>քօ ցավը>ցավըդ/տ> ցավըդ/տի, մըռութ/տ>իմ մըռութ/տն> մըռութ/տս>մըռուտսի, մէջք>քօ մէջքըր>մէջքըր> մէջքըրդ/տի, թէվ>թէվըս> թէվսի, թուշ>քօ թուշը>թուշդ/տ>թշնէրդ/տի, միդ>իմ միդ> մրտէս>մրդէսի, ախապէր>քու ախապէր>ախապէրտի, փօր>իմ փօրի մէչ> փօրուսի մէջ և այլն։ Օրինակներից երևում է, որ երբ -ի մասնիկն ավելանում է ս հոդին, արտահայտում է ստացականի իմաստ, իսկ երբ ավելանում է դ/տ-ին՝ արտահայտում է դիմորոշի իմաստ։

Ստացական ս, տ /ի/ հոդերը Մշտ բարբառում ինքնուրույնաբար չեն ավելանում բառերին։ Մշտ բարբառում տարածված գործածություն է բառերի՝ ոչ միայն ստացական հոդեր, այլև՝ ստացական դերանուններ ստանալը՝ իմ քուրսի, քու հարստի, մէր տավարսի, ձէր քավօրտի և այլն։ Ա.Հ. Բաղդասարյան-Թափալցյանը ստացական -ի մասնիկը համարում է աճական, բայց, ըստ մեզ, -ի մասնիկը ես դերանվան սեռական հոլովի, պատկանելություն արտահայտող իմ բառաձևի ի արմատահնչյունն է և, հավանաբար, ստացականության իմաստը սաստկացնելու համար դրվում է բարի վերջում։ Մեր այս տեսակետին նպաստում է նաև այն հանգամանքը, որ հինհայերենյան լեզվական հուշարձաններում իմ ստացական գործառում է նաև հետադար:

Մշտ բարբառի խոսվածքներում ստացական հոդերը գործածվում են դերանունների եզակի թվի փոխարեն, հոգնակի թվում

պատկանելության իմաստն արտահայտվում է դերանուններով՝ ձ՛եռներս, ձ՛եռներտ, ձ՛եռներըն=իմ ձեռքերը, քո ձեռքերը, նրա ձեռքերը, իսկ երկուսի կամ շատերի ձեռքերը նշելու համար ասվում է՝ մեր ձ՛եռներ, ձ՛եր ձ՛եռներ, ընդոնծ ձ՛եռներ։ Ետադաս գործածության ժամանակ մեր, ձ՛եր դերանունները ենթարկվում են կրծատման՝ ձ՛էնէր մե, ձ՛էռնէր ձ՛է։ Մըզի /մէզի/, ձ՛ըզի / ձ՛էզի/ դերանունները ետադաս գործածվելիս չեն կրծատվում՝ գ՛ըլօխ մըզի, գ՛ըլօխ ձ՛ըզի և այլն։

Քննարկվող խոսվածքներում դիմորոշ են ս, դ, ն հոդերը, իսկ ն-ն ցուցական հոդի կիրառություն ունի՝ արտահայտելով ցուցական դերանունների նշանակությունը՝ կրնիզըն>այս կնիզը /այն կնիզը/ այդ կնիզը և այլն։ Այս հանգամանքը կասկած է հարուցում։ Նույն ստացական հոդերը բարբառում ծառայում են որպես դիմորոշ հոդեր։ Ք. Մարաթյանի դիտարկումներով՝ Ալաշկերտի խոսվածքում բացակայում են ցուցական հոդերը։ Մշո բարբառի խոսվածքներում օրինաչափ երևույթ է կապերի ստացական, դիմորոշ հոդ ստանալը՝ խոօվան հետո «խոօվեցին ինձնից», կրնստիմ մօղրդ «նստում եմ քեզ մոտ», կէրտամ հէտրդ «կզնամ քեզ հետ» և այլն։

Մշո բարբառում ցուցական հոդը ն-ն է, որը հավասարապես կարող է գործածվել և՝ այս, և՝ այն դերանունների իմաստն արտահայտելու համար՝ գ՛իրքըն, տունըն և այլն։ Ն հոդն այստեղ միաժամանակ նշանակում է և՝ այս գիրքը, այս տունը, և՝ այն գիրքը, այն տունը։

Միջին հայերենում արդեն նկատելի է դառնում սի թվականի անորոշության իմաստ արտահայտելու գործառույթով հանդես գալու միտումը։ Գործածության հատուկենտ դեպքերը, ինչպես՝ «թագաւոր մի կայր» կամ «վարդապետի մն խօսքն բարի իրատ լինի» /ԱՕԲ-6/, աստիճանաբար լայն տարածում են ստանում, որի արտացոլումը տեսանելի է նաև Մշո բարբառում ու հայերենի

մյուս տարածական միավորներում: Մշտ բարբառում անորոշ առումն արտահայտվում է զրո վերջավորությամբ, ինչպես նաև *մի/մէ/մը* անորոշ հոդերի միջոցով, թեև հնչյունական *մը* տարբերակը, որը հիմնականում հայերենի արևմտյան, եզրային բարբառներին է հասուկ, հազվադեպ է հանդիպում, համակարգային չէ և, ըստ Էռլյան, հնչաշղթայում արագախտության հետևանք է: Այս ձևույթները, որոնք նաև դիտվում են որպես անորոշ դերանուններ, ծագմամբ կապվում են *մի թվականի հետ՝ որոշակիացնելով գոյականի ընդհանուր իմաստը՝ մէ քան, մէ զօնձ, մէ խատ, մէ օր, մը ճար, մը խօսր/կ, տուն մի, քան մի, ճար մի, շօր մի և այլն:* Եթե գոյականը լրացում է ունենում, անորոշ *մի/մը* հոդերը դրվում են լրացումից առաջ՝ *մէ զօչ քար, մէ խուռծ փալախ խօս* և այլն: *Մէ-ն միշտ նախադաս է լինում գոյականին, իսկ մի-ն՝ հետադաս:* Անորոշ հոդի հետ կարող է գործածվել նաև *հաղ քառը, ինչպես՝ մէ հաղ տուն, մէ հաղ շուն* և այլն: Հոդի նման գործածությունը Հր. Աճառյանը համարում է «անորոշի գորացում»¹⁸⁸: Մշտ բարբառում նկարագրական եղանակով հոդի արժեք ունի նաև *մէզ քառը՝ անորոշ կիրառությամբ՝ մէզ մարթ, մէզ տուն* և այլն:

Չուզադրահամադրումը ցույց է տալիս, որ առկայացման քերականական կարգը միջին հայերենում դեռևս պահպանում է նախորդ լեզվափուլի նույն կարգի դրսնորումները, որոնք հատկապես տեսանելի են ցուցական, դիմորոշ և ստացական հոդերի առումով, իսկ Մշտ բարբառը որոշալության գրեթե բոլոր դրսնորումներում աղերսվում նախորդ լեզվափուլերին, որոշ դեպքերում, ինչպես տեսանք, հայտաբերում ձևային ինքնատիպ յուրահատկություններ: Միասնաբար վերցրած՝ թե՝ միջին հայերենում, թե՝ Մշտ բարբառում, առկայացման քերականական կարգի ձևախմատային լուծումները նույն են, որոնք կարող ենք գտնել հայերենի զարգացման բոլոր վիճակներում: Միայն ը հոդն է, որ

¹⁸⁸ Հր. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1953, էջ 142:

123 Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր
մինչին հայերենում ընդհանրապես ձևաբանութեն չի արտա-
հայտվել, իսկ Մշո տարածքի խոսվածքներում տարբեր պատճառ-
ներով համակարգային չի դարձել մինչ օրս:

ՄԱՍ Բ

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Խաչատրյան

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՈՒՄ¹⁸⁹

Գեղարքունիքի մարզն ընդգրկում է Սևանա լճի ավազանի նախկին հինգ վարչական միավորները՝ Գավառի, Մարտունու, Սևանի, Վարդենիսի և Ճամբարակի: Մարզի բնակավայրերը հիմնվել են տարբեր ժամանակներում, և տարածաշրջանում գործառում են բարբառային հետևյալ միավորները՝ Բայազետի, Մշո, Արարատյան (Մակու), Դիաղինի, Վանի և Ղարաբաղի բարբառները՝ իրենց յուրահատուկ ենթաբարբառներով և խոսվածքներով:

Հիմք ընդունելով մեր «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» ուսումնասիրության դասակարգումը¹⁹⁰, սույն հոդվածում ներկայացնում ենք Գեղարքունիքի մարզի բուն ազգակցական և միջնորդավորված արյունակցական-ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների քննությունը: Բուն ազգակցություննը՝ իբրև կենսաբանական և հասարակական երևույթ, պայմանավորված է

¹⁸⁹Տե՛ս նաև՝ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի գեկուցումներ, «Ասողիկ» հրատ., Ե., 2014, էջ 37-48:

¹⁹⁰Հ. Խաչատրյան, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, էջ 16-17:

ծնող, հարազատ, զավակ հարաբերություններով: Այստեղ առաջին շարքում են *մայր* և *հայր* բառերը:

Մայր հասկացության դիմաց հիշյալ մարզի խոսվածքներում առկա են հետևյալ բառանուններ՝ *մէր*, *աղէ*, *մամա*, *ամայ*: Ինչպես գիտենք, *մայր*-ը բնիկ հայերեն բառ է, որ ծագում է հնիս. *mate'r նախաձևից, որը գործածական է հնդեվրոպական քույր լեզուներում: Գեղարքունիքում (հատկապես Գավառում, Մարտունիում և Սևանում) *մայր* բառանունը գործառում է այ>է հնչյունափոխությամբ *մէր* հնչածենվ: Միայն փախստականներով վերաբնակեցված գյուղերում է, որ *մայր*-ը *մըէր* հնչյունական տարբերակով է գործածվում (օրինակ՝ Արտանիշ գ., որոնք հիմնականում գաղթել են Դաշքեսանի Շարուկքար գյուղից): Բարբառներում ընդհանրապես լայն կիրառություն ունի *մայր* հասկացության *մամա* բառանունը, որն առկա է նաև Գեղարքունիքում: Հ. Աճառյանը բառը փոխառված է համարում հունարեն *μάμα*, *μάμμη* «մեծ մայր, մամ» բարից: Մինչդեռ Գ. Զահոռիյանը կարծում է, որ բարբառներում պահպանված են հնդեվրոպական արմատական ձևեր, որոնք, սակայն, բացակայում են հայերենի գրավոր հուշարձաններում և մարդկություն. սեռ, տարիք, ազգակցություն արտահայտող բառերի թվում ներառում է *մա*, *մամ* բարբառային բառերը, որոնք գերազանցապես մանկական կամ փաղաքշական բնույթի են: Եվ մեկ այլ առիթով հեղինակը գրում է. «Եթե նկատի առնենք բառի տարածվածությունը բարբառներում՝ տարբեր ձևերով և իմաստներով (մամ, մամա, մամիկ՝ «տատ», մամ «մայր», մամո «մայրիկ») և մանավանդ մամա «ուտել» մանկական բառի գոյությունը, ապա կարելի է ավելի հավանական համարել հայերեն բառերի բնիկ լինելը, թեև, իհարկե, հնարավոր է որոշ տարածքներում խառնում (կոնտամինացիա) հուն. և պրսկ. ձեերի հետ»¹⁹¹:

¹⁹¹ Գ. Զահոռիյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ. ՆԺ), Ե., 1987, էջ 275, 179:

Ղարաբաղյան խոսվածքներին բնորոշ բառանուն է *ամայ-ը՝* որպես *մայր* (Արտանիշ, Փամբակ): Թերևս հնարավոր է *այս ման՝* դարձած լինի *ամայ*, այսինքն՝ ձայնարկության հետադաս կիրառությամբ բառաձև: Չենք բացառում նաև, որ *ամայ* բառաձևի բառավերջում *յ-ի* առկայությունը գուցե ավելի հին երևույթ է. թերևս հին հայերենում առկա վերջնահանգ *յ-ի* արտացոլումն է, որ բարբառային այս բառում քարացած պահպանվել է, մանավանդ որ *ամայ-ը* բարբառներում փաստված է ոչ միայն իբրև կոչականի ձև:

Գեղարքունիքի մարզի որոշ խոսվածքներում (Ն. Գետաշեն, Վարդենիկ) փաստել ենք *աղէ* բառանունը՝ որպես *մայր* հասկացության բառաձև: Այս բառի շուրջ հայ լեզվաբանության մեջ տարբեր կարծիքներ կան: Հ. Ասմանգույյանը այն համարում է քրդական փոխառություն. *ade* (ate) *attā<քրդ.- de-* «մայր»¹⁹²: Գ. Զահոռկյանը կարծում է, որ գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատների մեջ կան զգալի թվով բնաձայն և մանկական բառեր, որոնք հնչունապես շեղվում են հայերենի բուն օրինաչափություններից, և այս շարքում ընդգրկում է *աղէ* բառաձևը¹⁹³:

Փամբակի խոսվածքում գրքառում է նաև *աճի* բառաձևը, որով երեխան մորն է դիմում: Սա հավանաբար իգական սեռը մատնանշող *աղջիկ* ընդհանրական բառանվան մասնավորումն է՝ մայր իմաստով, որն առաջացել է *աղջի՛* կոչական ձևից: Այս բառաձևը բնորոշ է ղարաբաղյան խոսվածքներին:

Հայր: Գեղարքունիքի մարզում *հայր* հասկացության գուգաբանություններ են դիտարկվել *հէր*, *իւէր*, *հայրիկ*, ապա, ափօ բառաձևերը: *Հայր-ը* բնիկ հայերեն բառ է, որը ծագում է հնդեվրոպական *pater նախաձևից և առկա է ցեղակից շատ լեզուներում: Հիշյալ տարածքում այն ներկայանում է *հէր* և *իւէր*

¹⁹² **Ա. Ասմանցիան**, Этимологический состав терминов родаства армянского языка, Научные труды, N 3, E., 1971, стр. 101:

¹⁹³ **Գ. Զահոռկյան**, Հայ բարբառագիտության ներածություն (այսուհետև՝ ՀԲՆ), E., 1972, 283-300:

հնչածներով: Բայազետի բարբառում, որը ներառում է Գավառի շրջանը (Հացառատ, Սարուխան, Արծվաքար և այլն) գործառում է միայն *իւ-ով* տարբերակը, իսկ Մարտունու շրջանը բաժանվում է երկու խմբի. Զոլաքար, Վաղաշեն, Աստղաձոր, Վարդենիկ, Գեղիովիտ գյուղերի խոսվածքներում առկա է *իւ-ով* տարբերակը՝ *իւկ*, իսկ Երանոս, Ծովասար, Մաղինա, Չորագյուղ, Վարդաձոր գյուղերում՝ *հէր*:

Մարտունու Լիճը գ. վկայված է նաև *ապա*, Սևանի Գեղամավանում՝ *ափօ*, *ապէր* բառածները՝ որպես *հայր* հասկացության նշանակելիներ: Լեզվաբանության մեջ այս բառերի շուրջ կարծիքները բաժանվում են երկու խմբի: Լեզվաբանների մի մասը՝ Հ. Աճառյան, Հ. Ասմանգույյան, *ապի*-ն կապում են *եղբայր* բառի հետ¹⁹⁴: Գ. Զահոռիկյանը *ապի* (*ափու*՝ հայր) բառը հայերենի գրավոր հուշարձաններում բացակայող, սակայն հայ բարբառներում պահպանված հնդեվրոպական արմատական ձև է համարում¹⁹⁵: Մեր կարծիքով՝ նշվածներից *ափի*, *ափօ*, *ափու*, *ապա*, *արօ* բարբառային տարբերակները հանգում են հնդեվրոպական արմատական *ապա* ձևին, որը կապ չունի *եղբայր* բառի հետ, իսկ հայերենի բարբառներում հանդիպող *ափէր*, *ապէր*, *ապար* բառածները առնչվում են *եղբայր* բառի հետ:

Բուն ազգակցական բառանվանումների երկրորդ իմաստային շղթան ընդգրկում է *երեխա*, *տղա*, *աղջիկ* հասկացությունները: Ըստ Հ. Աճառյանի՝ *երեխա*-ն անկնունք, քրիստոնեական մկրտություն դեռ չստացածք, չմկրտվածն էր, և նա ենթադրում էր, որ կար ասորական *raxa ձևը, որից փոխառյալ են մի կողմից հայերեն *երախայ*, մյուս կողմից պահի ռաxic ձևերը¹⁹⁶:

Գեղարքունիքի մարզում *երեխա* հասկացության բառանուններ են փաստվել *էրեխա*, *ըրախա*, *խօխա*, *ճիծ* բարբառային բառածները: Գավառի, Մարտունու, Վարդենիսի և Սևանի

¹⁹⁴ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ2, Ե., 1973, էջ 16:

¹⁹⁵ Գ. Զահոռիկյան, ՀՀՊ. ՆԺ, էջ 275:

¹⁹⁶ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ.2, էջ 35:

խոսվածքներում գործածական են էրեխա և ճիծ բառերը: Ճիծ բառը միջին հայերենում արդեն առկա էր, սակայն բառի ծագումն անհայտ է:

Ճամբարակի շրջանի խոսվածքներում (Արտանիշ և Զիյ) Ղարաբաղի բարբառին բնորոշ ըրախա, խօխա բառաձևերն են գործառում: Ինչպես տեսնում ենք, ըրախա բառաձևում շեշտի հետ կապված հնյունափոխություն է տեղի ունեցել՝ եր: Իսկ բառամիջի ա-ի առկայությունը պայմանավորված է մեզ փաստված գրաբարյան էրախա բառաձևով: Արտանիշում և Զիյում գործածվում է նաև խօխա-ն: ԱՃառյանն այն համարում է թուրքերենից փոխառյալ բառ՝ բիւցնելով խախա (խախա) տխմար, անմիտ բառից¹⁹⁷: Ալ. Մարգարյանը այն համարում է էրեխա բառի ավելի «քարդ և ավելի հեռուն գնացած հնյունական ձևափոխություն, որն է՝ երախայ>երեխայ>ըրախա>ըրեխա>հըրեխա>հըրօխա>հօխա>խօխա»¹⁹⁸: Սակայն այս վարկածը դեռևս դիտարկման կարիք ունի:

Տղա: «Նոր բառզիրք հայկագեան լեզվի» աշխատության մեջ տղա բառը բացատրվում է «իբրև մանուկ, փոքր երեխա, իբր պատանի կամ երիտասարդ, անչափահաս տղա»¹⁹⁹: Ինչպես գիտենք, արևելյան գրական լեզվում բառը հատուկ է միայն արական սեռին, բայց արևմտյան գրական լեզվում, նաև գրաբարում և միջին հայերենում՝ թե՛ արական և թե՛ իգական սեռին: Հ. ԱՃառյանը բերում է հին մատենագրությունից հետևյալ օրինակը՝ «Տայր Աննա ստիճնս տղային և անուանեաց զնա Մարիամ»²⁰⁰: *Տղա* բառը համարվում է աստրական փոխառություն: Գեղարքունիքի մարզի

¹⁹⁷ Հ. ԱՃԱՐԵԱՆ, Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 159:

¹⁹⁸ Ալ. Մարգարյան, Բարբառային բառերի մեկնություններ, Պատմաբանասիրական հանդես, հ.3, Ե., 1971, էջ 212-213:

¹⁹⁹ Նոր բառզիրք հայկագեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 2, Վենետիկ, 1837, էջ 881:

²⁰⁰ Հ. ԱՃԱՐԵԱՆ, ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 412:

խոսվածքներում տղա բառանունը ներկայանում է անհնչունափոխ ձևով՝ նշանակելով միայն արու զավակ:

Երեխա հարաբերության իգական եզրը արտահայտվում է աղջիկ բառանվամբ: Գ. Զահուկյանը Հ. Աճառյանի շտուգաբանված բառերից ցանկից աղջիկ բառին վերագրում է ուրարտական ծագում²⁰¹: Ա. Մելքոն աղջիկ բառը կապում է աղալ բայի հետ²⁰²: Վ. Համբարձումյանը, անդրադառնալով աղջիկ բառի ստուգաբանությանը, պաշտպանում է Մելքի տեսակետը և ի մի բերելով պատմամշակութային և լեզվական փաստերը՝ նկատում է, որ հայերեն աղջիկ բառը, որի նախնականն է աղիջ (>աղիձ) ձևը, հանգում է հ.-ե. al արմատին, և հայերեն աղջիկ բառի աղ(ալ) արմատն ամենանախնական իմաստով նշանակել է «երկանքով աղացող, աշխատող տնտեսուիի»²⁰³:

Գեղարքունիքի մարզում ընդհանրական կիրառություն ունի աղջիկ բառանունը՝ տարբեր հնչաձևերով (Գավառ՝ շրթնային անով՝ աղչչիկ, Մարտունի, Սևան, Վարդենիս՝ աղչչիկ, ախճիկ):

Բուն ազգակցական բառանվանումների երրորդ շղթան կազմված է քույր և եղբայր բառանուններից: Քույր-ը բնիկ հայերեն բառ է: Ըստ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի՝ քույր բառի ստուգաբանական իմաստը ավելի լայն է. կին՝ մեծ ընտանիքի անդամ, արյունակից ազգական²⁰⁴: Եվ հիշյալ տարածքում քույր-ը դրսուր-վում է միայն քուր՝ զբարյան ոյցու (Սևան, Մարտունի, Գավառ, Վարդենիս) և քիր՝ ոյցի (Վերին Ճամբարակ, Վահան, Արտանիշ, Ջիլ և այլն) հնչատարբերակներով:

Եղբայր: Համարվում է բնիկ հայերեն բառ՝ հնդեվրոպական *brater նախաձևից առաջացած: Հիշյալ նախաձևի համար ենթա-

²⁰¹ Գ. Զահուկյան, ՀՀ Պ. ՆԺ, էջ 436:

²⁰² Ա. Մելքոն Հայագիտական հետազոտություններ, Ե., 1987, էջ 436:

²⁰³ Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, Ե., 1998, էջ 29-33:

²⁰⁴ Т.В. Гамкрелидзе, Вяч.Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, Тбилиси, 1984 г., стр. 764.

դրվում է ավելի լայն իմաստ՝ «արական սերի արյունակից ազգական»։ Եղայր հասկացությունը Գեղարքունիքի մարզում դրսերվում է եզակի եղայր բառանվանումով, որը, իհարկե, հիշյալ խոսվածքներում առկա է բառասկզբի դիրքում եւա, բառամիջում՝ այշէ հնչածնով՝ ախաղէր։ Հ. Աճառյանը, Է. Սղայանը առողջությունը տարբերակը համարում են ավելի հին երևույթ՝ առաջացած դեռևս նախապատմական շրջանում²⁰⁵։ Գավառի շրջանի խոսվածքներում ախաղէր բառանունը դրսերվում է Բայազետի բարբառին բնորոշ ա ձայնավորի շրթնայնացմամբ՝ ախաղէր, իսկ դարաբառյան խոսվածքներում (Արտանիշ, Զիլ, Փամբակ) հանդիպում է ախաղըրէր հնչատարբերակը։

Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների երկրորդ ենթաշերտում երկրորդաբար միջնորդավորված արյունակցական հարաբերությունների ազգակցական անուններն են՝ տատ, պապ, քեռի, մորաքույր, հորեղբայր, հորաքույր։

Գեղարքունիքի մարզում տատ հասկացության բառանուններ ենք դիտարկել տատ (կոչական՝ տադի՛), մամէ (մամիկ), մէձ մամէ, նան (նաննի՛), բարօ գուգաբանությունները։ Հստ Հ. Աճառյանի՝ տատ բառը բնաձայնական է, որը հատուկ է մանկական լեզվին և առկա է թե՛ հնդեվրոպական և թե՛ այլ լեզվահամբերի մեջ, օրինակ՝ սանս. tata, վրաց. դեղա՝ մայր, թուրք՝ dede՝ պապ և այլն²⁰⁶։

Տատ բառանունը գործառում է Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի խոսվածքներում։ Գավառի Ծովազարդ և Գեղարքունիք գյուղերում առկա են նաև մամէ, մէձ մամէ բառաձևերը։ Զահուլյանը մամէ-ը մանկական կամ փաղաքշական բնույթի հնդ-

²⁰⁵ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Բ, Ե., 1951, էջ 414-415, Է. Սղայան, Բարբառային հնարքանությունները հայերենում, ԳԱ Տեղեկագիր, Ե., 1958, հ.5, էջ 65-72։

²⁰⁶ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 379։

Եվրոպական արմատ է համարում²⁰⁷: Ինչպես հայտնի է, այլ վայրերում մաս-ը նաև մայր իմաստով է գործածվում: Փաստենք նաև, որ աղէ բառաձևը հիշյալ տարածքում ոչ միայն մայր հասկացության բառանուն է դիտվել, այլև տատ հասկացության (Գավառի Կարմիր գյուղ, Արծվաքար):

Հայերենի բարբառներում որպես տատ հասկացության նշանակելիներ շատ հաճախ մեծ ածականով որոշիչ-որոշյալ կապակցային ձևեր են փաստված, ինչպես, օրինակ, մինձ մար, մինձ արա, մինձ անս և այլն²⁰⁸: Իսկ Կոզենի խոսվածքում տատ հասկացության բառանուն է դիտվել մէծրիկ-ը:

Հայտնի է, որ հայերենի բարբառներում մեծ բառի հոմանիշ է համարվում ջոչ-ը: Այստեղից էլ՝ ջոչ մաս, ջոջ աղէ, որոնք ել ընդամենը մեկ աստիճանով առաջ են մղվել և, ինչպես մեծրիկ բառի դեպքում, բարիմաստային թևեռացումով առաջացել է ջօջ բառաձևը տատի դիմաց: Բառը փաստել ենք Մշո խոսվածքներում (Մարտունու Լիճք, Ծակքար և այլն) ջօջ շնչել ձայներ տարբերակով: Դաշտային Ղարաբաղից բռնազարթվածներով վերաբնակեցված գյուղերում գործառում են տատ հասկացության նաև (նաևն), բարօ բառանունները (Արտանիշ, Զիլ, Փամբակ և այլն):

Գ. Զահուկյանը բարբառային հնաբանությունների շարքում ներառել է նաև նաև բառանունը, չնայած հնարավոր է համարում նրա իրանական ծագումը կամ ել բնիկ և իրանական փոխառյալ ձևերի խառնուրդ (բաղարկություն)²⁰⁹: Փամբակում նաև հոր մայրն է, տատ-ը՝ մոր մայրը, Վահան գ.-ում հոր մայրը տատունց ամայ բառակապակցությամբ է դրսերված, մոր մայրը՝ տատունց աղի: Նշված օրինակներից երեսում է, որ հայերենի բարբառներում երբեմն հստակորեն տարբերակվում են հոր և մոր մայրերը: Նույնիսկ այլ բարբառներում արձանագրված են քէումամա (Վանի Խեց

²⁰⁷ Գ. Զահուկյան, ՀՀ Պ. ՆԺ, էջ 276:

²⁰⁸ Հ. Խաչատրյան, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, էջ 92:

²⁰⁹ Գ. Զահուկյան, ՀՀ Պ. ՆԺ, էջ 182:

գ.), *բարմար* (Մարաշ) բառաձևերը, որոնցում մայրական տատը օտարվում է որպես քեռու մայր:

Բարօ բառը՝ որպես *տատ* հասկացության նշանակելի, հայերենի բարբառներում մեկուսացած գործածվում է Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբում: Մեր կարծիքով՝ *բարօ*-ն աղերսներ ունի պապ բառի հետ: Ազգակցական բառերի՝ ծնող իմաստով բառաշերտում հեշտությամբ իմաստային անցումներ են տեղի ունենում: Չնայած չենք բացառում նաև ոռուսերենի ազդեցությունը, այսինքն՝ ճացած բարօ:

Դապ: Ծնող հարաբերության միջնորդավորումը ծնող հարաբերությամբ արական եզրով դրսևորվում է պապ բառանվամբ: Հ. Աճառյանը պապ բառի մեծ հայր իմաստը պիլ. *քառ ձևից է փոխառյալ համարում, իսկ ՆՀԲ-ում պապ-ը դիտված է որպես հունական փոխառություն²¹⁰:

Գեղարքունիքի մարզում պապ բառը փաստված է պարէ, պապէ բառագույգաբանություններով, որոնք, կարծում ենք, կոչականից առաջացած բառաձևեր են:

Երկրորդաբար միջնորդավորված արյունակցական հարաբերությունների երկրորդ իմաստային շղթայի բառանուններն են *մորաքույրը*, *հորաքույրը*, *հորեղբայրը* և *քեռին*: Ինչպես նկատելի է, *քեռի* բառը հին հայերենից ավանդված միակ արմատական ձևն է, իսկ *հորաքույրը*, *մորաքույրը*, *հորեղբայրը* նկարագրական ձևով առաջացած բառաձևեր են, որոնք, ըստ Զահուկյանի, մասսամբ գալիս են հնից և գորգահեռներ ունեն այլ լեզուներում:

Հ. Աճառյանը կարծում է, որ *քեռին* ծագումնաբանորեն կապված է *քույր* բառի սեռական հոլովածեկի հետ²¹¹: Հ. Ասմանգույշանը ևս սկզբում փորձում էր աղերսներ գտնել *քեռի* և *քույր* բառերի միջև, այնուհետև գալիս է այն եզրակացության, որ հետագա հնչունական զարգացման հետևանքով այս երկու բառերը ձևա-

²¹⁰ Հ. Աճառյան, հ. 4, էջ 25, ՆՀԲ, հ. 2, էջ 599:

²¹¹ Հ. Աճառյան, հ. 4, էջ 666-667:

բանական տարբեր կառույցների համանուններ են դարձել²¹²: Գ. Զահուկյանը ևս *քեռին* համարում է *քուրից* անկախ կազմություն՝ այն բիեցնելով հ.ե. *su-esor- «սեփական արյունից ձևից». *suesriio-s` *քեռի*²¹³:

Քեռի հասկացությունը Գեղարքունիքի մարզի խոսվածքներում հիմնականում դրսնորված է *քեռի* բառանվան տարբեր հնչաձևներով: Ք հնչյունի քմայնացմամբ, ինչպես նաև *ա-ի* առաջնալեզվային արտասանությամբ՝ *քանի* հնչատարբերակն է առկա Բայազետի և Ալաշկերտի խոսվածքներում (Սարուխան, Գեղարքունիք, Գեղիովիտ, Վաղաշեն, Շալքրար և այլն): Որոշ խոսվածքներում (Նորագուս, Գեղամավան) *ք-ի* քմայնացումն այնքան է ուժեղացել, որ *ք* քմայինը վերածվել է *չի՝ չանի*:

Ճամբարակում և Վարդենիսի փախստականներով վերաբնակեցված բնակավայրերում (Արտանիշ, Ջիլ, Վահան և այլն) գործառում է *դայի* բառանունը (*դայի* հնչաձևով)` որպես *քեռի*:

Սորարույր, հորարույր: Այս բառաձևներում բացակայում են հասկացության ընդհանրացված բարիմաստր և պահպանվել է միջնորդավորված եզրերի (հոր կամ մոր) սերի իմաստույթը: Գեղարքունիքի մարզի Բայազետի և Մշո խոսվածքներում, ինչպես նաև Սևանի շրջանի խոսվածքներում (Մակու, Արծափ) ունենք անհոդակապ *մօրքուր*, *հօրքուր* բառաձևերը, որը երբեմն հանդիպում է *ք* հնչյունի ապաշնչեղացմամբ՝ *մօրկուր*, *հօրկուր* (Մշո խոսվածքներում): Իսկ Ալաշկերտի որոշ խոսվածքներում *հորքուրն* առկա է *հ-ին* տարբերակով՝ *խօրկուր*, *խօրքուր* (Չոլաքար, Վարդենիկ, Գեղիովիտ և այլն):

Վերին Ճամբարակում և այս ենթաշրջանի խոսվածքներում գործառում է *ա* *հոդակապով* բառաձևերը՝ *հըրաքիր*, *մըրաքիր* և կամ *էլ* *հօքիր*, *մօքիր* գուգաբանությունները: Բարբառներում

²¹² А. Асмандулян, Этимологический состав терминов родаства армянского языка, Научные труды, N3, стр. 57:

²¹³ Գ. Զահուկյան, ՀՀ Պ. ՆԺ, էջ 189:

առկա *արիր* բառաձևը այս ենթաշրջանում դիտարկվել է որպես և՝ *մորաքույր*, և՝ *հորաքույր* հասկացությունների բառանվանում (օրինակ՝ Փամբակ զյուղի խոսվածքում, որոնք հիմնականում վերաբնակեցվել են Դաշրեսանի Զագլիկ զյուղից):

Ճամբարակի Վահան գ. մորաքույրը *արիրն* է, հորաքույրը՝ *հըրաքիրը*: *Արիրը*, կարծում ենք, *մորաքույր* բարի մաշված տարբերակն է: Զագլիկցիների խոսվածքում (Փամբակ գ.) փաստված է նաև մորաքույր հասկացության նշանակելի *արա-ն*, *հորաքույր-ինը՝ բիրի-ն*: *Արա* բառաձևը, ենթադրում ենք, կամ *մորաքույր* բարի շատ մաշված տարբերակն է, կամ' էլ աղերսներ ունի *բա* (*բալա*) իգական կոչական ձայնարկության հետ²¹⁴: Իսկ *բիրի-ն* թուրքական փոխառություն է: Զարկ է նշել, որ այն հայերենի որոշ բարբառներում գործառում է *հորաքույր*, իսկ մի մասում էլ՝ *մորաքույր* իմաստով: Այսինքն՝ ինչպես *բիրի-ն*, այնպես էլ *արիր-ը* ունեն ընդհարացված բառիմաստ, ինչպես օրինակ ոուսերենում տեյ բառաձևը:

Հորեղբայր: Նկարագրական կաղապարով առաջացած բառաձևը ինքնին մատնանշում է ծնող հարաբերության (այստեղ՝ հայր) միջնորդավորումը համածին հարաբերության արական եզրով, որն է՝ *հորեղբայր*: Գեղարքունիքի մարզում այն ներկայանում է *հորեղբայր*, կակօ, ամի, ապօ բառանուններով: *Հորեղբայր* բառանունը հիշյալ տարածքում դրսևորվում է հնչյունական յուրօրինակ տարբերակներով: *Հօրօխապէր* բառը *խօրօխապէր* հնչաձևով առկա է Գավառի շրջանի խոսվածքներում, ինչպես նաև Մարտունու և Վարդենիսի որոշ խոսվածքներում (Զոլաքար, Գեղհովիտ, Վարդենիկ և այլն): Մարտունու *հ-ախոս* զյուղերում (Զորագյուղ, Երանոս, Վարդաձոր և այլն) գործառում է *հօխապէր* բառաձևը, որը *հորեղբայր* բարի արագախոսության ընթացքում առաջացած բառաձևն է, իսկ *ի-ախոս* վայրերում՝ *խօխապէր* (Վաղաշեն, Ծակքար):

²¹⁴ Հ. Աճառյան, ՀՄԲ, հ. 4, էջ 537:

Մարտունու շրջանի խոսվածքներում *հորեղբայր* հասկացութան բառային դրսերում է դիտարկվել կակօ բառաձևը, որը հավանաբար քրդերենից է փոխառված և հիշյալ տարածքում հանդես է գալիս տարբեր հնչաձևերով: Օրինակ՝ Զորագյուղում՝ *կակօ*, Մադինա գ.-ում՝ *կակէ*, Ծակքարում՝ *կակօ* և այլն:

Հայտնի է, որ *ապօ*, *ափի* բառաձևերը հայերենի բարբառներում գործածվում են մի քանի իմաստներով. *ապա*, *արա* հնչաձևերով գործածվում է *մայր* իմաստով, *ապի*, *արի*, *ապօ*, *ափօ*՝ *հայր* իմաստով, իսկ Մարտունու Լիճը, Ներքին Գետաշեն գյուղերում *ապօն* փաստված է *հորեղբայր* իմաստով: Այստեղ ևս, կարծում ենք, իմաստային տեղաշարժ է տեղի ունեցել *հայր* իմաստից *հորեղբայր* իմաստին:

Գեղարքունիքի մարզի որոշ խոսվածքներում (Գեղամավան, Լիճը, Փամբակ և այլն) *հորեղբայր* հասկացության բառանուն է վկայված թուրքերենից փոխառյալ *ամի* բառանունը, որը հիմնականում դրսերվում է առաջնալեզվային *ամ-ով*՝ *ամի*:

Հորեղբոր կին: Այս հասկացությունը հայ բարբառներում բացի հորեղբոր կին բարդ կաղապարի հնչյունական բազմապիսի տարրերակներից գործառում է նաև տարարմատ անվանումներով, որոնցից հիշյալ մարզում վկայված են *զալօ*, *տաղօ*, *տաղէ*, *աղի*, *ազի* բառաձևերը:

Գավառի խոսվածքներում գործառում է վրացերենից փոխառյալ *ձալօ* բառանունը *ձ-օ* հնչյունափոխությամբ՝ *զալօ* տարբերակով: Մարտունու որոշ խոսվածքներում (Մադինա, Զորագյուղ, Ծակքար, Ծովասար և այլն) առկա է *տաղօ* բառանունը, իսկ Վաղաշեն գ.-ում արձանագրված է *տաղէ-ն* որպես *հորեղբոր կին* հասկացության նշանակելի: Մենք կարծում ենք, որ *տաղօ* և *տաղէ* բառաձևերը սերտորեն առնչվում են *տուղու*, *դուղու*, *տաղս* բառերի հետ, որոնք, ըստ մեր դիտարկումների, համարվում են հնդեվրոպական բնածայնական բառեր: Փախստականներով վերաբնակեցված գյուղերում գործառում է *ազի-ն*՝ որպես հորեղբոր կին (Արտանիշ, Փամբակ): Մեր կարծիքով՝ Հ. Ասման-

գույյանը ճիշտ եզրահանգման է գալիս՝ *ազի* բառը համարելով արխաիկ ազգակցական տերմին, որը չի արտացոլվել իին հայերեն գրական լեզվում, սակայն ավանդված է հայերենի բարբառներում նախ՝ *մայր* իմաստով, ապա արդեն բարիմաստի տեղաշարժով առաջացած *հորաքույր* (Ղարաբաղ), *հորեղբոր* կին իմաստներով²¹⁵:

Այսպիսով՝ ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունները դարերի ընթացքում պահպանել են իրենց կենսունակությունը, ինչպես նաև համալրվել ու հարստացել են ուրիշ լեզուներից փոխառված միջոցներով։ Եվ քանի որ ազգակցական բառերը մտնում են լեզվի հիմնական բառազանձի մեջ և օժտված են բավական մեծ կայունությամբ ժամանակի և արտաքին այլ ազդակների նկատմամբ, այդ պատճառով էլ Գեղարքունիքի մարզի տարբեր խոսվածքներում նրանք ևս դրսնորվում են աշխարհընկալման և լեզվամտածողությունից բխող կաղապարային ձևերով, որոնց կողքին բարբառային հարուստ ներկապնակը մեզ է հրամցնում հնդեվրոպական արմատներով յուրօրինակ տարբերակներ, հնավանդ արմատներից իմաստային տեղաշարժումներով առաջացած բառանվանումներ։ Առկա են նաև նկարագրական բառաձևեր, որոնք գալիս են հնից և զուգահեռներ ունեն հնդեվրոպական այլ լեզուներում, ինչպես նաև բառաձևեր, որոնց մի մասը ավանդված չէ իին գրավոր հուշարձաններում։

²¹⁵ А.Асмандулян, Этимологический состав терминов родаства армянского языка, Научные труды, N 3, Е., 1971, стр. 42-47:

Հասմիկ Խաչատրյան

ԲՆԱԿԱՐԱՆ, ՏՈՒՆ, ԿԱՀ-ԿԱՐԱՍԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԹԵՄԱՏԻԿ
ԽՄԲԻ ԲԱՌԱՆՈՒՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒ²¹⁶

Գեղարքունիքի մարզի հինգ վարչական միավորներում (Գավառի, Մարտունու, Սևանի, Վարդենիսի և Ճամբարակի) գործառում են Բայազետի, Մշո, Դիաղինի, Արարատյան, Ղարաբաղի, մասամբ Վանի բարբառները՝ իրենց յուրահատուկ ենթաբարբառներով ու խոսվածքներով:

Սույն հոդվածում մենք ընդհանուր գծերով կներկայացնենք հիշյալ տարածաշրջանի՝ տուն և տնտեսություն իմաստային դաշտն արտացոլող բառանունները:

Քննվող նյութի իմաստային դաշտն արտացոլող բառանվանումների ցանկում ներառել ենք շեմ, որմանախոր (պատրիան), առաստաղ, երդիկ հասկացությունների՝ Գեղարքունիքում առկա բարբառային դրսերումները:

Շեմ հասկացությունը հիշյալ տարածաշրջանում արտացոլված է հիմնականում շեմ, դրընդի, մըղակ, ճըխան բարբառային բառաձևերով:

Գրաբարյան *անդ* բառաձևը Հ. Աճառյանը համարում է բնիկ հայերեն բառ՝ հնդեվրոպական ծագումով, որի ցեղակիցներ են սանս. *ata* (դրան շրջանակը), լտ. *antae* (դրան երկու կողմերի սյուները): *Անդ* «սեամ, շեմք» առանձին անգործածական է, այն պահված է միայն դրանդ, դրանդք, դրանդի բառաձևերում: Իմաստն է նախադուռ, դրան գավիթ, մուտք կամ շեմք: Կազմված է դր-դուռ (հմմտ. դրացի) և հիշյալ անդ բառերից²¹⁷:

²¹⁶ Տե՛ս նաև՝ «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2015, էջ 69-73:

²¹⁷ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հու. 1, Ե., 1971, էջ 186:

Մարտունու շրջանում պահպանված է հնդեվրոպական *անդ* արմատից կազմված *դրանդի* բառաձևը, բայց արդեն հասկացության ոչ լիարժեք իմաստով. *դ ըրբնդի* բառաձևն ունի դռան վերին շեմ նշանակությունը:

Հիշյալ տարածքում *շեմ* հասկացության դիմաց գրեթե համընդիանուր կիրառություն ունի նույն *շեմ* բառանունը: Այն գործածական է ե-ի երկրաբառային արտասանությամբ՝ *շեմ*, Սևանի, Մարտունու, Վարդենիսի որոշ խոսվածքներում: Ներքին Գետաշենում Մուշ-Տիգրանակերտ բարբառախմբին բնորոշ *շեմզալ* (շեմ+կալ արմատների բառաբարդմամբ առաջացած) բառանունն է արձանագրված, Ճամբարակում բառը վկայված է *շրմքափէտ* գուգաբանությամբ, որը *շեմք+փայտ* բաղադրիչներից կազմված բառաձև է:

Ըստ Գ. Զահուկյանի՝ արխագերենը հայերենի հետ շփման մեջ է եղել հին ժամանակներից սկսած, և *շեմ*-ն ու մի շարք այլ բառեր արոյունք են նրանց հեռավոր ցեղակցության և հնդեվրոպա-արխազ-աղըդեական հնագույն շփումների և «տարրական ցեղակցության» (մանկական բառեր, բնաձայնություններ, ձայնարկություններ): Գիտնականը հնարավոր է համարում *սեամ* (*սեմ*, *շեամ*, *շեմ*) բառի արևմտակովկայան ծագումը, թեև կարծում է՝ նմանությունը կարող է և պատահական լինել²¹⁸:

Ղարաբաղյան խոսվածքներում *շեմ* հասկացության բառանուն է դիտարկվել *մրդակ* բառաձևը: Այն գործածական է Վարդենիսի, Ճամբարակի շրջաններում Դաշտային Ղարաբաղից բռնագաղթածների խոսքում (Արտանիշ, Ջիլ, Փամբակ):

Սղակ բառի ծագման հավաստիությունն անորոշ է, չնայած Հ. Աճառյանը գրում է. «Գավառական բառեր անունը կուտանք բոլոր այն բառերուն, որոնք օտար լեզվէ մը փոխ առնված չեն, հայերեն են, բայց միևնույն ժամանակ հին մատենագրության մեջ

²¹⁸ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ. ՆԺ), Ե., 1987, էջ 602:

ավանդված չեն, ինչպես դարձաղցոց մղակ «դուռ» բառը²¹⁹: Սակայն մեկ այլ տեղում գիտնականը, ներկայացնելով արաբական փոխառությունները, շինության և շենքի մասեր իմաստայինթեմատիկ խմբում փաստում է նաև մղակ-ը՝ որպես դրան փակ²²⁰: Դարձաղի բարբառում առ այսօր էլ մղակ բառը գործածվում է դրան օղակ իմաստով: Չի բացառվում մղակ բառի արաբերենից փոխառյալ լինելը: Մեր կարծիքով՝ ժամանակի ընթացքում մղակ բառը դրան փակ իմաստից բարիմաստի ճյուղավորմամբ ձեռք է բերել նախ դուռ իմաստը, ապա ժամանակի ընթացքում դուռը և շեմք իմաստային համանիշություն են ձեռք բերել, և բառը ստացել է շեմ իմաստը: Այսօր էլ մղակ բառը փոխաբերացմամբ բառիմաստային մեկ այլ դրսեւրում է ձեռք բերել. Ճամբարակ քաղաքի, ինչպես նաև Դրախտիկ գյուղի խոսվածքներում գործածվում է շեմքին կից բակ իմաստով (Մըղակումը խօսեք հաղ են անըմ):

Գեղարքունիքում շեմ նշանակության բառանուն ենք դիտարկել նաև Ճրիսան-ը: Ճրիսան-ը ծինի բառի բարբառային տարբերակն է: Այն վկայված է Սևանի Գեղամավան և Մարտունու Վարդենիկ գյուղերում: Ծինի բառի առաջնային իմաստն է՝ հնատիպ դրսերի ներքեսում և վերևում հատուկ ելուստ, որ ներքնից հազնում է շեմի փոսիկին, իսկ վերևից՝ դրանդիին: Քանի որ այդ ելուստը եղել է շեմի վրա, հավանաբար այստեղից էլ հայերենի որոշ բարբառներում ծինի-ն իր ճիւան բարբառային տարբերակով իմաստային բնեռացումով ձեռք է բերել շեմ նշանակությունը: Զահուկյանը չի բացառում ծ(η)ինի բառի ուրարտական ծագումը²²¹: Վարդենիսում (որի բնակիչները Դիաղինից են) որպես կիսաբաց դուռ Ճրդլանկ բառանունն է գործածվում, որը նաև շեմ իմաստն ունի (Ճրդլանկի վըրէն է կայնէ): Վարդենիկ գյուղում արձանագրել ենք կըշտանց բառանունը, որը հավանաբար դրան շրջանակն է:

²¹⁹ Հ. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 4:

²²⁰ Հ. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 1951, էջ 199:

²²¹ Գ. Զահուկյան, ՀՀՊ, ՆԺ, Ե., 1987, էջ 439:

Օր՝ Էտա դ՛ուռըն, օր կրխարի կըշտանցին։ Մեր կարծիքով, հիշատակված բառանունը կուշտ (*կողք*) արմատի և -անց վերջածանցի համադրությամբ առաջացած բառաձևն է։

Որմնախորշ: Մենյակում պատի մեջ թողած՝ երեսը բաց պահարան հասկացության բառանուններից Գեղարքունիքում առկա են *ակնատ*, *պարրհան*, *պատուխան*, *դոլար*, *թարկք* բառաձևերը։

Ակնատ-ը բնիկ հայերեն բառ է, որն առաջացել է ակն (աչք) և հատ(ել) բաղադրիչների բառաբարդումից։ Հ. Աճառյանը վկայակոչում է *ակնատ* բառի գավառական ձևերը՝ *ակնատ*, *հակնատ*, որոնք բարբառներում հանդես են զալիս թոշուն որսալու ցանց, ինչպես նաև *ակնատ*՝ պատի մեջ բացված դարան կամ սենյակից սենյակ բացված փոքր պահարան նշանակությամբ²²²։ *Ակնատ* բառաձևը *պատրհան* իմաստով արձանագրել ենք Գավառի Ծովագարդ գյուղում։

Հայերենի բարբառների մի ստվար մասում որմնախորշ իմաստով գործածվել է *պատրհան* բառանունը։ Հ. Աճառյանը *պատուհանի* համար ներկայացնում է երկու իմաստ՝ 1. լուսամուտ, 2. պատի մեջ պահարան։

Հստ Զահուկյանի՝ *պատուհան* բառի հին ձևը *պատուրհան*-ն է՝ առաջացած իրանական *paturhānā* (*pati-frāna*) ձևից²²³։ Լ. Հովհաննիսյանը նշում է, որ *պատուհան* բառի իրանական ծագման փաստարկումներ կան որոշ իրանագետների մոտ։ Գիտնականը ավելի հավանական է համարում Բենվենիստի բացատրությունը։ «Միջին իրանական *pātrās*-ի համարանությամբ՝ հյ. *պատուհան*, տեսնում է միջ. իրանական **pātrfān** < **pāti.pāna*. **frāna*, սնս. *prāna*, «փել» **patifrana* կազմության մեջ տեսնելով «օդանցք, լուսամուտ» իմաստը (*BSL*, 1963, 63), մանավանդ որ **patifrana*-ի համապատասխանությունը ակնհայտ է հատկապես *պատուհանի* *պատրհան*

²²² Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, Ե., 1971, էջ 109։

²²³ Նույն տեղում, էջ 540։

տարբերակի հետ, որն ավելի հին ձև է և պահպանված է նաև արդի որոշ բարբառներում»²²⁴:

Որմնախորշ հասկացության դիմաց պատրիան և պատուհան բառանունները Գեղարքունիքի մարզում փաստված են միքանի տարբերակով: Ղարաբաղի բարբառին բնորոշ պրտրիան (*ա>ը*) բառաձևը առկա է Ճամբարակի խոսվածքում (բնակչության մեջ, ինչպես զիտենք, հին արցախցիներ են): *Պատուխան* (*հ>ի*) հնչատարբերակով է վկայված Գավառի Այրիվանք, Վարդենիսի Մաքենիս և Մարտունու Վարդենիկ գ.-երի խոսվածքներում: *Պաղըրիսան* (բառամիջի խուլի ձայնեղացմամբ) բառաձևը գործածվում է Սևանի Գեղամավան գյուղում (Մակուից Վերաբնակեցվածներ): *Պատըրիսան* (*հ>ի*) հնչատարբերակով բառն առկա է Գավառի Սարուխան գյուղում:

Պատի մեջ թողած, երեսը բաց պահարան իմաստով Գեղարքունիքում առկա է նաև *թարէք* բառանունը, որը վկայված է Գավառի Հացառատ գյուղում:

Ա. Խաչատրյանը, հետաքրքիր դիտարկում կատարելով *թառ* բառի ծագման շուրջ, քիչ հավանական է համարում Աճայշանի այն կարծիքը, որ այն փոխառված է պարսկերեն tar, tarak «զազաթ, ծայր» բառից: Նա *թառ*՝ 1. «դարակ, *թարէք*», 2. «զարիթափ, բարձունք», 3. «ձյան վրա բարձրադիր, երթևեկությունից ամրացված ճանապարհ», 4. «թռչունների հանգրվանելու ձող» իմաստերով բառերում շատ է կարևորում թառի՝ որպես ձյան վրայի ճանապարհի, բարձրադիր (գետնից բարձր) լինելը, որն ել, ըստ բարբառագետի, ընկած է բառի առաջացման հիմքում, և այդ բառերի համար կանխադրում է *ptr նախաձեռք²²⁵:

Պարսկերենից փոխառյալ *դոլար* բառանունը՝ որպես որմնախորչի նշանակելի, գործածական է Գավառի, Ճամբարակի

²²⁴ Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 257:

²²⁵ Հայերենի բարբառագիտական ատլաս, պիակ 3, Ե., 2010, էջ 32-33:

և Մարտունու որոշ խոսվածքներում (Արտանիշ, Գեղարքունիք, Ծովինար գ.-եր):

Երդիկ բառը վկայակոչել են դեռևս 5-րդ դարի մատենագիրները: Բառի ստուգաբանությունը հստակ չէ:

Գեղարքունիքի՝ Դաշտային Ղարաբաղից բռնազարդածների խոսրում այն հանդես է գալիս բառի արմատական երդ բառաձևով (*h̄ēr̄p̄*՝ Վարդենիսի Զիլ գ.), իսկ Սևանի, Գավառի, Մարտունու խոսվածքներում՝ երդ բառային սկզբնաձևից -իկ վերջածանցի համադրությամբ ձևավորված երդիկ բառանվամբ: Գեղարքունիքի տարածքում գործառվում է երդիկ բառանվան *h'ēr̄p̄h̄ik*, *h'ēr̄t̄h̄ik* շնչեղ *h'* ձայնեղով տարբերակը (Գեղամավան, Ծաղկունք), նաև երդիկ բառի հոգնակի հայցական հոլովաձևով բառաձեր՝ *h'ēr̄p̄h̄i* (Վարդենիկ, Վաղաշեն, Լուսակունք), *ēr̄t̄h̄i* (Ծովակ):

Որպես երդիկ հասկացության զուգաբանություն Ճամբարակի Արտանիշ գյուղում փաստված է արաբերենից փոխառված *բուհարիկ* բառանունը:

Առաստաղ: Այս հասկացության բարբառային զուգաբանություններից Գեղարքունիքում գործածական են *առիք*, *օջօրք*, *լամփա*, *պատալօկ* բառանունները: Տարածական ընդգրկումով Գեղարքունիքում ամենազործածականն են *առիք-ը* և *օջօրք-ը*:

Հ. Աճառյանը *առիք-ը* համարում է բնիկ հայերեն բառ՝ հնիս. *stel - դնել, զետեղել, բարձրացնել, կանգնեցնել, ցից սյուն, յենարան* արմատից՝ *առ* մասնիկով²²⁶: Գ. Զահուկյանը *առիք* (*առաստաղ*) բառի ստուգաբանությունը կասկածելի է համարում իմաստային զգալի տարբերության պատճառով²²⁷:

Առիք բառանունը՝ *հառիք*, *հ'առիք*, *հնյորիք* հնյունական տարբերակներով, գործածվում է հիմնականում Գավառի, Մարտունու, Վարդենիսի խոսվածքներում: Գեղարքունիքի մարզի Մշո, Բայազետի խոսվածքներում տան հիմնավոր մաքրություն

²²⁶ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 254:

²²⁷ Գ.Զահուկյան, ՀԼՊ. ՆԺ, էջ 188-189:

իմաստով գործածվում են պատուհառիք կամ պատհառիք, ինչպես նաև ավելիսօրթ, խորթուսուրի անել յուրօրինակ բառաձևերը (օրինակ՝ Վարդենիկ գյուղում կասեն. «Սաբախտան պատուհառիքի էմ»):

Օջորդ: Հ. Աճառյանի կարծիքով՝ *օջորդ* բառը սերտ աղերսներ ունի *աճառ* արմատի հետ, որը, ըստ նրա, արաբական փոխառություն է՝ *iJār* «տանիք»²²⁸:

Միջին հայերենում արդեն գործածվում է *ոճորդ* բառը՝ իբրև առաստաղ:

Առաստաղ հասկացության *օջորդ* բառանունը Գեղարքունիքի մարզում վկայված է Մակուի խոսվածքներում (Սևանի Գեղամավան (*հառիք* բառին զուգահեռ), Ծաղկունք գյուղերում):

Լամիշի: Գ. Զահորկյանը գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները ներկայացնելիս դրանց մեջ առանձնացնում է նաև *լամիշի-ն* (*lmp̥h-)՝ «առաստաղի տախտակ» իմաստով²²⁹:

Լամիշի-ն մեկուսացված գործածվում է Գեղարքունիքի մարզում՝ Ղարաբաղ-Շամախիի միջբարբառի խոսվածքներով խոսող բարբառային միջավայրում (ինչպես օրինակ՝ Փամբակ, Զիլ գյուղեր):

Առաստաղ հասկացության բառանունների մեջ հիշատակված ոուսերեն պատալով բառանունը գրեթե համընդհանուր կիրառություն ունի:

Այսպիսով՝ քննելով Գեղարքունիքի մարզում առկա տուն և տնտեսություն իմաստային դաշտի որոշ բառանվանումներ՝ գալիս ենք հետևյալ եզրակացության.

1. Հայ բարբառները շատ հաճախ անաղարտորեն պահպանում են հնդեվրոպական բառանունները, ինչպես օրինակ՝ *դրանդի, ակնատ, առիք, լամիշա*:

²²⁸ Հ. Աճառյան, ՀԱԲ, հու. 1, էջ 140:

²²⁹ Գ. Զահորկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 283-294:

2. Հիշյալ տարածքում բառանունները երբեմն հանդես են գալիս որոշակի իմաստային տեղաշարժերով, ինչպես դրանդի, մըղակ, ծխնի, ձղլակ բառերի դեպքում:

3. Պատմական հանգամանքների բերումով լեզուն կամ բարբառը անմասն չի մնում փոխառություններից: Գեղարքունիքի մարզի՝ տուն և տնտեսություն իմաստային դաշտի բառանուններից փոխառյալ են համարվում շեմ, օջօրք, պատրիան, բուխարիկ բառանունները:

4. Կան նաև չստուգաբանված և վիճակարույց ստուգաբանությամբ բառեր, ինչպիսիք են՝ երդիկ, առիք, մղակ, թարեք և այլն:

Հասմիկ Խաչատրյան

**ՏՈՒՆ ԵՎ ՀՅՈՒՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ²³⁰**

Ինչպես վկայված է շրջանառվող լեզվաբանական գրականության մեջ, հայերենը տան և նրա մասերի վերաբերյալ բնիկ հնդեվրոպական բառանունները լավ է պահպանել: Դրանցից հիշատակության են արժանի տուն, իտուղ, դուռն, անդ, որմն, ձեղուն և այլն: *Տուն* հասկացության տուն բառանունը հնդեվրոպական լեզուների մեծ մասում տարածված արմատներից է *dem-/dom (հայ. տուն):

Բարբառային հայերենում տուն հասկացությունը դրսնորվում է հիմնականում տուն բառանվամբ և գրեթե համահայերենյան կիրառություն ունի: Քանի որ բառը կարճ է և բարեհունչ բարբառներում համարյա փոփոխությունների չի ենթարկվել՝ չհաշված բարբառային առանձնահատկությունները: Այսպես՝ Ալաշկերտում, Ախալցիսայում, Երևանում, Կարինում բառը վկայված է տուն հնչատարբերակով, Զեյթունում, Խարբերդում, Հաճընում, Համշենում, Նոր Նախիչևանում, Պոլսում, Սեբաստիայում, Տիգրանակերտում խուլի ձայնեղացմամբ՝ տուն>դուն, Ակնում, Ասլանքեկում, Պարտիզակում՝ դիւն, Ազուլիսում, Գորիսում, Արցախում՝ այս խոսվածքներին բնորոշ ու>ο հնչյունափոխությամբ պայմանավորված, տուն>տոն, Սվեղիայում՝ դօն՝ ըստ Աճառյանի²³¹, իսկ ըստ Գ. Հանանյանի՝ Սվեղիայի բարբառի Խորբեկի խոսվածքում՝ դէուն, քանի որ ու ձայնավորին շեշտակիր դիրքում համապատասխանում է կա'մ առաջնային շարքի

²³⁰ Տե՛ս նաև՝ «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2015, էջ 74-80:

²³¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 4, Ե., 1979, էջ 428:

շրթնայնացած օ-ն կա'մ օյ, էու, ոռւ երկրաբառները, օր՝ տուն>դէուն, շուն>շուն, ուղտ>էուդ²³²:

Հետաքրքրական է նաև Աճառյանի դիտարկումը, որում լեզվաբանը, վկայակոչելով Մատին, կարծիք է հայտնում, որ վրացերենը մեզանից փոխառել է տուն արմատը և գործածում է տանուտրորա «ժամանակ տանուտերութեան», սատանտրո «տանուտէր» բառերում: *Տուն* արմատը գործածվել է նաև Բուլանուխի մոտ գտնվող Հասան Կորանի քրդերի խոսվածքում՝ *տրնշէնօ «տնաշեն»* բառաձևով²³³:

Որպես տուն հասկացության բառանուն՝ Ա. Հանեյանի «Տիգրանակերտի բարբառը» աշխատության մեջ արձանագրված է փրնազրուանք բառաձևը²³⁴, որը բնակարան բառի բարբառային հնյունական մի տարբերակ է: Զարկ է նշել, որ հայերենի բարբառներում շատ տարածված ու սովորական են հիշյալ բառանվան բընազրել, բընազրովել բայական բառաձևերը, հատկապես՝ Նոր Բայազետում, Մուշում, Բասենում:

Տուն արմատով հետաքրքիր բառաձև է գործածվում Գեղարքունիքի մարզում՝ Ծովազյուղում (բնակիչները զաղթել են Արծավից 1830-ական թթ.). փրլից տուն, որ նշանակում է գետնափոր տուն:

Հայերենի բարբառները փոքրիկ տուն, խրճիթ իմաստով բառանունների առավել քան հարուստ ներկապնակ ունեն:

1. *տունձիկ*: Այս բառանունը փաստում է Աճառյանը որպես «պզտիկ հիւղակ». Տունձիկին մեջ մարդ մը կը բնակեր (Պոլիս?)²³⁵: Կարծում ենք՝ բառը տուն արմատից է, փաղաքշական-փոքրացուցիչ -ձիկ ածանցով:

²³² Գ. Հանանյան, *Սկեղիայի բարբառը*, Ե., 1995, էջ 38:

²³³ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 428:

²³⁴ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 224:

²³⁵ Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 1041:

2. *հիւղ*: ՆՀԲ-ն բառը ներկայացնում է առանց վկայության, Աճայշանը այն համարում է բնիկ հայերեն բառ և բերում է մատենագրական վկայություններ՝ *հիղ, հուղ, հեղ, հեղք* տարբերակներով։ Հիղը մրգապահացն պարփակ է և ամրութիւն, Իբրև զիղոս մրգապահաց։ Փաստում է նաև, որ Զեյթունում առկա է *հուղ* բառաձնը՝ որպես հողաշեն խրճիթ²³⁶:

Հայերենի բարբառներում առկա *հյուղ* բառանունը՝ որպես խեղճ տնակ, խրճիթ, դրսնորված է նաև *խուղ* բառաձևով։ Հ. Աճայշանը, անդրադառնալով *խուղ* բառին և փաստելով դրա առկայությունը Խարբերդում խրճիթ իմաստով, կարծում է, որ *խուղ*-ը նույն *հյուղն* է։ Իսկ *խուղը* մեկ այլ իմաստով՝ որպես քարաշեն փոքր շենք, որի մեջ մածուն և այլ տեսակ կաթնեղեն են պատրաստում, գործառում է Խոտրօնուրում։ Նույն իմաստով Սասունում առկա է *խրդտուն* (այսինքն՝ *խուղ+տուն*) բառաձնը։ Բաղեջում *խուղ* բառն ունի «զումաներում շինված խրճիթ» նշանակությունը, որից էլ հիշյալ խոսվածքում *խուղվոր*՝ հյուղում ապրող, բառանունը։ Հաճընում *խուղ*-ը այգիներում շինված տնակն է։ Թրքախոս հայերը Աղանայում նույնպես պահել են *խուղ* «հյուղ» բառը։ Պետոյանը ևս Սասունի խոսվածքում արձանագրել է *խուղ* բառանունը՝ *հյուղ, խուց* նշանակությամբ, որը պատրաստում են ամառային արոտավայրերում որպես բնակարան, բայց ծածկում են միայն կանաչ ձյուղերով²³⁷:

Տարկ ենք համարել ներկայացնել Հայոց լեզվի բարբառային բառարանում առկա *խուղ* բառի բառիմաստային զարգացումները, ինչպես նաև նրա տարածվածության սահմանները։ *Խուղ-*
1. Շուլավեր, Շիրակ, Սասուն, Խարբերդ, Մուշ՝ հյուղակ, խրճիթ,
2. Բալու, Հաճըն՝ Այգիների մեջ չորս պյուների վրա հենված 7-8
մետր բարձրությամբ կառուցվածք՝ այգին դիտելու և հսկելու
համար։ 3. Խոտրօնոր՝ Քարաշեն փոքր շենք, որտեղ մածուն,
կարագ, պանիր են պատրաստում, այսինքն՝ կաթնատուն։

²³⁶ Հ. Աճայշան, ՀԱԲ, հ. 3, էջ 99:

²³⁷ Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Ե., 1954, էջ 133:

4. Քղիում տան գետնե հատակը, որը սակայն, մեր կարծիքով՝ կապ չունի հյուղ բառի հետ, այն թերևս հող բառի բարբառային հնչյունական տարբերակն է: 5. Շիրակում՝ արոտավայր, 6. Շիրակում՝ ամառանոց²³⁸:

Շարունակելով հյուղ բառի քննությունը՝ Աճառյանը համարում է, որ հայերենից փոխառյալ է քրդերենում առկա *holik*-ը, որն այնուհետև անցել է Մշո բարբառին *հօլրկ* բառաձևով²³⁹: Այսինքն՝ հայերենից անցել է քրդերենին, քրդերենից՝ բարբառային հայերենին: *Հօլրկ*-ը Նոր Բայազետում, Մուշում ամառանոցի համար սարը բարձրացած նախրորդների հյուղակն է եղել: Խոսվածքների մի մասում էլ *հօլիկ* բառանունը (Երզնկա՝ *հօլիկ*) նաև այգիների մեջ կառուցված փոքրիկ հյուղակ իմաստն ունի²⁴⁰, որը Կարն բարբառի որոշ խոսվածքներում առկա է *հօլնիկ* տարբերակով:

Հօլրկ բառանունը սարվորների համար պատրաստված տուն իմաստով այսօր էլ գործածական է Գեղարքունիքի մարզի մի շարք խոսվածքներում, քանի որ նրանց մի մասը Մուշի և Բայազետի բարբառները կրողներն են (Նոր Բայազետ՝ Նորատուս, Գեղարքունիք, Սարուխան գ.-եր, Մուշ՝ Վարդենիկ, Չորավոյու, Ծակքար գ.-եր): Սակայն հարկ է նշել, որ հիշյալ տարածքների որոշ խոսվածքներում (Վարդենիս, Ծովակ, Լճավան) *հօլրկ*-ը գործածվում է նաև բույն իմաստով (շան *հօլրկ*, խավի *հօլրկ*):

Խուղ բառի բարբառային տարբերակ է նաև *խուլակ* բառանունը, որը փաստված է ՀՀԲԲ-ում և առկա է Խոտքուրում *խուլազ*, Զավախքում *խուլակ* հնչյունական տարբերակներով, որի նշանակությունն է հյուղակ, տնակ, խրճիթ. Մէ խուլակը շինէ, մէշն է մըտէ²⁴¹:

²³⁸ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Բ, էջ 378:

²³⁹ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, հ. 2. Ե. 1977, Ե. 1973, էջ 99, էջ 416-417:

²⁴⁰ Դ. Կոստանդնյան, Երզնկայի բարբառ, Ե., 1979, էջ 154:

²⁴¹ ՀԼԲԲ, հ. Բ, Ե., 2002, էջ 377:

Ըստ Հ.Աճառյանի՝ հայերեն խուղ բարից են վրացերեն խուղա, խուղուլա «հյուղ, խրճիթ, փոքրիկ խանութ» բառերը: Փաստելով Խոտքօւրում առկա խուղագ և Ախալքալաքում խիւլակ՝ հյուղակ, տնակ, հովվի խրճիթ, բառերը՝ լեզվաբանը կարծում է՝ դրանցում լ ձայնորդի առկայությունը ենթադրել է տալիս, որ այդ բառերը նոր ժամանակ հետ առնված փոխառություններ են, այսինքն՝ դարձյալ հայերեն բառը, այս անգամ ել վրացերենից միջնորդավորված կերպով, դարձյալ անցել է մեր բարբառներին²⁴²:

Դ. Կոստանդյանի «Երգնկայի բարբառում» արձանագրված է խուզուլ բառանունը՝ այզիների ու բանջարանոցների մեջ շինված հյուղակ նշանակությամբ²⁴³, որը, կարծում ենք, խուղագ բառի հնչյունական մի տարրերակ է:

Գ. Զահուկյանը խուղ (*հիւղ*)-ը բնիկ հնդեվրոպական բառ է համարում *khu-lo - *(s)keu - «ծածկել, փաթաթել» արմատից: Ըստ նրա՝ հ.-ե. *k-*h* (*ku)-ի դիմաց սովորական *p*-ի կողքին՝ նաև *ju*, որը պետք է զա *kh-ով տարբերակից՝ *p̥hi* (*kēuo), և խուղ (*khu-lo), այլև *հիւղ* (*s)keu)- ծածկել, հմմտ. հ. հնդկ. *skāutī* - ծածկում է, հ. իսլ. *cūl* անկյուն, ապաստան²⁴⁴:

Հյուղ բառի սոուզաբանության հետաքրքիր դիտարկում է անում Գ. Ղափանցյանը: Նա կարծես մերժում է հայերենի խուղ և նրա երկվորյակ *հիւղ* բառերի, ինչպես նաև *għi* (տան ծածկը) և *p̥hi* (տան կամ քարանձավի վերի դուրս ցցված մասը) բառերի հնդեվրոպական ծագումը, որը, ըստ նրա, մոլի հնդեվրոպաբանները նախալեզվի *sgu* կամ *gu* ծածկել արմատի հետ են կապում:

²⁴² Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 417:

²⁴³ Դ. Կոստանդյան, Երգնկայի բարբառը, էջ 156:

²⁴⁴ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ. ՆԺ), Ե. 1987, էջ 253, Հայերեն սոուզաբանական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 2010, էջ 347:

Ըստ Ղափանցյանի՝ հնագույն ժամանակ բառը եղել է երկու ձևով. մեկը՝ *xula*, որից էլ *խուղ-ը*՝ Բաղեշի, Խարբերդի, Կիլիկիայի, Խոտքուրի և Կարինի (Ախալքալաք) խոսվածքներում, որն անցել է նաև վրացերենին՝ ունենալով տարնմանությամբ և *հիւղ* տարբերակը: Մյուս ձևն է *հիղ* կամ *հեղ*, որը համեմատելի է խեթերեն *hila* կամ *hēla* բառաձևերի հետ, ունի սկզբում դրված «տուն» որոշիչը և նշանակում է «տաճարի գավիթը կամ նախասենյակը»: Գիտնականը կարծում է, որ հայերենում *հեղինակ*, *հեղնակ*, *հեղիւնակ*, *հիւղանակ*, *հիւղենակ* տարբեր գրությամբ ձևերը առաջացել են *հեղ* կամ *հիւղ* արմատից՝ «առաջնորդ, գլխավոր, վարիչ» նշանակությամբ, սկզբում ունեցել են «տաճարի գավթում գտնվողը», այսինքն՝ ուխտավորների առաջինը, առաջնորդը իմաստը: Ապա ենթադրում է, որ *խուղ* (*xul*) ձևը բալայերեն է, որովհետև գործածվում է այդ ցեղերի տարածման վայրերում՝ Խարբերդ (Բալահովիտ), Բալու, Բաղեշ, և այս տեղերից գաղթած Կիլիկիայի հայերի շրջանում (Ձեյթուն, Հաճըն): Խոտքուրցիները, ինչպես և ջավախիքիները և վրացիները, *խուղ-ը* փոխ են առել բալայացիներից, որոնք մասամբ գնացել են Քուր և Արաքս գետերի հովիտներով: *Հիւղ* կամ *հեղ* (*hil-//heł*) ձևը անցել է հայասացիների միջոցով, և ըստ գիտնականի՝ շատ հետաքրքրական լեզվաշխարհագրական երևույթ է այն, որ Տարոնում, Բագրևանդում, Վասպուրականում և Այրարատում այդ բառերը բացակայում են²⁴⁵: Մեր կարծիքով՝ Ղափանցյանի այս դիտարկումը խիստ ուշագրավ է և խորհելու առիթ է տալիս:

3. Բարբառային հայերենում փոքր տուն, խրճիթ հասկացության բառանուններ են դիտարկվել *քոլիկ-ը* և *քօխտիկ-ը*, որոնք պարսկերեն *kox'* տնակ, արմատից փոխառություններ են համարվում: *Քոլիկ-ը* և *քօխտիկ-ը* Մուշում, Գյումրիում և Բուլանուխում պարտիզանի հյուղակ կամ ընդհանրապես աղքատիկ խրճիթ

²⁴⁵ Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., 1961, էջ 181:

²⁴⁶ Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Ե., 1945, էջ 583:

նշանակությամբ է գործածվում: *Քօխստիկ* բառաձևը արձանագրել է նաև Ս. Ամատունին. «Գրիուկ, հորթոց, մառան, քօխստիկ ամենն էլ թամամ են: Թազավորի տղա, դու իմ *քօխստիկ* ի՞մալ մտնաս»²⁴⁷: Աճառյանի կարծիքով՝ *քօլիկ*-ը նույն *քօղտիկն* է, որը Ալաշկերտի խոսվածքում լեռների մեջ շինված հյուղ է նշանակում²⁴⁸: Բառը վկայված է նաև Խոյի և Մակուի խոսվածքներում և այզիներում պահապանի համար պատրաստված հյուղ նշանակությամբ է գործածվում: Ըստ Աճառյանի՝ Ն. Բայազետում *քօղտիկը* մառան հասկացության նշանակելի է և աղերսներ ունի *գողտիկ* բառի հետ. վերջինս Ազայում գործածվել է *պահարան* կամ *մառան* նշանակությամբ, որի մեջ հաց և ուրիշ ուտելիք են պահել²⁴⁹:

4. *Քօնձախ*: Բարբառների բառային հնաբանությունները դիտարկելիս Գ. Զահուկյանը, գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատների շարքում ներառում է *քօնձախ* բառանունը: Ի դեպ, զիտնականը ենթադրաբար *քօնձախ* բառին առնչակից է համարում *քռնձոտ*, *քնձոտ* (Երևան), *քնծլոտ* (Պոլիս), *քնձոռոտ* (Երևան, Ղարաբաղ, Նոր Նախիջևան) բառերը՝ «խեղճ, ողորմելի նշանակությամբ», և որոնք կապում է h.հնդկերեն khanati «քանդում է, փորում է», հայ.՝ իրան. քանդել բառերի հետ՝ այս բոլորը բխեցնելով h.-ե. (s)k(h)ed-, (s)k(h)e-n-d- «Ճեղքել, պատոել, ցրել» արմատից²⁵⁰: *Քօնձախ* բառանունը *ավերված, քարուքանդ եղած սոուն* իմաստով է գործածվում նաև այսօր Մուշի, Նոր Բայազետի, Մակուի խոսվածքներում: Ս. Ասատրյանը «Ուրմիայի բարբառում» բառը փաստել է որպես նեղ, անձուկ խրճիթի նշանակելի²⁵¹:

²⁴⁷ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Էջմիածին, 1912, էջ 354:

²⁴⁸ Հ. Աճառյան, ՀԳԲ, էջ 1120-1121:

²⁴⁹ Հ. Աճառյան, ՀԳԲ, էջ 248:

²⁵⁰ Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն (այսուհետև՝ ՀԲՌ), Ե., 1972, էջ 311:

²⁵¹ Ս. Ասատրյան, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, Ե., 1962, էջ 329:

Որպես *հյուղ* հասկացության բառանուն՝ բարբառային հայերենում առկա է նաև *ծրղաղակ* բառը: Ղարաբաղում, ինչպես նաև Կարձևանում բառն ունի թոշուն որսալու կամ ձուկ բռնելու համար բարակ ձյուղերով շինված ծուղակ խմաստը, որը, ի դեպ, Ղարաբաղում գործածվում է նաև փոքրիկ, խղճուկ տուն, խրճիթ նշանակությամբ: Բառը վկայում է նաև Աճառյանը²⁵²: Ա. Սարգսյանը «Ղարաբաղի բարբառի բառարանում» ևս արձանագրել է *ծրղաղակ*/ծրղարակ բառանունը, որը, ինչպես հիշատակեցինք, նախ բարակ ձյուղերից հյուսված փոքրիկ կողովանման հարմարանք է, որով թոշուն կամ ձուկ են որսում. «Ծրղաղազր մին դուշ ա ըղնում», և 2. փոխաբերական խմաստով նաև՝ անշուք, փոքրիկ տնակ. «Մին ծրղարակ ա շինալ, մաշին ինքըն ա կընէգ ը պարում ըն»²⁵³:

Զահուկյանը *ծողակ*, *ծաւղակ*, *ծաղուկ*, *ծղաղակ*, *ծաղալակ*, *ծղուղակ* բառաձևերը բխեցնում է *ծողակ* բառից, որի խմաստն է որոգայթ, թակարո: Բարի ծագումն անհայտ է համարում, և նրան քիչ հավանական է թվում բարի աղերսը h.-ե. *geu-1 ձևից՝ *geu-«ծուկ» արմատի քմայնացած *g'eu- տարբերակից²⁵⁴:

Տէկ: Արմեն Սարգսյանի բառարանում այգիներում փոքրիկ հյուղակ խմաստով Ղարաբաղում վկայված է *տէկի* բառանունը (Մէր խաղվէն բաղումը մին տէկի ա իլլալ, բաղվանչին ըտեղ ար քօն ինո՞ւ): Ինչպես Ղարաբաղի բարբառում, այնպես էլ այլ բարբառներում *տէկի*-ը նաև այլ հասկացությունների նշանակելի է, ինչպես օրինակ՝ 1. ձվածև բարձ՝ դափ, որով թոնրի կողերին են կացնում բացված խմորը (*Տէկիր* ըղնում ա թուրնէն մաշը, երվում), 2. Օրորոցում երեխայի տակը դրվող բարձ, մեջտեղը անցրով (Լոլակը *տէկիին* մաշին ըն տինո՞ւ): Բառը գործածական է նաև հետևյալ դարձվածքներում. *Տէկին* տինիլ, պատան տալ, այսինքն՝

²⁵² Հ. Աճառյան, ՀԳԲ, էջ 520:

²⁵³ Ա. Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013, էջ 308:

²⁵⁴ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 368:

գործը տեղը տեղին՝ կարգով՝ ճիշտ կատարել: Ուստա Կո՛քին ամմէն հինչը լավ ա անում, տէփին ա տինո՞մ, պատան տամ: Տէփը ձրդած՝ աշխույժ, համարձակ. Տէփը ձրդած դավալ ա մէր Խօրէնը²⁵⁵:

Ի դեպ, ՀԼԲԲ-ում տէփը ևս արձանագրված է մի քանի իմաստներով: Բացի վերը նշված իմաստներից՝ այն ունի նաև տեփուր, փայտե կլոր ափսե կամ սկուտեղ, ինչպես նաև ժամանակավոր ապրելու տնակ նշանակությունները. Ամեռնը տավարը պահում ընք սարէն, մունք ալ ապրում ընք տէփումը: Բառարանում Գորիսի խոսվածքի համար ևս վկայված է տէփը՝ որպես այզեպանի փոքր հյուղակ²⁵⁶:

Գ. Զահոնկյանը գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները քննելիս բերում է մի շարք բառեր, որոնցում հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների բառային իմաստները զգալիորեն շեղվում են: Այս բառերի ցանկում նա ներառում է տէփ (depth-) (Դրֆ.), տմփոց (*demph?) (Վան) լավաշթիփ, բացված խմորը թռնրի կողերին խփելու ձվածն բարձ (Դրֆ.), տէփ «երեխայի տակ դրվող բարձ» (Դրֆ.), «թերևս նաև տէփ» «այզու մեջ շինված հյուղակ, քոլիկ, քողտիկ» բառերը՝ համեմատելով հայ. տոփել հուն. ծέփա «ձմուել», սերբ. děpiti «խփել, հրել» բառերի հետ (հ.-ե. depth- «տրորել, խփել ձմուել»)²⁵⁷:

Orys: Հայերենի բարբառներում առկա է նաև *օրս* բառանունը՝ որպես ամառանց կամ ամառանոցում մի ընտանիքի հարկաբաժնը (Կարձևանում, Մակուում, ինչպես նաև Գավառի խոսվածքներում՝ *հօրս* տարբերակով): Թուրքերեն փոխառություն է *oba-*ն՝ մեծ վրան իմաստով: Բառն ունի նաև քաղաքից դուրս մի սրբի ուխտատեղի նշանակությունը: Թէլէթի Ս. Գեորգի *օրսային* ես Էլ Էլ գնացել²⁵⁸:

²⁵⁵ Տէ՛ս Ա. Սարգսյան, նոյն տեղում, էջ 717:

²⁵⁶ ՀԼԲԲ, հ. Զ, էջ 174:

²⁵⁷ Գ. Զահոնկյան, ՀԲՆ, էջ 301-302:

²⁵⁸ ՀԼԲԲ, հ. Է. , Ե., 2012, էջ 160:

Ցուրդ: Թուրքերենից փոխառյալ բառ է, որը բնակատեղի, տուն և վրանատեղի (յայլաղում) իմաստներով գործառում է Արարատի, Շամիսորի, Ուրմիայի, Խարբերդի, Արարկիրի (Գամիրք), Վանի խոսվածքներում, որը, սակայն, ավելի հաճախ գործածվում է անեծքների մեջ կամ որպես կշտամբանքի արտահայտություն: Այսպես՝ Ցուրդը բրլի (կամ՝ ըբբլի), Մըսրա Մելիքի յուրդ ու յուվէն (բույն) քանդվի²⁵⁹ և այլն:

Քարբառային հայերենում մի շաբք այլ բառանուններ են վկայված փոքրիկ, անշուք խրճիթ իմաստով, որոնց ծագումը հայտնի չէ: Այսպես՝ կանաչը Սասունում՝ հյուղ, տնակ²⁶⁰, մօղօլ՝ Կարինում (Շիրակ)` խրճիթ, նեղ, անձուկ բնակարան, նեղ անցք, պրզլօց, բըզլօց Վանում, Մուշում, քըցուլակ՝ Ղազախում և Օշականում՝ նեղ, անձուկ, անփառունակ տնակ: Կոկալ-ը, ըստ Աճառյանի, Ղազախում նախ շուք, ստվերուտ տեղ է նշանակել հետո նաև՝ խրճիթ: Ս. Ամասունին բերում է բարբառային հետևյալ օրինակները. «Էդ գօրտան բիւն կոկալնիդ էլ զիսներիդ փուլ կածեմ: Մնացած կոկալն էլ զիսին բրիշակ կանի: Գնաց իրան քարուքանդ կոկալը»²⁶¹: «Եասավուլին որտե՞ղ պլիեմ, մի քըցուլակ ունենք, ընտէդ էլ մենք ենք տեղավորվըմ»²⁶²:

Այսպիսով՝ քննելով տուն հասկացության բառանունները՝ գալիս ենք այն եզրակացության, որ հնդեվրոպական տուն բառանունը համահայերենյան կիրառություն ունի: Այլ է պատկերը փոքրիկ տուն, խրճիթ, այգեպանի տնակ իմաստով բառանունների դեպքում: Այս բառերի շարքում առկա են և՝ բնիկ հայերեն բառեր, ինչպես, օրինակ, հյուղը, քօնձախը, տէփը, և՝ փոխառյալ ու օտար բառեր՝ քօլիկ, քօխտիկ, յուրդ և այլն, ինչպես նաև չստուգաբանված ու փոխաբերացմամբ առաջացած բառանուններ, ինչպես՝

²⁵⁹ ՀՀԲԲ, հ. Դ., Ե., 2007, էջ 122:

²⁶⁰ Վ. Պետոյան, Սասունի բարբառը, էջ 135:

²⁶¹ Հ. Աճառյան, ՀԳԲ, էջ 587, Ս. Ամասունի, ՀԲԲ, էջ 353:

²⁶²Տե՛ս Ս. Ամասունի, նույնը:

ծրղաղակ, մօղզօլ, կօկալ և այլն: *Տուն* հասկացության բառանունները քննելիս շատ հաճախ առնչվում ենք նույն բառանվան՝ բարբառներում առկա բառիմաստային տարբեր դրսնորումների հետ, օրինակ՝ *տեփի, ծրղաղակ, խուղ* բառերի դեպքում: Հետաքրքրական է նաև, որ տուն հասկացության որոշ հայերեն բառեր փոխառվել են հարևան ժողովուրդների կողմից, այնուհետև բարբառների միջոցով վերադարձել են, ինչպես՝ *խուղագ, հօլրկ* և այլն:

Հասմիկ Խաչատրյան

**ՓՈՂՈՑ ԵՎ ԱՐԱՀԵՏ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՌԻՄԱՍՍԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ²⁶³**

Գրական հայերենում որպես «ոտքով բացած նեղ ձանապարհ» գործածվում են *արահետ, շավիդ, կածան բառերը*:

Բնիկ հայկական ծագում ունեցող *արահետ* և ասորական փոխառություն համարվող *շավիդ* բառաձևերը հայերենի բարբառներում մեզ չեն հանդիպել:

Միայն Հ. Աճառյանն է Մուշի բարբառի համար արձանագրում *շավիդ* բառի *շավի* գավառական բառաձևը²⁶⁴:

«Նեղ անցք, նեղ ձանապարհ, արահետ» իմաստով հայերենի բարբառներում գործածական է *կածան* հնդեվրոպական ծագումով բնիկ հայերեն բառը, որ հնիս. *gʰāg- «զնալ, գալ» արմատից է սերում²⁶⁵:

Կածան բառանունը՝ որպես նեղ ձանապարհ, *կրէծան* հնչյունական տարբերակով գործածական է Տավուշի մարզի որոշ խոսվածքներում, Կրգենում: Հ. Աճառյանը բառը փաստում է նաև Ղարաբաղի (կածան, կածան), Գորիսի (կրէծան) խոսվածքներում:

Կածան-ը բառարաններում ներկայացված է մի քանի իմաստով. «1. Նեղ անցք, կիրճ լեռների կամ անտառների մեջ, 2. ձյունի մեջ բացված արահետ, 3. փլար. թուրքերի գլխին ածիլված նեղ շերտ, որ ճակատից մինչև ծոծրակն է գնում, 4. Ղարաբաղում, Ղարադա-

²⁶³ Տե՛ս՝ «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի գեկուցումներ, «Ասողիկ» հրատ., Ե., 2014, էջ 61-68:

²⁶⁴ Հ. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե. 1977, էջ 506:

²⁶⁵ ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 487, Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 2010, էջ 374:

դում, Թավրիզում, Շամախիում կածանը «համառօտեալ է» նաև ծա'նի «թուրք» միայն իբրև ծածկալեզու»²⁶⁶:

Հ. Աճառյանը «Հայերէն գաւառական բառարանում» կածան բառանվան դիմաց Ղազախում, Ղարաբաղում «կիրճ» իմաստն է արձանագրում, ինչպես նաև «աղվեսի շատ նեղ ձամփա», իսկ Ղարաբաղում՝ «փախցնովի ապրանքների բեռնակրի հետք»²⁶⁷:

Որպես «ձյան վրա բացված արահետ» հայերէնի բարբառներում առկա է թառ բառանունը: «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում նախ բերված է թառ բառի ընդհանուր իմաստը, որն է՝ «հավերի թառը», այնուհետև նշված են թառի այլ իմաստները՝ «1. Ար., Ղր., Կր., Սայլի թափքի վերին երկու հորիզոնական ձողերից յուրաքանչյուրը, ինչպես նաև ամբողջ թափքը, 2. Երգնկա. Ախոռատանը մեծ թախտի նման հարմարանք ծառաների համար, 3. Ղր. (Ղազախ) Սայլի առջևի եռանկյունաձև մասը, որի տակ կախված է շարժական սնաքը (մորուքը), 4. Արարատյան. Զարիվեր, վերելք, ոլիք, 5. Կր. Ձյան վրա բացված արահետ, որ երբեմն երթևեկության հետևանքով շատ է պնդացած լինում. օր՝ Հանգստացած ձիերը թառը գտած... ձամբան են կտրում (Զավախեցի), 6. Ղր. (Զնգ.) Ժայռափոր կառուց (Օղու նան էշը... քընում են, քընում, հըսնում մի մէծ թառի, նի մըտնում մէշը)»²⁶⁸:

Բարբառների բառային հնաբանությունները ներկայացնելիս Գ. Զահուկյանը փաստել է թառ բառանունը՝ որպես «ձյան արահետ, ոտնահետքերով առաջացած ձյան ձամփա». բառն առկա է Ալաշկերտի խոսվածքում: Ըստ գիտնականի՝ այն «հ.-ե.

²⁶⁶ Հ. Աճառյան, նույն տեղում:

²⁶⁷ Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 540:

²⁶⁸ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Բ, Ե. 2002, էջ 80:

ter -«անցնել, հաղթահարել, անցկացնել, փրկել» արմատից առաջացած բառանուն է»²⁶⁹:

*Թառ բառի ծագման մեկ այլ վարկած է առաջարկում բարբառագետ Ալ. Խաչատրյանը: Նրա կարծիքով՝ թառ բառը՝ «թոշունների հանգրվանելու ձող» իմաստով, թառամել բառի հետ կապելը իմաստաբանորեն չի արդարացվում: Իհարկե, նա վկայակոչում է նաև Գ. Զահոնիյանի ստուգաբանությունը, սակայն կարծում է, որ բառարանագիրները չեն նշում թառ-ի՝ որպես «ձյան վրայի ճանապարհի, բարձրադիր (գետնից բարձր) լինելը», որը, ըստ նրա, շատ կարևոր է և ընկած է բառի առաջացման հիմքում: Բերում է նաև թառ՝ «զարիթափ, բարձունք» իմաստով բառը, որը Հ. Աճառյանը համարում է պյուկ. փոխառություն tar, tarak «զազաթ, ծայր» բառից, և համարում, որ իմաստային առումով դրանք դարձյալ իրար չեն համապատասխանում: Փաստում է նաև թառ՝ «դարակ, թարեք», թառ՝ Զահարմահալի խոսվածքում՝ «քարձից կախված քսակ» իմաստով բառանունները: Ալ. Խաչատրյանը, ներկայացնելով հիշյալ բոլոր բառերը, որոնք բառարաններում մասնակի բացառություններով տեղ են գտել միևնույն բառահորդվածի տակ, այսինքն՝ դիտվել են միևնույն բառի տարրեր դրսևորումներ և ոչ թե համանուններ, կարծում է, որ դրանք ունեն մեկ ընդհանուր բաղադրիչ, որն է՝ «քարձրում գտնվող, վեր բարձրացած»: Այստեղից էլ եզրակացնում է, որ դա ել հենց այն նախնական իմաստն է, որ հիմք է դարձել բոլոր բառերի առաջացման, և այդ բառերի համար կանխադրում է *ptr նախաձեր²⁷⁰:*

Ս. Ամատունու բառարանում ևս արձանագրված է թառը, որը Աշտարակում «զարիվեր, բարձր տեղ» իմաստով է գործածվել:

²⁶⁹ Գ. Զահոնիյան, Հայ բարբառագիտության ներածություն (այտուետն՝ ՀԲՆ), Ե., 1972, էջ 305:

²⁷⁰ Հայերենի բարբառագիտական ատլաս, պյուկ 3, Ե., 2010, էջ 33:

«Ժողովուրդն էլ տերտերների քամակիցը Մուղնու թառովը (զառիվեր) վիրս գնացին: Կրնկեց դեպի Մուղնու թառը»²⁷¹:

Ա. Սուրիապանի բառարանում կածան բառանվան բառագուգաբանություն է դիտարկված նաև բարբառային կօպար -ը²⁷²: Կոպար բառը առկա է «Նոր հայկացան բառզբում»²⁷³ առանց վկայության, գրաբարյան նշանակությունն է «սահման», և այն ծագումնաբանորեն, ըստ ՆՀԲ-ի, կապվում է կոպ բառի հետ (ՆՀԲ, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1117): Միջին հայերենում ևս վկայված է այս բառը՝ «որոշված սահման, եզրագիծ» իմաստով: Հայ մատենագրության մեջ փաստված են հետևյալ օրինակները. «Գառնոյ մին կոպարն այս է», «Չորեք անկիւնի քարի նրշան է զկոպարսն» և այլն²⁷⁴:

Հ. Աճառյանը վկայակոչում է, որ Ղարաբաղում և Ղարաքիլիսայում առկա է կոպար բառանունը՝ կօպսո, կօպար հնչաձևերով, որոնք ունեն հետևյալ նշանակությունները՝ «1. ցեխի կամ ձյան վրա բացված նեղ ձամփա, որը շատ գնալ-գալուց ամրացված է լինում, 2. անտառի մեջ նույնպիսի նեղլիկ ձամփա, որը առաջացել է շատ երթեեկելուց (ՀԳԲ, էջ 593-594): Առկա է նաև կոպար անեղ դարձվածային արտահայտությունը, որն ունի շատ հաճախել միշտ մի տեղ գնալ-գալ իմաստը: Ձեր տունը կօպար է արել»²⁷⁵:

Գ. Զահուկյանը կոպար բառի ծագումն անհայտ է համարում, փաստում է նաև նրա բարբառային հնչաձևերը՝ կօպառ, կուպար, կօփար և բերում է նրա «սահման» և բարբառային «արահետ, կածան» իմաստները (ՀՍԲ, էջ 420):

²⁷¹ Ս. Ամառունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 204:

²⁷² Ա. Սուրիապան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967, էջ 297:

²⁷³ Նոր բառզբուրդ հայկագետն լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836:

²⁷⁴ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Ա, Ե., 1987, էջ 406:

²⁷⁵ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 2, Ե, 1944, էջ 471:

Ս. Ամատունին ևս հիշատակել է կուպար բառանվան կուպար հնչատարբերակը, որն առկա է Գանձակում և Բանանցում, ունի «ձյան և ջրալի ցեխի մեջ ոտքով բացված ճանապարհ» իմաստը²⁷⁶: Բանանց գյուղի բարբառախոս մի բնակչից մենք գրառել ենք հետևյալ օրինակը. «Ծո՛նի վրա կուպար արավ, վրա բախէքը շկօլ քընան»:

Կածան, արահետ հասկացության մեկ այլ բառանուն է դիտարկվել Ճրդա-ն, որը Հ. Աճառյանի բառարանում վկայված է Ճրդա դրափոխությամբ (Մաշկերտ). բառի բուն իմաստն է «մեծ պողոսայից բաժանվող նեղ ճանապարհ» (ՀԳԲ, էջ 722):

Ա. Սուրբիայանը ՀԼՀԲ-ում որպես բարբառային բառ՝ արահետ բառանվան բառազուգաբանություն է հիշատակել նաև թիլիկը: Հիշյալ բառանունը թերևս կապ ունի թիլ բառի հետ, որը, ըստ Ստ. Մալխասյանցի և «Միջին հայերենի բառարան»-ի (ՀԲԲ, հ. 2, էջ 106), արաբական փոխառություն է. tall, հոգն.. tilal, որի նշանակությունն է «բլուր, հողակույտ»: Հ. Աճառյանը համարում է հետին ժամանակի բառ, որ մի քանի անգամ գործածել են Ս. Ասորին, Ս. Անեցին և Ս. Այրիվանեցին. այսպես. «Սա (Շամիրամ) արար զիոնակոյտ բլուրադ, զոր կոչեն թիլս», «Շամիրամ շինեաց թլեր բլուր ի հողոյ կուտեալ ամրոց, բայց մեք զտաք պատճառ թլացացդ» (պատմում է, թե Աստծոյ հրամանով մեհեանները կործանուեցան, կուտքերը գետնի տակ անցան և նրանց վրայ բլուրներ ձևացան») (ՀԱԲ, հ.2, էջ 183):

Մեր կարծիքով՝ թիլ բառը հազիվ թե արաբական փոխառություն լինի, որովհետև դեռևս Ազարանգեղոսի «Հայոց պատմության» մեջ հիշատակ վում է Թիլ անվանումով ավանի մասին. «Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին և քանդէին զՆանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլ յավանի»²⁷⁷: Մանավանդ որ

²⁷⁶ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 358:

²⁷⁷ Ազարանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983, էջ 442-443:

ՆՀԲ-ում և Զախօչախյանի բառարանում *թիլ* «ավան, գյուղ» բառը կապվում է տեղական *Թիլ* հատուկ անվան հետ:

Արտողի, խոտոր, այսինքն՝ «կարծ ճանապարհ» իմաստով Սեբաստիայում Կ. Գարիկյանը փաստել է *գեղվրա* բառաձևը (Շիտակեն Էկաք, թե՝ գեղվրա)՝²⁷⁸: Այսօր էլ Կարն բարբառի որոշ խոսվածքներում զուրծունակ է *գեղվրա* բառանունը՝ «ծուռ, խոտոր, չմտածված» իմաստով, իբրև մարդուն բնորոշող հատկանիշ, օրինակ՝ «Գեղվրա մարդ է, գեղվրա կիսուի», այսինքըն՝ առանց մտածելու քայլեր անող մարդ է, չմտածված է խոսում:

Հ. Մուրադյանը Կարձևանի բարբառում փաստում է *չպիլիս* «արահետ» իմաստով բարբառային բառանունը՝²⁷⁹:

Բառիմաստային յուրօրինակ նրբերանգներ է դրսնորում *վոտաց ճանպա* բառանունը: Բարբառների գերակշռող հատվածում հիշյալ բառաձևը ունի *արտաքնց* նշանակությունը, իսկ Գեղարքունիքի Վերին Գետաշեն, Լիճք և այլ գյուղերում այն գործածվում է «կածան, նեղ ճանապարհ» իմաստով:

«Շավիդ, սարի լանջի ճանապարհ» նշանակությամբ Սասունի բարբառում առկա է նաև *բարուար* բառանունը, իսկ «լայն ճանապարհ» իմաստով՝ *դրրա-ը*²⁸⁰: «Հայ ժողովրդական հերիաթներում» Մուշում վկայված է *քամանդ* բառանունը՝ «լեռան վրայով արահետ» իմաստով՝²⁸¹:

Եզնիկ Կողբացու հայտնի վկայությունից երևում է, որ դեռևս 5-րդ դ. սկսած՝ միևնույն իմաստները բարբառային զանազան տարածքներում արտահայտվել են տարբեր բառերով: Սրան հակառակ՝ եղել են նաև միևնույն բառի իմաստային տարբեր գործածություններ:

²⁷⁸ ՀԼԲԲ, հ. Ա, Ե., 2001, էջ 236: **Կ. Գարիկյան,** *Բառզիրք Սեբաստիայ զաւառակեզուի*, Երևան, 1952, էջ 136:

²⁷⁹ Հ. Մուրադյան, Կարձևանի բարբառ, Ե., 1960, էջ 227:

²⁸⁰ Վ. Պետոյան, Սատունի բարբառ, Ե., 1954, էջ 115:

²⁸¹ Հայ ժողովրդական հերիաթներ, հ. 8, Ե., 1977, էջ 880:

Սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք անդրադառնալ նաև փողոց, աղազ բառանվանումների՝ հայերենի բարբառներում առկա բառիմաստային տարբեր դրսնորումներին:

Բնակավայրի տների երկու շարքի միջև թողնված ազատ տարածությունը կամ ճանապարհը երթևեկության համար փողոցն է: Հ. Աճառյանը փող արմատը՝ «նեղ անցք» իմաստով, «Ճոխ ածանցներով աճած» մի արմատ է համարում, որի նախնական «նեղ անցք» նշանակությունից փոխարերաբար առաջացել են «կոկորդ, տան մեջ սրահի առջևի անցք, միջանցք, այգիների միջև նեղ ճամփա, խողովակ, ջրի փողրակ, շեփոր» և այլ իմաստները: Այս նշանակություններից էլ կազմվել է փողոցը՝ «քուչա»-ն, որի սկզբնական նշանակությունն է եղել «սենյակների առջևի «միջանցքը» կամ երկու շարք կանգնած մարդկանց միջև բաց թողնված տարածությունը», որով շրադիր անձը պիտի անցնի: Կա նաև փողոց տալ արտահայտությունը՝ «ճամփա բանալով երթալ» նշանակությամբ (ՀԱԲ, հ.4, Ե., 1979, էջ 512-513):

Ըստ Գ. Զահուկյանի՝ իին հայերենում չկա «փողոց» նշանակող հատուկ բառ, նա փողոցը անհայտ ծագման բառ է համարում²⁸²:

Տայերենի բարբառներում ևս առկա է *փողօց* բառանունը, որը, սակայն, ավելի հաճախադեպ կիրառվում է «աղբանց» իմաստով: Այս բառանունը եիշալ իմաստով կիրառվել է Վանի, Մուշի, Շատախի, Սասունի, Նոր Բայազետի, Խոյի տարածքի խոսվածքներում *փուլոց*, *փողոց* հնչածներով, Երզնկայում՝ *փողան* բառակազմական տարբերակով, իսկ Սասունի Մոտկանում՝ *փողան*՝ նաև առաջնալեզվային անոնց տարբերակով: *Փող* արմատական բառաձևով հանդես է զայխ Ղարադաղի Ուրգություն, Վինան, Ղասմաշեն, Սարդու, Խանագահ գյուղերում՝ դարձյալ «աղբանց» իմաստով: *Փողոց* բառանունը բարբառներում գործա-

²⁸² Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ ՆԺ), Ե., 1987, էջ 266:

ծական է եղել նաև «արտաքնոց» իմաստով, և բառի տարածական շառավիղը նույն սահմաններում է, ինչ աղքանոց-ինը: Այսինքն՝ հիշյալ տարածքներում հիմնականում աղքանոցն ու արտաքնոցը նույն կերպ են անվանվել: Բերկրիի Աբաղյափ շրջանի Խաչան, Վանի Ոստանի Քարաղաշտ գ.-երում փողոցը և՝ աղքանոց, և՝ զուգարան իմաստն է ունեցել:

Մեր ձեռքի տակ եղած նյութերում տարածքային սահմանափակ կիրառություն ունի փողան բարբառային տարբերակը՝ որպես «փողոց»: Միայն Վանի բարբառում է գործածվել փողան բառաձևը, ինչպես նաև խաչփողան բարբառային բառանունը՝ որպես «երկու փողոցների խաչվելու տեղ», այսինքն՝ խաչմերուկ:

Սաստինի բարբառում ևս փաստված է փողան բառը, սակայն այստեղ սրա գործառույթն այլ է՝ «ներ սրահ, միջանցք»²⁸³, որը, ինչպես վերևում նշել ենք, Հ. Աճառյանը դիտարկում է որպես հիշյալ բառանվան հնագույն իմաստներից մեկը:

Հարկ ենք համարում ներկայացնել նաև Հ. Աճառյանի ՀԱԲ-ում վկայված փողոց կամ փողան բառանունների բառիմաստային զուգաբանությունները. «Ազուլիսում՝ փուղ «մի փողոցի հասուկ անունը», Վանում՝ փողան, Ալաշկերտում, Մուշում՝ փողան «փողոց», Վանում՝ փուղոց՝ արտաքնոց, Սալմաստում՝ փողոց, փողոց՝ աղբանոց, Տիգիսում՝ փողոց՝ շուկա, Կարինում փողոց՝ փողոց, Մուշում՝ փողրազ, Սոկում՝ փուղրակ, Ալաշկերտում՝ փողրանզ, Ախալցխայում՝ փողորանզ՝ Խոտրջուրում, Սեբաստիայում՝ փորդանք, Խարբերդում՝ փորդէնք, Ակնում՝ փողողագ» (ՀԱԲ, հ.4, էջ 512-513):

Հստ Վ. Գաբիկյանի բառարանի՝ «փողոսք (փողոցը)-ը գիւղերու տուններու առջև յատուկ աղքանոց, ուր կը թափեն օրական վառուած աթարի մոխիբը և աղբիւս, զոր յետոյ իբր բուսահող արտերը կը քաշեն» և բերում է հետևյալ առածք «Շունը կուլա, թէ փողոսքը վրաս է, փողոսքը կուլա, թէ շունը վրաս է», այսինքն՝

²⁸³ Վ. Պետոյան, Սաստինի բարբառը, Ե., 1954, էջ 164:

գանգատող, զիրար ամբաստանողներ, որ զիրար կարծեն, մեկը մեկն գանգատելու իրաւունք չունի»²⁸⁴:

Գ. Զահուկյանը հնագույն հայերենի բարբառային տարբերակները ներկայացնելիս այս ցանկում փողոց բառի համանիշ է դիտարկել գուել բառանունը (ՀԼՊ ՆԺ, էջ 408):

Գուել բառը, ըստ ՆՀԲ-ի, կապվում է *զայր «ցեխ»* բառի հետ. «Գուել - Քաղաքամեջ, որպես գայուս, այսինքն՝ տղմուտ ռահ՝ վասն բազմութենէ անցաւրաց. հրապարակ, պողոտա, փողոց, շուկա» (ՆՀԲ, հ. 1, էջ 582):

Գուել բառանունը, ըստ Հ. Աճառյանի, «փողոց, հասարակաց ճամփա» նշանակությունն է ունեցել, որից ել գուեհիկ-ը՝ «ռամիկ, հասարակ դասակարգի մարդ, գեղջուկ»: Բառը արձանագրված է Թովմա Արծրունու (9-րդ դ.)՝ *գուղ* - փողոց, և Ներսես Լամբրոնացու (12-րդ դ.)՝ *գուել* - «աղբ, ցեխ» աշխատություններում (ՀԱԲ, հ. 1, Ե., 1971, էջ 600):

Գուել բառաձևը հայերենի բարբառներում «փողոց, ճանապարհ» նշանակությունները չի պահպանել: Ըստ ՀԼԲԲ-ի՝ գուել բառը Մուշում ունի «աղբյուս, աղբանոց» իմաստը:

Հայերենի բարբառներում *գուել* բառանունն ավելի գործածական է մեկ այլ տարբերակով՝ *հ->ի* հերթագայությամբ՝ *գուիս* բառաձևով: Այսպես՝ Մուշում, Ալաշկերտում *գըռէիս*, Վանում *գըռհէիս*, Մոկսում *գըռէիս*, Սալմաստում *կիրհէիս*, Մարաղայում *կիրէիս* հնչյունական զուգաբանություններն են առկա, սակայն ոչ թե «փողոց, այլ վերքի թարախ, շարավ» նշանակությամբ: Նույն՝ «թարախ» իմաստով բառը գործածական է նաև Ազայում, Ոզմում, Նոր Բայազետում, Ապարանում, Շիրակում, իսկ Սալմաստում փաստված է նույնիսկ *կիրհէիս* - *թարախ* բաղադրությամբ բառաձևը: ՀԼԲԲ-ում Գ. Սրբանձտյանցից բերված է հետևյալ ուշագրավ օրինակը՝ «տու ձիկ արեցիր աղու գըռէիս, ենի արաց

²⁸⁴ Կ. Գարիկեան, նշվ. աշխ., էջ 553:

անմախութնի ձար, թօղ էրթա, Աստված ուր խէտ էնի» (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 285):

Ինչպես արդեն արձանագրել ենք, հավանաբար *զռէհի՝ «ցեխ, աղբ»* նշանակությունից ելնելով էլ հետագայում նույն բառաձևից առաջցել է նրանից միջնորդավորված փոխարերացմամբ մեկ այլ բառիմաստ՝ *զռէհի՝ «թարախ, վահր»: Գռէհ - «աղբ, ցեխ, փողոց, ինչպես նաև աղբանոց ու աղբիւս», այնուհետև զռէհի՝ «վերքի թարախ»:*

Փողոց հասկացության դիմաց որոշ բարբառներում առկա է շօշ բառանունը, որը թերևս աղերսներ ունի ոռւսերեն առօս բառի հետ: Բառը փաստված է Եղեգնաձորի Եղեգիս, Տավուշի Վերին Կարմիրաղբյուր, Մարտունու Մալինա, Արարատի շրջանի Արարատ գյուղերում և այլն:

Փողոց հասկացության բառազուգաբանություն է դիտարկվել արևելյան փոխառություն համարվող *քոչչա* բառանունը (Կարձնան, Արարատ և այլն):

«Նեղ փողոց» իմաստով «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ում փաստված է *սոխախի* բառանունը Լոռիում²⁸⁵:

Գ. Զահուկյանը, ներկայացնելով հնագույն հայերենի բարբառային տարբերակները, ուղի բառի հոմանիշ է դիտարկել աղազ բառանունը: Նա բառի ծագումն անհայտ է համարում՝ գտնելով, որ այն հազիվ թե կապ ունենա ակկադ. alāku(m), alaktu, «ընթացք, ճանապարհ, ուղի» բառերի հետ (ՀՍԲ, էջ 33): Հ. Աճառյանը, վկայակոչելով Ոսկեբերանին, *աղազ՝ «Ճանապարհ իմաստով»*, մեկ օրինակ է բերում՝ «Արատիցի որմ, խրամատիցի և ամենեցուն աղազ լինի (այզու պատի համար է ասում, որ քանդվելով ամենքի ազատ անցուղարձի ճանապարհ է դառնում): Երկրորդական նշանակությունն է «հնարք, կերպ, միջոց», գործածված են նաև հոլովված ձևերը՝ գործիականը աղազաւ՝ պատճառով, հայցական կամ ներգոյական՝ *յաղազրս՝ «համար, վասն»*: Ըստ Աճառյանի՝

²⁸⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 12, Ե., 1984, էջ 641:

բոլոր ձևերի նախնական նշանակությունը «Ճանապարհն» է (ՀԱԲ, հ. 1, էջ 117):

Հայ բարբառների մեծ մասում (Երևան, Սուրմալու, Ղազախ, Ղարաբաղ, Ղարադաղ, Լոռի, Թիֆլիս) *աղազ* բառը հանդես է գալիս *աղաք* բարբառային տարբերակով և ունի «առջև, առաջ» իմաստը: Օր.՝ «Գազանի աղաքը կտրեցին: Խոփն ասավ՝ քամակս դուզ, աղաքս կեռ ա, / Գետինը շալակելը շատ ծանր բեռ ա»: 2-րդ իմաստով բարբառներում (Լոռի, Երևան) «նախ, առաջ, նախապես» է նշանակում: Օր.՝ «Աղազվա ժամանակը ո՛ւր, իիմի ո՛ւր: Աղազ էստեղ քաղաք էր»: Առաջ, առջև իմաստով կան նաև դարձվածյին արտահայտություններ. 1. *Աղաք անել*՝ առաջը զցել: 2. Լոռու բարբառում *աղաքկտրուկ անել*՝ մեկից առաջ անցնել: 3. *Աղաքը կանգնել*՝ դիմադրել: Արարատյան բարբառում առկա է նաև *աղաքանալ*՝ առաջանալ բայաձեր (ՀԼԲԲ, հ. Ա, էջ 37):

Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավարված նյութերում եզակի նմուշներ ունենք, որոնցում *աղազ* բառանունը անաղարտորեն պահպանել է իր նախնական «Ճանապարհ» իմաստը, օր.՝ Հավարիկում՝ *հրդոք*, Կրգենում՝ *հրդէք* (Հրդքէրըմք ման զյօք՝ ման էր գալիս), Կարճևանում՝ *հրդաք* (*հրդաքնի*՝ ճանապարհին): Ըստ ՀԼԲԲ-ի՝ *աղազ* բառանունը առկա է Արարատյան, Թիֆլիսի, Ղարաբաղի, Կրգենի բարբառներում՝ «առաջ, առջև, նախ, նախապես» նշանակություններով: Մեղրու բարբառի համար արձանագրված է *աղաք* բառի «Ճանապարհ» իմաստը²⁸⁶:

Աղազ բառանունը Տափուշի մարզի որոշ գյուղերի և Հաղպատի խոսվածքներում այսօր էլ գործածական է կրքադաղք ձևով, այսինքն՝ *կարծ աղազ(p)*՝ որպես «նեղ և կարծ ճանապարհ, արահետ»: ՀԼԲԲ-ում ևս արձանագրված է *կարձաղազ* բառաձեր՝ որպես կտրուկ, կարծ ճանապարհ որը, ըստ բառարանի, վկայված է *կարձաղաք* հնչաձևով Արարատյան բարբառում, *կարձաղազ*

²⁸⁶ Տե՛ս նույն տեղում:

Ղազախի, կըրճաղաք՝ Լոռու և Գանձակի խոսվածքներում (ՀԼԲԲ, հ. Գ, Ե., 2004, էջ 62, 194):

Տարկ ենք համարում հիշատակել նաև Սասունի բարբառում վկայված աղազ բառանունը, որը, սակայն, խոսվածքում «ծաղի ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ» նշանակությամբ է փաստված²⁸⁷:

Այսպիսով՝ քննվող նյութի ուսումնասիրությունից գալիս ենք հետևյալ եզրակացության. հայ բարբառներում առկա են «ոտքով բացված նեղ ճանապարհ» իմաստով բառանուններ, որոնք բառակազմական և բառիմաստային հետաքրքիր զուգորդումների արդյունք են: Ուշագրավ է նաև հայ բարբառներում աղազ, փողոց, գոեհ բառանունների բառիմաստային բազմազանությունը. մի կողմից փողոցը և աղազը բարբառներում պահպանել են նախնական «ճանապարհ» իմաստը, մյուս կողմից ունենք աղազ, փողոց բառանունների բառիմաստային այլ դրանորումների վկայություններ, ինչպես՝ առաջ, առջև, նախ, աղբանոց, շուկա, արտաքնոց և այլն: Աղազ բառանունը որոշ բարբառներում վկայված է նաև բառակազմական յուրօրինակ բառաձևով՝ կըրճաղաք՝ որպես «կարճ ճանապարհի» նշանակելի: Գոեհ բառի դեպքում բարբառները չեն պահպանել նրա «փողոց» նշանակությունը, այն բարբառներում գործածվել է «թարախ, աղբիւս, աղբանոց» իմաստով:

²⁸⁷ Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 101:

Գարիկ Մկրտչյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՅՆԱՎՈՐ ՀԱՅՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ²⁸⁸

Գեղարքունիքի մարզը ՀՀ ամենախիտ բնակչություն ունեցող տարածքն է: Մարզում կա 92 բնակավայր, որոնք խմբավորվում են Գավառի, Ճամբարակի (նախկին Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջաններում: Գավառի տարածաշրջանն ունի 12 խոսվածք (Գավառ քաղաքը և Գանձակ, Ծաղկաշեն, Սարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Կարմիրգյուղ, Նորատուս, Հայրավանք, Բերդկունք, Ծովազարդ, Լճափ համայնքները), Սևանի տարածաշրջանն ունի 11 խոսվածք (Սևան քաղաքը և Չովաբեր, Դդմաշեն, Ծաղկունք, Գեղամավան, Վարսեր, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Ծովազյուղ, Սեմյոնովկա համայնքները), Մարտունու տարածաշրջանն ունի 17 խոսվածք (Մարտունի քաղաքը և Աստղաձոր, Արծվանիս, Գեղիովիտ, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Երանոս, Չոլաքար, Թազագյուղ, Լիճք, Ծակքար, Ծովինար, Չորազյուղ, Մաղինա, Վաղաշեն, Վարդաձոր, Վարդենիկ խոսվածքները), Ճամբարակի տարածաշրջանն ունի 16 խոսվածք (Ճամբարակ քաղաքը և Աղբերք, Անտառամեջ, Արտանիշ, Այգուտ, Գետիկ, Դպրաբակ, Դրախտիկ, Թթուջուր, Կալավան, Չորավանք, Մարտունի, Շորժա, Ջիլ, Վահան, Արծվաշեն համայնքները), Վարդենիսի տարածաշրջանն ունի 36 խոսվածք (Վարդենիս քաղաքը և Ազատ, Ակունք, Ախպարա-ձոր, Այրք, Ալազան, Արեգունի, Արփունք, Գեղամասար, Գեղամաբակ, Գեղաքար, Դարանակ, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր,

²⁸⁸ Տե՛ս նաև՝ Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2016, թիվ 3, էջ 199-207:

Ծափաթաղ, Ծովակ, Կարձաղյուր, Կախակն, Կուտական, Կութ, Մաքենիս, Ա. Մասրիկ, Փ. Մասրիկ, Նորակերտ, Նորաքակ, Շատշրեր, Ն. Շորժա, Վ. Շորժա, Շատվան, Զաղացաձոր, Սորբ, Վանևան, Տորֆավան, Տրետուր, Փամբակ համայնքները):

Գեղարքունիքի մարզը, պատմական իրադարձություններով պայմանավորված, մինչև 19-րդ դարը հայաթափված է եղել: Համաձայն ժողովրդագրական տվյալների՝ տարածաշրջանում հայերի վերաբնակեցումն ընթացել է երեք փուլով՝

ա) 1828-30 թվականների ոուս-թուրքական պատերազմից հետո Գեղարքունիքում են բնակեցվում շուրջ տասը հազար հայեր՝ ներգաղթած Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրերից՝ Ալաշկերտից, Մուշից, Հին Բայազետից, Դիաղինից, Վանից, Կարսից, Մակուից և այլ վայրերից:

բ) Կենտրոնական Հայաստանի պատմական տարբեր տարածքներից ոչ մեծաթիվ ներգաղթյալներ Սևանի ավազնի բնակավայրեր են հանգրվանում 1914-22 թվականների ընթացքում:

գ) 1988-90-ական թթ. Աղբեջանից բռնազաղթված հազարավոր հայեր ապաստանում են հատկապես Ճամբարակի ու Վարդենիսի տարածաշրջաններում, և այսօր զբաղեցնում են նշյալ տարածաշրջանների համայնքների մեծ մասը:

Ժողովրդագրական և հանրալեզվաբանական տվյալները ցույց են տալիս, որ միայն Մարտունու Երանոս գյուղում են ապրել 13 տեղաբնիկ ընտանիք, իսկ Զարգերիլ գյուղում՝ երկու տեղաբնիկ ընտանիք՝ 9 անդամով²⁸⁹: 1842 թ. մարդահամարով Զարգերիլում հայեր չկան այլևս: Լեզվական տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ բնութագրել տեղաբնիկների լեզվական համակարգերը: Ժամանակի ընթացքում նրանք՝ իրենց լեզվական համակարգերով հանդերձ, ձուլվել են եկվորներին:

Գեղարքունիքի մարզի խոսվածքները միաստարք չեն: Այդ անմիաստարքությունը երևում է մարզի խոսվածքների ձայնավոր

²⁸⁹ Վ. Մարտիրոսյան, Վերին Գետաշեն (մարդիկ, դեպքեր, փաստեր, ճակատագրեր), Ե., 2014, էջ 185-186:

հնչունների և երկրաբառների առանձնահատկությունները քննելիս: Համաժամանակյա չափանիշներով զուգադրական քննության մեջ չեն ներառվել Արցախի խոսվածքների առանձնահատկությունները Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջաններում. այդ խոսվածքների հատկանիշների հետազոտումն ընթանում է:

Գեղարքունիքի մարզի դիտարկված խովածքներում* կան *ա*, *օ*, *ու*, *ի*, *է*, *ը*, *ա*, *օ*, *ու*, *ի*, *ը* ձայնավորները: Այս հնչուններից էտալոնային են *ա*, *է*, *օ*, *ու*, *ի*, *ը* ձայնավորները: Դրանք էտալոնային են համարվում, քանի որ կատարում են հնչույթային գործառույթ²⁹⁰: Վերոնշյալ հնչունները հանդես են գալիս բառի բոլոր դիրքերում, բառերի տարատեսակ դիրքային հակադրություններում իրականացնում են իմաստատարքերակիչ գործառույթ, իսկ մյուս՝ *ա*, *օ*, *ու*, *ի* ձայնավորները *ա*, *օ*, *ու* ձայնավորների դիրքային, արտասանական ազատ տարբերակներն են, բառի կազմում ունեն գործածության որոշակի սահմանափակություն: Նրանք գործառում են հնչունական որոշակի դիրքերում և իմաստատարքերակիչ հակադրություններ հիմնականում չեն ձևավորում իրենց ամենամերձավոր հնչուններին փոխարինելիս, հետևաբար համարվում են *ա* հնչույթի դիրքային տարբերակները: Սակայն Վ. Կատվալյանը *ա*, *օ*, *ու* ձայնավորների՝ իմաստատարքերակիչ հակադրություններ հայտաբերող փաստեր է վկայում Գավառի տարածաշրջանում գործող Բայազետի բարբառի հնչունական համակարգի առանձնահատկություններին նվիր-

* Ի դեպ, համաժամանակյա չափանիշներով զուգադրական քննության մեջ չեն ներառվել Արցախի խոսվածքների առանձնահատկությունները Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջաններում. այդ խոսվածքների հատկանիշների հետազոտումն ընթանում է:

²⁹⁰ Էդ. Աղայան, Գրաբարի քերականություն, Գիրք Ա, Հնչունաբանություն, Ե., 1964, էջ 81-102:

ված ուսումնասիրության մեջ՝ լարել (հետապնդել)-լարել (գործի դնել), շան (զրպարտություն)-շան (գունդ) և այլն²⁹¹:

Մարզի խոսվածքներում գործող ձայնավոր հնչյուններն ունեն որոշակի տարածքային բաշխվածություն: Էտալոնային ձայնավորները հասուլ են տարածքի բոլոր խոսվածքներին: Մարզի բոլոր խոսվածքներում ի, է, ը ձայնավորներն ունեն նույն հատկանիշները և դիտարկման արժանի դրսերումներ չունեն, իրենց արտաքերական ու ֆիզիկական հատկանիշներով չեն տարբերվում զրական հայերենի ի, է, ը ձայնավորներից²⁹²: Ա, օ, ու ձայնավոր հնչյունների գործառության սահմանափակություն կա Սևանի, Գավառի, Վարդենիսի տարածաշրջանների խոսվածքներում: Այս տարածաշրջանների խոսվածքների հնչյունական որոշակի դիրքերում ա, օ, ու հնչյունները ներկայանում են իրենց դիքային և որակական տարբերակներով:

Գեղարքունիքի մարզի խոսվածքներում ա ձայնավորը պատմականորեն ձևավորել է քառանդամ հակադրություն: Ա հնչյունը և նրա տարբերակները՝ ան/ան, ստորին բարձրացման հնչյուններ են: Նրանց տարբերությունը դրսերվում է միայն ըստ արտաքերման տեղի: ա-ն ստորին բարձրացման հետնալեզվային հնչյուն է, ան/ան-ն ստորին բարձրացման առաջնալեզվային հնչյուններ են՝ ուժեղ և թույլ քմայնություններով, իսկ ան-ն բնութագրվում է ստորին բարձրացման այնպիսի հնչյուն, որի «...արտասանության սկզբում շրթունքները լարվում են և ձգվում դեպի առաջ, ձևավորվում է շրթնային հնչարան, որի հետևանքով ստացվում է սերտ օաւ արտասանություն»²⁹³: Կարծում ենք՝ կոշտ,

²⁹¹ Վ. Կատվալյան, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 52-53:

²⁹² Ա.Հ. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչութաբանություն, Ե., 1988, էջ 152-154, 158-159:

²⁹³ Վ. Կատվալյան, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 37:

շրթնայնացման որոշակի երանգ²⁹⁴ և արտասանական որոշակի լարվածություն ունեցող անհյունի արտաքերման հարցում դեր է խաղում լեզվի և հետին հատվածը, և՝ առաջին հատվածը: Լեզվաբանության մեջ այս մասն բնութագրվում է նաև որպես կոկորդային հնչյուն²⁹⁵:

Եթե Մարտունու տարածաշրջանի Մշո շերտը ներկայացնող խոսվածքների բառավագրի և բառամիջի բնիկ, ինչպես նաև արևելյան լեզուներից կատարված փոխառյալ բառերում կան ահնչյուններ՝ *մարդ, ձ’ար, թամբ, լաց* և այլն, ապա *Գավառի, Սևանի, Վարդենիսի* տարածաշրջանների խոսվածքներում կան քմային *ա-եր՝ մմարդ, ձ’ար, թամբ, լաց, բանստ* և այլն: Մարտունու տարածաշրջանի խոսվածքները բնութագրվում են քմային այնպիսի անձնավորի գործածությամբ, որի քմայնությունը թույլ է, և կա մասնակի առաջնալեզվայնություն: Հստ որակական այս հատկանիշի՝ երկու տարածքների քմայինների հնչումը համարելիս ուժեղ և թույլ քմայնության հակադրություն է ստեղծվել Մարտունու և մյուս տարածաշրջանների խոսվածքների միջև: Եթե Վարդենիսի, Սևանի, Գավառի տարածաշրջանների խոսվածքների փոխառյալ բառերում կան քմային ձայնավորներ՝ *թամուզ, թանգա, նախտ, թամսիր, մայլա* և այլն, ապա Մարտունու տարածաշրջանի խոսվածքներում՝ այդ քմայնությունը թույլ է և հանդիպում է սակավաթիվ բառերում՝ *թամուզ, թանգա, նախտ, թամսիր, մայլա* և այլն: Այս երևույթը պետք է օրինաչափ համարել:

Մշո բարբառում ու նրա որոշ խոսվածքներում քմայնացման թույլ երանգ ունենալը միայն մեր տեսակետը չէ: Բարբառագետ Ժ. Միքայելյանն իր հետազոտության մեջ նույնպես վկայել է այդ

²⁹⁴ Հ. Մուրարյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Ե., 1982, էջ 34:

²⁹⁵ Ո. Բաղրամյան, Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 14:

մասին²⁹⁶՝ հաշվի առնելով այն, որ քմայնացման երևույթը գործում է Մշո բարբառի Արծկեի և Արձեշի խոսվածքներում, որը, ամենայն հավանականությամբ, Վանի բարբառի ազդեցության հետևանք է: Կարծում ենք՝ Արծկեի և Արձեշի խոսվածքներում եղած քմային հնչյուններն ել ժամանակի ընթացքում փոխանցվել են Մշո բարբառի մյուս խոսվածքներին:

Թույլ և ուժեղ քմային ձայնավորներ կան ոչ միայն փոխառյալ, այլև՝ ընդհանուրի հայենյան որոշ բառերում, մասնավորապես՝ ձայնեղ հագագից հետո եղող դիրքում՝ *cúghk*, *cúnpk*, *cúnnpi* և այլն: Այս երևույթը կամ ներքին օրինաչափությամբ է պայմանավորված, կամ այլ բարբառների ազդեցության հետևանք է: Վերոնշյալ բառերը Գավառի, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանների խոսվածքներում ներկայանում են ուժեղ քմայնությամբ: Ս.Հ. Թափալցյան-Բաղդասարյանը Մշո բարբառում քմայնության երևույթը տեսնում է մի քանի փոխառյալ բառերում՝ մնան «խելք, ուղեղ», մնայթ «դիակ», մնաքար «արդյոք, մի թե», մնաքար «կիկլոպ», բնաքար «չալ»²⁹⁷ և այլն: Այս պահի դրությամբ վերոբերյալ բառամիավորները մշեցիների բառապաշարում բացակայում են: Բացառություն է միայն բալաք բառը, այն էլ՝ առանց քմայնության: Կարծում ենք՝ Մշո բարբառում ու նրա խոսվածքներում թույլ քմայնությունը միջնորդավորված ազդեցություն է՝ անցած հարակից, ուժեղ քմայնություն ունեցող բարբառներից: Սակայն նկատենք, որ ուժեղ և թույլ քմայնությունները հնչյունահնչության էական նշանակություն չունեն. նրանք ընդամենը գործածվում են տարբեր տարածքներում²⁹⁸: Ի դեպ,

²⁹⁶ Ժ. Միքայելյան, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները: Համաժամանակյա և տարաժամանակյա քննություն, Ե., 2009, էջ 31:

²⁹⁷ Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958, Ե., էջ 17:

²⁹⁸ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 44:

Հ. Մուրադյանը ևս Մշո բարբառում ընդունում է քմային այնավորի գոյությունը²⁹⁹:

Եթե Մարտունու տարածաշրջանի խոսվածքներում բառակազմի բոլոր դիրքերում որոշ բացառություններով կա աձայնավոր³⁰⁰, իսկ Սևանի, Վարդենիսի տարածաշրջանների՝ հատկապես ընդհանուրհայերենյան բառերի առաջին և երկրորդ վանկերում՝ այնավոր, ապա Գավառի տարածաշրջանների խոսվածքներում կան շրթնային ան և քմային այնավորներ: Շրթնային ան-ն մեծ տարածում ունի Գավառի խոսվածքներում: Հնչյունական այս հատկանիշով է, որ Գավառի տարածաշրջանի խոսվածքները տարբերակվում են մյուս տարածքների խոսվածքներից ու բարբառներից:

Գավառի տարածաշրջանի խոսվածքներում ան հնչյունը լրացնուցիչ բաշխման հարաբերության մեջ է գտնվում մերձավոր ա/ան հնչյունների հետ: Հ. Մուրադյանը, բնութագրելով ան հնչյունի գործառական առանձնահատկությունները, նշում է, որ այն «կարող է հանդես գալ համարյա բոլոր դիրքերում»³⁰¹, սակայն Բայազետի բարբառը կրող և հետազոտող Վ. Կատվալյանն ան հնչյունի գործառման համար նշում է բառերի հետևյալ դիրքերը³⁰², որոնք ընդգրկում են և՛ ընդհանուրհայերենյան, և՛ փոխառյալ բառաշերտերը՝ ա) բառակզբում՝ ամպ, ամօթ, ածիկ, անջախ, ազար և այլն, բ) բառամիջում տարբեր որակի բաղաձայն հնչյունների միջն՝ սնն, խննուէ, խիլննդ, իմննլ, ծննդր, պնոկէլ, պնխէլ և

²⁹⁹ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 45:

³⁰⁰ Ս. Բաղրամյան-Թափալյան, նշվ. աշխ., էջ 15-17:

³⁰¹ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 41:

³⁰² Վ. Կատվալյան, նշվ. աշխ., էջ 39:

այլն³⁰³: Սևանի տարածաշրջանի խոսվածքները հայտնաբերում են մի դրսեւորում ևս: Բարբառագետ Ռ. Բաղրամյանն իր հետազոտության մեջ վկայում է, որ Մակուի խոսվածքը ներկայացնող Սևանի խոսվածքներում նույնպես հանդիպում են շրթնային ան-ի գործածության դեպքեր³⁰⁴: Հավանաբար Գավառի խոսվածքների ազդեցությամբ է շրթնային ան-ն գործածվում Սևանի խոսվածքներում և, կարծում ենք՝ այս երևույթը նոր իրողություն է:

Քմային այ ձայնավորը Գավառի տարածաշրջանի խոսվածքներում մեծ մասամբ գործածվում է փոխառյալ բառերում, ընդ որում՝ հանդիպում է և՝ բառավակբում, և՝ բառամիջում, և՝ բառավերջում՝ այիր, զանգ, ունգ, խանոնք, կարիր, թալանք, նօրանք, մասանք և այլն: Քմայնություն կա նաև բարբառային զանել բառում: Վ. Կատվալյանը գտնում է, որ քմային այ-ն Բայազետի բարբառի արտաքերական յուրահատկություններով պայմանավորված հնչյուն չէ, այլ օտարամուտ մի հնչյուն է և ունի առանձին հնչույթի արժեք որոշ դրսեւորումներում: Ասվածը հիմնավորելու համար հետազոտողը բերում է հետևյալ օրինակները՝ թանգ (պատնեշ)-բանդ (կալանատուն), թանգ (ձեռքի թաթ)-թաթ (անհասկացող), թանգիուկ (անասունի ոտքի հարված)-թափուկ (թափված)³⁰⁵ և այլն: Գավառի տարածաշրջանի խոսվածքներում առ հնչյունի գործառման համար սովորական դիրք է միավանկ, երկվանկ և բազմավանկ բառերի բառամեջը՝ տարբեր որակի բաղադայնների միջև՝ քար, լակ, խա, բանքակ, զանգատ, բոստան, ուսիսադա և այլն: Գավառի խոսվածքներում առ հնչյունը սակավարիկ դեպքե-

³⁰³ Յավոք, բ. կետում առկա է թյուրիմացություն. ձևակերպումը և օրինակների մի մասը չեն ներկայացնում Վ. Կատվալյանի տեսակետը (խմբ.):

³⁰⁴ Ռ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 93:

³⁰⁵ Վ. Կատվալյան, նշվ. աշխ., էջ 52-53:

րում հանդիպում է նաև բառասկզբում՝ *ախ, այտէնց, այնէնց* և *այլն*:

Վարդենիսի տարածաշրջանի խոսվածքների հատկապես Մշո շերտում (Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ, Ախպրածոր, Մաքենիս և այլն) սովորական են *ա հնչյունի գործածությունները, իսկ մյուս՝ Դիաղինի շերտում ա-ն համապատասխան դիրքերում ներկայանում է քմային անձանագործով։ Հավելենք, որ Վարդենիսի տարածաշրջանում Դիաղինի բարբառի ազդեցությամբ քմային ձայնավորների գործածություններ կան նաև Մշո շերտի խոսվածքներում։ Այս իրողությունը համատեղ կենսակերպի, գերիշխող բարբառի ազդեցության հետևանք է։*

Ինչպես փաստերն են ցույց տալիս, մարզի բոլոր խոսվածքները տարբերվում են բառասկզբի ու բառամիջի դիրքերում *ա-ի* և *նրա դիրքային* ու որակական տարբերակների գործածություններով։ Օրինակ՝ Մարտունու տարածաշրջանի Վերին Գետաշենի, Ներքին Գետաշենի, Լիճքի և մի շարք այլ խոսվածքներ տարբերվում են Գավառի տարածաշրջանի Սարուխանի, Լանջաղբյուրի, Նորատուսի և մյուս խոսվածքներից անձանավոր չունենալու հատկանիշով։ Նմանատիպ համեմատությունները վկայում են, որ խոսվածքների ընդհանրություններն ու տարբերությունները հիմնականում պայմանավորված են նրանց՝ տարբեր բարբառային միավորների խոսվածքներ լինելով։ Սակայն բառավերջի վանկում ի հայտ եկող սովորական *ա-ի նույնությամբ* (թեև, ինչպես տեսանք, կան որոշ բացառություններ Սևանի, Գավառի և Վարդենիսի խոսվածքներում հատկապես քմային *ա-ի գործածության դեպքերում*) և ժամանակակից արտաքին և ներքին փոխառություններում գործառող *ա հնչյուններով* մարզի բոլոր խոսվածքները միավորվում են։

Գեղարքունիքի մարզի խոսվածքներում երկանդամ հակադրությամբ են ներկայանում *ու, օ ձայնավորները*։ Մարտունու, Սևանի, Գավառի, Վարդենիսի տարածաշրջաններում խոսվածք-

ների՝ հատկապես արևելյան լեզուներից կատարված փոխառյալ բառերի առաջին վանկերում ի հայտ եկող էտալոնային օ, ու ձայնավորների դիմաց Գավառի տարածաշրջանի Նորատուսի, Սևանի շրջանի Դդմաշենի խոսվածքներում և Վարդենիսի՝ Դիադինի շերտը ներկայացնող խոսվածքներում կան քմային օ, ու ձայնավորներ: Սակավադեպ կիրառություններում գործածվող այդ հնչյուններն ինչ-որ մի պատմական շրջանում հայերենին են անցել հատկապես նորագույն փոխառությունների միջոցով: Ընդորում, քմային օն հազվադեպ հանդիպում է նաև ընդհանուրիայերենյան բառերում, իսկ ուն միայն արևելյան լեզուներից կատարված փոխառություններում՝ քո՞վտա, քո՞չա, քո՞վուր, քօլ, քօս, չօլ, քօլ և այլն: Երևույթը կա նաև բնիկ քօրէլ, քօդ բառերում, որը, հնարավոր է, փոխառյալ բառերի համարանությամբ կատարված իրողություն է: Քմային ուն, օն անկախ հնչույթներ չեն և դիտվում են ու, օ հնչյունների դիրքային ազատ տարրերակները: Բառավերջի վանկում, ընդհանուրիայերենյան բոլոր բառերում և նորագույն արտաքին, ներքին փոխառություններում գործառող էտալոնային օ, ու ձայնավորներով մարզի խոսվածքները միավորվում են: Մյուս շերտի խոսվածքներում հանդիպող քմային ու օ ձայնավորների սակավադեպ գործածություններն այդ հնչյուններն ունեցող խոսվածքների ուղղակի ազդեցության հետևանք են:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մարզի ուսումնասիրված խոսվածքներում գործում են նաև ուժգնացող (բարձրացող) երկբարբառներ և երկինչյուններ: Երկբարբառների գործածության դիրքը բառամիջի փակ վանկն է, իսկ երկինչյուններինը՝ բառասկիզբը: Բառասկզբում գործառում են ՚օ և ՚է երկինչյունները, որոնք երբեմնի ՚օ, ՚է բարձրացող երկբարբառների պատմական զարգացումն են վկայում. պարզ ձայնավորի երկինչյունային արտասանությունը կատարվել է և ո ձայ-

նավորների երկբարբառացմամբ³⁰⁶: Բառասկզբի դիրքում այդ երկինչունները հանդիպում են միավանկ և բազմավանկ բառերում՝ *փօրդ*, *փուկի*, *փոսպ*, *լէրգ*, *լէրկաթ*, *լէրագ* և այլն: Տարածքին խոսվածքներում կան *տօ* եռաբարբառի գործառման փաստեր՝ *տօփի*, *տօնց*, *տօնց*, *լիէզ*, *լիէփի* և այլն, որը, որպես գործող հնչունական իրողություն, վկայում է *տ*, *իւ* երկինչունների պատմական զարգացման ընթացքը: Ի դեպ, Մշո բարբառում Ս.Հ. Բաղդասարյան-Թափալցյանը միավանկ բառերի սկզբում է, ո ձայնավորների այսպիսի հնչումն օրինաչափ երևույթ է համարում³⁰⁷: Ընդ որում, բազմավանկ բառերում երևույթը գործառել է միավանկ բառերի համարանությամբ: Բառասկզբի դիրքում այս երկինչունների գոյությունը պատմական հնչունափոխության հետևանք է:

Գրեթե բոլոր խոսվածքներում մեզ հանդիպել են նման հնչունափոխություն ունեցող բառերի ոչ երկբարբառային տարբերակները՝ *օսկի*, *օչիլ*, *օսկօռ*, *օզնի*, *օլլրէլ*, *օչիար*, *էղան*, *էրագ*, *էրամ*, *էկա*, *էրինչ*, *էզ* և այլն: Այսպիսի փաստերով վերականգնվում են բառասկզբի երկբարբառների՝ փակ ձայնավոր, ոչ երկբարբառային միավոր լինելու նախնական հատկանիշը, որը նրանք ունեցել են ինչ-որ մի պատմական ժամանակահատվածում: Բառամիջի շեշտակիր վանկերում կան բարձրացող երկու երկբարբառներ՝ *հէ*, *մօ*՝ *միէծ*, *միէնք*, *փիէդ*, *ձիէր*, *կիէխտ*, *տիէխի*, *փմօր*, *փմօղ*, *խմօղ*, *գ՞ուօղ*, *նմօր*, *խմօց* և այլ: Հետազոտված տարածքի խոսվածքների բառամիջի շեշտված երկբարբառներն ունեն ուժեղ, ընդգծված արտաքերում: Ի դեպ, նշված երկբարբառների մեջ երկրորդ ձայնավորները շեշտվում են ավելի ուժեղ, քան առաջինները: Հավելենք, որ միավանկ բառերի բառասկզբում այս երկբարբառների գոյությունը ապացուցում է բառասկզբի դիրքի *սօ*, *լէ* երկինչունների երբեմնի երկբարբառային արտասանություն ունենալը, քանի որ, ինչպես հետազոտողներն են հիմնավորում,

³⁰⁶ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 94:

³⁰⁷ Ս. Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 13:

հայերենում *n* և *է* ձայնավորների երկրարբառացումը շեշտյալ վանկերում սկզբնապես սկսվել է առանց դիրքի ասհմանափակման՝ ընդգրկելով թէ՝ բառասկիզբը, թէ՝ բառավերջը³⁰⁸: Գավառի և Սեանի տարածաշրջանի խոսվածքներում հանդիպել են նաև *mէ*, *niօ*, *oէ* երկրարբառները՝ *mէրmէնք*, *qօէռտ*, *p՞niօռտ*, *pօէխսկ* և այլն: Բառամիջի դիրքում բարձրացող երկրարբառների գործառումը նկատվում է բացառապես միավանկ բառերում: Դրանք երկրարբառ են շեշտված վանկում, իսկ շեշտագրկվելիս վերածվում են պարզ ձայնավորների՝ *փէդանօծ*, *ձէնօնծ*, *փօրացակ*, *գօռդրնուգ*, *խօզուտէն* և այլն: Նշված երկրարբառների գործածությամբ միավորվում են քննարկված բոլոր խոսվածքները: Մարզի խոսվածքներում եռաբարբառներ չկան բառամիջի դիրքում:

Այսպիսով, համաժամանակային և ընկալողական մեթոդներով կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մարզի խոսվածքներում կան տասնմեկ ձայնավորներ՝ *ա*, *օ*, *ու*, *ի*, *է*, *ը*, *ան*, *օն*, *ոն*, *ին* և երկու երկինյուն և երկու երկրարբառ՝ *սօ*, *նէ*, *իէ*, *ոօ*: Ձայնավոր հյուններից 6-ը՝ *ա*, *օ*, *ու*, *ի*, *է*, *ը*, մեր լեզվի հնյունական համակարգում էտալոնային են, քանի որ իմաստատարբերակիչ գործառույթ ունեն բարիմաստային հակադրություններում, ուստի և՝ անկախ հնչույթներ են: Այս հատկանիշից զուրկ են քմայնություն և շրյանայնություն ունեցող ան, օն, ոն, ան, ին հնյունները: Նրանք էտալոնային հնյունների դիրքային, որակական, ոչ իմաստային հակադրություն ստեղծող տարբերակներ են և իմաստային հակադրության համակարգային փաստեր չեն հայտաբերում՝ բացառությամբ մի քանի դեպքերի:

³⁰⁸ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 94:

Գարիկ Մկրտչյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՂԱՁԱՅՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ³⁰⁹

Ըստ լեզվական փաստերի՝ Գեղարքունիքի մարզում կա առանձին տարածաշրջաններում գործող երեք բարբառ և մեկ խոսվածք: Բայազետի բարբառը Գավառի տարածաշրջանում է, Մակուի խոսվածքը՝ Սևանի, Մշո բարբառը՝ Մարտունու, Դիարինի բարբառը՝ Վարդենիսի, իսկ Արցախի բարբառը՝ Վարդենիսի և Ճամբարակի³¹⁰: Միայն Մշո բարբառն է, որ, ի տարբերություն մյուս բարբառների, առանձին խոսվածքներ ունի նաև մյուս տարածաշրջաններում³¹¹: Ի դեպ, Մշո բարբառը Մարտունու տարածաշրջանում ներկայանում է բարբառի հյուսիսարևելյան խմբին պատկանող Ալաշկերտի խոսվածքով³¹²:

Տարածաշրջանի խոսվածքների բաղաձայնական համակարգերի համաժամանակյա քննությունը ցույց է տալիս, որ ըստ տարրեր դիրքերի՝ Գեղարքունիքի մարզի խոսվածքներում գործում են բաղաձայնական տարրեր համակարգեր (ի դեպ, համաժամանակյա չափանիշներով գուգադրական քննության մեջ չեն ներառվել Արցախի խոսվածքների առանձնահատկությունները ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջաններում. այդ խոս-

³⁰⁹Տե՛ս նաև՝ Լեզու և լեզվաբանություն, Ե., 2015, թիվ 1, էջ 53-63:

³¹⁰Ռ. Բաղրամյան, Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 3-11:

³¹¹Գ. Մկրտչյան, Մշո բարբառի արդի վիճակը Գեղարքունիքի տարածաշրջանում, Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ, Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014, Զեկուցումների ժողովածու, Ե., 2014, էջ 134-136:

³¹²Գ. Զահոռակյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 134:

վածքների հատկանիշների հետազոտումն ընթանում է): Այս համակարգերը ներկայացվում են ողջ բառապաշարի ընձեռած փաստերի հիման վրա՝ ներառելով նորագույն շրջանի արտաքին ու ներքին փոխառությունները: Սևանի, Գավառի, Մարտունու տարածաշրջանների խոսվածքները, բայտ բառասկզբի դիրքի, ունեն քառաստիճան բաղաձայնական համակարգեր: Այս տարածքներում տարբերակվում են շնչեղ ձայնեղների, պարզ ձայնեղների, պարզ խուլերի, շնչեղ խուլերի շարքեր: Այս խմբի խոսվածքներում բառասկզբի դիրքում պարզ ձայնեղներ կան միայն արևելյան լեզուներից կատարված և ժամանակակից գրական փոխառություններում: Վարդենիսի տարածաշրջանի խոսվածքների մի մասն ունի եռաստիճան բաղաձայնական համակարգ, իսկ մի մասը՝ քառաստիճան: Մշտ բարբառի խոսվածքներն ունեն քառաստիճան բաղաձայնական համակարգ, որոնք, ի տարբերություն Դիաղինի խոսվածքներին հատուկ պարզ ձայնեղների, պարզ խուլերի և շնչեղ խուլերի, տարբերակում են նաև շնչեղ ձայնեղներ:

Ի տարբերություն բառասկզբի՝ բառամիջի և բառավերջի բաղաձայնական տվյալների հաշվառմամբ մարզի խոսվածքները բնութագրվում են եռաշարք բաղաձայնական համակարգերով, որոնցում տարբերակվում են պարզ ձայնեղներ, պարզ խուլեր և շնչեղ խուլեր: Սակայն բառամիջի բաղաձայն հնյուններն ունեն որոշակի դիրքային և որակական առանձնահատկություններ, որոնցով էլ տարածաշրջանի խոսվածքները միավորվում և տարբերվում են: Հետազոտության համեմատական-վիճակագրական արդյունքները բերվում են ստորև:

Սևանի, Գավառի, Մարտունու տարածաշրջանները միավորվում են շնչեղ ձայնեղների համակարգով, իսկ Դիաղինի բարբառի խոսվածքներն այդ հատկանիշը չունեն, հետևաբար տարբերվում են մյուսներից: Սակայն շնչեղ ձայնեղների համակարգով ներկայացող խոսվածքները տարբերակվում են իրարից ուժեղ և թույլ շնչեղության հատկանիշով: Լսաձայ-

նազրումների հետազոտումները ցույց են տալիս, որ Մարտունու տարածաշրջանի Լիճք, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Մադինա գյուղերի շնչեղ ձայնեղներն ուժեղ են, ունեն ընդգծված հնչեղություն՝ *բօծ, գարի, դուր, ձօր, ջուր*, իսկ մյուս տարածքների շնչեղ ձայնեղները՝ թույլ. չունեն որոշակիորեն ընդգծված շունչ ու հնչեղություն՝ *բան, գալ, դուրս, ձուն, ջուր* և այլն: Ընդ որում, թույլ և ուժեղ շնչեղ ձայնեղների գործառման համար բացառված դիրք է բառամեջը և բառավերջը:

Ընդհանուրիհայերենյան բառերի բառասկզբի դիրքում պարզ ձայնեղներ կան Դիադինի բարբառը ներկայացնող խոսվածքներում՝ *բօխկ, գէլ, դուրէլ, ձէն, ջարթէլ* և այլն, ինչպես նաև՝ մարզի ողջ խոսվածքների նորագույն շրջանի արտաքին և ներքին փոխառությունների բառասկզբում՝ *բոլազ, դատարան, զանձանազ, դինչ, բէդ, զամ «1. սանձ, 2. մեխ», դաղէլ* և այլն: Հնչյունական վերջին այս հատկանիշով մարզի բոլոր խոսվածքները միավորվում են:

Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի բոլոր խոսվածքներում, ինչպես նաև Գավառի տարածքի Նորատուսի և Սևանի շրջանի Ծովագյուղի խոսվածքների՝ բառամիջում ու բառավերջում կան ձայնեղներ՝ *արրանք, բազ, ծաղիզ, կողրէս, պղդուզ, մրգարդ, մաձուն, խրադ, հավադալ, իւկոզ* և այլն, այն դեպքում, եթե մարզի մյուս խոսվածքներում այդ դիրքերում գործածվում են պարզ խուլեր՝ *պատրսիսան, կրնիկ, բանրակ, խրարտ, խավիծ* և այլն:

Գեղարքունիքի խոսվածքներում ձայնեղ հնչյունները գործառում են նաև բառամիջի և բառավերջի հնչյունական որոշակի միջավայրերում: Գավառի, Սևանի, Մարտունու տարածաշրջանի խոսվածքների մի մասում (Երանոս, Զոլաքար, Ծակքար, Վարդենիկ և այլն) ձայնեղներ կան ոնզային ն, մ բաղաձայններից հետո՝ *թումբ, բանրակ, գանգատ, հընդանիք, մղանձ, պինդ, ճընջուղ, ծունգ, անձվէր, էրինչ* և այլն: Չնայած նրան, որ Դիադինի

բարբառը ներկայացնող խոսվածքների բառամիջի և բառավերջի դիրքերում կան բաղաձայնների կայուն, անտեղաշարժ համակարգեր, սակայն ոնզայինների և ձայնորդների հարևանությամբ ունեն այնպիսի ձայնեղներ, որոնք կային վերոնշյալ խմբերում՝ *տէրդէր, ցուող, ճանաբարի, ամբ, փէդուռ, կրնգան* և այլն:

Գեղարքունիքի մարզի խոսվածքներում բառերի բոլոր դիրքերում կան խուլ բաղաձայններ: Բառամիջի և բառավերջի դիրքում խոսվածքներն ունեն խուլերի գործառման ինքնատիպ համակարգեր այլ որակի հնչյունների հարևանությամբ: Մարտունու տարածաշրջանի Մշո շերտի խոսվածքներում (Լիճք, Չորագյուղ, Գետաշեն, Աստղաձոր, Շովինար, Թազագյուղ, Շակքար, Աղամիան), ինչպես նաև Սևանի տարածաշրջանի Շովագյուղի խոսվածքում պատմականորեն ապաշնչելացած խուլեր կան բառամիջում և բառավերջում՝ *թապէլ, զածին, առձատ, թատ, բուկ, խուծ, աղաձանկ, էրտալ* և այլ: Մյուս խոսվածքներում նմանատիպ դիրքերում օրինաչափ են շնչել խուլերի գործածությունները: Բառամիջում և բառավերջում ոնզային և, և բաղաձայններից հետո Մարտունու տարածաշրջանի խոսվածքների մի մասում (Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Լիճք, Սղինա, Չորագյուղի և այլն), ինչպես նաև Շովագյուղի խոսվածքում գործառում են պարզ խուլեր, այն դեպքում, եթե մյուս տարածքներում նմանատիպ դիրքերում կան պարզ ձայնեղներ՝ *բամպակ, գէրընտի, իիկանտ, փօխինտ, շանկած* և այլն: Վերոնշյալ խոսվածքներում կան պարզ խուլեր բառամիջի և բառավերջի ձայնավորներից և թ, ո ձայնորդներից հետո՝ *կառտալ, լիոպ, իապէլ, շապատ, առձև* և այլն, այն դեպքում, եթե մյուս խոսվածքներում այդ դիրքերում կան ձայնեղներ ու շնչել խուլեր:

Դիաղինի շերտը ներկայացնող խոսվածքներում դիտարկման արժանի է մի հնչյունական երևույթ: Ընդունված է համարել որ Դիաղինի խոսվածքներում բացակայում են շնչել ձայնեղ-

ները³¹³: Գ. Զահուկյանը նույնպես հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման մեջ այս երևոյթը բացառել է Վարդենիսում գործող Դիաղինի բարբառի համար³¹⁴: Բարբառագետ Ա. Հանեյանը, անդրադառնալով Դիաղինի բարբառն ուսումնասիրած Ռ. Բաղրամյանի դիտարկումներին խնդրո վերաբերյալ, գրում է. «Ի դեպ, Դիաղինի (Վարդենիսի) բարբառին նա հատկացրել է ձայնեղներով համակարգ: Իբրև ընդհանուր հատկանիշ՝ նոր սերնդի խոսվածքում նշված է ձայնեղ շնչեղների թույլ շնչեղացման և ձայնեղ հագագի խլացման հակումը, որ տանում է դեպի ձայնեղ շնչեղների ապաշնչեղացում և ձայնեղ հագագի ապաձայնեղացում»³¹⁵: Ա. Հանեյանն անժխտելի է համարում Դիաղինի խոսվածքներում ձայնեղ շնչեղության առկայությունը՝ դրանք դիտելով համեմատաբար թույլ շնչեղությունը³¹⁶:

Մեկ այլ ոչ լեզվաբան հետազոտողի՝ Վ. Խաչատրյանի գնահատմամբ՝ Վարդենիսի (Դիաղին) տարածքում կան խլության հակված ձայնեղներ բառասկզբի դիրքում³¹⁷, այն դեպքում, որ Ա. Հանեյանը դրանք համարում է թույլ շնչեղություն: Փաստ է մեկ իրողություն. Աձայանի օրենքը գործում է Վարդենիսի խոսվածքներում: Սակայն տարբերությունն այն է, որ քմայնացած ձայնավորներից առաջ ձայնեղները չեն խլացել ամբողջովին, այլ միշին վիճակով են ներկայանում. ձայնեղ են խլության երանգով և առկա

³¹³ Ռ. Բաղրամյան, Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 116:

³¹⁴ Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 58:

³¹⁵ Ա. Հանեյան, Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս (Ուսումնասիրություններ և նյութեր), Պրակ 3, Ե., 2010, էջ 204:

³¹⁶ Ա. Հանեյան, Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս (Ուսումնասիրություններ և նյութեր), Պրակ 3, Ե., 2010, էջ 217:

³¹⁷ Վ. Խաչատրյան, Վարդենիսի (Դիաղինի) բարբառը, Երևան, 2004, էջ 38:

է խլացման գործընթաց: Այդ են վկայում նաև հետազոտված լսաձայնագրումները: Օրինակ՝ *բուրդ, զարի, դարձ, ձօր, ջուր* և նմանատիպ այլ բառերում բառասկզբի ձայնեղների արտասանությունը, կարծեք թե, մոտենում է խուլ հնչյունների արտաքրմանը: Մեր այս պնդման հիմքում դնում ենք այն փաստը, որ Մշո և այլ բարբառներում մեզ հանդիպած թույլ շնչեղ ձայնեղները չունեն այն որակը, ինչպես Վարդենիսի պարագայում ներկայացնում է Ա. Հանեյանը:

Տարածաշրջանի բոլոր քննարկված խոսվածքները միավորվում են բառասկզբում շնչեղ խուլերի առկայությամբ, որոնք արտասանական տարբերություններ չունեն՝ *բուր, փուու, փուօխինդ, թընդիր, ցօրէն, չօյքան* և այլն: Սակայն Դիադինի խոսվածքներում *ք* շնչեղ խուլ բառասկզբի, երբեմն նաև բառամիջի դիրքերում, հատկապես առաջնալեզվային ձայնավորներից առաջ ներկայանում է քմային *ք* տարբերակով և որոշակի հակադրության մեջ մտնում էտալոնային *ք-ի* հետ՝ *քամբախ, քիթ, քառթու, քէլալ, խօքի, քօ, քամի, քաղէլ, թքքէլ, շաքար* և այլն: Ետնալեզվային բաղաձայնների քմայնացումները վերաբերում են այն դեպքերին, երբ *գ, կ, ք* հետնալեզվայիններին հաջորդում են առաջնային շարքի ձայնավորներ, մինչեւ վերոնշյալ տարածքների դեպքում քմայնացումները պայմանավորված չեն հաջորդող ձայնավորի բնույթով³¹⁸: Քմային *ք-ի* և էտալոնային *ք-ի* գործածություններով տարբերակայնություն են դրսևորում ուսումնասիրվող խոսվածքները. Դիադինի շերտը ներկայացնող խոսվածքների բառավերջը ներկայանում է քմային *ք-ով*՝ ընդգրկելով միայն բնիկ բառերը՝ *հինք, իրէնք, բաժինք, էստօնք, իրէք* և այլն: Հետնալեզվային *ք-ի* քմայնացման դեպքեր ենք արձանագրել նաև Մարտունի քաղաքի խոսվածքում՝ *խօքի, բուք, մէնք* և այլն:

³¹⁸ Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնցյունաբանություն, Ե., 1982, էջ 310, 312:

Վարդենիսի տարածաշրջանում հնչունների քմայնությունը մեծ տարածում ունի: Իրողությունը տարածվում է ոչ միայն ք-ի, այլև հետնալեզվային մյուս՝ գ, կ բաղաձայնների վրա: Եթե Սշո շերտի խոսվածքներում հազվադեպ են քմային գ, կ՝ հնչուններն առաջնալեզվային ձայնավոր հնչուններից առաջ, ապա դրանք օրինաչափ են հատկապես Վարդենիսի խոսվածքներում և մեծ ոլորտներ են ընդգրկում՝ կէրակուր, կէխտ, կշտուր, տիկին, կիր, հէրէզ, մանակ, ծախէկ, շրլէկ և այլն: Երևույթը կա նաև Գավառի տարածաշրջանի Նորատուսի խոսվածքում:

Քմայնության՝ մեծ տարածում ունենալու հետևանք է նաև այն, որ Գավառի և Սևանի տարածաշրջանների, հատկապես Նորատուսի, Ծովագյուղի, Դդմաշենի, Գեղամավանի, Ծաղկունքի, Այրիվանի խոսվածքներում հետնալեզվային պայթական գ, կ, ք բաղաձայնները ընդհանուրիհայերենյան և նորագույն շրջանում փոխառյալ բառերում առաջնալեզվային ձայնավորներից առաջ բաղաձայնների քմայնացման օրենքով ներկայանում են որպես առաջնալեզվային ջ, ջ՛, չ հնչուններ: Այս համակարգերի մասին վկայել է բարբառագետ Ռ. Բաղրամյանը³¹⁹, չէր<կէր<կիր, չավօր<քավօր, ջէրընդի<գէրընդի<գէրընդի, ջէտ<գէտ<գէտ, ջին<գին<գին, չէա<քէչա<քէչա և այլն: Այս իրողության հիմքում ընկած է առաջնալեզվային ձայնավորներից առաջ տեղի ունեցող ուժեղ քմայնությունը: Այն այնքան ուժեղ է եղել, որ «հիշյալ բաղաձայնների արտասանության ժամանակ արտաքերության բովը միջնալեզվայինից տեղափոխվել է դեպի ավելի առաջ, որի հետևանքով էլ պայթականները վերածվել են պայթաշփականների»³²⁰: Խոր հնություն չունեցող այս երևույթը տարածում է գտել նաև բառամիջում՝ պատճէր<պատկէր<պատկէր, սէրջէվիլ<սէրգէ-

³¹⁹ Ռ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 8, 10:

³²⁰ Հ. Սուլադյան, նշվ. աշխ., էջ 310, 312:

վիլ<սէրգէվիլ, իւէար><խէքար><խէքար և այլն: Այս երևույթի ոչ խոր հնություն ունենալը պայմանավորված է հայերենում քմայնության երևույթի գործածությամբ: Կարծում ենք՝ այն չի կարող նախորդած լինել հետնալեզվային ձայնավորների քմայնությանը և ձևավորված պետք է լինի ավելի ուշ, թերևս հայերենի զարգացման վաղ աշխարհաբարի փուլում կամ դրան նախորդած ու հաջորդած հարակից փուլերում: Ըստ բարբառագետ Ժ. Միքայելյանի բնութագրման՝ այս հնչյունները «գրավում են միջին դիրք» հետնալեզվային գ, կ, ք բաղաձայնների և քմային գ, կ, ք հնչյունների միջեւ³²¹: Այդուհանդերձ, կարծում ենք՝ կա որոշակի տարբերություն առաջնալեզվային ջ, Ճ, Ձ և հետընթաց արտաքերություն ունեցող ջ, Ճ, Ձ, Հ հնչյունների միջև: Կարծում ենք՝ այդ որոշակի տարբերությունը, ի տարբերություն ջ, Ճ, Ձ հնչյունների առաջընթաց արտաքերման, ջ, Ճ, Ձ, Հ հնչյունների հետընթաց արտաքերությունն է, և միայն փորձառական-լաբորատոր հետազոտությունը կարող է այդ տարբերությունը հստակ ուրվագծել: Այս հնչյուններն իմաստատարբերակիչ հակադրություններ չեն կազմում գ, կ, ք հնչյունների համեմատությամբ, այլ ջ, Ճ, Ձ հնչյունների դիրքային տարբերակներն են: Ջ, Ճ, Ձ հնչյունները տարածքիս խոսվածքների բաղաձայնական համակարգում ուրույն տեղ են գրավում:

Տարբեր որակի հնչյունների միջև շնչեղ խուլեր կան Գավառի տարածաշրջանի խոսվածքներում և Մարտունու շրջանի խոսվածքների մեծ մասում (Մարտունի, Վարդենիկ, Շակար և այլն). ա) բառամիջում՝ շնչիսթ, աքահ, դ’ըթում, օչիլ, իսափէլ, բուրք, ստէրչ և այլն, բ) բառավերջում՝ յէփ, թաք (թագ), օթ, օց, էք, մէչ և այլն: Ընդ որում, շնչեղ խուլերի գործառման դաշտն ավելի մեծ է. այդպիսիք կան թու ձայնորդներից հետո ևս՝ հառփէլ, լիոփ, յէրք,

³²¹ Ժ. Միքայելյան, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները: Համաժամանակյա և տարաժամանակյա քննություն, Ե., 2009, էջ 31:

կարք, բուռք, վարք, խուզց, բանցքը, առշ, մըռչէմ և այլն: Սևանի, Գավառի խոսվածքների մի մասում (Նորատուս, Այրիվանք և այլն) և Վարդենիսի տարածաշրջանի խոսվածքներում կան շնչել խուլեր բառամիջի և բառավերքի դիրքերում՝ *խէլք, շունչ, կանք* և այլն:

Տարածաշրջանի խոսվածքներում բառի բոլոր դիրքերում շփական բաղաձայններն ունեն արտաքերման միևնույն օրինաշափությունները, եղած տիպական և ընդհանրական տարբերությունները հանգում են հետևյալին:

Մարզի խոսվածքների մեծ մասում գործում է ոչ առնմանական, ենթաշերտային երևույթ համարվող *հ>իւ* անցումը: Այս իրողությունը, ինչպես լեզվաբաններն են նշում, գալիս է հնուց, և քիչ հավանական է, որ այս երևույթը բարբառային փոխազդեցությունների հետևանք է³²²: Ա. Խաչատրյանը, հենվելով փորձառական ուսումնասիրությունների տվյալների վրա, եզրակացնում է, որ *հ-ն* մոտենում է ըստանային արտասանության³²³, ինչպիսին *իւ-ն* է: Սրանից կարելի է եզրակացնել, որ երկու հնյունների միջև եղած ընդհանրությունը պայմանավորված է տեղով: Սևանի տարածաշրջանի Ծովագյուղի խոսվածքում և Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների Մշո բարբառը ներկայացնող խոսվածքներում չկա *հ>իւ* անցումը: Այսինքն՝ նշված բարբառային միավորների բառերի այն դիրքերում, որտեղ *հ* կա, բացառված է շփական *իւ* հնյունի համար: Բուն Մշո բարբառում կան են մի քանի բացառություններ, այն էլ միավանկ բառերում՝ *խըտ, ախ, զաիչ*³²⁴,

³²² Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 131: Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1953, էջ 67: Գ. Զահոռիկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, 267: Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 264-270: Վ. Կատվալյան, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 63, 74:

³²³ Ա.Հ. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988, էջ 183:

³²⁴ Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958, էջ 66:

*իող, իստ, իսս*³²⁵: Այս բառերը, որպես բացառություններ, ամենայն հավանականությամբ, ազդեցություններ են և Մշո բարբառին են անցել հարևան բարբառներից ու խոսվածքներից: Մինչդեռ մյուս բոլոր տարածքների, այդ թվում Մարտունու տարածաշրջանի մի շարք խոսվածքներում՝ Մարտունի քաղաքում, Վարդենիկ գյուղում և այլ խոսվածքների նմանատիպ դիրքերում իսկ գործառումն օրինաչափ է՝ *իիկանդ, իսց, իսլիկօր, իսմ, իսմրրէլ* և այլն: Ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման՝ Մշո բարբառի խոսվածքներից միայն Բաղեշը, Խլաթը, Արձեշը, Արծկեն ունեն *հ>ի* անցումը³²⁶, սակայն կարծում ենք, որ այս իրողությունները կան նաև Ալաշկերտի տարածքի որոշ խոսվածքներում, քանի որ ժողովրդագրություններում նշվում է, որ Մարտունու տարածաշրջանի իսկախոս գյուղերի մեծ մասը եկվորներ են հենց Ալաշկերտի կողմերից:

Կա տեսակետ, համաձայն որի՝ հայերենում *ի*-ի դիմաց *իս* ունեցող բարբառներն ի սկզբանե չեն ունեցել *հ* բաղաձայի³²⁷: Գեղարքունիքի մարզում *ի*-ախոս են Երանոսի, Վարդաճորի, Լիճքի, Չորագյուղի, Վերին Գետաշենի, Ներքին Գետաշենի, Մադինայի, Ծովագյուղի, Մաքենիսի խոսվածքները, իսկ տարածքի մյուս բոլոր խոսվածքները *իս*-ախոս են: Հ-ախոսների լեզվում *իս* կա այն բառերում, որոնք հայերենի զարգացման հնագույն շրջանում կատարված փոխառություններ են՝ *ինձոր, իսելք/կ, իսիլ* և այլն, իսկ *իս*-ախոսների լեզվում *հ* կա ուշ շրջանի գրական փոխառություններում՝ *համօզէլ, հանդարտ, հարուստ, հրուշագէղէն, հէռախօս* և այլն, ինչպես նաև այն դեպքերում, երբ առկա է գրաբարյան ձայնեղ հազար *յ>խոլ* հազար *հ* անցումը՝ *հարզ, հաջէլի, հիմար, հիշատակ, հղի* և այլն: Իսկ՝ ժամանակակից գրական փոխառություններում չարտացոլվելու հանգամանքը հաշվի

³²⁵ Ք. Սաղարյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985, էջ 38:

³²⁶ Գ. Զահոռկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 56-57:

³²⁷ Վ. Կատովալյան, նշվ. աշխ., 2014, էջ 63, 74:

առնելով՝ հայերենում հնչյունական այս օրենքը համարվում է ոչ թե վերացող, այլ սահմանափակվող: Խ-ախոս են մարզի խոսվածքների մեծ մասը, այդ թվում Մարտունու տարածաշրջանի Մարտունի քաղաքի, Ծակքարի, Վաղաշենի, Աստղաձորի, Զոլաքարի, Վարդենիկի, Ծովինարի, Կարճաղբյուրի, Արծվանիստի խոսվածքները:

Խոսվածքներում առանձնահատկություններ են ցուցաբերում նաև ձայնեղ և խոլ հագագները: Մշտ շերտի *հ*-ախոս խոսվածքներում տիպական է ձայնեղ *c* հագագի գործածությունը միայն ձայնավոր հնչյուններից առաջ՝ *cwնզաջ*, *cwխպուր*, *cwշչ*, *cհմնալ*, *cէվէլի*, *cէրազ*, *cընզուզ*, *cառող* և այլն, իսկ *խ*-ախոս և մյուս խոսվածքներում՝ խոլ *հ* հագագի գործածությունը: Սակայն մարզի՝ ձայնեղ հագագ ունեցող խոսվածքներում կա խոլ հագագի գործառույթների ընդլայնման և հագագների աստիճանական միօրինակացման միտում, այսինքն՝ հաճախաղեաւ են այն գործածությունները, եթք ձայնեղ *c* հագագը փոխարինվում է խոլ *հ* հագագով:

Հավելական *հ*-ի առկայություն կա բառասկզբում ձայնավորից առաջ տարածքիս բոլոր խոսվածքներում՝ *հ արի*, *հ օժար*, *հ իրար*, *հ ըրօր*, *հ ուրիշ*, *հ ունք*, *հ ըմսէն*, *հ ափ*, *հ առիք* և այլն: Հավելական *հ*-ն, լինելով կոկորդային հնչյուն, ընկալվում է որպես ձայնեղ շունչ: Այս հնչյունը հումկու շունչ է և ունի ուժգին արտասանություն՝ *հ էռտիզ*, *հ իշկալ*, *հ առիկ*, *հ էկուց*, *հ ախպուր* և այլն: Խոսվածքներում կան նաև առանց հավելական *հ* -ի գործածության փաստեր՝ *ալիվօր*, *ուլուինկ* և այլն: Նշենք, որ Մշտ շերտի խոսվածքներում հավելական *հ*՝ ներկայանում է ձայնեղ հագագով՝ *cառիք*, *cէրքում*, *cէլնէլ*, *cըմէն* և այլն:

Մարզի դիտարկման ենթարկված գրեթե բոլոր խոսվածքներում տարբերակվում են կոկորդային *ն*, *ն*՝ հնչյունները: Պայթական այս հնչյունները փոխառված են արաբերենից և ունեն ըմպանային արտաքերություն: Հնչյունաբան Ա. Խաչատրյանն ինչպես *ն*, *իւ*, այնպես էլ այս հնչյունները կոչում է կատկային կամ փափկա-

քմային՝ կարևորելով կատիկի և քիմքի ունեցած մասնակցությունն այդ հնչյունների արտաքերման գործընթացում³²⁸: Այս հնչյունները գործառական հակադրության մեջ են էտալոնային դեմք և ի հնչյունների հետ, միավորվում են միայն արտաքերման տեղով և հանդես են զալիս հիմնականում արևելյան լեզուներից կատարված նորագույն փոխառություններում՝ հրամաք, հարիք, հոլ և այլն: Ինչպես գիտենք, հայերենի վաղ փուլերում բառասկիզբը բացառված դիրք է եղել դ հնչյունի համար և հայերենում դ-ով բառ չի սկսվում³²⁹, ուստի և փոխառյալ դ, կ հնչյունների համակարգային գործածություններն օրինաշափ են: Քանի որ օրինաշափություն է, որ հայերենում բառասկզբի դիրքում բացառված է դ հնչյունի կիրառությունը, հետևապես հատկապես Մշո բարբառում միտում կա փոխառյալ դ, կ հնչյունները փոխարինել իւ հնչյունով³³⁰, ինչպես՝ խարիք, խամաք, խսմաք և այլն: Սակայն Գեղարքունիքի մարզի ոչ Մշո շերտի խոսվածքներում այդ գործընթացը չկա: Ծովագյուղի, Այրիվանի, Նորատուսի և Մակուի շերտը ներկայացնող մյուս խոսվածքներում ըմպանային դ-ն խիստ կոկորդային արտասանություն ունի և ներկայանում է զուգահեռ կ տարբերակներով՝ դ/կուլ, դ/կում, դ/կրլէզ և այլն: Գավառի և Սևանի խոսվածքներում կան փաստեր, երբ կոկորդային դ հնչյունը ի հայտ է զալիս համահայերենյան ետնալեզվային դ-ի և կ-ի փոխարեն, այսինքն կա դ>դ, կ>կ անցումը՝ դրունզ<կուունկ, դանկառ<կանգառ, դանչէլ<կանչէլ, դրուքնէլ<կրծուացնէլ, դում<կում, դուլ տալ< կուլ տալ և այլն: Սա, կարծում ենք, համարա-

³²⁸ Ա. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988, էջ 181:

³²⁹ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 214-215, Էդ. Արայան, Գրաբարի բերականություն, Գիրք Ա, Հնչյունաբանություն, Ե., 1964, էջ 81-102:

³³⁰ Գ. Սկրտչյան, նշվ. աշխ., էջ 134-136:

նությամբ կատարվող երևույթ է և ՞-ի գործառույթների ընդլայնման միտում: Ի հակադրություն սրա, Մշո շերտի խոսվածքներում կոկորդային ՞-ն միտում ունի վերածվելու սովորական դի կամ *ի-ի՝ իսարիբ, իսասար, իսամազ, իսմաթ* և այլն:

Որպես ամփոփում՝ համաժամանակյա և ընկալողական մեթոդներով կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Գեղարքունիքի մարզի խոսվածքները լավագույնս պահպանել են պատմական հայերենիքում ունեցած հնչյունական համակարգերը ու դրանց առանձնահատկությունները, քանի որ երբեմնի գործած լեզվական համակարգերի և ներկայիս բարբառախոսների ունեցած լեզվական տվյալների համեմատություններում գերակշռողը ընդհանրություններն են:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻԹԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԸՍՏ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԻ

ԱԶԱՏ - Վարդենիսի տարածաշրջանի այս գյուղում բնակվում են Աղրբեջանից բռնազաղթած հայեր: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Բնակչությամբ հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ԱԽՊՐԱԶՈՐ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակչությամբ Սասունից, Մուշից 1915 թ. գաղթած հայերի սերունդներն են: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

ԱԿՈՒՆՔ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակավայրը 1830 թ. հիմնել են Բայազետի զավառի Ղարաքենդ գյուղից գաղթածները: Ներկայում գյուղի խոսվածքը զգալիորեն տարբերվում է Բայազետի բարբառից, հատկապես հնյունական հատկանիշներով նմանվում է Դիաղինի բարբառին:

ԱՂԲԵՐՔ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Բնակչությունը հիմնական մասը Աղրբեջանից բռնազաղթած հայերն են: Ընդգրկված է Շողակար համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ԱՅԳՈՒՏ - Ճամբարակի տարածաշրջանի այս գյուղում ապրում են Աղրբեջանից բռնազաղթած հայեր: Ընդգրկված է Ճամբարակ համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ԱՏՏԱՌԱՄԵԶ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1850 – ական թվականներին: 1988 թ. վերաբնակեց-

վել է Աղբբեջանի Շամիտրի շրջանի հայաբնակ գյուղերի փախստական հայ ընտանիքներով: Ընդգրկված է Ճամբարակ համայնքում: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ԱՍՏՂԱՋՈՐ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների նախնիները 1829-30 թթ. գաղթել են Ալաշկերտից և Վանից: Հաղորդակցվում են *Մշո բարբառով*:

ԱՎԱԶԱՆ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988 թ. վերաբնակեցվել է Աղբբեջանից տեղահանված հայ ընտանիքներով: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ԱՐԾՎԱՆԻԱՏ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների նախնիները 1829-30 թթ. գաղթել են Ալաշկերտից: Հաղորդակցվում են *Մշո բարբառով*:

ԱՐԾՎԱՔԱՐ - Գավառ քաղաքի թաղամաս, նախկինում՝ գյուղ Արծվաքար: Բնակիչների նախնիները 1829-1830 թթ. գաղթել են Բայազետից: Հաղորդակցվում են *Բայազետի բարբառով*:

ԱՐՏԱՆԻՇ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Բնակեցված է Աղբբեջանից բռնագաղթածներով և Արծվաշենից տեղահանվածներով: Ընդգրկված է Շողակաթ համայնքում: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ԱՐՓՈՒՆՔ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988 թ. վերաբնակեցվել է Աղբբեջանից բռնագաղթած փախստականներով: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ԲԵՐԴԿՈՒՆՔ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: 1920 թ. վերաբնակեցվել է Նորատուս և Գանձակ գյուղերից եկած ընտանիքներով: Հաղորդակցման լեզուն *Բայազետի բարբառն* է՝ Նորատուսի խոսվածքի հատկանիշներով:

ԳԱԳԱՐԻՆ - 1955 թ. հիմնվել է իրրև բանավան, այժմ ընդգրկված է Սևան համայնքի կազմում: Բնակչությունը նախնիները եկել են տարբեր վայրերից: Հաղորդակցման լեզուն *խոսակցական հայերենն* է:

ԳԱՄԶԱԿ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակչությունը նախնիները 1828 թ. գաղթել են Բայազետի, Ալաշկերտի, Խոյի ու Սալմաստի գյուղերից: Հաղորդակցվում են *Բայազետի բարբառով*:

ԳԱՎԱՌ - Քաղաք, մարզկենտրոն: Բնակչությունը նախնիները 1829-30 թթ. գաղթել են Բայազետից: Հաղորդակցվում են *Բայազետի բարբառով*:

ԳԵՂԱՄԱԲԱԿ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988-1989 թթ. վերաբնակեցվել է Աղբքեշանից բռնազաղթած հայ ընտանիքներով: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ԳԵՂԱՄԱՎԱՆ - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Բնակչությունը նախնիների մի մասը 1828-29 թթ. գաղթել է Մակու գավառի Անձուկ գյուղից, ինչպես նաև՝ Ալաշկերտի, Սալմաստի, Խոյի, Մուշի, Բայազետի գյուղերից: Հաղորդակցման լեզուն հիմնականում *Մակուի խոսվածքն* է:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակչությունը նախնիները գաղթել են Բայազետի, Ալաշկերտի, Բուլանըի և Մուշի գյուղերից 1829-30 թթ. և 1914-19 թթ.:

Խորհրդային տարիներին այստեղ վերաբնակեցվել են Սարուխանից աքսորվածներ: Հաղորդակցվում են *Բայազետի բարբառով*:

ԳԵՂԱՔԱՐ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988 թ. վերաբնակեցվել է Աղրբեջանից բռնագաղթած հայերով: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ԳԵՂՉՈՎԻՏ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների նախնիները 1828-30 թթ. գաղթել են Ալաշկերտի գյուղերից (Քուփդրան, Զանգազուր և Մանզասար): Հաղորդակցվում են *Մշո բարբառով*:

ԴԱՐԱՆԱԿ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Հիմնադրել են 1921 թ. նույն տարածաշրջանի Փամբակ գյուղից տեղափոխվածները: 1988-1989 թթ. վերաբնակեցվել է Աղրբեջանից բռնագաղթած հայերով: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ԴՆՄԱՇԵՆ - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Բնակիչների նախնիների մի մասը 1828-29 թթ. ներգաղթել է Մակուից, մասամբ նաև՝ Վանի նահանգից: Հաղորդակցվում են *Մակուի խոսվածքով*:

ԴՊՐԱՔԱԿ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Բնակիչների մի մասը եկել է Ղազախից և Արցախից: 1990-ական թթ. այստեղ են վերաբնակվել Բաքու, Գանձակ, Սումգայիթ քաղաքներից, Արծվաշեն գյուղից բռնագաղթածները: Ընդգրկված է Ճամբարակ համայնքի կազմում: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ԴՐԱԽՏԻԿ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: 1988 թ. վերաբնակեցվել է Աղրբեջանից և Արծվաշենից տեղահանված

հայերով: Ընդգրկված է Շողակաթ համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ԵՐԱՆՈՍ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակչությունը՝ 1829-30 թթ. 112 մասը այստեղ է եկել 1829-30 թթ. Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով:

ԶՈԼԱՔԱՐ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակչությունը՝ 1829-30 թթ. 112 մասը այստեղ է եկել 1829-30 թթ. Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

ԶՈՎԱԲԵՐ - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Բնակչությունը՝ 1829-30 թթ. 112 մասը այստեղ է եկել 1829-30 թթ. Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

ԼԱՆՉԱՂԲՅՈՒՐ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակչությունը՝ 1829-30 թթ. 112 մասը այստեղ է եկել 1829-30 թթ. Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով:

ԼԻՃՔ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակչությունը՝ 1829-30 թթ. 112 մասը այստեղ է եկել 1829-30 թթ. Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով:

ԼՃԱՇԵՆ - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Բնակչությունը՝ 1828 թ. 112 մասը այստեղ է եկել 1828 թ. Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Պարսկական լեզուն մոտ է Բայազետի բարբառին Մշո բարբառի խոսվածքով:

ԼՃԱՎԱՆ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակչությունը՝ 1828-29 թթ. 112 մասը այստեղ է եկել 1828-29 թթ. Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Պարսկական լեզուն մոտ է Բայազետի բարբառին Վարդենիսի խոսվածքով:

նից, Մուշի ու Բուլանըխի գյուղերից: Հաղորդակցվում են *Մշնական բարբառով*:

ԼՃԱՓ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակիչների մի մասը ծագումով Վերին և Ներքին Գետաշեն գյուղերից է, նաև Կարմիրգյուղ բնակավայրից: Գյուղի խոսվածքը պատկանում է՝ բարբառների Ում ճյուղին և հիմնականում *Բայազետի բարբառն* է՝ *Մշնական բարբառի* որոշ ազդեցությամբ:

ԼՈՒՍԱԿՈՒՆՔ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները 1829-30 թթ. գաղթել են Մուշի գավառից, Արձեշից: Հաղորդակցվում են *Մշնական բարբառով*:

ԽԱՉԱՂԲՅՈՒՐ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները 1915-18 թթ. գաղթել են Դիաղինից, Մուշի, Վանի, Բասենի, Ալաշկերտի, Երզնկայի գյուղերից: 1988-1990 թթ. գյուղում բնակություն են հաստատել Աղբքաջանից բռնագաղթած հայ ընտանիքներ: Հաղորդակցվում են *Մշնական բարբառով*:

ԾԱԿՔԱՐ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Հիմնադրվել է 1828 թ. Ալաշկերտի Հասան-փաշա, Քարձոր, Մացկերտ և Ֆերան գյուղերից գաղթածների կողմից: 1878 թ. գյուղում հիմնվել են Մշնական գավառից գաղթած նոր գերդաստաններ: Հաղորդակցվում են *Մշնական բարբառով*:

ԾԱՂԿԱՇԵՆ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Վերաբնակեցվել է 1828-1829 թթ.: Բնակիչների նախնիների մեծ մասը գաղթել է Բայազետի Արծափ, Դիզա գյուղերից, Մուշից, Մյուսները՝ հարևան Գանձակ գյուղից: Հաղորդակցվում են *Բայազետի բարբառով*:

ԾԱՂԿՈՒՆՔ - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Բնակիչների նախնիները գաղթել են Մակուից, Խոյից և Վանից 1828-29 թթ.: Հաղորդակցվում են Մակուի խոսվածքով:

ԾՈՎԱԳՅՈՒՂ - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Գյուղը 1828 թ. հիմնել են Բայազետի Արծափ գյուղից եկած գաղթականները: Հաղորդակցվում են Արծափի խոսվածքով:

ԾՈՎԱԶԱՐԴ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները 1829-30 թթ. գաղթել են Մուշից, Ալաշկերտից: Հետագայում այստեղ են բնակեցվել աքսորյալներ Սարուխանից, այլ գյուղերից: Գյուղի խոսվածքը *Մշուշուղարձության բարբառների* մի յուրօրինակ խառնուրդ է՝ Ում ճյուղին բնորոշ ներկայի գերակշռությամբ: Սարուխանցիների թաղում, այնուամենայնիվ, պահպանվում է Բայազետի բարբառ:

ԾՈՎԱԿ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1827 թ.: Բնակիչների նախնիները եկել են Մուշից, Խլաթից, Բայազետից: Հաղորդակցվում են Մշուշուղարձության բարբառների մասին նախնիները 1829 և 1878 թթ. եկել են Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Մշուշուղարձության բարբառների մասին:

ԾՈՎԱՍԱՐ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները 1829 և 1878 թթ. եկել են Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Մշուշուղարձության բարբառների մասին:

ԾՈՎԻՆԱՐ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների նախնիները եկել են 1828-1829 թթ. Պարսկահայաստանից և Ալաշկերտից: Հաղորդակցվում են Մշուշուղարձության բարբառների մասին:

ԿԱԲԱԿՆ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988 թ. վերաբնակեցվել է Աղբեջանից տեղահանված հայ փախստականներով: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ԿԱՐՃԱՂՅՑՈՒԻՐ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Գյուղը հիմնել են 1829-30 թթ. Մուշից եկած գաղթականները: Հետագայում այստեղ հաստատվել են նաև Վանից գաղթած մի քանի ընտանիքներ: Հաղորդակցվում են *Եշո բարբառով*:

ԿԱՐՄԻՐԳՅՑՈՒՂ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակչությունը մի մասի նախնիները 1829-30 թթ. գաղթել են Բայազետից: Հաղորդակցվում են *Բայազետի բարբառով*:

ԿՈՒԹ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988 թ. վերաբնակեցվել է Աղրբեջանից բռնազաղթած հայերով: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ԿՈՒՏՍԱՎԱՆ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988 թ. վերաբնակեցվել է Աղրբեջանից բռնազաղթած հայերով: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են *Ղարաբաղի բարբառով*:

ՀԱՅՐԱՎԱՆՔ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակչությունը մեծ մասի նախնիները այստեղ են տեղափոխվել Նորատուս գյուղից 1920-ականների սկզբին: Հաղորդակցվում են *Բայազետի բարբառի Նորատուսի խոսվածքով*:

ՀԱՅԱՌԱՋ - Գավառ քաղաքի թաղամաս, նախկինում՝ գյուղ Հացառատ: Բնակչությունը նախնիների մեծ մասը եկել է Բայազետից 1829-1830 թթ.: Հաղորդակցվում են *Բայազետի բարբառով*:

ԶՈՐԱԳՅՑՈՒՂ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակչությունը մի մասի նախնիները այստեղ վերաբնակեցվել են 1831 թ.

Ալաշկերտի Չլկանի գյուղից: Հաղորդակցվում են *Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով*:

ՁՈՐԱՎԱՆՔ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: 1988 թ. վերաբնակեցվել է Աղբքեջանի Շամխորի շրջանի հայաբնակ գյուղերից բոնագաղթած հայերով: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ՃԱՍԹԲԱՐԱԿ - Քաղաք Գեղարքունիքի մարզում: Հիմնադրվել է 1835-1840 թթ.: 1970-ական թթ. սկզբներին բնակչավայրին միացվել են Վերին Ճամբարակ և Ներքին Ճամբարակ գյուղերը: Վերջինիս բնակչությունը ծագումով Տավուշի տարածաշրջանի Չորաբան և շրջակա մյուս գյուղերից է: 1990-ականներին քաղաքում հաստատվել են Աղբքեջանից տեղահանված հայ փախստական ընտանիքներ: Հաղորդակցման լեզուն Գանձակի միջբարբառն է:

ՄԱՌԻՆԱ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները 1920-ական թթ. եկել են Ներքին Գետաշեն գյուղից, որի բնակիչների նախնիները, իրենց հերթին, եկել են Ալաշկերտ գյուղաքաղաքից 19-րդ դարում: Մադինա գյուղում հաղորդակցվում են *Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով*:

ՄԱՐՏՈՒՆԻ - Քաղաք Գեղարքունիքի մարզում: 1828 թ. վերաբնակեցվել է Ալաշկերտի գավառից գաղթած հայերով: Հաղորդակցվում են *Մշո բարբառով*:

ՄԱՐՏՈՒՆԻ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները այստեղ են գաղթել Արևմտյան Հայաստանից, մի մասինը՝ 1921 թ. ներկայիս ՀՀ Տավուշի մարզի

Այգեծոր և Կարմիրաղբյուր գյուղերից: Հաղորդակցման լեզուն խոսակցական հայերենն է:

ՄԱՔԵՆԻՍ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակչությունը 1828-29 թթ. այստեղ են գաղթել Մուշից, Բիթլիսից, Վանից, Մանազկերտից: Հաղորդակցվում են *Մշոքարքառով*:

ՄԵԾ ՄԱՍՐԻԿ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակչությունը նախնիները ներկայացնում են գաղթականության երեք շերտ (1896 թ., 1914 թ., 1922-1926 թթ.) և եկել են Բասենից, Մուշից, Կարսից, Վանից, սակայն մեծ մասը մշեցիներ են՝ Կոպ, Մասրիկ և այլ գյուղերից: Խոսվածքը հիմնականում *Մշոքարքառի* հատկանիշներ է հանդես բերում:

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակչությունը նախնիները հիմնականում գաղթել են 1828-29 թթ. Ալաշկերտ գյուղադառնություն: Հաղորդակցվում են Մշոքարքառի *Ալաշկերտի* խոսվածքով:

ՆՈՐԱԿԵՐՏ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Հիմնադրել են 1927 թ. Վանի գավառի Մեղ գյուղից գաղթած 12 ընտանիքներ: Բնակչությունը մի մասի նախնիները եկել են Մոկսից, Բիթլիսից, Խիզանից, Մուշից, Ալաշկերտից: Նկատելի է, որ խոսվածքում գերակշռում են *Մշոքարքառի* հատկանիշները:

ՆՈՐԱՇԵՆ - Գյուղ Սևանի տարածաշրջանում Հիմնադրվել է 1920 թ.: Բնակչությունը նախնիների մի մասը եկել է Կարսի շրջանից, Մուշից, Մակուից, հետագայում՝ շրջակա գյուղերից: Նորաշենի խոսվածքը հարում է *Մակուի* խոսվածքին՝ *Մշոքարքառի* որոշ հատկանիշներով:

ՆՈՐԱՏՈՒՄ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները 1829 թ. եկել են Բայազետի գավառի Քորուն և Մոսուն գյուղերից, հետագայում եկել են նաև Մուշից, Ալաշկերտից, Արծափից, Սուրմալուից և այլ վայրերից: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով:

ՇԱՏՁՐԵՔ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988-89 թթ. այստեղ բնակություն են հաստատել Աղրբեջանից բռնագաղթած հայեր: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ՇԱՏՎԱՆ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակիչների մեծ մասը 1988-89 թթ. Աղրբեջանից բռնագաղթած հայերն ու իրենց սերունդներն են: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ՇՈՐԺԱ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1810 թ.: 1989-1992 թթ. վերաբնակեցվել է Աղրբեջանից բռնագաղթած փախստականներով և Արծվաշենից տեղահանված ընտանիքներով: Ընդգրկված է Շողակաթ համայնքի կազմում: Հաղորդակցման լեզուն Ղարաբաղի բարբառն է:

ՉԿԱԼՈՎԿԱ - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Բնակիչների նախնիները եկել են Գոմաձորից, Վարսերից, Լճաշենից, շրջակայքի այլ գյուղերից: Հաղորդակցվում են հիմնականում Մակուի խոսկածքով:

ԶԱՂԱՅԱՋՈՐ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակիչները 1988-89 թթ. Աղրբեջանից բռնագաղթած հայերն ու իրենց սերունդներն են: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ԶԻԼ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Վերաբնակեցվել է 1988 թ. Աղրբեջանից բռնազաղթած հայերով: Ընդգրկված է Շողակաթ համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ՍԱՐՈՒԽԱՆ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակչության մեծ մասի նախնիները գաղթել են Բայազետի Զանգիզոր և Սուրբ Օհան գյուղերից 1829-30 թթ.: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով:

ՍԵՎԱՆ - Քաղաք Գեղարքունիքի մարզում: Հիմնադրվել է 1842 թ.: Հաղորդակցման ընդհանուր լեզուն՝ խոսակցական հայերենն է՝ բարբառային որոշ երանգներով (հիմնականում՝ Սակուհ խոսվածքի հատկանիշներով):

ՍՈԹՔ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988-89 թթ. այստեղ բնակություն են հաստատել Աղրբեջանի Խանլարի շրջանի Ուլկանապատ գյուղից բռնազաղթած հայերը: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ՎԱՀԱՆ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: 1925 թ. հիմնադրել են Հին Բաշքենդից եկածները (Հին Բաշքենդի բնակիչները իրենց հերթին եկել են Տավուշի տարածաշրջանի Չորաթան գյուղից 1854 թ.): Ընդգրկված է Ճամբարակ համայնքի կազմում: Հաղորդակցվում են Գանձակի միջրարրառով:

ՎԱՂԱՇԵՆ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Հիմնադրել են Ալաշկերտի Քոփկուան գյուղից եկած 15 ընտանիքներ: Բնակիչների մի մասի նախնիները 1828-29 թթ. գաղթել են Ալաշկերտի և Մուշի գյուղերից: Հաղորդակցվում են Մշն բարբառով:

ՎԱՆԵՎԱՆ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1828 թ. հիմնել են Պարսկահայաստանից գաղթածները: 1988 թ. վերաբնակեցվել է Աղբքեջանից բռնազաղթած հայերով: Հաղորդակցման լեզուն հիմնականում *Ղարաբաղի բարբառն* է:

ՎԱՐԴԱՋՈՐ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների նախնիները 1828-29 թթ. և 1877-78 թթ. գաղթել են Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են *Մշո բարբաղի Ալաշկերտի խոսվածքով*:

ՎԱՐԴԵՆԻԿ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները 1827-29 թթ. գաղթել են Ալաշկերտի ու Մուշի գյուղերից: Հաղորդակցվում են *Մշո բարբառով*:

ՎԱՐԴԵՆԻՍ - Քաղաք Գեղարքունիքի մարզում: Բնակիչների մի մասի նախնիները՝ 60 ընտանիք, 1828-1829 թթ. գաղթել են Դիաղինից: Հաղորդակցվում են *Դիաղինի բարբառով*:

ՎԱՐՍԵՐ - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները 1828 թ. գաղթել են Խոյի և Մակուի գյուղերից, ինչպես նաև 1829 թ. Բայազետ քաղաքից: Հաղորդակցման լեզուն *Մակուի խոսվածքն* է՝ Բայազետի բարբաղի որոշ տարրերով:

ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների նախնիները 1828-29 թթ. գաղթել են հիմնականում Ալաշկերտի Խաստուր գյուղից: Հաղորդակցվում են *Մշո բարբաղի Ալաշկերտի խոսվածքով*:

ՓԱՍԲԱԿ - գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988-89 թթ. այստեղ բնակություն են հաստատել Աղբքեջանի Դաշքեսան

քաղաքից բոնագաղթած հայեր: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	3
ՄԱՍ Ա	
ԲԱՐԲԱՌՈՒՅՑԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԺԱՄԱՍԱԿՅԱ ԵՎ ՏԱՐԱԺԱՄԱՍԱԿՅԱ ՔՆՍՈՒ- ԹՅՈՒՆ.....	5
1. Վ. Կատվալյան, Հինհայերենյան իրողություններ Բայազետի բարբառում.....	5
2. Վ. Կատվալյան, Միջինհայերենյան իրողություններ Բայազետի բարբառում.....	16
3. Վ. Կատվալյան, Խոսվածքային առանձնահատկություն- ներ Բայազետի բարբառում.....	31
4. Վ. Կատվալյան, Ռուսերեն փոխառություններ Բայազետի բարբառում.....	39
5. Գ. Մկրտչյան, Մշո բարբառի տեղաշարժերը, տարածա- կան բուն հիմքերի խախտման պատճառները և դիրքը հայե- րենի բարբառների շարքում (հանրալեզվաբանական դիտարկումներ)	51
6. Գ. Մկրտչյան, Մշո բարբառը հետազոտողների գնահատ- մամբ.....	71
7. Գ. Մկրտչյան, Մշո բարբառի արդի վիճակը Գեղարքունիքի տարածաշրջանում.....	84
8. Գ. Մկրտչյան, Միջին հայերենում և Մշո բարբառում գործառող հոգնակերտ մասնիկները (ընդհանրություններն ու տարբերությունները)	96
9. Գ. Մկրտչյան, Առկայացման քերականական կարգի առանձնահատկությունները միջին հայերենում և Մշո բարբառում (զուգադրահամեմատական քննություն)	113

ՄԱՍ Բ

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԳՈՐԾԱ- ՈՒԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ.....	124
1. Հ. Խաչատրյան, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների բարբառային պատկերը Գեղարքունիքի մարզում.....	124
2. Հ. Խաչատրյան, Բնակարան, տուն, կահ-կարասի խմաստային-թեմատիկ խմբի բառանունները Գեղարքունիքի մարզում.....	137
3. Հ. Խաչատրյան, <i>Տուն և հյուղ հասկացությունների</i> բառանունների բարբառային բնութագիրը.....	145
4. Հ. Խաչատրյան, <i>Փողոց և արահետ հասկացությունների</i> բարբառային բնութագիրը և նրանց բառիմաստային զարգացումները հայերենի բարբառներում.....	156
5. Գ. Մկրտչյան, Գեղարքունիքի մարզի խոսվածքների ձայնավոր հնչյունների և երկբարբառների տարածքային բնութագիրը.....	168
6. Գ. Մկրտչյան, Գեղարքունիքի մարզի խոսվածքների բաղաձայն հնչյունների տարածքային բնութագիրը.....	180
ՀԱՎԵԼՎԱԾ	193
Գեղարքունիքի մարզի բնակավայրերը ըստ լեզվական հատկանիշի.....	193

Վ.ԿԱՏՎԱԼՅԱՆ, Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ, Գ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՔԱՌԱՅԻՆ
ՀԱՍՏԱՊԱՏԿԵՐ

ՆՅՈՒԹԵՐ
ՊՐԱԿ Ա
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

Ձևավորումը և էջադրումը՝
Մ. Խառատյանի